

ԱՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ա. ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ - 2019

ՀՏՂ .....  
ԳՄՂ .....  
Ս .....

**Տպագրվում է Արցախի գիտական կենտրոնի եւ Արցախի պետական  
համալսարանի գիտական խորհուրդների երաշխավորությամբ**

**Խմբագիր՝ Բ.Գ.Թ., դոցենտ Շողեր Մինասյան  
Գրախոս՝ Բ.Գ.Թ., դոցենտ Լուսինե Մարգարյան**

*Աշխատանքն իրականացվել է ԱՅ ԿԳՄՆ կողմից տրամադրված ֆինանսական  
աջակցության շնորհիվ՝ SCS 16.10-001 գիտական թեմայի շրջանակներում*

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, Երեւան, 2019.-

156 էջ:

*Աշխատանքը նվիրված է Ղարաբաղի բարբառին, նրա եկթաբարբառներին ու  
խոսվածքներին վերաբերող եւ առնչվող տպագիր ու ձեռագիր աշխատությունների,  
բառարանների, հոդվածների եւ մատենագիտությանը: Յուրաքանչյուր նյութի վերնագրից  
եւ այլ տեղեկություններից հետո ներկայացվում է նրա հնարավորինս ամփոփ նկարագիրը:  
Ընդարձակ առաջաբանում քննության եւ առնվում բարբառի ուսումնասիրության  
համառոտ պատմությունը՝ ըստ ժամանակագրության, եւ հնչյունաբառաքերականական  
օրինաչափությունները:*

ISBN ,,.....,

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն աշխատանքը ներկայացնում է Ղարաբաղի բարբառին վերաբերող եւ առնչվող մասնագիտական գրականության ու ձեռագիր աղբյուրների (առանձին ենթաբաժնով) մատենագիտությունը: Այն բաղկացած է «Ներածություն» բաժնից եւ բուն մատենագիտությունից: «Ներածություն» մեջ առանձին բաժիններով ու ենթաբաժիններով քննության են առնվում բարբառի ուսումնասիրության համառոտ պատմությունը՝ ըստ ժամանակագրության, հնչյունական ու հնչույթային համակարգերը, համաժամանակյա, տարաժամանակյա, դիրքային եւ փոխազդեցական հնչյունափոխության դեպքերը, խոսքի մասերի եւ նրանց քերականական կարգերի (*հոգնակիակազմություն, հոլով, անվանական ու դերանվանական հոլովում, հոդառություն, ածականի համեմատության աստիճաններ, բայի դեմք, թիվ, սեռ, հիմքակազմություն, եղանակ, ժամանակ եւն*) դրսեւորումները, շարահյուսական առանձնահատկությունները, բառապաշարի շերտերը, իմաստափոխության դեպքերը, բառակազմական միջոցները:

«Մատենագիտություն» բաժնում ընդգրկվում են.

1. Ղարաբաղի բարբառին, նրա առանձին ենթաբարբառներին ու խոսվածքներին կամ կոնկրետ որեւէ օրինաչափության վերաբերող տպագիր ու ձեռագիր աշխատությունները, բառարանները, հոդվածները, զեկուցումները, առավել ընդգրկուն հիմնադրույթները,

2. հայերենի բարբառագիտական այն ուսումնասիրությունները, բառարաններն ու հոդվածները, որտեղ այլ բարբառների շարքում հեղինակները լրջորեն անդրադարձել են նաեւ Ղարաբաղի բարբառին կամ նրա ենթաբարբառներին ու խոսվածքներին,

3. Ղարաբաղի բարբառին կամ նրա ենթաբարբառներին նվիրված աշխատությունների ու բառարանների մասին տպագրված գրախոսությունները,

4. Արցախի բանահյուսական այն ժողովածուները (նաեւ բարբառագիր ստեղծագործությունները), որոնց մեջ հեղինակներն այս կամ այն կերպ անդրադարձել են բարբառի առանձնահատկություններին եւ (կամ) ընդգրկել բարբառում գործածվող բառերի համեմատաբար ընդարձակ բառացանկեր,

5. Արցախի ու Սյունիքի գրողների ստեղծագործությունների լեզվաոճական քննությանը նվիրված այն ուսումնասիրությունները, որտեղ քննու-

թյան նյութ են դարձել մայրենի բարբառով պայմանավորված իրողությունները:

Մատենագիտությունը ներկայացվում է հաջորդական համարակալմամբ եւ խիստ այբբենական կարգով: Սկզբում տրվում են հեղինակի ազգանունը եւ անվան համառոտագրությունը, որին հետեւում են նյութի վերնագիրը, համապատասխան հանդեսի, ժողովածուի, թերթի եւն վերնագիրը, տպագրման վայրը, թվականը, համարը, էջերը (առանձին աշխատությունների դեպքում՝ տպագրման վայրը, թվականը եւ էջերի քանակը, ձեռագիր աղբյուրների դեպքում՝ ստեղծման թվականը, վայրը, էջերի քանակը եւ պահվելու տեղը (արխիվ, գրադարան, թանգարան, ֆոնդ եւն): Այս տեղեկություններից հետո ներկայացվում է տվյալ աշխատանքի (համաձայն Ղարաբաղի բարբառին առնչվելու աստիճանի, բովանդակության եւ ծավալի) հնարավորինս ամփոփ նկարագիրը:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԸ

**Հարցի ուսումնասիրության պատմությունից:** Ղարաբաղի բարբառը հայերենի կենդանի բարբառներից ամենատարածվածն ու կենսունակն է, որով հաղորդակցվում են Արցախի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում եւ արտերկրում ապրող հարյուր հազարավոր հայեր: Երբ եւ հատկապես որ շրջանում է ստեղծվել այն՝ դժվար է ասել: Խոսելով այդ մասին եւ հիմք ընդունելով, որ բարբառում գրաբարյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղների խլացումն ընդգրկում է բնիկ հայերեն բառերն ու հին փոխառությունները, սակայն չի տարածվում թուրքական փոխառությունների վրա, եւ նկատի ունենալով, որ ձայնեղների խլացման օրենքը գործել է մինչեւ 12-րդ դարը՝ նախքան թուրքերի Հայաստան գալը, Հր. Աճառյանը բարբառի ծագումը հատկացնում է 12-րդ դարին<sup>1</sup>: Հակադրվելով դրան՝ Գ. Ջահուկյանը առաջ է քաշում իր տեսակետը, ըստ որի՝ հայերենի բարբառների հնչյունական, քերականական եւ բառապաշարային հատկանիշները ձեւավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում<sup>2</sup>, եւ բաղաձայնների խլացման երեւոյթը պայմանավորված է այլ հանգամանքներով<sup>3</sup>:

Ղարաբաղի բարբառի մասին առաջին վկայությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին՝ հայերենի տարածական մի քանի տարբերակների շարքում նշելով նաեւ *զԱրցախայինն*. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զխութայինն եւ զՉորրորդ Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնիս եւ զԱրցախայինն. այլ մի միայն զՄիջերկրեայսն եւ զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ եւ աւգտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեսցի անընդել զոլով լեզուացն»<sup>4</sup>: Նույնը կրկնել է 14-րդ դարի բանաստեղծ, քերական Հովհաննես Երզնկացին<sup>5</sup>:

Սակայն բարբառի բուն ուսումնասիրությունը սկիզբ է առնում 19-րդ դարի վերջից, երբ Զ. Պատկանյանը իր 1869թ. հրատարակած «*Исследо-*

1. Աճառյան Հր., *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Երեւան, 1940, էջ 378-380

2. Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը*, <<Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1959, N2-3, էջ 311

3. Ջահուկյան Գ., *Արցախահայ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին*, <<Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1991, N5, էջ 58

4. Адонц Н., *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, с.187

5. Патканов К., *Исследование о диалектах армянского языка*, Санкт-Петербург, 1869, с. 9

ние о диалектах армянского языка“ աշխատության մեջ որոշ բարբառների նկարագրությանը զուգընթաց ներկայացրեց Ղարաբաղի բարբառի հակիրճ ուսումնասիրությունը:

Դեռեւս Փարիզում ուսանելու ժամանակ Յր. Աճառյանը փորձառական հնչյունաբանության հիմնադիր Ռուսլոյի լաբորատորիայում փորձառական մեթոդով մի քանի բարբառախոսների եւ իր անձի վրա ուսումնասիրության էր ենթարկել համապատասխան բարբառների, այդ թվում՝ նաեւ Շուշիի խոսվածքի հնչյունաբանությունը: 1899-1901թթ. «Արարատ» ամսագրում տպագրվում է նրա «Քննություն Ղարաբաղի բարբառին» ուսումնասիրությունը, որը 1901 թ. հրատարակվում է առանձին գրքով: Այստեղ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է բարբառի հնչյունաքերականական օրինաչափությունները՝ ուսումնասիրության արդյունքները ամփոփելով նաեւ իր «Յայ բարբառագիտություն. ուրուագիծ եւ դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)» եւ «Յայոց լեզվի պատմություն» աշխատություններում, որտեղ Ղարաբաղի բարբառը համարում է բոլոր հայ բարբառներից ամենամեծն ու ամենատարածվածը՝ այն դասելով «ում» ճյուղի բարբառների շարքին:

Յետեւելով բարբառների դասակարգման ձեւաբանական սկզբունքին՝ Ա. Ղարիբյանն իր «Յայերեն բարբառների մի նոր ճյուղ» (1939) աշխատության մեջ «ել» ճյուղից առանձնացնում է «ս» ճյուղը՝ «ում» ճյուղի մեջ ընդգրկելով բուն Ղարաբաղի բարբառը, իսկ Յադրուֆի եւ Շաղախի խոսվածքներն առանձնացնելով որպես «ս» ճյուղի առանձին բարբառներ: Յետագայում, 1947 եւ 1953 թթ. տպագրած իր «Յայ բարբառագիտություն» աշխատության մեջ տալով հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը, հեղինակը Ղարաբաղի, Յադրուֆի եւ Շաղախի բարբառները համարում է առաջին տեղաշարժի ենթարկված բարբառներ՝ ելնելով գրաբարյան ձայնեղ պայթականների եւ կիսաշփականների՝ նրանցում խուլերի վերածվելու հանգամանքից: Նշված բարբառներին անդրադարձել է նաեւ Ա. Գրիգորյանը «Յայ բարբառագիտության դասընթաց» (1957) ձեռնարկում:

Անգնահատելի է Կ. Ղավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» մենագրության (1966) արժեքը, որտեղ, ի տարբերություն իր նախորդների, հեղինակը, ելնելով լեզվաբանական աշխարհագրության արդիական պահանջներից, քննության է առել Լեռնային Ղարաբաղի տարածքում գործածվող բոլոր բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքները:

Կարելոր արժեք ունեն նաեւ Ա. Պողոսյանի «Յադրուֆի բարբառը» (1965), Ալ. Մարգարյանի «Գորիսի բարբառը» (1975), Շ. Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածները» (2007), Ա. Սարգսյանի «Շաղախի ենթաբարբառը Յադրուֆի ենթաբարբառի միջավայրում» (2009),

Մ. Աղաբեկյանի «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն» (2010), Զ. Երվանդյանի «Ղարաբաղի բարբառի բառային կազմի հաստատման գործընթացը» (2007) տպագիր եւ Մ.Գրիգորյանի «Ղարաբաղի բարբառը եւ Շուշվա ենթաբարբառը» (1948-1958), Ն. Վարդապետյանի «Սյունյաց բարբառ» (1961), Ա.Բաբայանի «Ղարաբաղի Վարանդայի բարբառը» (1967), Բ. Մեծունցի «Շաղախի ենթաբարբառը» (1975) ձեռագիր ուսումնասիրությունները:

1972թ. հրատարակվում է Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը, որի առաջին մասում տալով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը՝ մեծ լեզվաբանը 120 բարբառախոս վայրերից մեկ տասնյակից ավելին ընտրել է Լեռնային Ղարաբաղի տարածքից: Որոշ խոսվածքներ ուսումնասիրության առարկա են դարձել նաեւ աշխատության երկրորդ մասում, որտեղ դրվում եւ լուծվում են բարբառագիտության մի շարք հարցեր: Ըստ հեղինակի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Ղարաբաղի բարբառը ընդգրկվում է հայերենի բարբառների արեւելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախի կամ ծայր հյուսիսարեւելյան միջբարբառախմբի մեջ, իսկ Շաղախի, Հադրութի եւ Գորիսի խոսվածքները բարբառի կենտրոնից բարբառային սահմաններ գծող տարբերություններ չեն ներկայացնում:

Ղարաբաղի բարբառի, նրա ենթաբարբառների ու խոսվածքների եւ տարբեր իրողությունների վերաբերյալ ուշագրավ հոդվածներ են տպագրել Ա. Մեյեն, Ղ. Աղայանը, Մ. Աբեղյանը, Գ. Զահուկյանը, Ս.Աբրահամյանը, Բ.Ուլուբաբյանը, Յ. Պետրոսյանը, Լ. Հովհաննիսյանը, Ալ. Մարգարյանը, Ա. Սարգսյանը, Շ. Մինասյանը, Ժ. Միքայելյանը, Լ. Մարգարյանը եւ ուրիշներ, իսկ մի շարք ուսումնասիրություններում տարբեր հեղինակներ բարբառին անդրադարձել են այլ բարբառներին զուգընթաց:

Ղարաբաղի բարբառի հազարավոր բառեր ու դարձվածներ են ընդգրկված Հր. Աճառյանի «Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն» (1902), «Հայերէն գաւառական բառարան» (1913), «Եւրոպական լեզուներից փոխառեալ բառեր հայերէնի մէջ» (1951), «Հայերէն արմատական բառարան» (1971-1979), Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան» (1912), ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարան» (2001-2012), Գ. Բաղդասարյանի «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան» (2008-2010), Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան» (2013), Ա. Սարգսյանի եւ Շ. Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան» (2017) տպագիր եւ Ա. Բա-

հաթրյանի «Ղարաբաղու գաւառական բառգիրք» (19-րդ դարի վերջեր), Ղ.Աղայանի «Ղարաբաղի բառարանը» (1890-ական թթ.) ձեռագիր բառարաններում:

Բացի դրանից, բարբառով գրառվել եւ հրատարակվել են գեղարվեստական ստեղծագործություններ ու բանահյուսական ժողովածուներ, որոնց մի մասին կցված են բառարաններ:

**Յնչունաբանություն: Յնչունական եւ հնչույթային համակարգերը:**

Ղարաբաղի բարբառի ձայնավոր հնչուններն են՝ *ա, ւ, ու, ու, օ, օ, է, ի, ը, ը<sup>է</sup>, ը<sup>հ</sup>: Ա, ու, օ, է, ի, ը* ձայնավորները արտասանությամբ համընկնում են ժամանակակից հայերենի համապատասխան հնչունների հետ:

*Ս, ու, օ-ն* *ա, ու, օ* ձայնավորների քմային տարբերակներն են:

*Ը<sup>է</sup>-ն* ներկայացնում է *ը* եւ *է*, *ը<sup>հ</sup>-ն*՝ *ը* եւ *ի* ձայնավորների միջին աստիճանը:

Բաղաձայն հնչուններն են. ձայնեղ պայթականներ եւ կիսաշփականներ՝ *բ, գ, գ', դ, ձ, շ*, խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ *պ, կ, կ', տ, ծ, ճ, շնչեղ խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ փ, ք, ք', թ, ց, չ, ձայնեղ շփականներ՝ վ, զ, ժ, ղ, խուլ շփականներ՝ ս, շ, խ, հ, ձայնորդներ՝ մ, ն, ռ, ռ, լ, լ', յ:*

Գրական լեզվի համեմատությամբ նորություններ են *գ', կ', ք', լ'* բաղաձայնները, որոնք ներկայացնում են համապատասխան *գ, կ, ք, լ* հնչունների քմային արտասանությունը:

Յազվադէպ գործածություն ունեն նաեւ *դ', տ', թ', ձ', ծ', ց', ճ', չ', ժ'* բաղաձայնները, որոնք առանձին որակ չեն կազմում եւ հնչույթային արժէք չունեն:

Բարբառում բացակայում է *ֆ* խուլ շփականը, որի փոխարեն գործածվում է *փ* բաղաձայնը:

Ինչպէս ժամանակակից հայերենում, բարբառում եւս *ա, օ, ու, է, ի, ը* ձայնավորները հնչույթներ են, քանի որ հանդես են գալիս բառի բոլոր դիրքերում, բաց եւ փակ, շեշտակիր եւ շեշտագուրկ վանկերում, բնիկ ու փոխառյալ բառերում եւ միմյանց հետ կարող են կազմել հակադրական զույգեր:

*Ս, ու* եւ *օ* ձայնավորները նույնպէս ունեն գործածության լայն ոլորտ: Դրանք հակադրության զույգեր են կազմում ինչպէս միմյանց, այնպէս էլ մյուս ձայնավորների հետ: Սակայն *ւ, ու, օ-ի* հնչույթայնությունը ի վերջո հաստատվում է ամենամերձավոր հնչույթների՝ *ա, ու, օ-ի* հետ ունեցած հակադրություններով՝ *վնր* (1. պահ, ակնթարթ, 2. շարք)-*վար* (հերկ), *հնր* (հայր)-*հար* (1. խոտհունձ, 2. խնոցի հարելը), *տնլ* (1. ամուսնու քույրը, 2. ծառի ճյուղ)-*տալ* (տալ բայը), *հնլր* (ում)-*հնր* (ուր), *տնւշ* (կարճ երաժշտական ողջույն)-*տուշ* (թանաք), *շօր* (շոր)-*շօր* (կաթնաշոր, լոռ), *տօղ* (դող)-*տօղ* (տող):

Ը՛ է ձայնավորը, հանդես գալով բառերի շեշտակիր փակ վանկում, կարող է հակադրվել ամենամերձավոր հնչյոթներին՝ *ը*-ին եւ *է*-ին, ու կատարել իմաստագատիչ դեր, հետեւաբար անկախ հնչյոթ է՝ *տը՛հէն* (տեղին)-*տըղէն* (տղային)-*տէղէն* (դեղին), *տը՛հնը* (տիրոջ)-*տէհնը* (դառն), մինչդեռ *ը՛*-ն հանդիպում է հիմնականում Սարտակերտի շրջանի մի շարք խոսվածքների որոշ բառերում՝ *խը՛լլա*, *սը՛ստա*, եւ, հակադրության զուգեր չկազմելով ամենամերձավոր *ը* եւ *ի* ձայնավորների հետ, համարվում է դրանց դիրքային տարբերակը:

Բաղաձայն հնչյունները հանդիպում են բառասկզբում, բառամիջում, բառավերջում, բնիկ եւ փոխառյալ բառերում:

Գրական հայերենին համապատասխանող բաղաձայնները հնչյոթաբանական մակարդակում հակադրվում են ամենամերձավոր հնչյոթներին՝ ներկայանալով որպես անկախ հնչյոթներ:

Հնչյոթային արժեք ունեն նաեւ քմային *զ՛*, *կ՛*, *ք՛*, *լ՛* հնչյունները, որոնք կարող են իմաստային հակադրության նվազագույն զուգեր կազմել ամենամերձավոր *զ*, *կ*, *ք*, *լ* հնչյոթների հետ. *զ՛ագ* (*զ՛ագ անցկըցընէլ* - կովի ստերջ մնալը) - *զագ* (զագ), *կ՛ը՛նալ* (հագնել) - *կը՛նալ* (մընալ), *կ՛ը՛տ* (գետ) - *կը՛տ* (ճանճի տեսակ), *ք՛օք* (գեր)- *քօք* (արմատ), *ք՛ար* (օգուտ, շահ)- *քար* (քար), *լ՛ալ* (լալ)- *լալ* (հորդ անձրեւ), *լ՛ո՛ւս* (հյուսվածք)- *լո՛ւս* (լույս), *խու՛լ* (ուռուցք, պալար) - *խուլ* (խուլ):

**Շեշտ եւ շեշտից կախված (համաժամանակյա) հնչյունափոխություն:**

Բարբառում շեշտը սովորաբար դրվում է նախավերջին վանկի վրա եւ ունի կայուն-շարժական բնույթ: Ակտիվ գործածություն ունի նաեւ վերջնավանկի շեշտը, որը հանդիպում է.

- *նէ* հոգնակերտ ունեցող բառերի ուղիղ ձեւերում՝ *քաղաքնէ՛, սալդաթնէ՛, աշագ՛էրդնէ՛*;

- նախորդ վանկում *ը* գաղտնավանկ ունեցող բառերում՝ *մընա՛լ, կըրա՛կ*, ինչպես նաեւ այն բառերում, որոնց նախորդ վանկի *ը*-ն փոխարինվել է այլ ձայնավորով՝ *կուլ՛ո՛խ, խում՛օր, տիպի՛լ*,

- պատճառական բայերում՝ *խուսցունէ՛լ, կուրցնէ՛լ, մուտուցնէ՛լ*:

Մի շարք բարդություններ կրում են կրկնակի շեշտ՝ *դո՛ւրփուրա՛կէն, դո՛ւրփո՛ւրո՛ւզո՛ւնա՛ջախ, թօ՛րնըսք՛ընո՛ւմ* եւ այլն:

Ձայնավորները շեշտագրկվելիս կրում են տարբեր փոփոխություններ:

Սեւ *ի* ձայնավորները հիմնականում հերթափոխվում են *ը*, *ի*, ու ձայնավորներով՝ *աշկ-ըշկացավ, դանդ-դըրդանկօխ/դիրդակօխ, շանք՛ար-ըըք՛ըրաման/շիք՛ըրաման, թանգ՛-թընգ՛անալ/թինգ՛անալ, աշունք-ըշունքը՛նէ/ուշունքը՛նէ, աղութկ-ըղօթէլ/ուղօթէլ* (նաեւ՝ *ղօթէլ*):

Է ձայնավորը հիմնականում հնչյունափոխվում է *ի* - *ի* կամ *ը* - *ի* կամ էլ սղվում է՝ *էշ-իշանալ, շէն-շինամաջ, ծէխ-ծըխլըկանէ/ծիխլիկանէ, թէվք-*

*թըվքըպըտօկ/թիվքըպըտօկ, էտ-տի/ըտի/իտի, թըրէք'-թըրքէլ, մըթէն-մըթ-նըլնա:*

*Ի ձայնավորը ընդհանուր առմամբ մնում է անփոփոխ կամ հնչյունափոխվում է ը-ի՝ **իվիլ-իվիլանալ/ըվիլանալ, հիշտ-հիշտըցընէլ/հըշտըցընէլ, ինծ-ինծը՛տէ/ընծը՛տէ:***

*Ու եւ ու ձայնավորները հիմնականում չեն հնչյունափոխվում՝ **կ'ումաշ-կ'ումաշակավ, խութ'-խութ'էրան, կ'ոթան-կ'ոթըննէ, թոնլ-թոնլանալ:** Որոշ բառերում ու-ն հնչյունափոխվել է ի-ի կամ ը-ի՝ **պոնրթ-պիրթիճըպատ/ պըրթըճըպատ, ճոնր-ճիրիկուտէմնը/ճըրըկուտէմնը:***

*Օ եւ ò ձայնավորները հերթափոխվում են ու, ու, ը ձայնավորներով կամ վ բաղաձայնով՝ **օթ-ուրթ'քան, սծք'-սոնք'ըվէր, տօռնը-տըռնըպէց, ծօռ-ծըռըմանգ(ը)լի, թըթօ-թըթվօթուն, կըծօ-կըծվօթուն:***

*Ը՛ ձայնավորը վեր է ածվում ը-ի կամ սղվում է՝ **մը՛ծ-մը՛ծանալ, նը՛դ-նը՛դանալ, սը՛րտ-սըրտացավ, վը՛ննը-վըննըպէց, կըռը՛վ- կըռ(ը)վարար:***

***Տարածամանակյա (պատմական) հնչյունափոխություն:*** Հին հայերենի *ա* ձայնավորը բարբառում սովորաբար մնում է անփոփոխ՝ *աջ-աջ, թաթ-թաթ, աղալ-աղալ, աղքատ-ախկադ, բարեկամ-պարիկամ:*

*Ա*-ին համազոր գործածություն ունի քմային *ան* ձայնավորը, որը հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում: *Ա*-ի քմայնացումը որեւէ ընդհանուր օրինակափոխության չի ենթարկվում: Այնուամենայնիվ կարելի է նշել որոշ դեպքեր.

- երբ հաջորդում է խլացած ձայնեղներին (Աճառյանի օրենքը)՝ *գարի-կ'անրի, դաս-տանս, բաժին-պանժին,*

- երբ նախորդում կամ հաջորդում է ձայնորդ բաղաձայններին՝ *արեւ-անրը՛վ, լական-լանգ'ան, ժառանգ-ժանանգ':*

Քմայնացման պատճառ է նաեւ ձայնավորների ներդաշնակությունը. որոշ բազմավանկ բառերի մի քմային ձայնավորի ազդեցությամբ մյուս ձայնավորները հիմնականում եւս քմայնանում են՝ *վարժապետ-վանրժանքէր, խանդակ-խանդանկ:*

Այս երեւույթը տարածվում է նաեւ ու եւ օ ձայնավորների քմայնացման վրա՝ *իրար-նրոնր, գարթուն-գորթոն:*

Բացի քմայնացումից՝ *ա*-ն կրել է հետեւյալ փոփոխությունները.

*ա-ը-շեշտանախորդ վանկերում (բառասկիզբ, առաջնավանկ)՝ ազատել-ըզադէլ, աշխատել-ըշխադէլ, ճախարակ-չըխարակ, կարկատան-կըրկատան,*

*ա-ը՛ - շեշտակիր փակ վանկում (միջնավանկ, վերջնավանկ)՝ ամառն-ամը՛ռնը, փայծաղն-փածը՛ղնը, երախ-ըռը՛խ, գաւաթ-կը՛վաթ,*

*ա-է - շեշտակիր փակ վանկում (առաջնավանկ)՝ գագար-կէզանր, բան-ջար-պէնջանր, շալակ-շէլանկ, բարձ-պէրց,*

*ա-ի - շեշտանախորդ (մասամբ՝ շեշտակիր) վանկերում (բառասկզբի բաց եւ փակ վանկեր)՝ արեգակն-իրիթ՛նակ/ըրիթ՛նակ, բանալի-պինն՛լի(թ՛)/պըննլի(թ՛), աւել-իվիլ,*

*ա-օ/օ - շեշտակիր փակ վանկերում՝ դգալ-քըթօլ, բարծր-պօցնօր, կա-դին-տըկօղէն, գարթուն-գօրթնն:*

*ա-ու/ո՛ւ-շեշտանախորդ (մասամբ՝ շեշտահաջորդ) բաց եւ փակ վանկերում՝ մատանի-մուտանա, ալեւոր-հոկոնվոր, ականջ-անգուն:*

Գրաբարի *ե* ձայնավորը շեշտակիր վանկում փոխարինվել է հետեւյալ ձայնավորներով.

*ե-է (միավանկ եւ երկվանկ բառերի բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ ձեռն-ծէրթ/ծըրթ, գերան-կ՛էրան/կըրան, երկու-էրկու, երկայն-էրկան, բեռն-պէռնը/պըրնը,*

*ե-ի (բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ երես-իրըս, մենակ-մինակ, թել-թիլ, շերեւի-շիրըփ, չեչ-չիչ, եփել-իփիլ, երբ-հիբ,*

*ե-ըէ (փակ վանկում)՝ սեպ-սըփ, սերմն-սըրմ, խելք-խըրք, համեղ-համըղ, եռ-հըր:*

Մի շարք բառերում, որտեղ *ե*-ն փոխարինվել է *է* եւ *ըէ* ձայնավորներով, այդ հնչյուններից առաջ լսվում է նախահունչ *յ՝* *երկիր-յերգ՛իր, երկինք-յերգ՛ինք՛, ես-յըս, երգ-յըրթ:*

*ե-ա/ա՛ (առաջնավանկ)՝ երագ-արագ/արնագ, երաշտ-արաշտ, երկանք-արկանք, երկաթ-արկաթ:*

*ե-ու/ո՛ւ (առաջնավանկ, միջնավանկ)՝ երեւալ-ուրվալ/ըրվալ, դեղնուց-տոնղնօց/ տըղնօց/տիղնօց, լեզու-լնլզն,*

*ե-օ/օ՛ (առաջնավանկ, միջնավանկ)՝ խելոք-խօլոն(ւ)ք/խէլու(ւ)ք, ուղեղ-հըղօղ/հուղօղ,*

*է* երկբարբառակերպի դիմաց ընդհանուր առմամբ բարբառում առկա է *է* պարզ ձայնավորը՝ *շէն-շէն, կէս-կէս, էշ-էշ, օրէնք-օրէնք՛, դէմ-տէմ, խէժ-խէժնը, ամէն-ամմէն:*

Շեշտակիր եւ շեշտահաջորդ վանկերում *է*-ն երեւան է հանում նաեւ հետեւյալ փոփոխությունները. *է-ա՝ տէր-տար, մէջ-մաչ, մէջք-մաշկ, գոմէշ-կոմմաշ, է-ի՝ թէժ-թիժ, շրէշ-շիրիշ, կիրակէ-կիրնկի՛:*

Հին հայերենի գաղտնավանկի *ը* ձայնավորը շեշտագուրկ վանկերում հիմնականում մնում է անփոփոխ՝ *ծանր-ծանդրր, խնոցի-խընըցէ, պսակ-փըսակ, կծիկ-կըծէգ՛:*

Բառասկզբում *ը*-ն պահպանվել է *ընկեր-հընգէր, ընտրել-հընդըրէլ* բառերում, որտեղ ստացել է *հ*-ի հավելում:

Որոշ բառերում գաղտնավանկ *ը*-ն փոխարինվել է *ի, օ, ու* ձայնավորներով՝ *գրել-կ՛իրիլ, բլիթ-պիլիթ, կրայ-կօրէ, ճիպռ-ճուպօռ, կծու-կուծօ:*

Ի ձայնավորը շեշտակիր եւ շեշտագուրկ վանկերում մնում է անփոփոխ կամ փոխարինվում է *է, ը, ը՛, ու, ու՛, օ* ձայնավորներով՝ *իլիկ-իլիգ՛, գին-կի՛ն, չամիչ-չամէնչ, քիթ-քէթ/քրէթ, դիմանալ-տըմանալ, կռիւ-կըռը՛վ, յիշոցք-ուշ-ունց, Յիսուս-Յիւսիւս, սիրուն-սէրո՛ն/սո՛ւրո՛ն/սօ՛րո՛ն/սիրուն:*

Գրաբարի *ո* ձայնավորը բառասկզբի բաց վանկում դառնում է *վը՛/վը/վօ/վէ/վի՛*՝ *ործ-վը՛րց, ոսկոր-վը՛սկըռ/վըսկըռ/վէսկըռ, ոսկի-վը՛սկէ/վըս-կէ/վէսկէ, որս-վը՛րս/վէրս, ոչխար-վը՛խճար/վէխճար/վօխճար, ոջիլ-վիջիլ:*

Շեշտակիր վանկում *վ* բաղաձայնից առաջ *ո*-ն հնչյունափոխվում է *ա*-ի կամ *օ*-ի՝ *կով-կավ/կօվ, հով-հավ/հօվ, ծով-ծօվ, սով-սօվ:*

Որոշ բառերում *ո*-ն դարձել է *ը, ի* կամ սղվել է՝ *բորբոս-փիրփէշ-նը/փըրփէշնը, խորոված-խըրաված, ողորմ-ըղուրմ/ղուրմ, ողողել-ըողել/ողողել:*

Մյուս բոլոր դեպքերում *ո*-ին համապատասխանում է պարզ *օ/օ* կամ *ու՛ խոտ-խօտ, փոս-փօս, չոր-չօր, ձոր-ձօր, խնձոր-խընձօր, թոռն-թօռնը, գոմ-կ՛ում, քակոր-քաքուռ, լակոտ-լակուտ* եւ այլն:

*Ու* ձայնավորը բառերի մեծ մասում կրել է *ու-օ/օ* հնչյունափոխություն՝ *ուղտ-օղտ, սուգ-սօք՛, կտուց-կըտօց, խունկ-խօնգ, թուղթ-թօխտ, ուրբաթ-օրփնթ, ընկերութիւն-հընգըրօթուն:*

Մի շարք բառերում *ու*-ն մնացել է անփոփոխ կամ քմայնացել է՝ *աշուն-աշունք, կատու-կատու, ձու-ձու/ձո՛ւ, լու-լո՛ւ, թունդ-թօնդ, յուշ-հո՛ւշ:*

Որոշ բառերում *ու*-ն դարձել է *ը, ի* սկ որոշներում՝ է՝ *անուն-անըմ/անում, թուք-թըք, մանուշակ-մընէշակ, հեռու-հը՛ռէ:*

Էական փոփոխությունների են ենթարկվել նաեւ հին հայերենի երկբարբառները:

*Այ* երկբարբառը շեշտակիր ու շեշտահաջորդ վանկերում կրել է հետեւյալ փոփոխությունները.

*այ-է* (բառասկզբ, բառամեջ, բառավերջի փակ վանկ)՝ *այծ-էծ, այս-էս, այդ-էտ, այն-էն, լայն-լէն, ձայն-ծէն, եղբայր-ախպէր,*

*այ-ա/ւն* (միջնավանկ, բառավերջի բաց վանկ)՝ *մայր-մար, հայր-հնր սատանայ-սադանա, տղայ-տըղա:*

Որոշ բառերում *այ*-ը փոխարինվել է *ի, ու, ը, ը՛, է* ձայնավորներով՝ *ցայտ-ցիթ, գայլ-կի՛ղ, գայլագռավ-կըռակլն՛վ, սայր-սը՛ռ/սըռ/սէռ:*

*Այսօր-սօր* բառում բառասկզբի *այ*-ը սղվել է:

*Աւ* երկբարբառը բարբառում, ինչպես հայերենի բոլոր դրսետրումներում հանդես է գալիս իբրեւ *օ* պարզ ձայնավոր՝ *աւր-օր, աւծ-օխց, յաւնք-օնք, կարատ-կարօտ:*

Մի շարք բառերում (շեշտահաջորդ եւ շեշտանախորդ վանկեր) առկա է *աւ-օ-ու* հնչյունափոխություն՝ *օրորոց-ուրուրու(ւ)ց, մօտենալ-մուտանալ:*

Շեշտի տակ եւ շեշտահաջորդ վանկերում *եա* երկբարբառը սովորաբար հերթափոխվում է *է* պարզ ձայնավորով՝ *կորեակ-կօրէկ, ցորեան-ցօրէն, սեամ-շէմք, ծովեար-ծօվեր*:

Որոշ բառերում *եա* երկբարբառը հնչյունափոխվել է *ա/ւ-ի՝ կեանք-գ'անք, մեռեալ-մը՛ռալ, ածեալ-ածալ, գրեալ-կ'իրւլ*:

Ե խոնարհման բայերի եզակի հրամայականի *եա* վերջավորությունը բարբառում փոխվում է *ի-ի* կամ *է-ի* *գրեա-կ'իրի՛, կազմեա-կա՛զմէ*: Եա-ի հնչյունափոխություն առկա է նաեւ անցյալ կատարյալում՝ *գործեաց-կ'օրծից, սիրեաց-սիրից*:

Հին հայերենի *իւ* երկբարբառին բարբառում ընդհանուր առմամբ համապատասխանում են *ու* եւ *նու* ձայնավորները՝ *լաւութիւն-լ'ըվօթուն, իրեանք-նւրանք, արիւն-ւնրուն*:

Գրաբարի *ոյ* երկբարբառը սովորաբար փոխարինվել է *ու* եւ *նու* (նաեւ՝ *ի*) ձայնավորներով՝ *քոյր-քուր, լոյս-լ'նւս, թոյլ-թ'նլ, կապոյտ-կ'ւնպոտ/կ'ւնպիտ, բոյն-պ'նւն*, իսկ *ոյժ-օժ* բառում *ոյ-ը* դարձել է *օ*:

Ղարաբաղի բարբառում զգալի են գրաբարի բաղաձայնական համակարգի կրած փոփոխությունները:

Բառասկզբում (մասամբ բառամիջում եւ բառավերջում) հին հայերենի ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց բարբառը հանդես է բերում խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ *բերան-պէրան, աղբիւր-ախպ'նւր, գլուխ-կըլ'ծխ, գազար-կէզ'ւնր/կ'էզ'ւնր, ազգ-ազկ, մզլահոտ-մըլլավը՛տ, դանակ-տէնակ, դատարկ-տէրտակ, ձեռն-ծէրք, ձմերուկ-ծըմէրուկ, ջուր-ճ'նւր, ջրադաց-ճը՛դաց*:

*Բ, գ, դ, ձ, ջ* բաղաձայնները ռեզալիսներիս հաջորդելիս մնում են անփոփոխ՝ *բամբակ-պէմբակ, ամբար-ամբար, հինգ-հէնգ՛, հանգիստ-հանգ'իստ, հանդարտ-հանդ'ւնրդ, հիւանդ-հիվանդ, տանձ-տանձ, խնձոր-խընձ'որ, բանջար-պէնջ'ւնր, տանջել-տանջիլ*:

Որոշ բառերում *բ* եւ *գ* բաղաձայնները ձայնեղության որակը պահպանել են բառասկզբում՝ *գիրկ-գ'նւրգ՛, գուլպայ-գ'նւլբ'ւն, գիտել-գ'իդ'ւնլ, բաշխել-բախշիլ*:

Բառամիջում եւ բառավերջում ձայնավորներից եւ *ր* ձայնորդից հետո գրաբարի ձայնեղներին համապատասխանում են շնչեղ խուլներ. *խաբել-խանփիլ, սուրբ-սօրփ, թագաւոր-թաքավէր, օգուտ-օքութ, մարդ-մարթ, կարդալ-կարթիլ, օձ-օխց/օց, բարձ-պէրց, աջ-աջ, արջ-արջ, վերջ-վէրջ, մրջիմին-վըրջէմնը*:

Մի շարք բառերում *բ* եւ *գ* ձայնեղների դիմաց շնչեղ խուլ *փ, ք* բաղաձայններ առկա են բառասկզբում՝ *բռնել-փըռնել, բորբոս-փըրփէշնը, գիշեր-քըշեր, գնալ-ք'ինիլ*:

Հնչյունափոխության մասնակի դեպքեր են *գ-դ՝ գերփել-ղըրփել, ձ-ս՝ դազձն-տէսնը, ձ-զ՝ սինձ-սը՛զնը, արծակ-հնրզնկ*:

Հին հայերենի խուլ պայթականներն ու կիսաշփականները բառի բոլոր դիրքերում հիմնականում մնում են անփոփոխ՝ *պակաս-պակաս, ճիպոտ-ճըպատ, պարապ-հըպարապ, տընկել-տընգել, սատակել-ըստակել, տատ-տատ, կասկած-կասկած, ծակել-ծակել, կայծակ-կածնկ, կորեակ-կորէկ, ճուտ-ճօտ, կոճակ-կօճակ, կարճ-կարճ, ծաղիկ-ծաղէզ՛, արծաթ-արծաթ, առիծ-անո՛ծ*:

Որոշ բառերում խուլերին համապատասխանում են շնչեղ խուլեր՝ *պսակ-փըսակ, յուշապ-օշափ, օգուտ-օքութ, կթել-քըթել, ծիծառն-ցըցէռնակ, ճանկ-չննգ՛ ճախարակ-չըխարակ, իսկ որոշներում՝ ձայնեղներ՝ աշխատանք-աշխադանք, պատարագ-բադարնք՛, երկինք-յէրգ՛ինք՛, պատինճան-բադըմջան*:

*Ցնկնել-ցըղնել, ճոճք-ճօժկ* բառերում *չ* եւ *ճ* խուլերը կրել են մասնակի փոփոխություն:

Ընդհանուր առմամբ անփոփոխ են մնացել նաեւ հին հայերենի շնչեղ խուլ պայթականները եւ կիսաշփականները՝ *փրփուր-փըրփօր, շամփուր-շամփուռ, շերեփ-շիրը՛փ, քամի-քամէ, կաքաւ-կաքավ, խելք-խը՛լք, թափել-թափէլ, մորթի-մօրթէ, խորթ-խօրթ, ցուրտ-ցօրտ, կացին-կացէն, հաց-հաց, չափել-չափէլ, կաչաղակ-քըչէղակ, կանաչ-կանանչ*:

Հատուկենտ բառերում շնչեղ խուլերի դիմաց բարբառը երեւան է հանում խուլ բաղաձայններ՝ *փաթաթել-պըտատէլ, խոսք-խօսկ, բոյթն-պո՛ւտնը, քաղցըր-քախճըր, ոչխար-վը՛խճար*:

Գրաբարի ձայնեղ եւ խուլ շփականները բառի բոլոր դիրքերում ընդհանուր առմամբ հնչյունափոխության չեն ենթարկվել՝ *զկէռ-զըկըռ, խուզել-խօզիլ, մագ-մնգ, ժամ-ժամ, դժուար-տիժէր, կուժ-կօժ, վարագ-վարագ, խորովել-խըրավէլ, հով-հավ, սուրբ-սօրփ, խոսել-խօսէլ, թուխս-թօխս, շուն-շօն, խարշել-խաշիլ, էշ-էշ, խմոր-խըմօր, մոխիր-մօխէր, ծուխ-ծօխ, հայելի-հիլիլ, մահակ-մըհակ, մահ-մահ, ողողել-ըղօղէլ, մեղր-մը՛ղըր, տեղ-տը՛ղ*:

Այդ ընդհանուր օրինաչափություններից կան շեղումներ՝ *սալոր-շըլ՛օր, սեամ-շէմք, հող-վը՛ղ, հոտ-վը՛տ, թուղթ-թօխտ, աղջիկ-ախճիգ՛*:

*Լ, մ, ն, ռ, ռ* ձայնորդները տարբեր դիրքերում հիմնականում ներկայանում են անփոփոխ վիճակով՝ *լափ-լէփ, լայն-լէն, իլիկ-իլիգ՛, ծիլ-ծիլ, մենակ-մինակ, ամիս-ամէս, համ-համ, նկար-նըկար, հանել-հանէլ, բան-պէն կրակ-կըրակ, գիր-կ՛իր, քուռակ-քօռակ, աստառ-աստառ*:

Գրաբարի *ն* վերջնահանգ ունեցող բառերում Ղարաբաղի խոսվածքների մեծ մասում հիմնականում պահպանվել է *ն-ն*, իսկ որոշներում այն ընկել է՝ *թոռն-թօռնը/թօռ, ծոռն-ծօռնը/ծօռ, դուռն-տօռնը/տօռ*:

Մասնակի հնչյունափոխության դեպքեր են *ր-ռ՝ պորտ-պօռտ, ոսկոր-վը՛սկըռ, ո-ր՝ ձեռն-ծը՛րք, փառք-փարք՛*:

Յ ձայնորդը բառամիջում սակավ է հանդիպում *մայիս-մայիս, ծառայել-ծըռայել*:

Բառասկզբում *յ*-ն սովորաբար սղվում է կամ դառնում է *ի՝ յաւնք-օնք, յիտուն-իցցուն, յստակ-իստակ*:

Որոշ բառերի բառասկզբում *յ*-ն հնչյունափոխվել է *հ*-ի՝ *Յիսուս-Յնսնիս, յաղթել-հախթել/յը՛խնէլ, յունիս-հունիս*:

*Ի* ձայնորդը հանդես է գալիս որպես ձայնեղ շփական *վ՝ ծարաւ-ծարավ, ցաւ-ցավ, աւել-իվիլ, թել-թէվ, արել-ւնրը՛վ*:

Ղարաբաղի բարբառում լայն տարածում ունեն նաեւ դիրքային եւ փոխազդեցական հնչյունափոխության մի շարք երեւոյթներ, ինչպիսիք են. հնչյունի անկում՝ *անալի-ննլի, արացի-քացէ, ուղղորդ-ղօրթ, ողորմեայ-ղօրմի, հայելի-հիլի, ջախջախել-ճիճը՛խէլ, եկեղեցի-յը՛խցէ, խոնարհ-խօնար, խաղող-խաղու, պաշտպան-պաշպան, արջառ-ւնջը՛ռ, քարշել-քաշիլ, հնչյունի հավելում՝ աներ-հանէր, համարել-հըմբարէլ, ծանր-ծանդըր, ոգնիկօզնի, ամաչել-հըմանչիլ, առնմանում՝ մատն-մաննը, ելանել-իլլնլ, շաղախել-շըղաղէլ, անմեղ-ամմէղ, տարնմանում՝ բոբիկ-պէպէզ՛-տէպէզ՛, ծածկել-ծասկէլ, անուն-անըմ, դրափոխութիւն՝ արեգակն-իրիք՛նակ, ականջ-անջուկ/անգուճ, արմուկն-արմուկ, դատարկ-տէրտակ, փետուր-թէփուռ, սրահ-սըհար, պղտոր-պըրտօղ, բաշխել-բախշիլ, ոչխար- վը՛խչար, կապերտ-կարպետ, խստոր-սըխտօր, նման-մընան, համար-մըհար, հաւաքել-վըհաքէլ, հնչյունի կրկնութիւն՝ ամեն-ամմէն, գոռալ-կ՛օռռալ, տաստասսը, հազար-հազար, յիսուն-իցցուն, հնչյունի պարզեցում՝ կծկել-կըզկէլ, անէճք-անէսկ, երիցակին-իրիսկին, հնչյունի բարդացում՝ վաթսուն-վացցուն, քանգ-կանց, վարժ-վնրջ, վարժապետ-վնրջւնրէր, ինժեներ-ինջինէր:*

**Ձեւաբանություն: Գոյական անուն:** Ինչպես հայերենի մյուս բարբառներում, Ղարաբաղի բարբառում եւս թվի կարգի արտահայտությունը պայմանավորված է եզակի եւ հոգնակի թվերի հակադրությամբ:

Հոգնակերտներն են *էր/ը՛ր, նէ, ք՛, ա(ն)ք/ւն(ն)ք, ու(ն)ք/ն(ն)ք, էք՛/էրք, օտէ(ն)ք՛, իք՛, անէք՛, վանք, վասկ, ըթկընէ, էն/ը՛ն, օտ/օտ, լար/լւնր*: Սրանցից յուրաքանչյուրը գործառում է որեւէ դիրքում՝ կապված տվյալ բառի ձեւի եւ իմաստի հետ:

Առավել հաճախակի գործառություն ունեն *էր* եւ *նէ* թեքութները, որոնք հին հայերենում (*եար, անի*) ընդգրկում էին սահմանափակ թվով հիմքեր՝ արտահայտելով հավաքական իմաստ:

էր հոգնակերտ ստանում են միավանկ բառերը՝ *տօն-տընէր, շօն-շընէր, հավ-հավէր*: Այդ թվին են դասվում նաեւ գրաբարյան *ն* վերջնահանգով բառերը, ինչպես նաեւ այն բարդությունները, որոնց վերջին բաղադրիչը անվանական միավանկ բառ է՝ *կ'առնը-կ'առնէր, թօռնը-թօռնէր, տընատար-տընըտարէր, ծըծամար-ծըծըմարէր*: Որոշ խոսվածքներում էր թեքույթին զուգահեռ գործածություն ունի *ը'ր-ը' տընը'ր, շընը'ր, հավը'ր*:

Նէ հոգնակերտ ստանում են բազմավանկ բառերը՝ *արկայթ-ըրկըթնէ, ջանավար-ջանավարնէ, ք'անթան-ք'ըթէնէ, ճըպատ-ճըպըտնէ, դասատու-դասատունէ*: Այդ վերջավորությամբ հոգնակի են կազմում նաեւ բառասկզբում *ռ* ունեցող որոշ միավանկ բառեր՝ *ռոք-ռուքնէ, ռուս-ռուսնէ*, որոնք ավելի շատ գործածվում են նախաձայն *ը*-ով կամ *ու*-ով՝ *ըռուք/ուռուք-ըռուքնէ/ուռուքնէ, ըռուս/ուռուս-ըռուսնէ/ուռուսնէ*:

*Ա(ն)ք/ան(ն)ք, ուք/նւք, էք/էրք, օտէ(ն)ք'* հոգնակերտները գործառում են ազգակցություն կամ գերդաստան ցույց տվող բառերի հետ՝ *հանէր-հընէրա(ն)ք, Սանք'իս-Սիրք'իսան(ն)ք, Վանի-Վանու(ն)ք/Վաննու(ն)ք, տըղա-տըղէք'/տըղէրք, փը'սա/ փըսօտէ(ն)ք'*:

*Ք/ք'* հոգնակերտը, որ գրաբարում ամենակենսունակ թեքույթն էր, բարբառում գործածվում է որտեղացի լինելը մատնանշող բառերի հետ՝ *դարաբաղէ-դարաբաղէք', պիլթընէցէ-պիլթընէցէք', շինըցէ-շինըցէք', տըղըցէ-տըղըցէք'*: *Ք/ք'*-ն իր հոգնանշության արժեքը պահել է նաեւ բաղադրյալ կազմություններում:

*Օտ/օտ* թեքույթով հոգնակի են կազմում ծառանուններ արտահայտող բառերը՝ *կաղնէ-կաղնօտ, զըկըռի-զըկըռօտ, շանվթանլի-շանվթանլօտ, թնուգի-թնուգօտ*: Այս բառերը հոգնակիությունից բացի կարող են արտահայտել նաեւ որեւէ բույսի աճման տեղի, վայրի իմաստ: Տարբերությունը երեւում է միայն շարահյուսական մակարդակում, ինչպես՝ *ք'ը'ցալ ըմ զըկըռօտը* (զնացել եմ այն տեղը, որտեղ զկռենիներ են աճում), *զըկըռօտ ըմ քանդանլ, պէրալ* (զկռենիներ եմ քանդել, բերել):

Թուրքերենից փախառյալ *լար/լար* հոգնակերտը հանդես է գալիս ինչպես փոխառյալ, այնպես էլ բնիկ բառերում՝ *բալա-բալալար, դայի-դայիլար, Արնթան-Արնթանլար, Թունի-Թունիլար*:

Մյուս հոգնակերտները կենսունակ չեն եւ գործածվում են սահմանափակ թվով բառերում՝ *մարթ-մարթիք', կընէգ'-կընանէք', շէն-շինըթկընէ, թէ-թիյէն/թիյը'ն, ծնու-ծնվէն/ծնվը'ն, փանդ-փանդվանք/ փանդվասկ*:

Հարկ է նշել նաեւ, որ որոշ բառեր կարող են ստանալ թվանիշ տարբեր կամ կրկնակի թեքույթներ, ինչպես՝ *ծի-ծիյը'ն-ծիյանք-ծիյեր-ծիյերք-ծիյանէր, շէն-շէնէր-շէնէք'-շէնէրք-շինըթկընէ*:

Հին հայերենի համեմատ՝ բարբառը հոլովման համակարգում երեւան է հանում զգալի տարբերություններ. գրաբարի վեց հոլովներից այստեղ առկա են չորսը՝ ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական, գործիական: Որոշ դեպքերում գործածական են ներգոյականի հատուկ ձեւերը, որ գրաբարը չունի: Բարբառում չեն գործառում գրաբարյան հոլովման որոշ տիպեր (*ո* վերջադրական հոլովում, *ե* ներքին հոլովում, տրականի *ոջ* վերջավորություն (Մարտակերտի շրջանի որոշ խոսվածքներում հազվադեպ գործածություն ունեն *տիրուչ, քըրօչ* եւ այլ ձեւերը), խառը հոլովում), առաջ է եկել *վա* արտաքին հոլովումը: Փոփոխություններ են կատարվել հոլովների կազմության մեջ. բարբառը չունի *նախդիրներ*, հայցականի *ս*, գործիականի *բ, լ, ք* վերջավորությունները: *թ*-ն պահպանվել է հատուկեւս բառերում՝ *վըճնուք, ծէռուք, կօլուք*, որտեղ արտահայտում է եզակի գործիականի իմաստ՝ *ոտքով, ձեռքով, վզով*: Անգործածական է նաեւ տրականաձեւ գործիականը: Նորություն է բացառականի եւ գործիականի կազմության վերլուծական եղանակը: Փոխվել է հոգնակիի հոլովման կազմությունը. ընդհանուր առմամբ նույնացել են հոգնակիի եւ եզակիի հոլովանիշ թեքությունները: Նույն բառերը գրաբարում եւ բարբառում ընդգրկվում են հոլովման տարբեր տիպերի մեջ:

Այսքանով հանդերձ՝ բարբառը հոլովման համակարգում գրաբարի հետ ունի մի շարք ընդհանրություններ:

Անվանական համակարգում հոլովները ունեն հետեւյալ կազմությունը.

Ուղղական հայցական հոլովը եզակի եւ հոգնակի թվերում զուրկ է հոլովակերտներից եւ մյուս հոլովներին հակադրվում է զրո վերջավորությամբ: Եզակիի եւ հոգնակիի հակադրությունը արտահայտվում է հոգնակերտների բացակայություն-առկայություն հատկանիշով:

Տրականը բնութագրվում է հոլովանիշ թեքությունների բազմազանությամբ, որոնք արտահայտվում են վերջավորություններով եւ հնչյունական հերթագայություններով:

Վերջավորություններն են՝ *էս/իս, ու(ս)/իւ(ս), վա/վս, ա(ս)/ս(ս)*:

Հերթագայություններն են՝ *ք/ց, ա/օ, է/օ, է/ու, ի/իւ, օ/ա, ու/ըվօ*, որոնցից առաջինն ունի վերջադրական, մյուսները՝ ներդրական բնույթ:

Տրականի նշված թեքություններից յուրաքանչյուրը հանդես է գալիս որոշակի սահմաններում:

*էս/իս* հոլովակերտը, հանդիսանալով ամենակենսունակ թեքությոն, չունի միանշանակ բնորոշում եւ ընդգրկում է բոլոր այն բառերը, որոնք չեն բաշխվում այլ հոլովանիշ թեքությունների սահմաններում: Այս հոլովակերտով տրական են կազմում.

ա) գրաբարյան հոլովման տարբեր տիպերից բազմաթիվ բառեր, ինչպես՝ *Վարդանայ-Վրդթանէն, սրտի-սըրտէն, գործոյ-կօրծէն, ծօվու-ծօվէն, աստեղ-ասթըխէն, ընկերութեան-հընգըրթունէն* եւ այլն:

բ) գրեթե բոլոր փոխառյալ բառերը՝ *ջանէն, գ'օլէն, ըստօլէն, դանդիկ:*

գ) հատուկ անունների մեծ մասը՝ *Ըրշակէն, Գագօյին, Վօվին, Ըրասիւէն, Թըրթանիկ:*

Հարկ է նշել, որ բարբառում բառերը *էն/ին* հոլովանիշ ստանում են միայն որոշյալ առման դեպքում:

*Ու(ւ)/նւ(ւ)* հոլովակերտը կենսունակությամբ երկրորդն է, մանավանդ որ *էն/ին* հոլովման բառերը անորոշ իմաստով գործածվելիս թեքվում են *ու(ւ)/նւ(ւ)* թեքությամբ, հմմտ.՝ *մէր ծառէն - մին ծառու, ծըբ շէնին- մին շէնու:*

*Ու(ւ)/նւ(ւ)* հոլովանիշ են ստանում նաեւ.

ա) *է/ի* վերջավորություն ունեցող բառերը՝ *քամէ-քամու(ւ), շինըցէ-շինըցու(ւ), կօզնի-կօզնի(ւ), Բաղդի-Բաղդու(ւ):*

բ) *ա* վերջավորություն ունեցող՝ ազգակցություն արտահայտող որոշ բառեր՝ *այա-այուն, ապա-ապուն, նանն-նաննուն, մամա-մամուն, պապա-պապուն:*

գ) *ա* վերջավորություն ունեցող անձնանունները, որոնք զուգահեռաբար թեքվում են նաեւ *էն/ին* թեքությամբ՝ *Լիդա-Լիդու(ւ)/Լիդին, Յաշա-Յաշանու(ւ)/Յաշին:*

Մարտակերտի շրջանի խոսվածքների մեծ մասում *ա* վերջավորություն ունեցող բառերը թեքվում են *ան* թեքությամբ՝ *այան ախպերը, ապան էշը, Յաշան տօնը:*

*Վա/վն* հոլովանիշով թեքվում են ժամանակի իմաստ արտահայտող բառերը՝ *օր-օրվա, քրսօր-քրսօրվն, կ'արունք-կ'արունքվա, ծըմըբնը- ծըմընըվա:*

*Ա(ւ)/ն(ւ)* հոլովանիշ ստանում են.

ա) *կընէգ'* եւ *ախճիգ'* բառերը՝ *կընգա, ըխճըկա:*

բ) հատուկ տեղանունները՝ *Ղարաբաղ-Ղարաբաղա, Իրէվան- Իրէվանա, Յնդրոնիթ-Յըդրոնիթն, Կ'օրէս-Կ'օրէսն:*

գ) գրաբարյան *ն* վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը՝ որոշյալ առման դեպքում՝ *կ'առնը-կ'առնանը, թօռնը-թօռնանը, տօռնը-տըռնանը:* Անորոշ առման դեպքում այս բառերը թեքվում են *ու* հոլովանիշով՝ *կ'առնու, թօռնու, տըռնու:*

*է/օ* հերթագայությունը պատմականորեն հանգում է հին հայերենի *այ/օ* հերթագայությանը՝ *ախպօր, դօրփօր* (նաեւ *դօրփոր*):

Գրաբարյան նույն հերթագայությանն են հանգում *ա/օ, ւն/օ-ն՝մար-մօր, հւնր-հօր*:

*Է/ու* հերթագայությամբ հանդես է գալիս *հանէր/հանուր* (նաեւ *հանօր*), իսկ *ի/ին* հերթագայությամբ՝ *տւնք'իր-տւնք'նր* (նաեւ *տւնք'օր*) բառը:

*Օ/ա* հերթագայությունը համապատասխանում է գրաբարյան *ու/ա* հերթագայությանը եւ ընդգրկում է *շօն* եւ *տօն* բառերը՝ *շօն/շան, տօն/տան*:

*Ու/ըվօ* հերթագայությամբ է թեքվում *քուր* հիմքը՝ *քուր-քըվօր, մըրաքուր-մըրաքըվօր*:

Յոգնակի թվում տրական հոլովը արտահայտվում է *էն/ին, ու(ն)* վերջավորություններով եւ *ք/ց* հերթագայությամբ:

*էն/ին* հոլովանիշ են ստանում *էր/ը՛ր, նէ, լար/լւնր, էն/ը՛ն* հոգնակերտներով բառերը՝ *ծառէր-ծըռէրէն, սալդաթնէ-սալդաթնէրէն, աթալար-աթալարէն, անիւնր-անիւնրին, թիյը՛ն- թիյը՛նէն*:

*Ու(ն)* հոլովանիշ են ստանում՝ *օտ/օտ* հոգնակերտ ունեցող բառերը՝ *զկըռօտ-զըկըռօտուն, տաննծօտ-տըննծօտուն*, ինչպէս նաեւ *նէ* հոգնակերտով բառերը՝ Յադրութի եւ Շաղախի ենթաբարբառներում՝ *ըմըննէ-ըմըննուն, սալդաթնէ-սալդաթնուն*:

*Ք/ց* հերթագայությամբ թեքվում են *ք', ա(ն)ք/ւն(ն)ք, ու(ն)ք/ին(ն)ք, էք'/էրք, օտէն(ն)ք', իք', անիք'* հոգնակերտներով բառերը, *շինըցէք'-շինըցուց, Ըրշակա(ն)ք-Ըրշակա(ն)ց, Սըրք'իսւն(ն)ք-Սըրք'իսւն(ն)ց, տատու(ն)ք-տատու(ն)ց, անգն(ն)ք-անգն(ն)ց, ըխճըկէք'-ըխճըկօց, տըղէրք-տըղօրց, փըսօտէ(ն)ք'-փըսօտա(ն)ց, մարթիք'-մարթկանց, կընանէք'-կընանուց* եւ այլն:

Այսքանով հանդերձ՝ տրականի թեքութիւնների գործառնությունը որոշակի հիմքերի հետ օրինաչափ երեւոյթ չէ, եւ երբեմն հոլովման տիպերի միջեւ կատարվում են փոխանցումներ, ինչպէս՝ *Ճըրտարա/Ճըրտարէն, օրվա/օրէն, տարվա/տարուն*:

Բացառական հոլովը ներկայանում է համադրական եւ վերլուծական կառուցվածքներով:

Համադրական բացառականի վերջավորությունն է *ա(ն)*, որ դրվում է ուղղական-հայցականի անհնչյունափոխ կամ հնչյունափոխված հիմքի վրա՝ *ծակ-ծակա(ն), թումբէր-թումբէրա(ն), տէնակ-տինակա(ն), տինըկնէ-տինըկնա(ն), հնունծտ-հնունծտան*:

*Օ/ա* հերթագայությամբ թեքվող բառերը եզակիում եւ վերջնահանգ *ք* ունեցող հոգնակերտով բառերը համադրական բացառականը կազմում են տրական հոլովածելից՝ *շօն-շան-շանան, տօն-տան-տանան, ծիյանք-ծիյանց-ծիյանցան, շէնէրք- շէնէրց- շէնը՛րցան*:

Վերլուծական կառուցվածքով բացառականը հիմնականում հատուկ է անձ ցույց տվող գոյականներին եւ բաղադրվում է տրականից եւ *անա* կամ *նրհստա/նըստա/նիստա/նըհստա* բառ-մասնիկներից՝ *տըղէն անա/նրհստա, մարթին անա/նրհստա, դորփուրցը անա/նրհստա, հորը անա/նրհստա, Ըր-շակէն անա/նրհստա*: Այդ գոյականները, բացառությամբ անձնանունների, բացառականը կարող են կազմել նաեւ համադրական եղանակով՝ *մարթան, կընգանան, ըխճըկանան*: Այս երեւոյթը, սակայն, չունի լայն տարածում:

Տեղանունների բացառականը նույնանում է սեռական տրականի կառուցվածքին՝ *հրէվանա, Մարտունա, հրանա*: Տարբերությունը նկատվում է միայն շարահյուսական մակարդակում:

Գործիական հոլովին եւս հատուկ են համադրական եւ վերլուծական կառուցվածքներ: Դրանց կազմության եղանակները նույնն են բացառականի հետ, այն տարբերությամբ, որ գործիականը ունի *ավ* ընդհանուր վերջավորությունը՝ *ծառավ(ը), քրէրավ(ը), տինըկնավ(ը), տանավ(ը), շանավ(ը), ծիյանցավ(ը), ըխճըկօցավ(ը)/ըխճըկօցը անավ/նրհստավ, տըղօրցավ/տըղօրցը անավ/նրհստավ, Ըրշակէն անավ/նրհստավ, քըվօրը անավ/նրհստավ, Յըթէրքավ(ը), Ճըրտարավ(ը)*:

Ներգոյական հոլովը հատուկ է հիմնականում տեղի եւ ժամանակի գաղափար արտահայտող բառերին եւ ունի *ուղղական հայցական հոլովածեւ+ըմ/ում վերջավորություն* կառուցվածքը (ուղղական հայցականը կարող է ներկայանալ անհնչունափոխ եւ հնչունափոխված հիմքերով)՝ *շէն-շէնըմ(ը)/շէնում(ը), կ'ում-կ'ումըմ(ը)/կ'ումում(ը), ժամ-ժամըմ(ը)/ ժամում(ը), ամէս-ամսըմ(ը)/ամսում(ը)*:

Հատուկ տեղանունների ներգոյականի իմաստը ընդհանուր առմամբ արտահայտվում է ուղղական հայցականով՝ *Շուշի լ'ավ ճուր կա* (Շուշիում լավ ջուր կա), *Տումէ բօլ գըկըռօտ կա* (Տումիում շատ գլռենիներ կան):

Մյուս դեպքերում ներգոյականի իմաստն արտահայտվում է տրական հոլովի եւ *մաչին/մէչին/միչին* ետադրության բաղադրությամբ՝ *խօսկէն մաչին* (խոսքի մեջ), *մարթին մաչին* (մարդու մեջ) եւ այլն:

**Հոդառության կարգը:** Բարբառին հատուկ են որոշյալության, ստացականության, ցուցականության եւ դիմորոշության հոդային ենթակարգեր:

Որոշիչ հոդերն են *ը-ն* եւ *ն-ն*, որոնցից առաջինը գործառում է բաղաձայնահանգ, երկրորդը՝ ձայնավորահանգ բառերի հետ՝ *կարքը, կ'իրքը, կըլօխը, ըստօլը, ռնմուզը, կատուն, տըղան, մայան*:

*Ը, ն* որոշիչ հոդ են ստանում գոյականները եւ փոխանունները եզակի եւ հոգնակի թվերի թե՛ ուղիղ, թե՛ թեք հոլովածեւերում՝ *շէնը, շէնին, շէնանը, շէնավը, շէնըմը*:

Անորոշությունը որոշյալությանը հակադրվում է զրո վերջավորությամբ եւ *մի/մին* ցուցիչի առկայությամբ՝ *քարը-քար/մի քար/մին քար, հայաթը-հայաթ/մի հայաթ/մին հայաթ*: *Մի/մին* ցուցիչը ունի միայն նախադաս կիրառություն:

Առանց որոշյալ հոդի են գործածվում.

ա) *իմ, քու, մեր, ծր՛ր* անձնական դերանունների հետ գործածվող՝ ազգականություն ցույց տվող բառերը՝ *իմ տատ, քու հներ, մեր մար, ծր՛ր քուր*:

բ) ազգակցություն ցույց տվող հավաքական գոյականները, որոնք տրականում թեքվում են *ք/ց* հերթագայությամբ՝ *պապուք, տատուք, անոթք, Ղևրիթլանք, Ասվանք*:

Ուղղական հոլովի կիրառություններից անորոշ ձեւ ունեն գոյականաբար հանդես եկող որոշիչները եւ կոչականները՝ *չամէնչ մէս, մըհըր հաց, Սնճի, յը՛ր կաց*:

Գործիականում սովորաբար որոշիչ հոդ չեն ստանում *վա* հոլովման բառերը՝ *ժամավ, օրավ*:

Շաղախի ենթաբարբառի հին սերնդի խոսվածքում անձնանունները սովորաբար խոսքի մեջ հոդ չեն ստանում՝ *Արշակ ք՛րճավ, Սանդու տըղան* եւ այլն:

Ստացականությունն արտահայտվում է *ս* եւ *տ* հոդերով՝ *տօնըս, հընգէրուքըս, հացըտ, ծառըտ*: Ստացական հոդ ստանում են գոյականները՝ *հներըս, մարըտ*, գոյականաբար գործածվող ածականները՝ *մըհըս, կուճիկիտ, թվականները՝ հէնգ՛ըս, էրկունջիկըտ*, մի շարք դերանուններ՝ *ինք՛ըս, ըտըհըտ*, անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները՝ *կարթիլըս, կէրածըտ, օտօղըտ*:

Ստացականության իմաստ են արտահայտում նաեւ *ը* եւ *ս* հոդեր ունեցող բառերը, որոնց ստացական իմաստը, սակայն, պայմանավորված չէ հոդով: Դա բառի ներքին ստացական իմաստն է, որի՝ երրորդ դեմքի վրա կոնկրետանալը տրամաբանորեն բխում է տեքստից՝ պայմանավորված *ս, տ* հոդերի բացակայությամբ, ինչպես՝ *վըհնը կօտրալ ա* (նրա ոտը), *տըղէն փըսակալ ա* (իր տղային):

Ստացական հոդերը միաժամանակ որոշյալության իմաստ են արտահայտում եւ կարող են գործառել բոլոր հոլովների եզակի եւ հոգնակի ձեւերի հետ՝ *քաղաքըս/քրղըքնէս, քրղաքէս/քրղըքներէս, քրղաքաս/քրղըքներաս, քրղաքավըս/քրղըքներավըս, քրղաքըմըս/քրղըքըմըս*:

Ստացական հոդեր ունեցող բառերը կարող են գործածվել եւ՛ առանց դերանուն հատկացուցիչների, եւ՛ դերանուն-հատկացուցիչներով՝ *ծր՛րքըս/իւն ծր՛րքըս, խօխատ/քու խօխատ*:

Գրաբարյան *ս, դ, ն* ցուցական հոդերից բարբառում, ինչպես արդի հայերենում, պահպանվել է միայն *ս*-ն, որն ունի *էս* (այս) դերանվան իմաստը եւ գործածվում է տեղի ու ժամանակի մի շարք անունների հետ՝ արտահայտելով ժամանակի եւ առարկայի մոտիկության գաղափար, ինչպես՝ *աշունքըս* (այս աշնանը), *վերջերքըս* (այս վերջին ժամանակները), *աշխարքըս* (այս աշխարհը), *յըրգ'իրըմըս* (այս երկրում): Այս բառերը կարող են գործածվել նաեւ *էս* դերանվան հետ՝ *էս աշունքըս, էս ըմբռնուս, էս շէնըս*:

Դիմորոշության կարգը, որ հատուկ է եւ՛ հին, եւ՛ արդի հայերենին, պահպանվել է նաեւ բարբառում եւ արտահայտվում է *ս, տ* հոդերի միջոցով՝ *յը՛ս ինք'ըս, տու ինք'ըտ, միևակըտ, սաղըս*:

**Ածական անուն:** Ածականները բարբառում լինում են որակական եւ հարաբերական: Որակական ածականների բաղդատական աստիճանը ներկայանում է վերլուծական եւ շարահյուսական կառուցվածքներով: Վերլուծական կառուցվածքը արտահայտվում է գրաբարյան *քան+ գ-քանց/կանց/ կանս* նախդիրի միջոցով՝ *իմ տըղաս կուճի յա, քանց քունը*:

Բաղդատականի իմաստ է արտահայտվում նաեւ *պակաս, շատ* բառերի, ինչպես նաեւ *ավուն* ածանցի միջոցով՝ *պակաս խէլ'ունք, շատ դաշննգ', կ'ըպտննվուն*:

Շարահյուսական կառուցվածքը արտահայտվում է համեմատելի առարկայի բացառական հոլովածեով՝ *էտ ծին էս ծիյան քավթառ ա*:

Գերադրական աստիճանին եւս հատուկ է վերլուծական կառուցվածք. կազմվում է *ամմէն* եւ *լօխ* դերանունների բացառական հոլովածեի հարադրությամբ՝ *ամմէնաթննգ'ը, ամմէնապը՛նդը, լուխճաց/ լօխճաց պէրակը*:

Հարաբերական ածականները սովորաբար կազմվում են գոյականներից՝ *է/ի* ածանցով՝ *արկաթ-ըրկաթէ, քար-քարէ, պ'որթ-պըրթի, փնն-փննի*:

Փոխանվանական կիրառության դեպքում ածականը հոլովվում է *էս/ին* (որոշյալ առման դեպքում) եւ *ու* (անորոշ առման դեպքում) հոլովումներով՝ *պառավը/պառավ, պըռավէն/պըռավու, պըռավէն անա/ նը՛ստա/պըռավու անա/նը՛ստա, պըռավէն անավ/նը՛ստավ/պըռավու անավ/նը՛ստավ*:

**Թվական անուն:** Բարբառում թվականները լինում են քանակական, դասական, բաշխական, չափական, անձներական, կոտորակային, բազմապատկական:

Քանակական թվականներն են. միավորներ՝ *մի/մին, էրկու, իրը՛ք/իրէք, չօրս/չօրք', հէնգ', վէց(ց), օխտը, օթ, իննը (օխտը եւ իննը թվականները հանդես են գալիս միայն հոդով), տասնավորներ՝ տաս(ս)ը, տըսնըմին/տասնըմին, տըսնըէրկու, տըսնըիրը՛ք, տըսնըչօրս, տըսնըհէնգ', տըսնըվէց, տըսնըօխտը, տըսնըօթ, տըսնըիննը, քըսան, յէրէս(ս)ուն/ըրէս(ս)ուն/ն'ըրծս-*

*(ս)նն/հրէս(ս)ուն, քրռաս(ս)ուն/ քառաս(ս)ուն, իցցուն/իցծուն/իծծուն/, վաց-  
ցուն/վացծուն/վածծուն/, ուխտընաս(ս)ուն/ուխտունաս(ս)ուն, ութաս(ս)ուն, ին-  
ննս(ս)ուն/իննաս(ս)ուն: Մյուս թվականներից են՝ հնրոնր, հազ(զ)ար/  
հըզ(զ)ար/հըզ(զ)էր/հիզ(զ)էր միլծն/միլյօն/մըլյօն, միլլնրոդ/մըլլարոդ:*

*Տաս(ս)ը* թվականը միավորներին միանում է հնչյունափոխված եւ ան-  
հնչյունափոխ արմատներով՝ *տըսնը/տասնը*, որտեղ վերականգնվում է  
գրաբարյան *և* վերջնահանգը:

Երբեմն գործածվում է նաեւ *քաց(ց)ուն/ քած(ծ)ուն/քաթսուն* տասնավո-  
րը, որը *քառասուն* թվականի հնչյունափոխված ձեւն է՝ *իցցուն* եւ *վացցուն*  
թվականների համաբանությամբ, սակայն ունի այլ իմաստ՝ *շատ, ահագին*,  
ինչպէս՝ *քացցուն հըէտէ ասալ ըմ* (շատ եմ ասել):

Տասնավորները միավորներին միանում են նախադաս շարադասու-  
թյամբ:

Դասական թվականները, բացառությամբ *առաջին-ըրըջի/առաջի/ըռաջի*  
թվականի, արտահայտվում են քանակական թվականների եւ թուրքերե-  
նից փոխառյալ *ինջի/ընջի/հինջի* մասնիկի հարադրությամբ՝ *վէց(ց)ինջի/  
վէց(ց)ընջի, հրըէք(հ)ինջի:*

Այս թվականների իմաստը նախադասության մեջ կարող է ներկայաց-  
վել նաեւ քանակական թվականների տարբեր հոլովածեւերով՝ *փոխվալ ա  
հէնգ՛ը* (փոխադրվել է հինգերորդ դասարան), *վէցըմըն ա սըվըէրում* (վեցե-  
րորդ դասարանում է սովորում), *օխտան տոնա ա յըէկալ* (յոթերորդ դասա-  
րանից հեռացել է): Նոր սերնդի խոսվածքում երբեմն գործածվում են  
գրական հայերենի *օրթ/րօրթ/էրօրթ* ածանցներով կազմված ձեւերը՝ *չօ-  
րօրթ, յէրգըրօրթ, հինգ՛էրօրթ:*

Թվականների մյուս տեսակներն արտահայտվում են.

- բաշխականները՝ քանակականների կրկնությամբ՝ *մին-մին, հէնգ՛-  
հէնգ՛, քըսան-քըսան:*

- չափականները՝ *անուց/անուց* ածանցով՝ *տըսսանուց, իրըքանուց,  
վըցցանուց:*

- բազմապատկականները՝ *տակ, պատէզ՛* բառերի հետ քանակականնե-  
րի հարադրությամբ՝ *հինգ՛ըտակ, հինգ՛ըպատէզ՛, վից(ց)ըտակ, վից(ց)ըպա-  
տէզ՛,*

- անձներականները *ըէքան/էքան* ածանցով՝ *հինգ՛ըէքան/հինգ՛էքան,  
վըց(ց)ըէքան/վից(ց)էքան:*

- կոտորակայինները՝ քանակական թվականների բացառականով (հայ-  
տարար) եւ ուղղական հայցականով (համարիչ)՝ *չօրսան մինը* (մեկ չորրորդ),  
*քըսանան օթը* (ութ քսաներորդ):

Թվականները փոխանուն կիրառությամբ հոլովվում են՝ տրականում թեքվելով *էն/ին* (որոշյալ առում) եւ *ու* (անորոշ առում) հոլովանիշներով՝ *օթը/օթ, օթէն/օթու, օթան/օթա, օթավը/օթավ*:

**Դերանուն:** Բարբառում դերանունները լինում են անձնական, ցուցական, հարցական-հարաբերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ, ժխտական:

Անձնական դերանուններն են՝ *յը՜ս/յըս/յէս, տու/տո՛ւ, ինք՛ը/ինքը, մուք, տուք/տո՛ւք, ո՛րն(ն)ք*:

Ցուցական դերանուններն են՝ *էս, էտ, էն, ըստի/իստի, (ը)տի/իտի, (ըն)դի/ինդի, էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, ըստը՜հ/ըստէդ/ըստըդ, (ը)տը՜հ/(ը)տէդ/(ը)տըդ, (ըն)դը՜հ/(ըն)դէդ/ընդըդ*:

Էն ցուցական դերանունը կիրառվում է նաեւ *նա* անձնական դերանվան փոխարեն:

Հարցական-հարաբերական դերանուններն են՝ *հու(վ), հինչ, վէր/վը՜ր, (հ)ըշտը՜հ/ըշտէդ/հիշը՜հ/վըրդէդ/վըրդը՜հ, հիշկան/հինչքան/հինչանք/հիշչա(ն)ք/ հինչուք/հիշչուք, քանէ/քանը՜ք/քանի, հիբ(ը)/հիբի/ հիբու/հէբ/հէփ, հուր, հօր, խէ/խի, հունց(ը)/հունցու*:

Որոշյալ դերանուններն են՝ *ամ(մ)էն/ամը՜ն/ամ(մ)ան, ամ(մ)էնք՛ը/ ամը՜նք՛ը/ամանք՛ը, ան(է)գ՛ն/ ամէգ՛ա/անմիգ՛ն/ամաքա/ամէք՛ա/ ան(է)կ՛ն ամմէն մին, լօխ, սաղ*:

Անորոշ դերանուններն են՝ *մի(ն), էրո՛ւշ/օրո՛ւշ/օրիշ, մը՜կալ/մէկալ, մի(ն) քանէ, փըլան, փըստան, փըլանք՛նս/փալանք՛նս*:

Ժխտական դերանուններն են՝ *վէչ/վէշ մինը, վէչ/վէշ միի պէն*:

Փոխադարձ են *ո՛րո՛ր, միևմիևու/մո՛ւսմո՛ւսնո՛ւ* դերանունները:

Անձնական դերանունների սեռական հոլովածները բարբառում գործածվում են որպէս ստացական դերանուններ եւ փոխանվանաբար գործածվելիս կարող են հոլովվել, ինչպէս՝ *իմը, քունը, իմին, քունան, ո՛րնաննվը* եւ այլն:

Դերանունները ներկայանում են պարզ եւ բաղադրյալ կառուցվածքներով: Պարզ դերանուններ են՝ *յը՜ս, տու, էս, էտ, էն, հիբ, հուր, քանէ, մին, լօխ, սաղ* եւ այլն: Բաղադրյալ դերանուններից համադրական բարդություններ են՝ *ըստը՜հ, ըտը՜հ, ընդը՜հ, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, մը՜կալ (մէկ այլ), հարադիր բարդություններ են՝ վէչ մինը, վէչ մին պէն, ամմէն մի, մի(ն) քանէ, կրկնավոր բարդություններ են՝ ո՛րո՛ր, միևմիևու*:

Դերանունների մի մասը չեզոք է դեմքի նկատմամբ, ինչպէս՝ *հիշկան, հուր, ըշտը՜հ, հիբ*:

Որոշ դերանուններ դեմքի գաղափար են հանդես բերում՝ հող ստանալով, օրինակ՝ *ամմէն մինըս, վէշ մինըտ, սաղըս*:

Որոշ դերանուններ (հատկապես անձնական) ունեն դեմքի իմաստի լիակատար դրսեւորում, ինչպես՝ *յը՛ս, տու, ինք՛ը, մուք, տուք, նւրանք, էն*:

Աստ թվի կարգի իմաստային արտահայտության՝ բարբառում դերանունները բաժանվում են մի քանի խմբերի.

ա) դերանուններ, որոնք ունեն թվի կարգի լիակատար դրսեւորում, դրանք են՝ անձնական՝ *յը՛ս, տու, ինք՛ը*, ցուցական՝ *էս, էտ, էն, ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ*, հարցական-հարաբերական՝ *հու(վ), հինչ, ըշտը՛դ*, անորոշ՝ *էրո՛ւշ, մը՛կալ, փըլան, փըստան, փըլանք՛նս*,

բ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ եւ եզակի իմաստ՝ *քանէ, մին, ամմէն մին, վէր, վէչ մինը, վէչ մին պէն*,

գ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ, հոգնակի իմաստ՝ *ամմէն, լօխ, սաղ, նւրո՛ւր, մինմինու, մին քանէ*,

դ) դերանուններ, որոնք ընդհանրապես չեզոք են թվի կարգի արտահայտության նկատմամբ՝ *էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, հունց, հիշկան, հիբ, հուր, խէ*:

Ձեւաբանական մակարդակում հոգնակի թիվը ներկայանում է *ք, էր, նէ* հոգնակերտներով:

Ք թվանիշ թեքույթով կազմություններ ունեն միայն անձնական եւ ցուցական դերանունները՝ *յը՛ս-մուք, տու-տուք, ինք՛ը-նւրանք, էս-ըստըրանք/ըստահանք, էտ-ըտըրանք/ըտահանք, էն-ընդըրանք/ընդահանք* (Շաղախի ենթաբարբառ՝ *նւստո՛ւք/նւստո՛ւք՛էր, նւտո՛ւք/նւտո՛ւք՛էր, նւնդո՛ւք/նւնդո՛ւք՛էր*):

Մյուս դերանունների հոգնակին կազմվում է անվանական հիմունքներով. միավանկները ստանում են *էր*, բազմավանկները՝ *նէ* հոգնակերտները, որոնց նախորդում է ուղղական հայցականի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքը՝ *հու(վ)-հուվէր, հինչ-հինչէր, էրո՛ւշ-էրո՛ւշնէ*:

Ցուցական *ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ* եւ հարցական-հարաբերական *ըշտը՛դ, հու(վ), հինչ* դերանունները կարող են ստանալ կրկնակի հոգնակերտ (*ուղղական հայցականի հիմք + էր + ք*)՝ *ըստը՛դէրք, ըտը՛դէրք, ընդը՛դէրք, հուվէրք, ըշտը՛դէրք, հինչէրք*:

Որոշ դերանուններ՝ *հունց, հօր, խէ*, բարբառում փոխանվանական կիրառություն չունեն եւ չեն հոլովվում:

Թեքվող դերանուններին հատուկ է հոլովման երկու տիպ՝ անվանական, երբ դերանուններն ստանում են գոյականներին հատուկ հոլովակերտներ (*մինը-մինին*), եւ դերանվանական, երբ դերանունների ուղիղ եւ թեք հոլովածեւերը ներկայանում են տարարմատությամբ (*յը՛ս-իմ-ինձ*):

**Անվանական հոլովում:** Դերանունների մեծ մասին հատուկ են ուղիղ եւ թեք բոլոր հոլովածեւերը (բացառությամբ ներգոյականի): Դրանք են՝

ինքը, էս, էտ, էն, հու(վ) դերանունների հոգնակի ձևերը (նւրանք, (ը)ստըրանք, (ը)տըրանք, (ըն)դըրանք, հուվէրք, եւ էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, ըստըհ, ըտըհ, ընդըհ, ամմէն, ամմէն մի, լօխ, սաղ, մին, էրո՛ւշ, մըհկալ, մին քանէ, փըլան, փըստան, փըլանք'նս, հինչ, վէր, ըշտըհ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն դերանունները: Սրանք բոլորն էլ ունեն չորսական հոլովածեւ, որոնք կազմվում են անվանական հոլովման սկզբունքներով. տրականը բաղադրվում է ուղղական հայցականի հիմքից եւ հոլովական թեքոյթներից, բացառականը եւ գործիականը հանդես են գալիս երկու կազմությամբ՝ պարզ (ուղղական հայցականի հիմք+վերջավորություն) եւ վերլուծական (տրական+անա/նըհստա (գործ.՝ անազ/նըհստազ) բառ մասնիկներ: Եթե խոսքը իրի է վերաբերում, բացառականի եւ գործիականի կազմությունը պարզ է, իսկ եթե անձի մասին է, կազմությունը վերլուծական է:

*Ըստըրանք, ըտըրանք, ընդըրանք, նւրանք, հուվէրք* դերանունները տրականում թեքվում են *ք/ց* հերթագայությամբ՝ *ըստըրանք, ըստըրանց, ըստըրանց անա/նըհստա, ըստըրանց անազ/նըհստազ*:

*էն/ին* հոլովանիշով թեքվում են՝ *էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, հիշկան, ըստըհ, ըտըհ, ընդըհ, ամմէն, ամմէն մի, մին, լօխ, սաղ, մին քանէնը, էսհինչը, էտհինչը, էնհինչը, հինչ, վէր, ըշտըհ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն, էրո՛ւշ, մըհկալ, փըլան, փըստան, փըլանք'նս* դերանունները՝ *էսքան(ը), էսքանէն, էսքանան/էսքանէն անա/նըհստա, էսքանազ(ը)/էսքանէն անազ/նըհստազ*:

Մի շարք դերանուններ, որոնք թեքվում են *էն/ին* հոլովանիշով, անորոշ առման դեպքում թեքվում են *ու* հոլովանիշով, ինչպես՝ *էրո՛ւշին տօնը-էրո՛ւշու տօն, ըստըդէն ճո՛ւրը-ըստըդու ճո՛ւր*:

Յարցական-հարաբերական *հիք* եւ փոխադարձ *նւրո՛ւր, մինմինու* դերանունները ունեն թերի հոլովում:

*Յիք* դերանունը չունի գործիական հոլով, տրականը կազմվում է ժամանակ ցույց տվող գոյականների նման՝ *վա* հոլովանիշ թեքոյթով, բացառականը ստանում է *անց* վերջավորությունը՝ *հիք, հիքվա, հիքանց*:

*նւրո՛ւր* եւ *մինմինու* դերանունները գրաբարի նման (*իրերաց, միմեանց*) չունեն ուղղական հոլով, բացառականը եւ գործիականը կազմվում են վերլուծական եղանակով՝ *նւրո՛ւր, նւրո՛ւր անա/նըհստա, նւրո՛ւր անազ/նըհստազ, մինմինու, մինմինու անա/նըհստա, մինմինու անազ/նըհստազ*:

Որոշ հարադիր բայերում պահպանվել է գրաբարյան *իրերաց* ձեւը՝ *նւրո՛ւրօ(ն)ցնձ ածէլ/անէլ/տալ/քըցիլ/ըղնէլ/ընցընէլ/ինիլ/կ'ննլ*:

**Դերանվանական հոլովում:** Դերանվանական հոլովման առանձնահատկությունները հանդես են գալիս ուղղական հայցական, սեռական եւ

տրական հոլովներում, իսկ բացառականը եւ գործիականը կազմվում են անվանական հոլովման ընդհանուր սկզբունքներով:

Դերանվանական հոլովմամբ թեքվում են անձնական *յը՛ս, տու, մուք, տուք, ինք՛ը*, ցուցական *էս, էտ, էն*, հարցական-հարաբերական *հու(վ)* դերանունները, որոնց հոլովման առանձնահատկությունները առնչվում են ընդհանուր հայերենի դերանվանական հոլովման համակարգին:

Անձնական *յը՛ս, տու, մուք, տուք* դերանունները, ի տարբերություն մյուս բոլոր դերանունների, ունեն հնգական հոլովածեւ՝ ուղղական-հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական: Այս դերանունների սեռականը եւ տրականը համընկնում են գրաբարի հետ՝ *իմ-ինձ, քու-քը՛գ, մեր-մը՛գ, ծեր-ծը՛գ*: Եղած տարբերությունները պատմական հնչյունափոխության արդյունք են: Բացառականը եւ գործիականը ունեն համադրական կառուցվածք՝ *ինձանա, ինձանավ, ծըզանա, ծըզանավ*:

*Ինք՛ը* անձնական դերանունը սեռական հոլովածեւ չունի: Տրականն առնչվում է գրաբարյան *իրեան* հոլովածեւին՝ *իրան*: Բացառականը եւ գործիականն ունեն վերլուծական կառուցվածք՝ *իրան անա/ւը՛ստա, իրան անավ/ւը՛ստավ*:

Որոշ դարձվածներում պահպանվել է գրաբարյան (*զ*)*ինքն-զինքն* հայցական հոլովածեւը՝ *զինքն ըսպանել/թափ տալ/հըվաքել/կուրցընել/շաղ տալ* եւ այլն, որտեղ *զինքն* կրել է իմաստափոխություն եւ պարզապես նշանակում է մարմին:

Ցուցական *էս, էտ, էն* դերանունները ունեն չորսական հոլովածեւ, ինչպես անվանական հոլովումը: Դերանվանական հոլովման առանձնահատկությունները արտահայտվում են տրական հոլովում՝ *ըստըրա, ըտըրա, ընդըրա* (Շաղախի ենթաբարբառ - *նւստնր, իւտնր, ինդնր*):

Բացառականը եւ գործիականը կարող են կազմվել եւ՛ համադրական, եւ՛ վերլուծական եղանակով՝ *ըստըրանա/ըստըրա անա/ւը՛ստա, ըստըրանավ/ըստըրա անավ/ւը՛ստավ*:

Հարցական-հարաբերական *հու(վ)* դերանունը տրականում թեքվում է *վ/ր* հերթագայությամբ՝ *հու(վ)-հնր*: Տրական հոլովածեւը համապատասխանում է գրաբարյան սեռական հոլովածեւին՝ *ոյր*: Բացառականը եւ գործիականը ունեն վերլուծական կառուցվածք՝ *հնր անա/ւը՛ստա, հնր անավ/ւը՛ստավ*:

**Բայ:** Ինչպես հայերենի մյուս դրսեւորումներում, Ղարաբաղի բարբառում եւս բայն ունի եղանակի, ժամանակի, դեմքի, թվի եւ սեռի քերականական կարգեր: Սրանցից յուրաքանչյուրը եւ իմաստային, եւ կառուցվածքային տեսակետից հիմնականում մնում է ընդհանուր հայերենի կաղապարներում:

Բայերն ըստ կազմության բաղադրություններ են, որոնք լինում են երկու բնույթի՝ համադրական եւ հարադրական: Համադրական կազմությունների կառուցվածքը բնութագրվում է *հիմք+բայական վերջավորություն* կառուցվածքով:

Բայերի հիմքը կարող է լինել անածանց եւ ածանցավոր, որոնց անորոշ ձեւում հաջորդում են *ալ/անլ, էլ* եւ *իլ* բայական վերջավորությունները:

Որպես անածանց հիմք կարող է հանդես գալ բայարմատը (*մըն-ալ, խոս-էլ, կարթ-իլ*), անվանական արմատը (*կ'իպտ-իլ, քար-էլ*), փոխառյալ արմատը (*յըհանր-իլ, նաղդ-էլ*), կրկնավոր արմատը (*հըռհըռ-ալ, փըրփըր-էլ*):

Ածանցավոր հիմքերի կառուցվածքն է *արմատ+բայածանց*: Բայածանցները բաժանվում են երեք խմբի՝ հիմքակազմ, կերպանիշ եւ սեռանիշ: Բարբառի հիմքակազմ ածանցներն են՝ *ան, էն, ըն, ն, չ*, որոնցից առաջին չորսը համապատասխանում են գրաբարի *ան, են, ն*, իսկ վերջինը՝ *չ* բայածանցների: Հին հայերենի *ն* բայածանցը սովորաբար բարբառում մնացել է անփոփոխ՝ *անուկ-անուկ, դնել-տիկիլ*, մինչդեռ *ան* եւ *են* բայածանցների *ա* եւ *ե* ձայնավորները մեծ մասամբ ընկել են կամ հնչյունափոխվել՝ *տեսանել-տըսնալ, հասանել-հըսնել, անկանել-ըղնել/ընգընել, մօտենալ-մուտանալ, գտանել-քըթէնալ*: Որոշ բայերում *ան*-ը մնացել է անփոփոխ՝ *հասկանալ-հըսկանալ, քարանալ-քըրանալ*: Այս բայածանցը կարող է հանդես գալ նաեւ մի շարք արմատների հետ՝ կազմելով նոր բայահիմքեր, ինչպես՝ *քաշ+ան+ալ-քըշանալ, դամմագ+ան+ալ-դըմմըզանալ*:

Չ բայածանցը ընդհանուր առմամբ մնացել է անփոփոխ՝ *թըռչիլ, օռչիլ, փախչիլ*:

Հին հայերենի *նչ, աչ, անչ* բայածանցները բարբառում սովորաբար չեն գործառում: Թերեւս կարելի է նշել *ճանաչել-ճընան(ն)չիլ, մեղանչել-մըղանչիլ* բայերը:

Գրաբարում հազվադեպ գործածվող բազմապատկական-կերպանիշ *ատ, օտ* բայածանցները բարբառում խիստ կենսունակ են՝ *կուտըր-ատ-էլ, շըղշուղ-ատ-էլ, ճըկճուկ-ատ-էլ, ծըն-օտ-էլ, պըտըռ-օտ-էլ, ըսպըն-օտ-էլ*: Միաժամանակ երեւան են գալիս *օր/օր* եւ *կօտ* կերպածանցները, որոնք չկային գրաբարում՝ *պըչպըչ-օր-էլ, կուղկըղ-օր-էլ, տըշտըշ-օր-էլ, կընընչ-կօտ-էլ, թըռչըռ-կօտ-էլ*:

Սեռանիշ ածանցներն են՝ *-ըվ/վ* եւ *-ցըն/ըց(ը)ն*:

Կրավորական *ըվ/վ* բայածանցը, որ ավանդված չէ գրաբարում, սովորաբար դրվում է ներգործական սեռի բայերի վրա: Է եւ *ի* լծորդության բայերի դեպքում այն դրվում է անորոշի հիմքի, *ա* լծորդության բայերի դեպքում՝ երբեմն նաեւ անցյալի հիմքի վրա՝ *օտել-օտվել, շինիլ-շինվիլ, աղալ-աղվել/ըղացվել*:

Պատճառական *ցըն/ըց(ը)ն* բայածանցը համապատասխանում է գրաբարի *ուցան* ածանցին: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, որտեղ բոլոր բայերի պատճառականը կազմվում է անցյալի հիմքից, բարբառում *ցըն/ըց(ը)ն* ածանցը դրվում է անորոշի հիմքի վրա՝ *ծիծաղել-ծիծաղեցուցանել-ծըծըղց(ը)նել*: Բացառություն են կազմում *ան, ըն, ն* ածանցներով բայերը, որոնց դեպքում պատճառական բայածանցը դրվում է անցյալի հիմքի վրա՝ *տըմանալ-տըմըց(ը)նել, ընցընել-ընցըց(ը)նել, հըսնել-հըսցընել*:

Հարադրական կազմությունները բարբառում ունեն լայն գործածություն: Հարադրության առաջին մասում գործառում են բնիկ եւ փոխառյալ բառեր, իսկ երկրորդ մասում՝ մի շարք բայեր, ինչպես՝ *խաղ անել, ինջիմիշ ինիլ, հօփ կ'անլ, սըբրտ տինիլ, յըբր ածել* եւ այլն:

*Տալ* բայի եւ որեւէ այլ բայի անորոշ ձեւի հարադրությամբ արտահայտվում է պատճառականության իմաստ՝ *ասել տալ, խօսել տալ, օտել տալ, ըսպանել տալ*:

Բարբառում բայի բոլոր ձեւերը կազմվում են երեք հիմքից՝ *անորոշի հիմք, անցյալի հիմք, անորոշ դերբայ* (դերբայական հիմք):

Սրանցից հիմնական են համարվում առաջինները, որոնք կազմությամբ լինում են պարզ կամ արմատական եւ բաղադրյալ: Անորոշի հիմքը պարզ է, երբ զուրկ է բայածանցներից՝ *աղ-ալ, խըմ-ել, կարթ-իլ*: Անորոշի բաղադրյալ հիմքում բայարմատների հետ գործառում են բայածանցները՝ *մուտ+ան-ալ, առ+ն-ել, քըթ+էն-ալ, ընց+ըն-ել, թըռ+չ-իլ, ըստըկ+օտ-ել, կուտըր+ատ-ել, կըրկըրտ+օր-ել, կընընչ+կօտ-ել, ըսպան+վ-ել, չուք+ըց(ը)ն-ել*:

Անցյալի հիմքը պարզ է, երբ համընկնում է բայարմատին: Անցյալում այդպիսի հիմք ունեն *էն, ըն, ն, չ* ածանցներով բայերը, որոնցից ածանցները դուրս են ընկնում, ինչպես՝ *քըթէնալ-քըթ, ընգընել-ընգ, տըբսնալ-տըբս, օռչիլ-օռ*: Անցյալի բաղադրյալ հիմքը լինում է բուն հիմքածանցավոր եւ հերթագայական: Հին հայերենի *ի* թույլ բաղադրիչով անցյալի հիմք բարբառին հատուկ չէ: Բուն հիմքածանցավոր հիմքի կառուցվածքն է՝ *անորոշի հիմք+հիմքածանց*: Որպես հիմքածանց՝ հանդես է գալիս *ց*-ն, որին կարող են նախորդել *ա, ըբ, է* լծորդ ձայնավորները: Այդպիսի հիմք ունեն *ա* լծորդության բայերը եւ *է, ի* լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ *աղալ-ըղաց, մընալ-մընաց, խըմել-խըմըբց, ըսպընօտել-ըսպընուտըբց, խաշվիլ-խըշվեց*: Հերթագայական հիմքը կազմվում է բայածանցների եւ անցյալի հիմքածանցների հերթագայությունների միջոցով: Դրանք են.

ա) *ն/ց* - անցյալի հիմքը այդպիսի հերթագայությամբ են կազմում *ան* ածանցով բայերը՝ *մըծանալ-մըծաց, թիթըվանալ-թիթըվաց, հըստանալ-հըստաց*:

բ) *և/ր* - այդպիսի հերթագայություն ունեն պատճառական ածանց ունեցող բայերը՝ *մուտքընկել-մուտքըրը, հըսընկել-հըսըրը, շըշկըռընկել- շըշկըռըրը, խուսընկել-խուսըրը*, ինչպես նաև որոշ անկանոն բայեր՝ *տանկել-տար, տինկիլ-տիր*: Մի քանի անկանոն բայերի անցյալին բնորոշ է տարահիմքությունը՝ *օտեկ-կէր, տալ-տուվ, կ'անլ-ըէկ*:

Անորոշ դերբայը իբրև հիմք (դերբայական հիմք) գրաբարում մասնակցում էր միայն ապառնի դերբայի կազմությանը՝ *թռչելոց, թռչելի*: Բարբառում այս հիմքից են կազմվում ապառնի դերբայը (բացառությամբ *և, ան, էն, ըն, ցըն/ըցըն* ածանցներով բայերի)՝ *խուսըլան, կըրթիլան, ըղըլան*, պայմանական եղանակի ժխտականը՝ *աղալ չըմ, ասէլ չըմ*, արգելական հրամայականը՝ *ք'ինիլ մէլ, մընալ մէք'*, իսկ Շաղախի ենթաբարբառում՝ նաև ըղծական, պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակները՝ *ասիլ ըմ լան, բիղը/բէղը ասիլ ըմ լան*:

Բարբառում բայերի սեռի իմաստաձեւային հատկանիշները արտահայտվում են ներգործական, կրավորական եւ չեզոք սեռերի միջոցով՝ հին հայերենի համեմատությամբ երեւան հանելով մեծ տարբերություններ:

Հայտնի է, որ գրաբարում բայական սեռի կարգը արտահայտվում էր լծորդ ձայավորների, ինչպես նաև ժամանակաթվադիմանիշ վերջավորությունների միջոցով, ինչպես՝ *գրեմ* (ներգործական սեռ)- *գրիմ* (կրավորական սեռ), *աղաց* (ներգործական սեռ) - *աղացալ* (կրավորական սեռ): Հաճախ էլ նույն բայաձեւը արտահայտում էր եւ ներգործական, եւ կրավորական սեռերի իմաստներ. օրինակ, *հեղու* նշանակում էր եւ *թափում է*, եւ *թափվում է*, *աղայ*՝ եւ *աղում է*, եւ *աղացվում է*: Տվյալ դեպքում սեռերի հակադրությունը իրացվում էր նախադասության մեջ: Հին հայերենում սեռերը չէին տարբերակվում նաև *անցյալի անկատար* ժամանակաձեւում, իսկ դերբայները ընդհանրապես չունեին սեռի ձեւաբանական արտահայտություն: Արեւմտյան խմբակցության որոշ բարբառներ մասամբ պահպանել են գրաբարյան առանձնահատկությունները, մինչդեռ արեւելյան խմբակցության բարբառներում, այդ թվում եւ Ղարաբաղի բարբառում, ինչպես ժամանակակից հայերենում, սեռերի հակադրությունը հիմնականում արտահայտվում է *վ* սեռաձանցի առկայություն - բացակայություն հատկանիշով: Այս ձեւաբանական միջոցը, որ հանդես է եկել դեռևս ետգրաբարյան շրջանում, հետագայում գործածվել է գրեթե բոլոր բարբառներում:

*Վ* սեռաձանցի միջոցով կրավորական սեռը հակադրվում է ներգործականին: Ընդ որում, *վ* ածանց կարող են ստանալ նաև անդեմ բայերը՝ *ըսպանվել, ըսպանվալ, ըսպանված, ըսպանվող, ըսպընկըլան* եւ այլն:

Սակայն *վ*-ն զուտ կրավորանիշ ածանց չէ, եւ բազմաթիվ բայեր *վ* ստանալիս արտահայտում են նաև չեզոք սեռի իմաստ: Այդպիսի բայերի մի մասը սովորաբար չեզոքության իմաստ ունի փոխաբերական նշանակության

դեպքում, ինչպես՝ *ըզադվել*- 1) *ազատվել* (կրավ.), 2) *ծննդաբերել* (չեզոք), *քամվել* - 1) *քամվել* (կրավ.), 2) *սնանկանալ* (չեզոք) եւ այլն:

Չեզոք սեռի իմաստ են արտահայտում նաեւ անդրադարձություն եւ փոխադարձություն ցույց տվող որոշ բայեր՝ *տըղըվարվել*, *պըտատվել*, *տըհսնըվալ*:

Որոշ բայեր չունեն իրենց սկզբնատիպ՝ ածանցագուրկ ձեւերը եւ գործածվում են միայն *վ* ածանցով՝ *կընգւնտվել*, *խըղաղվել*, *կ'իժվիլ*, *հըմբարցվիլ*:

Սեռաձանց կարելի է համարել նաեւ պատճառական *ցըն/ըցըն* ածանցը, որի միջոցով հիմնականում չեզոք սեռի բայերից կազմվում են ներգործական սեռի, իսկ ներգործական սեռի բայերից՝ պատճառական սեռի բայեր՝ *թողնալ-թողըցընել*, *մընալ-մընըցընել*, *փախչիլ-փըխչըցընել*, *օտելուտըցընել*, *խըմել-խըմըցընել*:

Բայի անդեմ ձեւերը բարբառում ներկայանում են հետեւյալ տեսակներով՝ անորոշ՝ *խօսել*, *հնրփիլ*, *աղալ*, անկատար՝ *խոսում*, *հնրփում*, *աղում* (Յադրութի եւ Շաղախի ենթաբարբառներ՝ *խուսէս* (Շաղախ՝ *խուսիս*), *հիրփիս*, *ըղաս*), վաղակատար՝ *խօսալ*, *հնրփնլ*, *աղալ/ըղացալ*, հարակատար՝ *խօսած*, *հնրփնծ*, *աղած/ըղացած*, ենթակայական՝ *խօսօղ*, *հնրփօղ*, *աղօղ/ըղացօղ*, ապառնի՝ *խուսուլան/խուսուլական*, *հիրփիլնն/հիրփիլննկնն*, *ըղըլան/ըղըլական*, համակատար՝ *խուսելիս/խուսելիս*, *հիրփիլիս/հիրփիլիս*, *ըղալիս/ըղալիս*:

Հին հայերենի անորոշ դերբայի հինգ՝ *ա(լ)*, *է(լ)*, *ի(լ)*, *ու(լ)*, *ո(լ)* լծորդություններից բարբառում կայունացել են միայն երեքը՝ *ա(լ)/ն(լ)*, *է(լ)*, *ի(լ)*: Շաղախի ենթաբարբառում *է(լ)* լծորդությամբ բայերը ենթարկվում են *ի(լ)* լծորդության՝ *ասել-ասիլ*, *խըմել-խըմիլ*:

Գրաբարի բայերը շատ հաճախ լծորդություններով չեն համընկնում բարբառի համապատասխան բայերի հետ, ինչպես՝ *տեսանել-տըհսնալ*, *թողուլ-թօղնել*, *զարթնուլ-զորթնանալ* եւ այլն: Ընդհանուր առմամբ անփոփոխ է *ա* լծորդությունը՝ *բանալ-պէնալ*, *աղալ-աղալ*, *բարձրանալ-պիցըրանալ*, *գողանալ-կ'ուղանալ*, *մնալ-մընալ*:

Անորոշ դերբայը ունի թե՛ բայական-դերբայական, թե՛ անվանական կիրառություններ: Բայական-դերբայական նշանակությամբ, ինչպես նշել ենք վերելում, այն մասնակցում է ապառնի դերբայի եւ որոշ ժամանակաձեւերի կազմությանը:

Նախադասության մեջ հանդես գալով՝ անորոշ դերբայը հոլովվում է *ի(ս)* հոլովանիշ թեքությով՝ *օտել(ը)-ուտելի(ս)-ուտելա(ս)-ուտելալ(ը)*: Շարահյուսական մակարդակում այն ներկայանում է տարբեր պաշտոններով. ինչ-

պես՝ Պատ տիկիլը լնվ փեշակ ա (ենթակա), Մըռնէլի վախտը յըկլալ ա, էլ-լն լնոգնն նորնն չի քաշոնմ (հատկացուցիչ), Էս ճնուրը խըմէլի ճնուր ա (որոշիչ), Տու խօսէլը գնոգնմ չըս (ուղիղ խնդիր), Պա Էս ապրէլ ա՛ (վերադիր), Էրկան նըստէլան վընները տըմբըրալ ա (պատճառի պարագա), Խըհըճ տընջվիլնվ ապրալ ա, տընջվիլնվ մըհալ (ծելի պարագա) եւ այլն:

Բայի անկատար ձեւը կազմվում է ըմ/ում/ում/ամ/նմ, իսկ Յադդութի եւ Շադախի ենթաբարբառներում՝ աւ/նս, Էս (Շադախը չունի), իս վերջնամասնիկներով, որոնց բոլոր դեպքերում նախորդում է անորոշի հիմքը՝ կարթիլ-կարթում/կըրթիս, մընալ-մընում/մընաս, օռչիլ-օռչում/ուռչիս, մըծանալ-մըծանում/մըծընաս, հըսնէլ-հըսնըմ/հըսնէս/հըսնիս, ըստըկօտէլ-ըստըկօտում/ըստըկուտէս/ըստըկուտիս, ուտըցընէլ-ուտըցընըմ/ուտըցընէս/ուտըցընիս, տալ- տամ/տաս, կ'նլ-կ'նմ/կ'նս:

Անկատար դերբայը մասնակցում է սահմանական եղանակի ներկա (խըմում/խըմէս/խըմիս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղում/ըղաս ըմ/ըս/ա/ ընք/ըք/ըն, հըվատըմ/հըվըտաս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն) եւ անցյալի անկատար (խըմում/խըմէս/խըմիս ի/իր/ար/ինք/իք/ին, աղում/ըղաս ի/իր/ ար/ինք/իք/ին, հըվատըմ/հըվըտաս ի/իր/ար/ինք/իք/ին) ժամանակաձեւերի կազմությանը:

Վաղակատար դերբայը ձեւավորվում է ալ/նլ վերջնամասնիկով, որը համապատասխանում է հին հայերենի անցյալ դերբայի եալ վերջավորությամբ՝ ծնեալ-ծընալ, գտեալ-քըթնլ, գողացեալ-կ'ուղացալ:

Ալ/նլ վերջավորությանը կարող են նախորդել անորոշի եւ անցյալի հիմքերը՝ ի տարբերություն գրաբարի, որտեղ անցյալ դերբայը ձեւավորվում էր գլխավորապես անցյալ կատարյալի հիմքից:

Վաղակատարը անորոշի հիմքով են կազմում է եւ ի լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ շարէլ-շարալ, իփիլ-իփնլ, էրվիլ-էրվալ, պըչպըչօրէլ-պըչպըչօրալ, նըստօտէլ-նըստօտալ: Վաղակատարը անցյալի հիմքով են կազմում 1) ա/ն լծորդության պարզ, ինչպես նաեւ աՆ, էՆ, ըՆ, Ն ածանցներով բայերը՝ աղալ-ըղացալ (նաեւ աղալ), մընալ-մընացալ, տըմանալ-տըմացալ, քըթէնալ-քըթնլ, ընզընէլ-ընզալ, տըհսնալ-տըհսալ, 2) պատճառական բայերը՝ ուտըցընէլ-ուտըցըրալ, մըծըցընէլ-մըծըցըրալ, սըվըրցընէլ- սըվըրցըրալ:

Չ ածանցով բայերի վաղակատարը կազմվում է եւ՛ անորոշի, եւ՛ անցյալի հիմքերով՝ սառչիլ-սառչնլ/սառալ, օռչիլ-օռչնլ/օռալ:

Վաղակատար դերբայը անկախ կիրառություն չունի: Այն հանդես է գալիս օժանդակ բայի հետ՝ կազմելով սահմանական եղանակի վաղակատար (խըմալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղալ/ըղացալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվըտացալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն) եւ անցյալի վաղակատար (խըմալ ի/իր/ար/ինք/իք/ին,

աղալ/ըղացալ ի/հր/ար/ինք/իք/ին, հըվըտացալ ի/հր/ար/ինք/իք/ին) ժամանակաձեւերը:

Հարակատար դերբայը, որի իմաստը գրաբարում արտահայտվում էր անցյալ դերբայով, բարբառում ձեւավորվում է *ած/ւծ* վերջավորության եւ *անորոշի* կամ *անցյալի հիմքի* հարադրությամբ: Հարակատարի հիմքակազմությունը նույնն է վաղակատարի հետ՝ *շարէլ-շարած, իփիլ-իփւծ, էրվիլ-էրված, պըչպըչօրէլ-պըչպըչօրած, նըստօտէլ-նըստօտած, աղալ-ըղացած* (նաեւ *աղած*), *մընալ-մընացած, տըհսնալ-տըհսած, տըմանալ-տըմացած, քըթէնալ-քըթւծ, ընգընէլ-ընգած, ուտըցընէլ-ուտըցըրած, մըծըցընէլ-մըծըցըրած, սըվըրցընէլ-սըվըրցըրած, սառչիլ-սառչւծ/սառած, օռչիլ-օռչւծ/օռած*:

Հարակատար դերբայը ունի եւ՛ բայական, եւ՛ անվանական կիրառություններ: Այն մասնակցում է սահմանական եղանակի հարակատար եւ անցյալի հարակատար ժամանակաձեւերի կազմությանը՝ *խըմած ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմած ի/հր/ար/ինք/իք/ին, աղած/ըղացած ըմ/ըս/ա/ ընք/ըք/ըն, աղած/ ըղացած ի/հր/ար/ինք/իք/ին, հըվըտացած ըմ/ըս/ա/ընք/ ըք/ըն, հըվըտացած ի/հր/ար/ինք/իք/ին*: Փոխանվանական կիրառության դեպքում հարակատարը հոլովվում է *էն* (անորոշ առման դեպքում՝ *ու*) հոլովանիշ թեքությով՝ *խըմածը/խըմած, խըմածէն/խըմածու, խըմածէն անա/նըհստա/խըմածու անա/նըհստա, խըմածէն անավ/նըհստավ/խըմածու անավ/նըհստավ*:

Այս դերբայը շարահյուսական մակարդակում կարող է հանդես գալ որպէս ենթակա (*Քըշէրվա կերածը կօրած ա*), որոշիչ (*Պըռնաված մարթըն էլ ա խօխա*), հատկացուցիչ (*Թըղվածէտ կընեգը հանց ա մարալ ինի*), վերաբերության խնդիր (*Մըռածէն անա թանրիփ կանին*), պատճառի պարագա (*Ըտըրա ըսածավը յըհ շատ ըմ ուրխանում*), ուղիղ խնդիր (*Յըհս ըրածըտ մըննաս քըցիլ չըմ*), միջոցի խնդիր (*Ըրածավըտ պէն չի դըլգիլ*), ձեւի պարագա (*Աշկէրը չըռած յէշըմ ա*):

Ենթակայական դերբայի վերջավորությունն է *օղ/ծղ*, որով այն նույնաՆում է գրաբարի նույն դերբայի հետ: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, այդ վերջավորությունը հիմնականում դրվում է ոչ թե անցյալի, այլ անորոշի հիմքի վրա՝ *կ/իր-օղ, հըսն-օղ, ուրխան-օղ, սառչ-ծղ, լըպըզտ-օղ* եւ այլն:

Ա լծորդության մի շարք բայերի ենթակայականը կարող է ձեւավորվել նաեւ անցյալի հիմքից, ինչպէս՝ *աղալ-աղօղ-ըղացօղ, մընալ-մընօղ-մընացօղ, մըծանալ-մըծանօղ-մըծացօղ*:

Ենթակայականը բայի եղանակային ձեւերի կազմությանը չի մասնակցում: *խըմօղ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմօղ ի/հր/ար/ինք/իք/ին, աղօղ//ըղացօղ ըմ/ըս/ ա//ընք/ըք/ըն, աղօղ//ըղացօղ ի/հր/ար/ինք/ իք/ին, հըվատօղ//հըվը-*

տացող ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, հրվատող/հրվըտացող ի/իր/ար/ինք/իք/ին եւ այլ ձեւեր լայն տարածում չունեն:

Փոխանվանաբար կիրառվելիս ենթակայականը թեքվում է հարակատարի նման՝ որոշյալ առման դեպքում՝ էն, անորոշ առման դեպքում՝ ու հոլովանիշներով՝ ասողը/ասող, ըսողէն/ըսողու, ըսողէն անա/նր՝ստա/ըսողու անա/նր՝ստա, ըսողէն անա/վ/նր՝ստա/վ/ըսողու անա/վ/նր՝ստա/վ:

Ենթակայական դերբայը նախադասության մեջ ներկայանում է իբրեւ ենթակա (Օն կողանաւոր ծի էլ կըկողանա), որոշիչ (Տու օտոյ-խըմօղ մարթ ըս, ինձ վա՛վ կըսկանաս), հատկացուցիչ (Յիրփօղին տօնը տէրտակ կինի), խնդիր (Ըսողէն ըսկանօղ բիղի ինի):

Ապառնի դերբայի հիմքակազմությամբ (անորոշ դերբայից) բարբառը ընդհանուր առմամբ նույնանում է հին հայերենի հետ: Սակայն վերջինիս օց եւ ի մասնիկները փոխարինված են -ան/ան, -ական/անկան վերջավորություններով՝ ասէլ-ըսըլան/ըսըլան, թըռչիլ-թըռչիլան/թըռչիլան, գըռռալ-գըռռըլան/գըռռըլական, ուրվալ-ուրվըլան/ուրվըլական, մուրթօտէլ-մուրթօտըլան/մուրթօտըլական: Ստեփանակերտի եւ հարակից որոշ խոսվածքներում դրան զուգահեռ գործածվում են -էլու, -ալու, -իլու վերջավորությամբ ձեւերը՝ ըսէլու, թըռչիլու, գըռռալու, ուրվալու, մուրթօտէլու, որոնք գրական հայերենի ազդեցության արդյունք են:

Պատճառական եւ ան, էն, ըն, ն ածանցներով, ինչպես նաեւ որոշ պարզ բայերի ապառնին ձեւավորվում է անորոշի հիմքից՝ խըմըցընէլ-խըմըցընան/խըմըցընական, ուտըցընէլ-ուտըցընան/ուտըցընական, մուտանալ-մուտընան/մուտընական, քըթէնանլ-քըթինանլ/քըթինանկան, ըղնէլ-ըղնան/ըղնական, հըսնէլ-հըսնան/հըսնական, շինիլ-շինան/շինանկան, մընալ-մընան/մընական:

Ապառնի դերբայը ունի միայն բայական կիրառություն. նրանից կազմվում են սահմանական եղանակի ապառնի եւ անցյալի ապառնի ժամանակաձեւերը՝ խըմըլան/խըմըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմըլան/խըմըլական ի/իր/ար/ինք/իք/ին, ըղըլան/ըղըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, ըղըլան/ըղըլական ի/իր/ար/ինք/իք/ին, հրվըտըլան/հրվըտըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, հրվըտըլան/հրվըտըլական ի/իր/ար/ինք/իք/ին:

Համակատար դերբայը ունի իս վերջավորությունը, որը դրվում է անորոշ դերբայի վրա՝ խըմէլիս, ըղալիս հրվըտալիս: Անորոշի լ-ն հաճախ փոխարինվում է յ-ով՝ խըմէլիս, ըղայիս, հրվըտայիս:

Այս դերբայը հիմնականում ունի փոխանվանական կիրառություն՝ ժամանակի պարագայի դերով (Ուտէլիս խօսէլ չըն):

Ղարաբաղի բարբառում բայն ունի հինգ եղանակաձեւ՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական, որոնցից յուրաքանչյուրը մյուսներին հակադրվում է իր ուրույն հատկանիշներով:

Սահմանական եղանակը մյուսներին հակադրվում է օժանդակ բայի առկայությամբ (բացառությամբ անցյալ կատարյալի), ըղծական, պայմանական, հարկադրական եղանակները հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով. ըղծականը գուրկ է եղանակիչից, պայմանականին բնորոշ է *կ/կը*, հարկադրականին՝ *բի-դի/բըդի/բէդի/պէտի/պըտի/պիտի/բէդմա/պէտմա* եղանակիչը: Հրամայական եղանակը ունի միայն երկրորդ դեմք, որ ընդգծվում է հատուկ վերջավորություններով եւ շեշտի ուժգին արտաբերմամբ:

Նշված եղանակաձեւերը տարբեր են նաեւ ժամանակաձեւերի քանակով. սահմանական եղանակն ունի ինը ժամանակաձեւ՝ ներկա՝ *ասում/ըսէս/ըսիս ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի անկատար՝ *ասում/ըսէս/ըսիս ի/իր/ար/ինք/իք/ին*, հարակատար՝ *ասած ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի հարակատար՝ *ասած ի/իր/ար/ինք/իք/ին*, վաղակատար՝ *ասալ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի վաղակատար՝ *ասալ ի/իր/ար/ինք/իք/ին*, ապառնի՝ *ըսըլան/ըսըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի ապառնի՝ *ըսըլան/ըսըլական ի/իր/ար/ինք/իք/ին*, անցյալ կատարյալ՝ *ըսը՛ցէ, ըսը՛ցէր, ասից, ըսը՛ցէ(ն)ք, ըսը՛ցէք, ըսը՛ցէն*, որոնք բացի վերջինից, կազմվում են համապատասխան դերբայներից եւ օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ձեւերից: Անցյալ կատարյալն ունի ինքնուրույն ձեւաբանական արտահայտություն. կազմվում է անցյալի հիմքից՝ հատուկ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով:

Ըղծական, պայմանական, հարկադրական եղանակներին հատուկ է երկուական ժամանակաձեւ՝ ապառնի եւ անցյալ, որոնք կազմվում են անորոշի հիմքից՝ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով. ըղծական ապառնի՝ *ասիմ, ասիս, ասէ, ասի(ն)ք, ասիք, ասին*, պայմանական ապառնի՝ *կասիմ, կասիս, կասէ, կասի(ն)ք, կասիք, կասին*, հարկադրական ապառնի՝ *բիդի ասիմ, բիդի ասիս, բիդի ասէ, բիդի ասի(ն)ք, բիդի ասիք, բիդի ասին*, ըղծական անցյալ՝ *ըսի, ըսիր, ասար, ըսի(ն)ք, ըսիք, ըսին*, պայմանական անցյալ՝ *կըսի, կըսիր, կասար, կըսի(ն)ք, կըսիք, կըսին*, հարկադրական անցյալ՝ *բիդի ըսի, բիդի ըսիր, բիդի ասար, բիդի ըսի(ն)ք, բիդի ըսիք, բիդի ըսին*:

Շաղախի ենթաբարբառում օժանդակ բայի անցյալի ձեւեր չկան. անցյալի անկատար, անցյալի հարակատար, անցյալի ապառնի ժամանակաձեւերի իմաստը արտահայտվում է ներկայի ձեւերի եւ *լնլ* բայի հարադրությամբ՝ *խըմիս ըմ լնլ, խըմած ըմ լնլ, խըմըլան/խըմըլական ըմ լնլ*, իսկ անցյալը՝ *խըմալ ըմ*, խոսքի մեջ արտահայտում է նաեւ անցյալի վաղակատարի եւ անցյալ կատարյալի իմաստներ: Նույն ձեւով ըղծական անցյալի եւ պայմանական անցյալի կառուցվածքը բնութագրվում է *անո-*

րոշ դերբայ+օժանդակ բայի ներկայի ձեւեր+լնլ կաղապարով՝ խըմիլ ըմ լնլ, որից բիրը/բէրը եղանակիչով կազմվում է հարկադրական անցյալը՝ բիրը/բէրը խըմիլ ըմ լնլ:

Հրամայական եղանակի հոգնակին բոլոր դեպքերում ձեւավորվում է անցյալի հիմքից՝ ջինը՜ցէք՛, մընա՜ցէք՛, ըսը՜ցէք՛, փա՛խէք/փըխէ՜ցէք՛:

Եզակի հրամայականը անորոշի հիմքով են կազմում է, ի լծորդության պարզ եւ բազմապատկական, չ եւ կրավորական ածանցներով բայերը՝ կա՛րթի, խըմէ՛, ըսպան՛վէ, կուտըրանտէ, օ՛ռջի, ինչպես նաեւ ա/ն լծորդության պարզ բայերը՝ ա՛ղա, մընա՛, հըվանտա:

Մյուս բայերի եզակի հրամայականը կազմվում է անցյալի հիմքից՝ մուտա՜ց, քըթի՛ր, ընգէ՛ր, հըսէ՛ր, պիցըրըրո՛ւ:

Բարբառում, ինչպես հայերենի մյուս դրսետրումներում, բայի դեմքի եւ թվի իմաստները ներկայանում են միեւնույն դիմաթվանիշ վերջավորություններով, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են նաեւ ժամանակի իմաստ: Այդ վերջավորությունները բաժանվում են վեց խմբի՝ օժանդակ բայի ներկայի ձեւերի՝ ըմ/ում, ըս, ա, ը(ն)ք, ըք, ըն, օժանդակ բայի անցյալի ձեւերի ի, իր, ար, ի(ն)ք՛, իք՛, ին, ըղծական ապառնու՝ ամ/իմ, աս/իս, ա/է, ա(ն)ք/ի(ն)ք՛, աք/իք՛, ան/ին, ըղծական անցյալի՝ ի, իր, ար, ի(ն)ք՛, իք՛, ին, անցյալ կատարյալի՝ է, էր, -/ավ, է(ն)ք՛/ի(ն)ք՛, էք՛/իք՛, էն/ին, եւ հրամայական եղանակի՝ ա, է, ի, էր, իր, ու, թ (արմատ), էք՛/իք՛: Հրամայականի այս վերջավորություններին նախորդում են.

ա) ա-ին՝ ա լծորդության պարզ բայերի անորոշի հիմքը՝ ա՛ղա, մընա՛, ըրվա՛,

բ) է-ին՝ է լծորդության պարզ, կրավորական եւ բազմապատկական բայերի անորոշի հիմքը՝ խըմէ՛, ըսպան՛վէ, ծըռմըռանտէ,

գ) ի-ին՝ ի լծորդության պարզ, կրավորական եւ չ ածանցով բայերի անորոշի հիմքը՝ կա՛րթի, ջին՛վի, փա՛խջի,

դ) էր/իր - ին՝ էն, ըն, ն ածանցներով բայերի, ինչպես նաեւ չ ածանցով որոշ բայերի անցյալի հիմքը՝ քըթի՛ր, ընգէ՛ր, հըսէ՛ր, փա՛խէր, կօ՛րէր,

ե) ու-ին՝ պատճառական բայերի անցյալի հիմքը՝ մըծըրըրո՛ւ, խըմըրըրո՛ւ,

զ) թ-ին՝ ան ածանցով եւ անկանոն բայերի անցյալի հիմքը՝ մուտա՜ց, մըծա՜ց, տի՛ր, պէ՛ր,

է) էք/իք՛ հոգնակիշ ընդհանուր վերջավորությանը նախորդում է բոլոր բայերի անցյալի հիմքը՝ ըղա՜ցէք՛, հըսէ՛ք, կա՛նիք, մընըցըրէ՛ք, տըմա՜ցէք՛ եւ այլն:

Ու ձայնավորով վերջացող բառերին հաջորդող օժանդակ բայից առաջ լսվում է վ՛ ծախու վա, մարթու վա, իսկ մյուս ձայնավորներով վերջացող բառերից հետո՝ յ ձայնավորը՝ ըրկաթէ յա, կօզնի յա եւ այլն:

Բարբառում ժխտական խոնարհումը արտահայտվում է չ(ը), վէչ, մէլ/

*միլ/մէր/միր, մէք/միք՝* մասնիկների միջոցով, որոնք համապատասխանում են հին հայերենի *չ, ոչ, մի* մասնիկներին:

Օժանդակ բայով կազմվող բոլոր ժամանակների ժխտականը արտահայտվում է *չ* մասնիկով, որ դրվում է դերբայից հետո հանդես եկող օժանդակ բայի վրա՝ *աղում չըմ, աղում չի, աղալ/ըղացալ չըմ* եւ այլն: Օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում լինում է *չի՝* սպասելիք *չա-ի* փոխարեն՝ *ասում ա-ասում չի, շիննլ ա-շիննլ չի*:

Պայմանական եղանակի ժխտականը կազմվում է անորոշ դերբայից եւ օժանդակ բայի ժխտական ձեւերից՝ *կասիմ-ասել չըմ, կըսի-ասել չի*: Ընդ որում, ապառնի ժխտական ձեւերում օժանդակ բայը կարող է ունենալ նաեւ նախադաս գործածություն՝ *շօնը գօռռավ վը՛րս չըն տանել, անօղ-թօղօղ ախճիգը տանը չի մընալ*:

Մյուս ժամանակների (բացառությամբ արգելական հրամայականի) ժխտականը արտահայտվում է *վէչ* մասնիկով, որ ընդհանուր առմամբ գործառում է խոնարհվող բայից հետո՝ *հըսնիմ վէչ, հըսնի վէչ, բիդի հըսնիմ վէչ, հըսէ վէչ* եւ այլն:

Ըղծական եղանակում երբեմն *վէչ* մասնիկը գործածվում է նախադաս (հատկապես անեծքներում)՝ *վէչ հըսնիս ումէդիտ, վէչ տը՛սնաս խօնցըտ*:

Հարկադրական եղանակի ժխտականը կազմվում է նաեւ *չը* մասնիկով, որ գործառում է եղանակիչից անանջատ՝ *չըբիդի ասիմ, չըբիդի ըսի*:

Արգելական հրամայականը բաղադրվում է անորոշ դերբայից եւ *մէլ/միլ/մէր/միր* (եզակի), *մէք/միք՝* (հոգնակի) մասնիկներից, որոնք հիմնականում ունեն ետադաս կիրառություն՝ *խըմէլ մէլ, խըմէլ մէք՝*: Անորոշի *լ-ն* հաճախ սղվում է՝ *խըմէ մէլ, խըմէ մէք՝*:

Արգելական մասնիկը հարադիր բայերում գործառում է անորոշ դերբայից առաջ՝ *տոնս մէլ կ'անլ, տոնս մէք՝ կ'անլ*: Այս դեպքում անորոշի *լ-ն* մնում է անփոփոխ, իսկ արգելական մասնիկը ձայնավորով սկսվող բային նախորդելիս կարող է պահպանել միայն *մ-ն*՝ *տոնս մէլ անէլ/տոնս մանէլ*: Հոգնակիում անորոշի վերջավորությունը փոխարինվում է արգելականի վերջավորությամբ՝ *տոնս մէք՝ անէլ/տոնս մանէք՝*:

Բարբառում գործածական են նաեւ մի շարք անկանոն եւ պակասավոր բայեր:

Անկանոն են *անէլ, առնէլ, պէնալ, պիրիլ, կ'անլ, քըթէնալ, տիսիլ, կ'ը՛նալ, ինիլ, կէնալ, օնէլ, օտէլ, տալ, տանէլ, տը՛սնալ* բայերը, որոնք հիմքակազմության օրինաչափություններից եւ խոնարհման ընդհանուր համակարգից շեղվում են հիմնականում անցյալ կատարյալում, անցյալի հիմքից կազմված ձեւերում եւ բուն հրամայականում:

Պակասավոր են *ըմ(էմ)* էական բայը, ինչպես նաեւ *կամ, անրժիմ* բայերը:

Սրանցից առաջինը ունի միայն սահմանական եղանակի ներկա եւ անցյալ ժամանակաձեւերը՝ *ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն, ի, իր, ար, ինք՝, իք՝, ին*:

*Կամ* եւ *անրժիմ* բայերը ունեն միայն սահմանական ներկա ժամանակաձեւը՝ *կամ, կաս, կա, կանք, կաք, կան, անրժիմ, անրժիս, անրժի, անրժինք՝, անրժիք՝, անրժին*, եւ սահմանական անցյալի եզակի թվի 3-րդ դեմքը՝ *կար, անրժանր*:

*Օնէլ* բայը *փակել, ծածկել, վերցնել* եւն նշանակություններով գործածվելիս անկանոն բայ է, իսկ *ունենալ* նշանակությամբ գործածվելիս պակասավոր է եւ ունի նույն ժամանակաձեւերը, ինչ *ըմ* էական բայը՝ *օնիմ, օնիս, օնէ, օնինք՝, օնիք՝, օնին, ունի, ունիր, օնար, ունինք՝, ունիք՝, ունին*:

Լայն գործածություն ունեն նաեւ երկրորդական բաղադրյալ ժամանակները: Դրանք հիմնականում կազմվում են անկատար, համակատար, հարակատար դերբայների եւ *ինիլ* բայի խոնարհված ձեւերի հարադրությամբ, ինչպես՝ *քընոմ ըմ ինոմ/իլնլ/ինան, քըննլիս ըմ ինոմ/ իլնլ/ինան, քընգած ըմ ինոմ/իլնլ/ինան* եւ այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձեւեր են կազմվում նաեւ հարակատար դերբայի եւ *կամ* պակասավոր բայի հարադրությամբ, ինչպես՝ *քընգած կամ, քընգած կաս, քընգած կա*:

**Մակբայ:** Բարբառում մակբայները ըստ իմաստային խմբավորման լինում են՝ ժամանակի՝ *ըսօր(է)/ասօր/սօր(է)* (այսօր), *էքոնց/էքոնծ/օքոնց* (վաղը), *նլ(լ)ծր* (մյուս օրը), *մըհէնգ/միհէնգ* (հիմա), *յըրկէ/յէրէգի* (երեկ), *կընօխէ/կընօխանց* (վաղուց), *քըշէրավ/քիշէրավ* (վաղ առավոտյան), *ծանքին/ծաքին/ծէքին* (արեւածագին), *ըստարէ/ըստըռնէ* (այս տարի), *հըռն(ն)է/հըռնոս/հէրոս/հըրնէ* (անցյալ տարի), *էզզան(ան)/էզզան(ան)/էզզանն/էզզադան/էյզանան/էյզանան* (միշտ), *հնլն(մ)* (դեռ), *ահէտ/անհան* (ըմբս)/*անէտը* (հետո), *կանօխ/կանուխ* (կանուխ), տեղի՝ *դըբէտ/դիբէտ/դըբընտ/դիբընտ* (դեպի ետ), *տիյընր/տըյընր* (վերել), *տիվէր/տըվէր/տուվէր* (ներքել), *տէն/տընս* (այս կողմ), *տէն/տըն* (այն կողմ), *տէմատէմ* (դեմառդեմ), *մօտէ/մօտի* (մոտիկ), *ծեի՝ կամա(ն)ց* (կամաց), *ափալ-թափալ* (արագորեն), *գօռ(ռ)ավ* (գոռով), *գընգըլըխտան(ա)/գինգըլըխտան(ա)* (կամաց-կամաց), *բիրդան/բիրդան* (իսկույն), *գիրթ* (հանկարծ), *ափաշկարա* (բացահայտ կերպով), *թաթարյախնի/թանթանի* (ծեռաց), *դասիդ/դաստի* (դիտմամբ), *չափի՝ շատ-շատ* (առավելագույն չափով), *հերիք/հերիք՝* (բավական), *պատար* (մի քիչ), *բօլ-բօլ* (առատորեն) եւ այլն:

Որոշ մակբայներ ընդհանրական են, ինչպես՝ *առաջ* (տեղի եւ ժամանակի), *ճէլլի* (ծեի եւ ժամանակի):

Որոշ մակբայներ առաջացել են քերականական ձեւերից՝ *քըշէրավ, գօռնավ, վըննուք*:

Տեղի եւ ժամանակի մակբայների մի մասը կարող է հոլովվել, ինչպես՝

տիյը՛ր-տիյը՛րէն-տիյը՛րան-տիյը՛րավը, քըսծօր- քըսծօրէն/քըսծօրվա-քըսծօրանց եւ այլն:

**ԿԱՊ:** Ինչպէս հայերենի մյուս դրսեւորումներում, բարբառում եւս կապերը ըստ տեղի լինում են նախադրություններ եւ ետադրություններ, ըստ կազմավորվածության՝ իսկական, անիսկական եւ կապական բառեր:

Գրաբարի նախդիրները ընդհանուր առմամբ չեն պահպանվել, թերեւս որոշ կապակցություններում հանդես է գալիս *ի-ն` ծօրըն ի յը՛ր, ծօրըն ի վէր, սարըն ի յը՛ր, սարըն ի վէր*:

Նախադրությունները իսկական կապեր են՝ *բիդի/բըդի/բըդիւն/դիբի/դըբւն* (դէպի), *մինչը՛վ/մինչէվ* (մինչէւ), *առանց/ուռունց* (առանց), *չըք(էլ)անը/չըրու/չըքօրանը* (մինչէւ):

Ի տարբերություն գրաբարի՝ բարբառում գերակշռում են ետադրությունները: Դրանցից իսկական կապեր են՝ *մըհար* (համար), *կըման(ցէ)/գումման* (բացի), *քիմի* (չափ, մեծությամբ), *(ը)գժօրնի/(ը)գօրա* (համեմատ), *(ը)բնստ/(ը)բախտ/(ը)բնթ* (հեկո որ), *տը՛դ/տըդ/տէդ* (փոխարեն), անիսկական կապեր են՝ *յըրա* (վրա), *նըման/մընան* (նման), *մաչին* (մեջ), *խաթրոն/խնթրոն/խաթէր/խնթէր* (հանուն), *քըշտէն* (կողքին):

Կապական բառեր են՝ *տոն* (դուրս), *յը՛րը* (վերել), *վախտը* (ժամանակ), *առաչ* (առաջ), *հը՛ռէ* (հեռու), *տիյը՛ր* (վերել), *տիվէր* (ներքել):

Կապերը պահանջում են ուղղական, տրական եւ բացառական հոլովներով խնդիրներ:

Ուղղական հոլովով խնդիր են պահանջում *առանց, մինչը՛վ, չըքէլանը, բիդի, քիմի* կապերը՝ *առանց տօն, մինչը՛վ շէնը, չըքէլանը բօստանը, բիդի քաղաք, գոնլ քիմի*:

Տրական հոլովով խնդիր են պահանջում՝ *կօշտ* (ընդըրա կօշտը), *մըհար* (տատուն մըհար), *նըհը՛տ* (շանը նըհը՛տ), *հը՛տէ* (ըխճըկա հը՛տէ), *մաչին* (տանը մաչին), *յըրա* (ծառէն յըրա), *տակէն* (սարէն տակէն), *տը՛դ* (ըսկընալին տը՛դ), *նըման* (ինձ նըման), *դնրդն* (կընգա դնրդն), *անվնգ* (փողէն անվնգ): Այս կապերի մի մասը պահանջում է սեռական հոլովով խնդիր, երբ գործածվում է անձնական 1-ին եւ 2-րդ դեմքերի դերանունների հետ, ինչպէս՝ *իմ անվնգ, քու տակէտ, ծէր մաչին, մէր քըշտէն*:

Բացառական հոլովով խնդիր են պահանջում *յը՛տը* (հըրսընքան յը՛տը), *հը՛ռէ* (մըզանա-ծըզանա հը՛ռէ), *կըման* (կընգանը անա կըման), *տէս* (շէնան տէս), *տէն* (ծառան տէն), *առաչ* (ընդըրանա առաչ):

*Առաջ* կապը ժամանակի իմաստով իբրեւ ետադրություն գործածվելիս կարող է ընդունել նաեւ ուղղական եւ գործիական հոլովներով խնդիրներ, ինչպէս՝ *էրկու օր առաչ, վէց տարէ առաչ, օրավ առաչ, շէփտավ առաչ*:

Անիսկական կապերը նյութական իմաստով գործածվելիս կարող են հոլովվել՝ *մաջ-մաջին-մաջան-մաջավը*: Այս կապերին հատուկ է նաև հոդառությունը՝ *տակէս, տակէտ, տակէն, մաջիս, մաջիտ, մաջին* եւ այլն:

**Ճաղկապ:** Բարբառում շաղկապները նույնպես բաժանվում են երկու խմբի՝ համադասական եւ ստորադասական:

Համադասական շաղկապներ են՝ *ու, էլ* (եւ, ու), *համ* (եւ), *ամ(մ)ա/ամ-հա/համ(մ)ա* (բայց), *նա* (ու, եւ), *յա* (կամ):

Ստորադասական շաղկապներ են՝ *վէր/վար/վը՞ր/ վօր* (որ, որպեսզի, եթէ), *թա վէր* (եթէ), *կանց/կա(ն)ս/ քան(ց)* (քան), *կօզի/կօզի/կօզի* (թելուզ, թէել), *ւնգ'ւնր/ազ'ւնր* (եթէ):

**Ձայնարկություն:** Բարբառը հարուստ է ձայնարկություններով, որոնք բաժանվում են հետեւյալ խմբերի. գգացական՝ *ախ, վան/վո՛ւյ, վա՛ջջ/վի՛ջջ, ո՛հ/օ՛հ, ամ(մ)ան, ջան, ուխա՛(յ)/օխա՛(յ), փն՛հ-փն՛հ, քը՛խ(ա), պօ՛ր/բօ՛ւօ՛, պա՛ր/բա՛ր*, կամային՝ *փը՛խկ, փի՛ջտ, ճո՛ւ-ճո՛ւ, բի՛ժի, (ա)ջո՛ւ, տընը՛ռռ*, բնածայնական՝ *թը՛ռ(ռ), ճը՛ռռ, վը՛գ(գ), տը՛գգ, փը՛ջջ, միյա՛վու, բն՛*:

**Վերաբերական:** Բարբառում գործածվող վերաբերականները ըստ արտահայտած իմաստի ներկայանում են հետեւյալ խմբերով. հաստատական՝ *հա* (այո), *պա հինչ* (հիարկէ), *դո՛ւզ վէր* (իրոք որ), երկբայական՝ *հնլբնթ/ հնրբնթ* (երեւի), *բնլ(ք)նմ/բնլք'նս/ բնլ(ք)ի/բնլի* (թերեւս), *սաբալ* (իբր, իբրեւ), *հանցա* (կարծես), *կաբուտը(բը)/բութտը(բը)/բուտտը(բը)* (իբրեւ), սաստկական՝ *առռէ/առռի* (թեպետեւ, հենց), *լափ* (հենց), սահմանափակման՝ *կօսյա/զօնյա* (զոնէ, թելուզ), *մինակ/մէնակ/միննկ* (միայն), կամային՝ *հնլն(մ)/հըլն(մ)* (հապա), *թօղ(է)* (թող), ժխտական՝ *չէ* (ոչ), *չըչէմին/չէչէ-մին/չիչէմին* (ոչ մի դեպքում) եւ այլն:

**Ճարահյուսություն:** Ճարահյուսական կառուցվածքով բարբառը ընդհանուր առմամբ համընկնում է արդի հայերենին՝ հանդես բերելով արեւելահայերենին բնորոշ հատկանիշներ: Այնուամենայնիվ կարելի է նշել մի շարք առանձնահատկություններ.

- հարցական նախադասություններում հարցը հիմնականում դրվում է օժանդակ բայի վրա՝ *Խէ յը՛ս սասալ, հինչ ը՛ն շինիս* (Ինչո՞ւ ես ասել, ի՞նչ են սարքում).

- բարդ համադասական նախադասություններում համադաս նախադասությունները հաճախ կապակցվում են շարահարությամբ՝ *Յը՛ս սասալ ըմ, տու ըսկացալ չըս* (Ես ասել եմ, բայց դու չես լսել).

- բարդ ստորադասական նախադասություններում գերադաս եւ ստորադաս նախադասությունները հաճախ կապվում են կախյալ շարահարությամբ՝ *Քը՛ցալ ա ծըմակը՛ փնդ պիրի* (Գնացել է անտառ, որ փայտ բերի).

- ուրիշի ուղղակի խոսք ստորադաս նախադասությունը գերադասին երբեմն կապվում է *թա շաղկապի միջոցով՝ Իմ տատ ասալ ա, թա.- Վէր մըճն-նիմ, ինձ թօռնանըս քըշտէն կըթաղիք՝* (Իմ տատը ասել է. «Որ մեռնեմ, ինձ իմ թոռան մոտ կթաղեք»).

- *ս, տ, ն, ը* հոդերը, զուգորդվելով կապական բառերի հետ, արտահայտում են համապատասխան դեմքի իմաստ եւ գեղջում կապվող դերանունը՝ *Մաջիտ հինչ կա՞* (քո մեջ), *Տակըս նամ ա* (իմ տակը), *Յըրան պէն չի կա* (նրա վրա), *Առաջը տըճսնում չի* (իր առջեւը).

- ուղղական հոլովով կարող է արտահայտվել գրական հայերենում տրական եւ ներգոյական հոլովներով դրսեւորվող տեղի պարագան՝ *Մաշկը ճար ա քըսալ* (Մեջքին դեղ է քսել), *Խըրմանջուղ տիլիփոն չի կա* (Խրմանջուղում հեռախոս չկա).

- տրական հոլովով երբեմն արտահայտվում է գործիական հոլովի իմաստ՝ *Տօնըտ քանէ մընէթու վըճս ծախալ* (Տունդ քանի՞ ռուբլով ես վաճառել).

- ուղիղ խնդիրը անձի առման դեպքում կարող է արտահայտվել ուղղական հոլովով՝ *Յիմբնրցին տըղան փըսակալ ա* (Յամբարձումը տըղային ամուսնացրել է).

- *լոխ, սաղ* դերանուններով արտահայտված որոշիչը սովորաբար դրվում է որոշյալից հետո՝ *Ըխճըկէքը լօխ մարթու վըն քըճցալ* (բոլոր աղջիկները), *Տըղէքը սաղ յըճկալ ըն* (բոլոր տղաները).

- *մուտանալ* բայը պահանջում է բացառական հոլովով խնդիր՝ *Յնրը տըղէն անա մուտացալ ա* (մոտեցել է տղային).

- անորոշ դերբայի իմաստը կարող է արտահայտվել հարակատար դերբայով եւ հակառակը՝ *Յարկավէր ա ըղացաճ* (Յարկավոր է աղալ), *նլն խօսկըս ըսէլու, կըզնըվում ըս* (Ղեռ խոսքս չասած՝ բարկանում ես).

- անորոշ դերբայի տրական հոլովի փոխարեն նախադասության մեջ երբեմն գործածվում է անկատարը՝ *Խըմում վախտը շատ ա խօսում* (Խմելու ժամանակ շատ է խոսում).

- անկատար դերբայը կարող է գործածվել ենթակայական դերբայի փոխարեն՝ *Ըշտըճղ տննջվում մարթ ա տըճսնում, ք՞ժմնճ՞ ա անում* (Որտեղ տանջվող մարդ է տեսնում, օգնում է).

- պայմանական ապառնին կարող է արտահայտել սահմանական ներկայի իմաստ՝ *Կասին՝ փըսակվալ ըս, դնոզ ա՞* (Ասում են՝ ամուսնացել ես, ճի՞շտ է).

- ստորոգյալը հաճախ թվով չի համաձայնում ենթակայի հետ՝ *Ծառերը ծաղկալ ա* (Ծառերը ծաղկել են), *Աշկերըտ քուռանա, վըճսնէրըտ փըռվէ, ընգուճնէտ քըռանա* (Աչքերդ քոռանան, ոտքերդ բռնվեն, ականջներդ խլանան):

**Բառագիտություն:** Բարբառի բառապաշարի հիմնական շերտերն են՝ գրաբարից ավանդված բառեր, բարբառային բառեր, փոխառյալ բառեր: Բառային կազմի գերակշռող մասը բարբառային բառերն են, որոնք ստեղծված են հին հայերենից ավանդված եւ փոխառյալ բառերից՝ բառակազմական տարբեր միջոցներով, ինչպես նաեւ՝ անկախ դրանցից:

Փոխառյալ բառերի շերտում հիմնականում արեւելյան լեզուներից (արաբերեն, պարսկերեն, թուրքական լեզուներ) եւ ռուսերենից կատարված անմիջական եւ միջնորդավորված փոխառություններն են:

Հատուկ տեղ են գրավում նաեւ այն բառերը, որոնք ունեն հնդեվրոպական ծագում, սակայն չկան գրաբարում՝ *անրց, լափու, լէմ, լօկ, կօրկ* եւ այլն:

**Իմաստաբանություն:** Բարբառում բառերը լինում են մենիմաստ եւ բազմիմաստ:

Բազմիմաստությունը հիմնականում պայմանավորված է բառերի փոխաբերական կիրառությամբ, ինչպես՝ *կառնը* բառը բացի հիմնական իմաստից՝ *գառ*, փոխաբերաբար նշանակում է նաեւ *հեզաբարո, խոնարհ, քար* բառը փոխաբերական կիրառությամբ ստացել է նաեւ *կարծր, անգույթ* իմաստները եւ այլն:

Գրաբարի հետ ընդհանուր բառերը իմաստաբանական մակարդակում երեւան են հանում մի շարք փոփոխություններ.

ա) գրաբարյան բազմիմաստության դիմաց բարբառը հանդես է բերում մենիմաստություն, ինչպես՝ *բարձ-պէրց* բառը հին հայերենում ունի 5 իմաստ՝ 1) *գլխի բարձ*, 2) *նստարան*, 3) *պատիվ*, 4) *նավի նստարան*, 5) *եռանկյան հիմքը*, որոնցից միայն առաջինն է բարբառում արմատացել որպես միակ եւ հիմնական իմաստ.

բ) գրաբարյան բազմիմաստության դիմաց բարբառը երեւան է հանում մի քանի իմաստներ, օրինակ՝ *բաժանել-պիժէնէլ* բառը եւ գրաբարում, եւ բարբառում ունի *բաժանել, գատել, անջատել* իմաստները.

գ) սակավաթիվ բառերում գրաբարի մենիմաստության դիմաց բարբառը երեւան է հանում բազմիմաստություն, ինչպես՝ *ուզել/օզիլ* բայը նշանակում է ոչ միայն *խնդրել, պահանջել*, այլեւ՝ *ամուսնանալ, մտադիր լինել, շող-շօխկ* բառը *ցուք, ճառագայթ* իմաստից բացի նշանակում է նաեւ *ստվեր*.

դ) առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գրաբարից ավանդված այն բառերը, որոնք, բարբառում ինքնուրույն կիրառություն չունենալով, պահպանվել են բարդություններում եւ կապակցություններում, ինչպես՝ *հուր* բառը *հըրըհան* բառի մեջ, *երամակ-ըրամակ* բառը *ըրամակ ըղնէլ* (*մարդամեջ ընկնել*) դարձվածում, *ակ* բառը՝ *ակը տալ* (*փնտրել, ստուգել*) դարձվածում.

ե) բառիմաստի ընդլայնում, երբ գրաբարի մասնավոր իմաստի դիմաց բարբառը հանդես է բերում ավելի ընդհանուր իմաստ, ինչպես՝ *թեփ-թեփ* գրաբարում ունի 1) *ցորենի թեփ*, 2) *ծկան թեփ* մասնավոր իմաստները, մինչդեռ բարբառում նշանակում է *թեփ* ընդհանրապես:

զ) բառիմաստի նեղացում, երբ գրաբարի ընդհանուր իմաստին բարբառում համապատասխանում է մասնավոր իմաստ, այսպես՝ *կուրծք-կործ* բառը գրաբարում ունի *կուրծք* ընդհանուր իմաստը, իսկ բարբառում նշանակում է միայն *անասունի ստիկնք, ործ-վըճրոց* գրաբարում նշանակում է *արու*, բարբառում՝ նաեւ 3 *տարեկան արու ոչխար* եւ այլն:

**Բառակազմություն:** Ինչպես ընդհանուր հայերենում, Ղարաբաղի բարբառում եւս բառակազմական միջոցներն են բառաբարդումը եւ ածանցումը, որոնց շնորհիվ ստեղծվում են նոր բառեր բնիկ եւ փոխառյալ բառերից:

Բարդությունները լինում են համադրական եւ վերլուծական:

Համադրական բարդությունները հիմնականում կազմված են երկու բաղադրիչներից, որոնք կապակցվում են հոդակապով՝ *քրթածակ, չուրաթան, ըզըզանմըճ, կամ առանց հոդակապի՝ սըխտուրթակե, փօրքաջ, քըճկալ*:

Ինչպես ժամանակակից հայերենում, բարբառում համադրական բարդությունների մի մասը առաջացել է կրկնավորներից՝ վերջիններիս բաղադրիչների միաձուլման հետեւանքով, ինչպես՝ *հըսըվհաս, պէցապէց, զըռզըռալ, կըթկաթէ*: Այս շարքին են դասվում նաեւ *օր/ծր* բազմապատկական ածանց ունեցող բոլոր բայերը եւ *ատ, օտ* ածանցներով բայերի մեծ մասը՝ *թըղթըղօրէլ, տըշտըշծրէլ, տըրըքտըրըքօտէլ, ճուկճուկատէլ*:

Երեք բաղադրիչներից կազմված համադրական բարդություններ են՝ *ղըբըրոճոճնանտէմ* (ղեպի+երեկոյի+դեմ), *ղըբըրոճոճնաչախ* (ղեպի+երեկոյի+չախ), *մաքրօլի* (մայր+քույր+օղուլ), *հաքրօլի* (հայր+ քույր+օղուլ):

Վերլուծական բարդությունների մեջ մտնում են հարադրությունները եւ կրկնավորները:

Հարադրական բարդությունները լինում են անվանական եւ բայական:

Անվանական հարադրությունները կազմվում են տարբեր խոսքի մասերից, ինչպես՝ *ամըճ(նը)-ծըմըճ(նը), տօն-տըճդ, ծանդըր-ծընդըրմըճ, էրկու-իրըճ, յըճս-տու*:

Բայական հարադրությունները հիմնականում կազմվում են բայից եւ որեւէ այլ խոսքի մասից՝ *կօլ տալ, պարան կ'անլ, զակազ տալ, կըլծիս պիրիլ, յըճր ածէլ, յըրա հըսնէլ, դալիբ տալ*: Գործածական են նաեւ մի շարք զուգադրական բայեր՝ *ասէլ-խօսէլ, ք'ինիլ-կ'անլ, օտէլ-խըմէլ*:

Կրկնավոր բարդության բաղադրիչները սովորաբար նույն բառի կրկնությունն են: Կրկնավորներ են կազմվում տարբեր խոսքի մասերից՝ *փօնջ-փօնջ, մըճծ-մըճծ, հէնգ-հէնգ, տու-տու, կամանց-կամանց, փա՛հ-փա՛հ* եւ

այլն: Որոշ կրկնավորների բաղադրիչներից մեկը ենթարկվում է հնչյունափոխության, ինչպես՝ *աման-չաման, ական-սական, խրրէգ-մրրէգ, ծակ-ծուկ*:

Բառակազմական կարեւոր միջոց է ածանցումը: Բարբառում գործառում են նախածանցներ եւ վերջածանցներ:

Նախածանցների թիվը խիստ սահմանափակ է: Հայերենի նախածանցներից գործածական են միայն *ան, չը եւ տը* ժխտական ածանցները՝ *ան-դար, անդարդ, անշընտօք, անլըվա, չըպէրք, չըհաս, չըխօսկան, չըկամ, տըկօռ, տըհալ*: Լայն գործածություն ունի նաեւ պարսկերէն *bi-բէ/բէյ* ածանցը, որ դրվում է եւ՛ փոխառյալ, եւ՛ բնիկ բառերի վրա՝ *բէքը՛փ, բէյվախտ, բէյխաբար, բէյհնօշ, բէյշընտօք*:

Վերջածանցները, ի տարբերություն նախածանցների, մեծ թիվ են կազմում: Դրանց շարքում հանդես են գալիս ինչպես գրաբարյան, այնպես էլ մի շարք նոր ածանցներ, որոնց մի մասը հին հայերենի որոշ արմատների իմաստների մթազնման, հոլովական թեքույթների եւ հոգնակերտ ձեւույթների քարացման արդյունք է, մի մասը՝ փոխառություն: Առավել կենսունակ են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ եւ թվականակերտ ածանցները, որոնք բնիկ եւ փոխառյալ բառերից ու բայարմատներից կերտում են նոր բառեր. *ազար/ազար*՝ ցավազար/ցավազար, *ալ*՝ մըհալ, *ալի*՝ մըսալի, վըզալի, *ած*՝ նըշանած, խըրաված, *ակ/անկ*՝ վըհրցակ, մաշնակ, կիռտանկ, *(ա)կան/(ան)կան*՝ պըրտական, վըհրսկան, սըզ(ըլ)անկան, *ան*՝ թացան, քըրըքաշան, կէսան, *անէ*՝ էրկումըթկանէ, հէնգքըրանէ, *անէգ*՝ լիւզկանէգ, *անց*՝ յըրկանց, հըռնանց, *անուկ*՝ շըրանուկ, *անուց/անուց*՝ խուտանուց, վըրցցանուց, հինգիանուց, թընգիանուց, *անք/անք*՝ փըրըրանք, պըրըռանք, ըշկըլիւսանք, *աշ/անշ*՝ թըթվաշ, կիրմի-րանշ, *ասկ*՝ արմասկ, թըրըմասկ, *ավ/անվ*՝ թանավ, ջանավ, գնիմնվ, *ավէր/ավըհր/ անվէր/ավուր/անվուր*՝ պուզնվէր, բախտավըհր, պինավուր/պըննավուր, ծիյավէր, *ավուն*՝ սըվավուն, մըծավուն, *ատ*՝ կէսատ, թէհրատ, *արան/անրան*՝ ըվիտարան/ըվըտանրան, ճիըրքարան, *արար/անրար*՝ տըրնարար, կըռվարար, պինարար, *ացու/անցու*՝ մըսացու, թիլանցու, կօրսինկացու, *է/ի*՝ թուրէ, տանծի, քըշէրէ, *էգ*՝ ածէգ, հատէգ, *ըհան*՝ ըրծըթըհան, վըսկըհան, հըրըհան, *ըհէ*՝ պընդըհէ, ըմըռըհէ, *ըհէ/ անցէ/ացէ/ըցէ/անցի*՝ քըրըքըհէ, շինանցէ/շինացէ/շինըցէ/շինանցի, *ըհքան/էքան*՝ չուրսըհքան/չուրքէքան, իրըհքան/ իրէքան, *ըյին/ույին*՝ թուռըյին, չուրույին, *ըռ(է)/ըհռ*՝ տակըռ(է), շըքըռ/շըքըհռ, *իճ/էճ*՝ կավիճ/կավէճ, *ին/էն*՝ ծանքիճ, մըթէն, *իք*՝ ըսելիք, հըսնէլիք, *լու/լիւ*՝ ջանլու, անիլիւ, *կօտ/կուտ*՝ վըխըլկօտ, հըմանչկուտ, *հան(ա)*՝ տըկըռըհանա, իրըսըհան, *մունք*՝ ըրարմունք, չըչարմունք, *պան*՝ ճըղաց-

պան, ծիյապան, *պատեգ*՝ իրըքպատեգ, վըցցըպատեգ, *վաթ*՝ խուրդանվաթ, *վանք*՝ փնդվանք, *վաջի*՝ ղըմմըզվաջի, իշըվաջի, *վասկ*՝ փնդվասկ, *վարի*՝ ղըմմըզվարի, իշըվարի, *վէ*՝ հըրկըշվէ, ղըրըզվէ, *վուսկ*՝ կուտօրվուսկ, *տան*՝ սըմբէտան, ըռըշկէտան, *տակ*՝ մըֆտակ, հինգըտակ, *ուօ*՝ ծախու, թըթօ, կըծօ, *ութկ*՝ սըվըֆրութկ, *ուկ/նուկ/օկ/օք*՝ կաթուկ/կանթնուկ, ըղօկ/հըղօք, *ում/ նւմ*՝ կօլտում, նըրթնւմ, *ուն*՝ ցալքուն, թաքուն, *ունք/նւնք*՝ իրավունք, հնկնւնք, *նւշ*՝ փըրթնւշ, *ում/օւմ*՝ հափոււմ, *քըշկօւմ*, *ուստ/նւստ*՝ ապըրուստ, կանլնւստ, *ուտ/ նւտ/օւտ/օտ*՝ խընձօրուտ, մօշօտ, ցնքնւտ, հնւնձտ, քաշկուտ, փըսլընքօտ, *ուրթ/օրթ/ըրթ*՝ ժուղօվուրթ/ժօղօվըրթ, փօխնուրթ/փօխնօրթ, *ք/կ*՝ թէվք, շալք, փօխկ, շօխկ, *օթուն/օթնւ*՝ հընգըրօթուն, փիսօթուն/փիսօթնւն, *օսկ/ուսկ*՝ պըտըռօսկ, մէրուսկ, *օվի/օվի*՝ թըկօվի, քըցօվի, *օց/օց/ուց/նւց*՝ գըռռօց, թըրչօց, կըռկըռօց, տնըղտօղնւց եւ այլն:

Որոշ վերջածանցներ փոխառյալ են, ինչպէս՝ *ինջի/ընջի/հինջի* (թուրք. - *inji*)՝ վէցցինջի/վէցցընջի, իրըք(հ)ինջի, *լար/լւնր* (թուրք - *lar*)՝ դայիլւնր, նմիլւնր, թունիլւնր, արգումանլար, *լու/լնւ* (թուրք - *lu*)՝ ջանլու, նգանլնւ-մնգանլնւ, նհլնւ, *չի* (թուրք - *ci*)՝ դնմնւրչի, գարափաթչի, նախըրչի, *սըզ/սուզ* (թուրք - *sus*)՝ սօնգըզ/սօնգսուզ, թայսըզ, *խտ* (ռուս. *учт*)՝ կամունխտ, թէվանխտ:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղեան Ս., *Ժողովրդական լեզուի շեշտադրությունը արեւելեան ճիւղի բարբառների մէջ*, «Նոր դար», Թիֆլիս, 1890, N141-145

(Հայերենի արեւելյան խմբակցության որոշ՝ Արարատյան, Ագուլեցոց, Գուգարաց, Թիֆլիսի բարբառներին զուգընթաց ներկայացվում են Ղարաբաղի բարբառի շեշտադրության առանձնահատկություններն ու շեշտից կախված հնչյունափոխության որոշ դեպքեր: Ըստ հեղինակի՝ «Արեւելյան բարբառներից առանձին քերականական շեշտադրություն ունին միայն Արարատյան բարբառն յուր բոլոր երկրորդական բարբառներով, Արցախու եւ Սյունյաց (Ղարաբաղի), Ագուլեցոց (գոկերի), Գուգարաց եւ Թիֆլիսի բարբառները: Սյուս երկրորդական գավառաբարբառները, որոնք այս գլխավոր բարբառների մէջ են, հարկավ, ենթարկվում են առոգանության միեւնույն օրենքին, որ ունին մայր բարբառները»: Հոդվածը տպագրվել է նաեւ հետագայում /Աբեղեան Ս., *Երկեր*, հ. Ը, Երեւան, 1985, էջ 273-291/):

2. Աբրահամյան Ա., *Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում*, Երեւան, 2013, 333 էջ:

(Քննության են առնվում «Հայերենի բարբառագիտական ատլասի» նյութերի հավաքման ծրագրում «Երկրագործություն» իմաստային (թեմատիկ) խմբում ընդգրկված գործիքանիշ մի քանի հասկացությունների բառանունները: Բաղկացած է ներածական մասից, երեք գլուխներից, «Ամփոփում» բաժնից: «Ներածության» մէջ անդրադարձ է կատարվում հարցի ուսումնասիրության պատմությանը, նշվում են ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրները, տրվում են քննության սկզբունքները: Տարբեր ուսումնասիրություններում եղած ստուգաբանությունների համեմատությամբ առանձին ենթաբաժիններով առաջին գլխում ներկայացվում են հողափոր (*բահ, երկբերան բրիչ*), երկրորդ գլխում՝ հողավարման եւ հողահարթեցման (*արոր, փոցխ*), իսկ երրորդ գլխում՝ հնձի եւ խոտահավաքի (*մանգաղ, գերանդի, եղան*) գործիքների՝ հայերենի բարբառներում, այդ թվում՝ Ղարաբաղի բարբառում ու նրա մի շարք խոսվածքներում (*Տումի, Վաղուհաս, Հին Թաղլար, Քարագլուխ, Նոր շեն, Հաղորութ, Ջարդախաս, Խնձորեսկ, Գյունե Ճարտար, Խանաբաղ, Եմիշճան, Առաջածոր, Ղազարահող, Չափար, Թալիշ, Հայաղ, Կաղարծի, Գառնաքար, Գորիս, Քաջարան, Խնածախ, Տաթեւ, Կապան եւն*) գործածվող անվանումների հանգամանակից մեկնությունները: Ըստ հեղինակի ամփոփումների՝ աշխատության մէջ քննված խնդրո առարկա հասկացությունների 118 բառանուններից 47-ը գործածվում է Ղարաբաղի բարբառում, որից 10-ը հնդեվրոպական ծագ-

ման են, 19-ը՝ փոխառյալ, 11-ը՝ հայակերտ (դրանցից 6-ը՝ այլ բարբառներում չվկայված), իսկ մյուսները՝ չստուգաբանված: Աշխատությանը կցված են օգտագործված գրականության ցանկ եւ բոլոր բառանունների տարածքային բնութագրերն ու բաշխվածությունը ներկայացնող աղյուսակներ: Նշված առանձին հասկացությունների ու բառանունների վերաբերյալ հեղինակը տպագրել է նաեւ մի շարք հոդվածներ: Աշխատությունը հեղինակի՝ 2011 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության (ղեկավար՝ Բ.Գ.Թ. Ա. Հանեյան) լրամշակված տարբերակն է):

3. Աբրահամյան Ս., **Ա. Ս. Պողոսյան, Հաղորդի բարբառը (գրախոսություն)**, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1966, N3, էջ 274-278

(Ներկայացվում են աշխատության կարեւոր արժանիքները՝ ըստ բաժինների հանգամանալից եւ բազմակողմանի քննություն, գիտական կարեւոր արժեք, տարբեր խոսվածքների ընդհանրությունների ու յուրահատկությունների նշում են, ինչպես նաեւ որոշ վիճելի հարցեր եւ թերություններ՝ մի շարք քմային բաղաձայնների առկայություն, բարբառի հնչյունների արդի վիճակի նկարագրության բացակայություն, որոշ բաների սխալ ստուգաբանություններ են):

4. Աբրահամյան Ս., **Ղիտողություններ բարբառների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ**, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ», Երեւան, 1955, N 7, էջ 65-73

(Բարբառների քերականական կառուցվածքի ուսումնասիրման գործում առավել կարեւորելով տվյալ բարբառի՝ համաժողովրդական լեզվից ու մյուս բարբառներից ունեցած տարբերությունների վերհանումը՝ հեղինակը հանգամանորեն քննության է առնում Ղարաբաղի եւ Հաղորդի (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) բարբառների երկու կարեւոր օրինաչափություն՝ նույն բառերի՝ որոշյալ կամ անորոշ առումներով գործածվելու դեպքում տարբեր հոլովման (ոչ բոլոր հոլովներում) ենթարկվելու երեւոյթը եւ ժամանակի մակբայների գործածության առանձնահատկությունները՝ կապված ներկայում կատարվող կամ կատարվելիք եւ կատարված գործողության հատկանիշ ցույց տալու հետ: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաեւ այդ երեւոյթների առաջացման պատճառներին եւ ընթացքին):

5. Ալվերդյան Ս., **Ղարաբաղի բարբառի հնչյունային մի առանձնահատկության մասին**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1970, N3, էջ 78-82

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառում ը<sup>ի</sup> եւ ը<sup>է</sup> հնչյունների գործածության դեպքերն ու դիրքերը, բերվում համապատասխան օրինակներ, անդրադարձ է կատարվում նաեւ մասնագիտական գրականության մեջ

եղած մեկնաբանություններին: Արդյունքում հեղինակը փորձում է հիմնավորել, որ դրանք առանձին լեզվական իմաստներ չեն արտահայտում, առանձին իմաստներ չեն տարբերակում ու չունեն հնչույթային արժեք, այլ հանդես գալով *ը* եւ *է* հնչույթների շրջապատում՝ հանդիսանում են վերջիններիս ազատ տարատեսակումը):

6. Աղաբեկյան Մ., **Ղարաբաղի բարբառի հնչույթային համակարգի զարգացումը**, «Հայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ. Թեզիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 2

(Ներկայացվում է Ղարաբաղի բարբառի հնչույթային համակարգի զարգացումը վանկահնչույթներից, որոնց տարբերակիչ հատկանիշները ի հայտ էին գալիս վերհատույթային մակարդակում: Ըստ հեղինակի՝ դրա հետագա զարգացումը հանգեցրել է վերհատույթային հատկանիշների փոխակերպմանը հատույթավոր մակարդակի միավորների, որի արդյունքում վերհատույթային հատկանիշները տարալուծվել են հատույթային մակարդակում, եւ վանկի բաղադրիչները միմյանցից առանձնացել են՝ ստանալով ինքնուրույն հնչույթների արժեք):

7. Աղաբեկյան Մ., **Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչունաբանություն**, «Հայերենի բարբառագիտական ատլաս», պրակ 3, Երեւան, 2010, էջ 54-165

(Պատմահամեմատական մեթոդով ներկայացվում է Արցախ-Սյունիքի տարածքի Ղարաբաղի (*Բոլնիս-Խաչենի, Շուշիի, Հաթերքի, Հարավի, Կաղարծիի, Շահումյանովսկի, Գորիսի, Զանյաթաղի, Հաղրութի, Շուշիքենիի, Տումիի, Շաղախի, Խանազահի խոսվածքներով*), Կոզենի, Հավարիկի, Շամախիի (*Շամախիի, Զյարքյանջի խոսվածքներով*), Մեհտիշենի, Մեղրու (*Գուղեմնիսի, Վարհավարի, Կարճեւանի, Մեղրու խոսվածքներով*), Բուրդուրի բարբառների, Ղազախ-Կիրովաբադի միջբարբառի (*Թովուզի, Ղազախի, Կիրովաբադի խոսվածքներով*)՝ ակնհայտ նմանություններ ցուցաբերող բարբառային հնչյունական համակարգերի քննությունը, բացահայտվում են դրանցում եղած հնչյունական փոփոխությունների օրինաչափություններն ու հարաբերական ժամանակագրությունը, տվյալ համակարգերի տարածքային կապերն ու ծագումնաբանական ընդհանրությունները: Բաղկացած է «Ներածությունից», երկու մասերից՝ «Ձայնավորներ», «Բաղաձայններ», եւ «Ամփոփումից»: «Ներածության» մեջ (էջ 54-69) անդրադարձ է կատարվում հայ եւ օտարազգի լեզվաբանների կողմից հայերենի բարբառների հնչյունական համակարգերի հետազոտմանը, տրվում են ուսումնասիրության սկզբունքները: Առանձին բաժիններով եւ ենթաբաժիններով առաջին մասում (էջ 69-126) քննության են առնվում ձայնավորների համակարգային (լծորդական շարքերի առաջացում, շեշտ,

շեշտադրական հնչյունափոխություններ, ձայնավորների ներդաշնակություն) եւ ոչ համակարգային փոփոխությունները, երկրորդ մասում (էջ 127-148)՝ հպական ու կիսաշփական, շփական, ձայնորդ բաղաձայնների համակարգային եւ ոչ համակարգային փոփոխությունները: Ուսումնասիրության վերջում հեղինակը ներկայացնում է իր ամփոփումները (էջ 148-162), ըստ որի՝ Սյունիք-Արցախ տարածքի հնչյունահնչույթային համակարգերը ձեւավորվել են եռաստիճան (ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ) հակադրությամբ հպական ու կիսաշփական բաղաձայնների եւ քմայնության ոչ հնչույթային հատկանիշով օժտված ձայնավորների ընդհանուր հենքի վրա: Ուսումնասիրությանը կցված է նաեւ օգտագործված գրականության ցանկ (էջ 162-165):

8. Աղաբեկյան Մ., **Քարահունջ. ստուգաբանական դիտարկումներ**, «Ջահուկյանական ընթերցումներ. Հրաչյա Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, 2011թ., ապրիլի 27-29)», Երեւան, 2011, էջ 47-52

(Մերժելով Արցախում եւ Սյունիքում գտնվող *Քարահունջ* բնակավայրերի անվան տարբեր ստուգաբանությունները՝ հեղինակն այն բխեցնում է *քար* եւ հնդեվրոպական *pent-* (ոտք դնել, գնալ) արմատի *pont-* տարբերակից ծագած հայերեն *հուն* (գետի մեջ ծանծաղ տեղ, որից կարող է մարդ անցնել, ելք, հնարք, ճամփա) բառերից՝ համանուն բնակավայրերի յուրահատկություններից համարելով խիտ ժայռերի, հսկա քարերի եւ այլնի միջով բացված ճանապարհ ունենալը):

9. Աղայան Ղ., **Ո տառի հնչիւնը Ղարաբաղի բարբառում**, «Տարագ», *Թիֆլիս*, 1898, N 48, էջ 1090

(Ակզբում անդրադարձ է կատարվում Ղարաբաղի բարբառի *բ, գ, դ, ծ, ջ* (ըստ հեղինակի՝ *մետաղաձայն հնչյուններ*) եւ *պ, կ, տ, ծ, ճ* (ըստ հեղինակի՝ *նուրբ կարծրատիպ հնչյուններ*) բաղաձայնների հնչյունափոխությանը եւ գործածության որոշ դեպքերի, այնուհետեւ ներկայացվում են *n* տառի *ւէ, լը, ւա* ձեւերով գործածության դեպքերը, բերվում են համապատասխան օրինակներ): Հոդվածը տպագրվել է նաեւ հետագայում /Աղայան Ղ., **Երկերի ժողովածու**, *հ. երրորդ, Երեւան, 1963, էջ 453-456*/):

10. Աղայան Ղ., **Տէր, տար եւ դէր բառերը Ղարաբաղի բարբառում**, «Տարագ», *Թիֆլիս*, 1899, N 6, էջ 152

(Մեկնաբանվում են Ղարաբաղի բարբառում գործածվող *տէր* (Աստված), *տար* (որեւէ բանի տեր) եւ *դէր* (քահանա) բառերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում *դէր* բառի քննությանը: Վերջինիս ծագումը կապվում է *Տիր* աստծո անվան հետ, որն ըստ հեղինակի՝ օտար բառ է եւ պետք է լինի *Ղիր*: Աղայանը միաժամանակ հերքում է Կ. Կոստանյանցի այն տեսակետը, որ հայերեն *տիրացու* բառը հավանական է ծագած լինի

*Տիր անունից): Յողվածը տպագրվել է նաեւ հետագայում /Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. երրորդ, Երեւան, 1963, էջ 456-459/):*

11. Աճառեան Յր., *Եւրոպական լեզուներից փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Վիեննա, 1951, 186 էջ*

(Ներկայացվում են Պոլսի բարբառի՝ իտալերենից, ֆրանսերենից եւ եվրոպական այլ լեզուներից փոխառած բառերը: Յեղինակը վկայում է նաեւ, որ դրանք համեմատել է այլ բարբառների (Զմյուռնիայի, Արաբկիրի, Ակնա, Վանի, Ղրիմի, Նոր Նախիջեւանի եւ Ղարաբաղի) նման կարգի բառերի հետ: Չնայած բառահողվածներում բարբառների անունները չեն նշվում, սակայն ընդգրկված 860 բառից շուրջ 100-ը (որոշակի հնչյունափոխություններով) գործածական է Ղարաբաղի բարբառում, որոնք հիմնականում փոխառվել են ռուսերենի միջնորդությամբ, ինչպէս՝ *ալաֆրոնակա* (տարօրինակ), *անթիքա* (հազվագյուտ), *ատռէս* (հասցե), *թէլէֆօն* (հեռախոս), *հլիմօն* (կիտրոն), *լիթոնա* (լիտր), *մատիտ* (կապարե գրիչ), *սանտալ* (կոշիկի տեսակ), *փայթօն* (եվրոպական կառք), *փօրմա* (ծել, կերպ) եւն):

12. Աճառեան Յր., *Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Գ., Մոսկուա-Վաղարշապատ, 1902, 378 էջ*

(Կազմված է «Ներածութիւնից» եւ բուն բառարանից: Ներածական մասում (էջ1-57) ներկայացվում են թուրքական տիրապետության պատմությունը, հայերենի բարբառների դասավորությունը, թուրքերենից կրած ազդեցությունը, օսմաներենի հնչյունական համակարգը, բառարանի կազմման ու բառերի տառադարձման սկզբունքները եւն): Բուն բառարանը (էջ58-377) ընդգրկում է թուրքերենից կամ նրա միջոցով այլ լեզուներից (հատկապէս արաբերենից ու պարսկերենից) փոխառյալ շուրջ 4000 բառ, որոնց դիմաց տրվում է բացատրությունը, թուրքերենի ձեւը, ծագումը, ֆրանսերեն նշանակությունը, գործածության սահմանները: Դրանցից Ղարաբաղի բարբառին հեղինակը հատուկ է համարել շուրջ 1000-ը (*ամանաթ, բայդադ, դամադ, զօռպա, էշիս, խալիս, նահլաթ, մահլա, չանթա, հախ, վախտ, փալան, օթադ եւն*): Բազմաթիվ բառերի դիմաց նշված չէ Ղարաբաղի բարբառը, չնայած դրանք բարբառի խոսվածքներում ունեն լայն գործածություն (*ափալ-թափալ, դալիդօլու, թավուր, թաքառ, շամաթա, չամ, չայիր եւն*): Քիչ չեն նաեւ այն բառերը, որոնք Ղարաբաղի բարբառում գործածական չեն, սակայն դիտարկված են այդ անվան տակ (*աթար, ալաջախ, գայիփ, էլպաշի, դառըշըղ եւն*), չնայած չի բացառվում, որ դրանց մի մասը ժամանակին գործածվել է, մանավանդ որ դրանցից որոշների դիմաց հեղինակը դրել է + նշանը՝ ցույց տալու համար, որ դրանք հատուկ

են միայն հին սերնդի խոսվածքին եւ այդ պահին քիչ գործածական են: Անճշտություններ կան նաեւ որոշ բառերի իմաստների բացատրության մեջ, օրինակ՝ *այագ, արբար անէլ, խարար, քօզ* բառերը բարբառում համապատասխանաբար նշանակում են *սառնամանիք, չարչարել, մեծ պարկ, մոխիր* եւ ոչ թե *պարզկա, դիզել, քուրծ, խարույկ*, ինչպես նշել է հեղինակը):

13. Աճառեան Հր., **Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)**, «Էմիլեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեան, 1911, 309 էջ

(Հեղինակի՝ 1909 թվականին Փարիզում ֆրանսերէն լեզվով հրատարակած «*Classification des dialectes arméniens par Adjarian*» աշխատության մշակված եւ լրացված տարբերակն է: Առանձին բաժիններով եւ ենթաբաժիններով ներկայացվում են հայ բարբառագիտության պատմությունը, բարբառագիտական ուսումնասիրությունների թերությունները, բարբառներն ուսումնասիրելու ծրագիրն ու եղանակները, գիտական այբուբենը, աշխատությունը կազմելու հիմքերն ու սկզբունքները, նոր հայերենի՝ հին հայերենից ունեցած տարբերությունները, հայերի բնականության տարածքները, օտարախոս հայերի յուրացրած լեզուները, հայերենի բարբառների ձեւաբանական դասակարգումը: Վերջինս տրվում է «*Հայերէն բարբառներու երեք ճիւղերը*» բաժնում, որտեղ հեղինակը, հիմք ընդունելով ներկա եւ անցյալի անկատար ժամանակների կազմության եղանակը, հայերենի՝ իրեն հայտնի բարբառները բաժանում է «*ում*», «*կը*» եւ «*ել*» ճյուղերի՝ տալով նաեւ դրանցից յուրաքանչյուրի համառոտ նկարագրությունը: Այս բաժնի «*Ղարաբաղի բարբառ*» ենթաբաժնում (էջ 61-75), որը կարելի է համարել Աճառեանի «*Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան Գ. Զննութիւն Ղարաբաղի բարբառին*» մենագրության ամփոփ տարբերակը, ներկայացվում են «*ում*» ճյուղի մեջ ընդգրկված Ղարաբաղի բարբառի տարածման սահմանները, հնչյունախոսությունը, ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների հնչյունափոխության դեպքերը, հոլովների կազմությունը, հոլովման եւ խոնարհման յուրահատկությունները, դերբայների դրսեւորումները, Գանձակի, Ղազախի ու Ղարադաղի ենթաբարբառների՝ Ղարաբաղի բարբառից ունեցած որոշ տարբերություններ, բարբառին ու նշված ենթաբարբառներին առնչվող ուսումնասիրություններն ու ստեղծագործությունները: Վերջում տրվում է բուն բարբառով եւ ենթաբարբառներով (նաեւ Զանգեզուրի գավառականով) գրառված մեկական նմուշ: Բացի դրանից, Ղարաբաղի բարբառին անդրադարձ է կատարվում այլ բարբառների այս կամ այն օրինաչափությունը քննելիս: Աշխատությանը կցված են նաեւ հայաբնակ վայրերի եւ հայերենի՝ նկարագրված տարածական տարբերակների այբբենական ցանկ եւ քարտեզ):

14. Աճառեան Հր., **Հայերէն գաւառական բառարան**, «Էմիլեան ազգագրական ժողովածու», հ. Թ., Թիֆլիս, 1913, 1143 էջ

(Բաղկացած է ներածական մասից՝ «Յառաջաբան» (էջ 1-21), «Ձայնական ու քերականական ուրուագիծ հայ բարբառներու» (էջ 22-39), «Համառոտագրութիւններ» (էջ 40-42), եւ բուն բառարանից: Ներածական մասում ներկայացվում են հայերենի 31 բարբառների դասավորությունը, բառապաշարի շերտերը, հարցի ուսումնասիրության պատմությունը, գավառական բառերի ուղղագրությունը, ընդհանուր ձայնախոսությունն ու ձայնաբանությունը, բառարանի կազմման սկզբունքներն ու աղբյուրները, յուրաքանչյուր բարբառի (այդ թվում՝ Ղարաբաղի) հնչյունաքերականական օրինաչափությունների հակիրճ նկարագրությունը, բարբառախոս վայրերի համառոտագրությունները: Բուն բառարանը (էջ 43-1141), որը Աճառյանը գրել է իր մշակած տառադարձությամբ, ընդգրկում է շուրջ 30000 գավառական բառ եւ դարձված, որոնք, ըստ հեղինակի, հին մատենագրությամբ ավանդված չեն: Գլխաբառից հետո համառոտագրությամբ նշվում են բառի գործածության վայրերը, որից հետո տրվում է իմաստների բացատրությունը, բազմաթիվ դեպքերում՝ վկայված օրինակներ: Առանձին պարբերություններով ներկայացվում են նաեւ տվյալ բառով կազմված դարձվածները: Միաժամանակ աստղանիշով առանձնացվում են այն արմատները, որոնք գրաբարում ավանդված չեն, իսկ դրանց վերջում նշվում են հեղինակի կամ ուրիշների կողմից տրված ստուգաբանությունները: Շուրջ 8000 բառ ու դարձվածային միավոր, որոնց գերակշիռ մասը Աճառյանը վերցրել է Ա. Բահաթրյանի կազմած «*Ղարաբաղու գավառական բառգիրք*» ձեռագիր բառարանից, վերագրված են Ղարաբաղի բարբառին (*ագի, աժմուկ, գօխ, գօփի, էգուց, ըստի, ըտի, կըշկըռէլ, դօրդ, շըխկարա, շըխկարա տալ, «տէղդ ծուխ է, վէր կաց» ասէլ, տէղուատէղ անէլ, տըռըզցընէլ, փօթ, փըքվիլ, քաշ, քառ եւն*): Բազմաթիվ բառերի ու դարձվածների դիմաց նշվում է միայն Ղարաբաղը (*աբէթ, ագի դառնալ, ագին քաշ տալ, զըղօնի տալ, գիրավ ածէլ, զըպըրտիչ, ժամասէր, կըծէղն, կընձմընձուկ, կըշկըռօտէլ, դընջըընջալ, շըմբէլ, շըմբշըմբօրէլ, տունդի, տունդին ցից զըցէլ, տուն ընկած եւն*): Մի շարք բառեր ու դարձվածներ էլ, որոնք խիստ կենսունակ են բարբառում, համապատասխան նշում չունեն, ինչպես՝ *աբրա, զըռալ, թաթալաբազ, թառմայ, լէգուն իրան անէլ, կըծղիլ, կըմկըմօց, հէրիք անէլ, ճըպճըպացնէլ, շալակը տալ, շընթռէլ, պըրծում, տէղն ընկնէլ, քած եւն*):

15. Աճառեան Հր., **Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան Գ. Զննութիւն Ղարաբաղի բարբառին**, Վաղարշապատ, 1901, 199 էջ:

(Բաղկացած է առաջաբանից եւ չորս գլուխներից: Առաջաբանում (էջ ա-գ) թվարկվում են Ղարաբաղի բարբառով գրված տպագիր նյութերը եւ այն

աշխատանքները, որոնցում հեղինակներն անդրադարձել են բարբառի որոշ իրողությունների: Առաջին գլուխը (էջ 1-34) վերնագրված է «*Ձայնախօսություն*», որտեղ ներկայացվում են բարբառում գործածական բոլոր հնչյունները՝ ձայնավորներ՝ *ա, մ, է, ը, ըէ, ի, օ, ու, էօ, իւ, երկբարբառներ՝ էյ, օյ, ուա*, բաղաձայններ՝ *բ, գ, գյ, դ, գթ, ժ, լ, խ, ծ, կ, կյ, հ, հյ, ձ, դ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, քյ*, որոնցից յուրաքանչյուրը նկարագրվում է առանձին՝ ուշադրություն դարձնելով հնչյունախոսությանը եւ գործածության դիրքերին, անհրաժեշտության դեպքում բերվում են բառերի օրինակներ: Երկրորդ գլուխում՝ «*Ձայնաբանություն*» (էջ 34-140), առանձին ենթաբաժիններով հանգամանորեն քննվում են բոլոր ձայնավորների, երկբարբառների ու բաղաձայնների հնչյունափոխության դեպքերը՝ նշելով նաեւ շեշտի վերջընթեր դիրքն ու շեշտանախորդ դիրքում գտնվող ձայնավորի սղվելու կամ *ը*-ի վերածվելու օրինաչափությունը: Երրորդ՝ «*Քերականություն*» գլխում (էջ 141-188) առանձին բաժիններով նկարագրվում են բարբառի անվանական հոլովումը, որոշյալ հոդը, ածականի համեմատության աստիճանները, թվականների (հեղինակը կոչել է *թուական ածականներ*) տեսակները, դերանունների հոլովումը, ստացական հոդերը, բայի խոնարհումը, անփոփոխելի բառերը (հեղինակը այդպես է կոչել նախադրությունները, մակբայները, շաղկապները, ձայնարկությունները), շեշտադրության ծագումը եւ բարդ բառերը: Չորրորդ գլխում (էջ 189-198) ներկայացվում է «*Թիւնին պրէլին*» հեքիաթը՝ գրառված էջմիածնի վանքի միաբան Եսայի սարկավագ Մահտեսի Բաբայանից (ծննդով Վարանդայի Գիշի գյուղից), ով նաեւ աջակցել է Աճառյանին՝ նրա ուսումնասիրության համար կազմելով Ղարաբաղի բարբառի բառարանը: Աշխատության մեջ Աճառյանը ընդհանուր առմամբ համեմատության ելակետ է ընդունել գրաբարը՝ այս կամ այն լեզվական օրինաչափությունը ներկայացնելիս հաճախ համեմատության եզրեր անցկացնելով այլ բարբառներում առկա համապատասխան երեւույթների հետ: Քիչ չեն նաեւ ընդհանուր բնույթի դիտարկումները: Այսպես, խոսելով բարբառի շեշտադրության մասին, նա հանգում է այն եզրակացության, որ արեւելյան մի շարք բարբառների վերջընթեր շեշտը «*գուտ հետեւողութիւն եւ շարունակութիւն է իրենց կորսնցուցած նախկին բնիկ լեզուին շեշտադրութեան*»: Չիմանալով Ղարաբաղի բարբառը՝ հեղինակը ուսումնասիրությունները հիմնականում կատարել է բարբառով տպագրված նյութերի հիման վրա՝ օգնական ունենալով Ավետիս Տեր-Յարությունյանին (ծննդով Յարութի շրջանի Թաղոտ գյուղից): Նախքան առանձին գրքով հրատարակվելը՝ աշխատությունը տպագրվել է «*Արարատ*» հանդեսի 1899-1901 թվականների համարներում (*Վաղարշապատ, 1899, համար իններորդ, էջ 394-399, համար ժ. եւ ժԱ.-րդ, էջ 453-459, 1900, թիւ Ա., էջ 26-28, թիւ Բ., էջ 73-76, թիւ Դ., էջ 190-193, թիւ Ը.եւ Թ., էջ 411-415, թիւ ժԱ., էջ 529-533, թիւ ժԲ., էջ 612-616, 1901, թիւ Դ., էջ 236-239, թիւ Ե. եւ Զ., էջ 310-312, թիւ Է. եւ Ը, էջ 368-375*):

16. Աճառյան Յր., **Լիակատար քերականություն հայոց լեզվի (Յամեմատությամբ 562 լեզուների)**, Ներածություն, Երեւան, 1955, 656 էջ, հ. I, Երեւան, 1952, 496 էջ, հ. II, Երեւան, 1954, 480 էջ, հ. III, Երեւան, 1957, 1011 էջ, հ. IV, Ա գիրք, Երեւան, 1959, 594 էջ, Բ գիրք, Երեւան, 1961, 544 էջ, հ. V, Երեւան, 1965, 432 էջ, հ. VI, Երեւան, 1971, 846 էջ, (հ. VII), Երեւան, 2005, 352 էջ

(«Ներածության» մեջ քննության են առնվում լեզվի ծագման, զարգացման, հասարակական դերի ու հիմնական գործառույթների, լեզուների դասակարգման եւ այլ հարցեր: Յամարակիր հատորներում այլ լեզուների համեմատությամբ եւ զարգացման տարբեր էտապներում ու վիճակներում (գրաբար, միջին հայերեն, բարբառներ, արեւմտահայ եւ արեւելյահայ աշխարհաբար լեզուներ) հանգամանորեն ներկայացվում են հայերենի խոսքի մասերն ու նրանց քերականական կարգերը, հնչյունաբանությունը, իմաստաբանությունը, բառաքննությունը, շարահյուսությունը եւն: Բազմաթիվ երեսույթներ քննելիս հեղինակը անդրադառնում է նաեւ Ղարաբաղի բարբառի համապատասխան ձեւերին):

17. Աճառյան Յր., **Յայերեն արմատական բառարան**, հ. Ա, Երեւան, 1971, 700 էջ, հ. Բ, Երեւան, 1973, 688 էջ, հ. Գ, Երեւան, 1977, 636 էջ, հ. Դ, Երեւան, 1979, 676 էջ

(Յայերենի բառարմատների ընդհանուր բառագիտական-ստուգաբանական բառարան: Առաջին հատորի ներածական մասում՝ «Յառաջաբան» (էջ 1-29), «Յամառոտագրություններ» (էջ 30-69), անդրադարձ է կատարվում հարցի ուսումնասիրության պատմությանը, հանգամանորեն ներկայացվում են բառարանի կազմման սկզբունքները, կառուցվածքը, օգտագործված աղբյուրները, հին ու նոր մատենագիտական աղբյուրների, բարբառախոս վայրերի, տարբեր նշումների համառոտագրությունները: Բուն բառարանն ընդգրկում է հայերենի շուրջ 11000 արմատական բառ, որից 5095-ը ստուգաբանվում են: Յուրաքանչյուր բառահոդված կազմված է հինգ բաժնից՝ բառագիտություն, ստուգաբանություն, ստուգաբանութեանց պատմությունը, գաւառական ձեւեր, հայերենից փոխառեալ բառեր: Չորրորդ բաժնում, որը սկսվում է **ԳԻՌ** համառոտագրությամբ, ներկայացվում են տվյալ արմատի ստացած ձեւերը հայերենի բարբառներում: Այս բաժնում մեծ տեղ է հատկացված նաեւ Ղարաբաղի բարբառի ձեւերին, ինչպես՝ ազի-հոքի, ալիւր-ալէր, ախոռ-ախուռ, բամբակ-պէմբակ, գոսակ-քոսակ, գորտ-կէրթնուկ, դնել-տնիլ եւն: 1982 թվականին Երեւանում տպագրվել է «Յայերեն արմատական բառարան. Յավելլիք եւ ուղղելիք» (21 էջ) գիրքը, որտեղ ներկայացվում են բառարանի խմբագրական ու սրբագրական վրիպումների եւ հավելումների ցանկերը: Արմատական բառարանը առաջին անգամ տպագրվել է ապակետիպ եղանակով՝ 7 հատորով (Երեւան, 1926-1935):

18. Աճառյան Յր., *Յայոց լեզվի պատմություն, I մաս, Երեւան, 1940, 358 էջ, II մաս, Երեւան, 1951, 610 էջ*

(Պատմահամեմատական մեթոդով ներկայացվում են հայերենի կազմավորման ու զարգացման պատմությունը, բառակազմի եւ քերականության պատմական փոփոխությունները, տարբեր լեզուներից կրած ազդեցությունները: Երկրորդ մասում առանձին գլուխներով՝ «*Ե դարի հայերեն բարբառները*» (էջ 114-141), «*Յայերենի բարբառները*» (էջ 324-361), «*Յայ բարբառների ծագման ժամանակը*» (էջ 362-439), հեղինակը հանգամանորեն քննության է առնում հայերենի բարբառների ծագման ու դասկարգման հարցերը՝ մեծ տեղ հատկացնելով նաեւ Ղարաբաղի բարբառին: Մասնավորապես հիմք ընդունելով այն փաստը, որ Ղարաբաղի բարբառում հին հայերենի *բ, գ, դ, ձ, ջ* բաղաձայնները բնիկ հայերեն բառերում ու հին փոխառություններում խլացել են, ինչը չի տարածվում թուրքերենից փոխառյալ բառերի վրա, նրա ծագումը կապում է ԺԲ դարի հետ՝ Նախքան թուրքերի Յայաստան գալը (էջ 378-380): Յեղինակը աշխատության մեջ առանձին ենթաբաժնով տվել է նաեւ բարբառի հակիրճ նկարագրությունը (էջ 331-332)՝ անդրադառնալով նրա տարածման սահմաններին, հնչյունաքերականական հիմնական հատկանիշներին, նրանով հրատարակված նյութերին՝ միաժամանակ բարբառի ենթաբարբառներ համարելով Ղարադաղը եւ Ղազախը):

19. Ամատունի Ս., *Յայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, 728 էջ*

(Բաղկացած է ներածական մասից՝ «*Յառաջաբան*» (էջ Ե-Ի), եւ բուն բառարանից (էջ 1-682): Ներածական մասում, կարելի էրելով ժողովրդական լեզվի բառերի ու դարձվածների նշանակությունը, հեղինակն անդրադառնում է նման միավորներ ընդգրկող ստեղծագործություններին, հանգամանորեն ներկայացնում բառարանի կազմման սկզբունքները, օգտագործած աղբյուրների, բարբառախոս վայրերի (այդ թվում՝ *Ղարաբաղ, Ջանգեզուր, Ղափան*) համառոտագրությունները: Բուն բառարանը, որը գրված է գրական հայերենի տառադարձությամբ, ընդգրկում է հայերենի բարբառներում գործածական շուրջ 16000 բառ ու դարձվածային միավոր: Նախ տրվում է գլխաբառը, այնուհետեւ՝ գործածության վայրը, բացատրությունը, գրավոր կամ բանավոր խոսքից առնված օրինակը (երբեմն՝ կրճատումով), իսկ ոճերը (դարձվածները) տրվում են համապատասխան գլխաբառերի տակ: Բառարանում ընդգրկված միավորներից շուրջ 4000-ը (*ազատուել, ալակոշկոշ, ըդամամութ, լրթենի, խաշեմնը, կոտապ, մակարներ, պարապ-սարապ, ուսկապ, փաղաղ եւն*) գործածական են Ղարաբաղի բարբառում, չնայած դրանցից շատերի դիմաց Ղարաբաղը նշված չէ (*ազգ ու տակ, ազի, բարատու, դաբաղ, գոխ, թաթ, թաղկունճ, ժամատուն, իստակ, խաչահանել, կոլինջ, դրժոց, ճաթ, մազակալել, շաղել, սըլվըլալ, տըկլոր, քարթու, օրապակաս եւն*): Յեղինակը դարձ-

վածները ներկայացնելիս հիմնականում սահմանափակվել է Արարատյան բարբառով, սակայն ընգրկված միավորների զգալի մասը նույնպես գործածվում է Ղարաբաղի բարբառի խոսվածքներում (*անկաջները կախել, արհևը քաղցր, էջն ուտել՝ պոչումը խռովել, ժանգ ու ժանգ անել, լոք տալ, խոսքը կոտրել, ծկակի տալ, հողը նրան խաբար չտա, մազը քաշես՝ յեղը կը կաթի, նազ ու տուզ անել, սիրտը կոտրել են*): Մի շարք բառեր էլ ներկայացված են միայն Ղարաբաղի բարբառի անվան տակ (*թոխրիլ, թործ, թործակապ, թործել, հոփ կալ, հոփ օնել, պռկել, պռոկ, պրանել են*): Բառարանն առանձնանում է վկայված օրինակների առատությամբ: Ղարաբաղի բարբառում գործածվող բառերի համար մեջբերումներ են կատարված Ղ. Աղայանի, Մ. Բարխուդարյանի, Կ. Մելիք-Շահնազարյանի եւ այլոց տպագիր գրքերից ու ժողովածուներից: Բառարանին կցված են նաեւ հավելյալ բառերի ու վրիպակների ցանկեր՝ «Յավելուած» (էջ 683-707) եւ «Վրիպակք» (էջ 708):

20. Ամիրջանյան Ս., **Ղարաբաղի բարբառի մի քանի բարբառային հնաբանություններ**, «Արցախի պետական համալսարան. Գիտական ընթերցումներ (հողվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ II, էջ 166-168

(Հիմք ընդունելով Զ. Զյուբջմանի, Ա. Մելիք, Զ. Պատկանյանի, Զր. Աճառյանի, Գ. Զահուկյանի, Է. Աղայանի ուսումնասիրությունները՝ քննվում են Ղարաբաղի բարբառի բառապաշարի գործուն շերտի մի քանի բարբառային հնաբանություններ՝ *թալ, լապռ, լու, մօլ, պուլ, պոդ, գենալ, պիուքի, հարփել, տկօղեն, օրդում, լոք տալ* եւ այլն, որոնք ժամանակագրորեն գրաբարից հին են եւ ավելի մոտ հնդեվրոպական նախալեզվին):

21. Ավագյան Ս., Կ. Ս. Դավթյան, **Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երեւան, 1966 (գրախոսություն)**, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1966, N188

(Ներկայացվում են Կ. Դավթյանի աշխատության արժանիքները՝ սպանիչ նկարագրություն, տարածքի բոլոր բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների ընդգրկում, բարբառային նյութերի, բարբառագիտական քարտեզների, բառարանի առկայություն են):

22. Ավետիսյան Ս., **Բառիմաստային առանձնահատկությունները Սեհտիշենի բարբառում**, «Կրթությունը եւ գիտությունը համաշխարհայնացման դարաշրջանում. Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր. 3 նոյեմբերի, 2012թ., Ստեփանակերտ», Երեւան, 2012, էջ 241-247

(Առանձին ենթաբաժիններով՝ 1. Իմաստի քանակի ոլորտում կատարված փոփոխություններ (մեկիմաստությունից բազմիմաստացում, բազմիմաստությունից մեկիմաստացում, բազմիմաստությունից իմաստների

սաստկացում, բազմիմաստությունից առավել բազմիմաստացում), 2. *Իմաստի ծավալի ոլորտում կատարված փոփոխություններ* (բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում, բառիմաստի շրջում), 3. *Բառերի մասնակի փոփոխություններով բարբառներում կենսունակ դարձած կամ երեան եկած զուտ բարբառային նշանակություններ*, 4. *Բառերի բովանդակային պլանում տեղի ունեցած փոփոխություններով պայմանավորված խոսքիմասային տարարժեքություն*, գրաբարի, աշխարհաբարի, փոխատու որոշ լեզուների եւ Ղարաբաղի ու Խոյի բարբառների համեմատությամբ քննվում են Արցախի Ասկերանի շրջանի Մեհտիշեն գյուղի խոսվածքի (Մեհտիշենի բարբառի) բառիմաստային փոփոխությունները):

23. Ավետիսյան Մ., *Մեհտիշենի բարբառի առաջացումը Խոյի եւ Ղարաբաղի բարբառների հարաբերակցության արդյունքում*, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն. ԼՂՀ եւ ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր. Ստեփանակերտ, 4 նոյեմբերի, 2011 թ., Մեսրոպ Մաշտոց համալսարան», Երեւան, 2011, էջ 466-470

(Ներկայացվում է 1928 թվականին Պարսկաստանի Խոյի գավառից գաղթած եւ Արցախի Ասկերանի շրջանի Մեհտիշեն գյուղում վերաբնակված հայերի մայրենի՝ Խոյի բարբառի վրա Ղարաբաղի բարբառի ազդեցության արդյունքում ձեւավորված Մեհտիշենի բարբառի առաջացման եւ զարգացման ընթացքը: Քննելով նորաստեղծ բարբառի բարբառային որոշ իրողություններ (*սկզբնայինին (Խոյի բարբառին) բնորոշ իրողություններ, տեղականին (Ղարաբաղի բարբառին) բնորոշ իրողություններ՝ սկզբնայինի դիմաց, զուգահեռ ձեւեր, սկզբնայինին հատուկ ձեւեր՝ մասնակի փոփոխությամբ, տեղականին բնորոշ ձեւեր՝ սկզբնայինի մասնակի պահպանումով, սկզբնայինում բացակայող՝ տեղականի ազդեցությամբ առաջացած քերականական ձեւեր, նոր՝ սկզբնայինից եւ տեղականից տարբեր ձեւեր*)՝ հեղինակը Մեհտիշենի բարբառը համարում է Ղարաբաղի բարբառախոս միջավայրի ազդեցությանը ենթակա անցումային որակ, որն արդեն իսկ վերածվել է Ղարաբաղի բարբառի ենթաբարբառի):

24. Ավետիսյան Մ., *Մեհտիշենի բարբառի հոլովման համակարգը, հոլովների կազմությունը*, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երեւան, 2014, էջ 233-243

(Քննվում են Մեհտիշենի բարբառի հոլովների կազմության եղանակները եւ հոլովման տիպերն ու օրինաչափությունները, որոնց մի մասը հեղինակը համարում է մեհտիշենցիների նախնիների մայրենի՝ Խոյի բարբառի համապատասխան առանձնահատկությունների պահպանման, մի մասը՝ Ղարաբաղի բարբառի ազդեցության արդյունք, իսկ որոշները՝ նորագոյացություններ, որոնք չեն բացատրվում ոչ Խոյի, ոչ Ղարաբաղի բարբառի համապատասխան իրողություններով):

25. Բաբայան Ա., **Նի, լյու (լու) եւ իք մասնիկները Ղարաբաղի բարբառում**, «Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու», Երեւան, 1960, N6, I մաս, էջ 225-235

(Ներկայացվում են *նի, լյու, իք* մասնիկների գործածության դեպքերը Ղարաբաղի բարբառում, առանձնակի ուշադրություն է դարձվում դրանց բառակազմական, իմաստափոխական եւ ոճական արժեքին, բերվում են համապատասխան օրինակներ: Ըստ հեղինակի՝ *նի* մասնիկն ունի լայն տարածում, հանդես է գալիս թե՛ ներգործական, թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի բայերի հետ (*նի ածել, նի ծրծել, նի օնել, նի կ'ալ, նի մընալ, նի շըլօլիլ, նի քաղել, նի քաղվել, նի կօխվել, նի տալ, նի ինիլ, նի տըհնալ, նի կէնալ եւն*), միջդեռ *լյու* մասնիկը գործածվում է միայն *կէնալ (լյու կէնալ)*, իսկ *իք* մասնիկը՝ միայն *օնել (իք օնել)* բայերի հետ:

26. Բաբայան Դ., **Ընդհանուր արմատներին առնչվող հարցերը լեզվաբանության, հնագիտության եւ առասպելաբանության մեջ՝ հայերեն, անգլերեն լեզուների եւ դարաբաղյան բարբառի օրինակով**, «Գարուն», Երեւան, 2013, N 2-3, էջ 16-27

(Ներկայացվում են հայերենում եւ անգլերենում գործածվող եւ հնչյունակազմով ու իմաստներով համընկնող շուրջ 200 բառեր, որոնք, ըստ հեղինակի, հավանաբար ունեն հնդեվրոպական ծագում, եւ որոնց մի մասը հատուկ է նաեւ Ղարաբաղի բարբառին կամ նրա առանձին խոսվածքների, ինչպես՝ *բարբաղ անել* (ոչնչացնել), *կոմբալ* (հաստ, գեր), *բուդ* (ազդր), *բոմփել* (հարվածել), *չոփ* (տաշեղ), *լոք տալ* (ցատկել), *մրկված* (մռայլ, մութ), *պատառ* (կտոր, բաժնեմաս), *ռոք* (մեծ քար), *թոռ* (անձրեւ), *թոքի* (համառ), *թումբ* (բարձունք, գերեզմանաբլուր), *հու* (ով), *վըրդեղ* (որտեղ) եւն: Միաժամանակ անդրադառնալով հնդեվրոպացիների պատմական նախահայրենիքի աշխարհագրական դիրքի վերաբերյալ գիտության մեջ եղած տարբեր տեսակետներին՝ որոշ ավանդությունների ու արցախյան տեղանունների մեկնաբանությամբ փորձում է հիմնավորել այն գիտնականների կարծիքը, որոնք հնդեվրոպացիների եւ հնդեվրոպական լեզվի նախահայրենիքը համարում են հայկական լեռնաշխարհն ու նրա հարակից տարածքները):

27. Բաբայան Օ., **Գրաբարի եւ Արցախ-Ղարաբաղի բարբառի լեզվական որոշ ընդհանրությունները**, «Արցախ», Ստեփանակերտ, 1990, N 2, էջ 85-87

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառի՝ գրաբարի հետ ունեցած մի շարք հնչյունաբառաբերականական ընդհանրություններ՝ 1-դ հնչյունափոխության, ձայնդարձի, աճականի, ւ երկշրթնային ձայնորդ բաղաձայնի, որոշ բառերի բառասկզբում յ-ի, անձներական թվականների,

ստացական դերանունների, գրաբարյան ձեւերից կազմված բառերի առկայություն, ֆ-ի բացակայություն, գրաբարյան *զ* նախդիրի, հոգնակի գործիականի *օք* վերջավորության, վերջնահանգ *ւ*-ի պահպանում որոշ բառերում ու դրանց, ինչպես նաեւ մի շարք այլ բառերի գրաբարաձեւ հոլովում եւ այլն):

28. Բաբայան Օ., **Ղարաբաղի բարբառի շարահյուսական առանձնահատկությունները**, «Յայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ. Թեգիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 4

(Թվարկվում են Ղարաբաղի բարբառի շարահյուսական մի շարք առանձնահատկություններ՝ որպես ենթակա՝ անձնական դերանունների փոխարեն հաճախ ցուցական դերանունների գործածություն, լրացում ունեցող ենթակայի՝ անորոշ առումով գործածություն, բակառություն, *ունեմ* եւ *լինել* բայի հետ ենթակայի՝ տրական եւ սեռական հոլովներով գործածություն, *մուտանալ* բայի՝ բացառական հոլովով հանգման խնդիր պահանջելը եւ այլն, բերվում են համապատասխան օրինակներ):

29. Բաղդասարյան Գ., **Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան**, հ.Ա, Ստեփանակերտ, 2008, 436 էջ, հ.Բ, Ստեփանակերտ, 2010, 462 էջ

(Առաջին հատորի ներածական մասում (էջ I-VIII) անդրադարձ է կատարվում հարցի ուսումնասիրության պատմությանը, ներկայացվում են բառարանի կազմման սկզբունքները, կառուցվածքը, օգտագործված գրականության եւ համառոտագրությունների ցանկերը: Բուն բառարանը (գրական հայերենի տառադարձությամբ) ընդգրկում է շուրջ 15000 բառ, բառաձեւ, դարձված, առած-ասացվածք, անեծք, օրինանք, հանելուկ, ոճական արտահայտություն եւն: Սկզբում դրվում է գլխաբառը, այնուհետեւ՝ իմաստների բացատրությունը, հազվադեպ՝ նաեւ վկայված օրինակներ: Գլխաբառերի տակ տրվում են դարձվածները (բացատրություններով) ու մյուս միավորները: Իրականում հեղինակը բառարանում հիմնականում ընդգրկել է Ա. Մարգարյանի «Գորիսի բարբառը», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Յայոց լեզվի բարբառային բառարան», Ստ. Մալխասյանի «Յայերէն բացատրական բառարան» եւ որոշ այլ աշխատություններից քաղված բառեր ու դարձվածներ: Բառարանում չափազանց մեծ է այն միավորների թիվը, որոնք ընդհանրապես չեն գործածվում Ղարաբաղի բարբառում, ինչպես՝ *բուլիտ* (հոկեյի մեջ հակառակորդի դարպասին նշանակված տուգանային հարված), *գիշեր-ցերեկ* (տորթի տեսակ), *դարչենա* (թխվածքի տեսակ), *եվրոակցիա* (եվրոբաժնետոմս), *ժոնգլեր* (աճաբարար), *ծախտուվել* (շատ բան վաճառվել), *կանփորկա* (ինքնաեռի գլխանոց), *կանոնավոր գորք* (մշտական գորք), *կանաչ լոբու*

*պահածո* (պահածոյի տեսակ), *պլանտատոր* (պլանտացիայի տեր), *ցեխաջրաբուժություն* (հանքային ցեխաջրով բուժվելը) են):

30. Բաղրամյան Ռ., ***Ղարաղաղի միջենթաբարբառը***, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1985, N1, էջ 185-194

(Ներկայացվում են տարբեր լեզվաբանների կողմից առանձին բարբառ, Ղարաբաղի բարբառի կամ Ղարաբաղի ու Մեղրու բարբառների ենթաբարբառ ընդունված եւ Պարսկաստանի Փայտակարան-Ղարաղաղի տարածքում խոսված խոսվածքախմբերի հնչյունաքերականական մի շարք օրինաչափություններ: Հեղինակը փորձում է հիմնավորել Ա. Ղարիբյանի կողմից առաջ քաշված տեսակետն այն մասին, որ Ղարաղաղի տարածքում գործել են երեք ենթաբարբառներ՝ Ղարաղաղի, Դզմարի եւ Քեյվանի, որոնք միջին դիրք են գրավել մերձարաքսյան ու Արցախական կամ *ւ*-ական եւ *ոււ*-ական եռաստիճան անտեղաշարժ եւ երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառախմբերի նկատմամբ):

31. Բառնասյան Զ., ***Ժամանակակից բառերը հայերենի բարբառներում***, Երեւան, 2009, 124 էջ

(Բաղկացած է ներածական մասից եւ երեք գլուխներից: Ներածական մասում (էջ5) տրվում են ուսումնասիրության սկզբունքները: Առաջին գլխում (էջ 6-72), հենվելով «*Հայերենի բարբառագիտական ատլասի*» ծրագրով հավաքված 500 խոսվածքային միավորների նյութի, բարբառագիտական մենագրություններում, միջնադարյան հիշատակարաններում, բանահյուսական ժողովածուներում եղած տվյալների վրա ու հիմք ընդունելով Հր. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Էդ. Աղայանի ստուգաբանական մեկնությունները, հեղինակը առանձին բաժիններով ու ենթաբաժիններով հանգամանորեն ներկայացնում է *Ժամանակ*, *առավոտ*, *կեսօր*, *իրիկնապահ*, *այժմ*, *վաղը*, *վաղը չէ մյուս օրը*, *դարձյալ*, *անգամ*, *այնուհետեւ*, *մինչեւ* հասկացությունների՝ հայերենի բարբառներում ունեցած բառային դրսեւորումների իմաստագործառական-ծագումնաբանական քննությունը՝ միաժամանակ տալով դրանց տարածական բնութագիրը եւ առաջ քաշելով ստուգաբանական նոր վարկածներ: Երկրորդ (էջ73-96) եւ երրորդ (էջ97-114) գլուխներում համապատասխանաբար քննության են առնվում ժամանակի ամրակայման ձեւերը ժողովրդի լեզվամտածողության մեջ եւ հայոց ամսանունները, ժամանունները, տարվա եղանակների անուններն ու դրանց արտահայտությունները հայերենի բարբառներում: Աշխատության մեջ այս կամ այն բառանունը քննելիս այլ բարբառների շարքում անդրադարձ է կատարվում Ղարաբաղի բարբառի ձեւերին, բերվում են վկայված օրինակներ: Աշխատությունն ունի նաեւ ամփոփում (էջ115-117), օգտագործված գրականության ցանկ (էջ118-120):

32. Բարխուդարեանց Գ., ***Բարոյական առածներ***, *Տիփսիս*, 1898, 52 էջ  
(Ղարաբաղի բարբառով (հիմնականում գրականացված) գրառված

ասույթաբանական բանահյուսական նյութերի ժողովածու: Բացի նրանից, որ ընդգրկված առած-ասացվածքներն իրենց մեջ մեծ թվով դարձվածներ են պարունակում, «Այլաբանական իմաստներ» բաժինը իրականում դարձվածների հավաքածու է, ինչպես՝ *աստղը աստղին բռնալ ա* (մեկզմեկ սրտագին սիրել են), *քամի ա անում* (ստախոս է, ասածն սուտ է), *քարին հոփ տա, ջուր կըկաթի* (խիստ ուժեղ է), *մածունը սեւ ա՝ ասալ ա* (վերջին ծայր յամառ է), *տափը ինձ տեղ չի տամ* (անհամբերությունս ծայրահեղ է) են):

33. Բարխուդարեանց Մ., *Պըլը-Պուղի, Թիֆլիս, 1883, 190 էջ*

(Ներածական մասում՝ «Յառաջաբան» (էջ Գ-ԻԳ), առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկություններ, հատկապես մեծ ուշադրություն է դարձվում հոլովման ու խոնարհման հարացույցներին: Բուն ժողովածուն ընդգրկում է Արցախի նշանավոր գվարճախոս Պըլը-Պուղու շուրջ ստեղծված գվարճախոսությունները՝ գրառված գրական հայերենով ու Ղարաբաղի բարբառով (տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ): Ժողովածուին կցված է նաև բարբառին հատուկ բառերի բացատրական բառարան (էջ 171-190):

34. Բեդիրյան Պ., *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւան, 2011, 1408 էջ*

(Ներածական մասում՝ «Մուտք» (էջ 5-8), ներկայացվում են բառարանի կազմման սկզբունքները եւ կառուցվածքը, օգտագործված բառարանների, ընդգրկված բարբառների ու խոսվածքների, պայմանական նշանների, համառոտագրությունների ցանկերը: Բուն բառարանն ընդգրկում է հայերենում գործածվող 25310 դարձվածային միավոր: Գլխաբառ-դարձվածի դիմաց տրվում են արեւմտահայերեն համարժեքը եւ տարբերակները, այնուհետեւ իմաստները, ըստ իմաստների գործածության՝ բնագրային օրինակները: Բառարանին կցված է մատենագիտական ցանկ (էջ 1399-1404): Բառարանում ընդգրկված մի շարք միավորներ վերագրվում են Ղարաբաղի բարբառին կամ նրա որոշ խոսվածքների (Գորիս, Հադրութ, Ղափան, Մարտունի):

35. Գալստյան Ա., Թեյյան Լ., *Մականունների գործածությունը ժամանակակից հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ. Ակադեմիկոս Գեորգ Ջահուկյանի հիշատակին նվիրված գիտական նստաշրջանի գեկուցումներ (Երեւան, 2006թ., հուլիսի 3-4)», Երեւան, 2006, էջ 44-47*

(Զննվում են Արցախի գյուղերից մեկի (իմա՝ Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղի) խոսվածքում գործածվող մարդկանց մականունների գործածության ձևերը (երբ մականունը փոխարինում է մարդու անվանը եւ երբ մականունը գործածվում է անվան հետ իբրեւ որոշիչ) ու նրանց ստեղծման, գործածման, տարածման հիմքերը (ինչյունական զուգոր-

դոլություն, մարդու որեւէ արարք կամ նրա կյանքի որեւէ դրվագ, բնավորություն, խոսքի որեւէ միավոր կամ արտահայտություն, արտաքին որեւէ հատկանիշ, որեւէ արատ կամ հիվանդություն, զբաղմունք կամ մասնագիտություն, պատահական զուգորդություն), բերվում են համապատասխան օրինակներ):

36. Գալստյան Ս., Թեյլան Լ., **Յայ բառարանագրության մի նոր նվաճում՝ «Ղարաբաղի բարբառի բառարան»**, «Կրթությունը եւ գիտությունը Արցախում», Երեւան, 2013, N3-4, էջ 174-175:

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան» (Երեւան, 2013, 846 էջ) աշխատության մասին: Ներկայացվում են բառարանի արժանիքները՝ գրավոր եւ բանավոր աղբյուրներից գրառված հարուստ նյութի բառարանագրական խորաքննին մշակում, բարբառային տառադարձության պահպանում, բառերի, դարձվածների, կայուն բառակապակցությունների, ոճական արտահայտությունների իմաստային սպառնալից բացատրություն, ծագումնաբանության, լեզվաոճական ու քերականական բնութագրերի մասին նշումներ, բնագրային օրինակներ, ընդարձակ առաջաբանում Ղարաբաղի բարբառի գիտական ուսումնասիրություն: Գրախոսությունը տպագրվել է նաեւ «Լուսարար» /Ստեփանակերտ, 15.11.2013, թիվ 33 (355)/ եւ «Կրթություն» /Երեւան, 16.10.2013/ թերթերում:

37. Գրիգորյան Ա., **Յայ բարբառագիտության դասընթաց**, Երեւան, 1957, 543 էջ

(Առանձին բաժիններով եւ ենթաբաժիններով քննության են առնվում բարբառագիտության տարբեր հարցեր՝ խնդիրները, պատմական ու գիտական արժեքը, կապը այլ գիտությունների հետ լեզու-բարբառ փոխհարաբերությունը, ժարգոնները, բարբառների առաջացումը եւ պատմական զարգացման ընթացքը, ուսումնասիրության մեթոդները, լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները, հայ բարբառագիտության համառոտ պատմությունը, հնչյունական տառադարձությունը, հայ բարբառների առաջացումը, դասակարգումները, հնչյունաբառաքերականական օրինաչափությունների դրսեւորումները եւ: «Յայ բարբառների երեք ճյուղերը» բաժնում հեղինակն առանձին ենթաբաժիններ է նվիրել նաեւ Ղարաբաղի (էջ 251-284) եւ Յաղդութի (էջ 474-494) բարբառների նկարագրությանը՝ անդրադառնելով վերջիններիս տարածման սահմաններին, հնչյունախոսությանը, խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսեւորումներին, շարահյուսական մի շարք առանձնահատկությունների եւ, ընդգրկել համապատասխան բարբառներով գրառված նյութեր):

38. Գեւորգյան Գ., **Յայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը**, Երեւան, 2013, 242 էջ:

(Յամաժամանակյա ու տարածամանակյա հայեցակետերով քննության

են առնվում հայերենի տարածական տարբերակների եղանակաժամանակային կազմությունների զարգացման պատմությունն ու տարածագործառական բնութագիրը՝ դրանք դիտարկելով զուգադրական քննության համատեքստում եւ արժեւորելով դրանց դերը հայերենի քերականական կառուցվածքում: Յեղիսակը հանգամանորեն անդրադառնում է բարբառային միավորների եղանակաժամանակային համակարգերի պատմական զարգացման բնորոշ գծերին, եղանակային ձեւերի կառուցվածքային բաղադրիչների գործառական արժեքին, եղանակաժամանակային կաղապարների տարածման սահմաններին, քերականական հոմանիշության, համանունության, բազմիմաստության արտահայտության եւ բովանդակության պլանների փոխհարաբերությանը, բարբառային տարածքների ու ենթատարածքների սահմանագծերին եւ այլ խնդիրների: Լեզվական այս կամ այն երեւույթը քննելիս հայերենի տարածական տարբերակների շարքում լուրջ ուշադրություն է դարձվում նաեւ Ղարաբաղի բարբառում ու նրա մի շարք խոսվածքներում գործածվող համապատասխան ձեւերին):

39. Դադյան Ա., **Վարանդայի բանաւոր գրականութիւնից**, «Ազգագրական հանդես», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89

(Ներկայացվում են հեղինակի եւ նրա եղբոր՝ նշանավոր ժողովրդագետ Խ. Դադյանի՝ Վարանդայի, մասամբ նաեւ Դիզակի ու Խաչենի գյուղերից Ղարաբաղի բարբառով գրառած (տվյալ ժամանակաշրջանի գիտական տառադարձությամբ) ժողովրդական վիճակի երգեր՝ ջանգյուլումներ: Առաջին մասի ներածականում՝ «*Երկու խոսք*» (էջ37-40), տեղեկություններ են տրվում կյութերի գրառման հանգամանքների մասին, լուրջ դիտարկումներ են արվում Ղարաբաղի բարբառի (հեղինակը անվանում է դարաբաղցերեն) որոշ օրինաչափությունների, ինչպես նաեւ բարբառային տառադարձության վերաբերյալ: Ժողովածուում գործածված դժվարհասկանալի գրեթե բոլոր (հիմնականում՝ բարբառային եւ փոխառյալ) բառերը համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով):

40. Դավթյան Կ., **Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը**, Երեւան, 1966, 508 էջ

(Ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում գործող բոլոր բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների՝ լեզվաբանական աշխարհագրության մեթոդով կատարված հանգամանակից քննությունը: Բաղկացած է ներածական մասից եւ հինգ բաժիններից: Ներածական մասում (էջ 5-13) ներկայացվում են աշխատության ստեղծման նախադրյալները, նպատակը, կառուցվածքը: Միաժամանակ տրվում է Ղարաբաղի տարածքի բարբառների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների եւ բարբառով գրված աշխատանքների ցանկը,

անհրաժեշտության դեպքում արվում են որոշակի դիտողություններ: «*Բնակավայրերի անունները*» ենթաբաժնում համարակալված են Լեռնային Ղարաբաղի բոլոր 221 գյուղերը, որից 7-ը (N 105-111)՝ ադրբեջանական գյուղեր: Հետագայում տեղի խնայողության եւ գործը համեմատաբար հեշտացնելու նպատակով լեզվական յուրաքանչյուր երեւոյթ քննելիս հղումները կատարվում են այդ համարներին, ինչը հնարավորություն է տալիս վերլուծության ենթարկել բոլոր գյուղերի խոսվածքները՝ վեր հանելով դրանց առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

«*Հնչյունաբանություն*» բաժինը բաղկացած է երկու հիմնական ենթաբաժնից՝ «*Հնչյունախոսություն*» եւ «*Հնչյունափոխություն*»: «*Հնչյունախոսություն*» մեջ (էջ 15-22) հեղինակը, հիմք ընդունելով Հր. Աճառյանի, Ա. Ղարիբյանի եւ է. Աղայանի գործածած տառադարձությունները, ներկայացնում է բոլոր խոսվածքներում եղած ձայնավոր եւ բաղաձայն հնչյունները, որոնք բացակայում են գրական հայերենում: Առանձին սյունակներով տրվում են այդ հնչյունների տառադարձությունը, իբրեւ ինչ արտասանվելը, տվյալ հնչյունը ընդգրկող բառերի օրինակներ եւ արտասանության վայրը: Ընդհանուր առմամբ Ղավթյանը տարածքի բարբառներին հատուկ է համարում 13 ձայնավոր, 39 բաղաձայն եւ երկու կիսաձայն հնչյուն, ինչպես նաեւ՝ 7 երկբարբառ եւ 15 երկհնչյուն՝ առանձին աղյուսակում ամփոփելով դրանք ըստ բարբառների: Առավել մանրամասնությամբ է ներկայացվում «*Հնչյունափոխություն*» ենթաբաժինը (էջ 23-85), որտեղ հետազոտվում են հայերեն հնչյունների փոփոխությունները Ղարաբաղի բոլոր գյուղերի խոսվածքներում: Յուրաքանչյուր հնչյունի փոփոխությունները վերլուծվում են առանձին, ընդ որում՝ տարբերակվում են տվյալ հնչյունի հնարավոր ընդհանրական եւ միեւնույն բառերում եղած փոփոխություններն ըստ գյուղերի: Միաժամանակ քննության են առնվում հնչյունափոխական այնպիսի երեւոյթներ, ինչպիսիք են հնչյունների անկումը եւ հավելումը, կրկնությունը, բառամասերի կրճատումը, դրափոխությունը, ձայնավորների ներդաշնակությունը, ինչպես նաեւ շեշտի դրսեւորման յուրահատկությունները: Հարուստ փաստական կյուծով եւ գիտական խոր վերլուծություններով է կազմված «*Ձեւաբանություն*» բաժինը (էջ 86-223): Հեղինակը մեկ առ մեկ քննում է բոլոր խոսքի մասերը՝ իրենց քերականական կարգերով, երեւան հանում յուրաքանչյուր գյուղի խոսվածքում դրանց դրսեւորման առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում կատարում համեմատություններ այլ բարբառների եւ գրաբարի հետ, բերում առատ եւ սպառիչ օրինակներ: Առանձնակի խորությամբ են ուսումնասիրված գոյականի հոգնակիի կազմությունը եւ հոլովումը, դերանունների տեսակները, դերբայները, բայի եղանակները եւ ժամանակային ձեւերը, անկանոն եւ պակասավոր բայերը, երկրորդական բաղադրյալ ժամանակները: Բաժնի վերջում հեղինակը առանձին ենթաբաժիններով ներկայացնում է խնդրո

առարկա խոսվածքների ածանցման, բառաբարդման եւ շարահյուսական մի շարք առանձնահատկություններ: «*Բարբառային ազդեցությունների մասին*» բաժնում (էջ 224-235) Կ. Ռավթյանը ուշադրություն է դարձնում այլ բարբառային միջավայրերից եկած եւ Լեռնային Ղարաբաղում ամբողջական գյուղերով, ինչպես նաեւ տեղական գյուղերում վերաբնակվածների վրա բարբառային նոր միջավայրերի ազդեցության, տեղական «*ոււմ*» եւ «*ս*» ճյուղերի բարբառների փոխազդեցությունների հարցերին՝ իրավամբ բացահայտելով, որ տեղական խոսվածքների ազդեցությունը չափազանց մեծ է եկվորների վրա, որի արդյունքում վերջիններս իրենց բարբառային ձեւերով տեղի են տվել տեղականներին՝ աստիճանաբար յուրացնելով նրանց հնչյունական եւ քերականական օրինաչափությունները: Նմանապես «*ս*» ճյուղի Հաղրուֆի բարբառային միջավայրի բարբառախոսները, հատկապես՝ երիտասարդները, ենթարկվել են «*ոււմ*» ճյուղի Ղարաբաղի բարբառի ազդեցությանը: Աշխատության չորրորդ՝ «*Բարբառային խմբավորումներ եւ նմուշներ*» բաժնի (էջ 236-296) առաջին ենթաբաժնում իբրեւ ուսումնասիրությունների ամփոփում խմբավորվում են Լեռնային Ղարաբաղում գոյություն ունեցող բարբառային ձեւերը՝ ըստ բարբառաճյուղերի, բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների՝ հիմնականում հիմք ընդունելով մեծահասակ բնակչության խոսակցությունը: Առանձնացվում են տարածքում առկա վեց բարբառներ, որոնցից երկուսը՝ Ղարաբաղի եւ Մեհտիշենի, «*ոււմ*» ճյուղի, երեքը՝ Հաղրուֆի, Շաղախ-Խծաբերդի եւ Չայլվի կամ Ուրմիայի, «*ս*» ճյուղի, մեկը՝ Սարաղայի, «*լ*» ճյուղի: Ղարաբաղի բարբառը հեղինակը բաժանում է երկու խմբի՝ Ղարաբաղի բուն բարբառ /128 խոսվածքով/ եւ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառային խոսվածքներ /9 ենթաբարբառ՝ 20 խոսվածքով/, Հաղրուֆի բարբառը բաժանում է երեք ենթախմբի՝ բուն բարբառ /34 խոսվածքով/, Տումու խոսվածք եւ Շուշիքենդի ու Քարին տակի խոսվածքներ, Շաղախ-Խծաբերդի բարբառում ընդգրկում է 8 խոսվածք եւ Զանյաթաղի առանձին խոսվածքը, Չայլվի կամ Ուրմիայի բարբառում՝ Ներքին եւ Վերին Չայլուների խոսվածքները, իսկ Մեհտիշեն եւ Սարաղա գյուղերի խոսվածքները՝ առանձնացնում որպես առանձին բարբառներ: Բարբառների, ենթաբարբառների եւ խոսվածքների դիմաց առանձին սյունակներում տրվում են նրանց հիմնական հատկանիշները եւ առանձնահատկությունները, Լեռնային Ղարաբաղից դուրս այլ խոսվածքների հետ նմանությունները, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ որոշ ծանոթություններ: Բաժնի երկրորդ՝ «*Նմուշներ*», ենթաբաժնում բերվում են Ղարաբաղի տարածքի 40 գյուղերի խոսվածքներով գրառված նմուշներ: Դրանց կողքին հեղինակը նմուշներ է զետեղել Գորիսի շրջանի Տեղ, Եվլախի շրջանի Նամթաբաղ եւ Սիր Բաշիրի շրջանի Բեգում Սարով գյուղերի խոսվածքներով: Աշխատության վերջին՝ «*Համադրական բառարան*» բաժնում (էջ 297-503) գրաբարի համեմա-

տությամբ տրվում են տարածքի բոլոր վեց բարբառների համապատասխան բառային համարժեքները: Ընդհանուր առմամբ բառարանը ընդգրկում է շուրջ 3000 բառ եւ բառաձեւ (շեշտադրության ցուցադրումով), այդ թվում որոշ՝ գրաբարում բացակայող, բայց գրաբարյան ձեւերից կազմված բառեր: Հայերեն ձեւերի բացակայության դեպքում կամ դրանց զուգընթաց տրվում են Նշված բարբառներում գործածական բարբառային կամ փոխառյալ տարբերակները: Մենագրությանը կցված է նաեւ բարբառագիտական 8 քարտեզ: Ուսումնասիրության մեջ սպորդել են մի շարք սխալներ, որոնց մասին հեղինակը հանդես է եկել առանձին հոդվածով:

41. Դավթյան Կ., **Նամակ խմբագրությանը**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1967, N 4, էջ 89-92

(Նշելով, որ հիվանդության պատճառով չի կարողացել անձամբ հետեւել 1966թ. հրատարակված իր «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» խորագրով աշխատության վերջնական խմբագրությանը, սրբագրությանը, վայելչագրի կողմից մի քանի քարտեզների արտագրության վերանայմանը՝ հեղինակը ներկայացնում է մի քանի կարելուր ուղղում-դիտողություններ աշխատության առանձին քարտեզներում եւ տեքստում եղած էական՝ հիմնականում սրբագրական-խմբագրական բնույթի վրիպումների եւ բացթողումների մասին:

42. Երվանդյան Զ., **Հնագույն բառարմատները Ղարաբաղի բարբառում**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 2004, N1, էջ 108-117

(Ծագումնաբանական, իմաստային եւ կառուցվածքային մասնակի դիտարկումներով քննվում են հայագիտական տարբեր, հատկապես Հր. Աճառյանի եւ Գ. Զահուկյանի ուսումնասիրություններում քննարկված, սակայն Ղարաբաղի բարբառում հնչյունակազմական եւ իմաստային որոշ յուրահատկություններով գործածվող մի շարք հնագույն արմատական ձեւեր՝ կընձկօսձալ, կ'ծծի//գօծի, կռօճ, հանգ, շօռ կ'ալ, ճըռաքել, պօսպօս անել, ըէքնակ, նօթի, պուլ, կ'էնալ, խը'խտ, խլխլալ, ծամ, ծը'ն, եւ հին հայերենին (որոշները՝ նաեւ ընդհանուր հայերենին) հատուկ հիմքերի տարբերակներ՝ կ'նուլ, կ'աղէլ//կ'էղէլ, կ'աղաղ, պը'ծ, հէտի, մօլ, գ'նուրգ, վէրթիմ//նուրթնմնը, օխտը, թա, լպռտել, ծիծիլիկզ//ծնծնուլուկ, լըբաստրակ, լէնգ/լինգ, կօզնի/կուզնիսը'ն//սէռ, յէր, օշափ//օշէփ, տանդ, ճախ, քոյր, պանցրոն//պէցնուր//պէցրոն):

43. Երվանդյան Զ., **Հ նախահավելականի արտահայտությունը Ղարաբաղի բարբառում**, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 2000, N3, էջ 119-124

(Հիմք ընդունելով Հր. Աճառյանի, Գ. Զահուկյանի, Հ. Մուրադյանի եւ ուրիշ լեզվաբանների ուսումնասիրությունները՝ քննվում են Ղարաբաղի բարբառում դրսեւորվող հնագույն երեւույթներից մեկի՝ բնիկ, չստուգա-

բանված եւ փոխառյալ մի շարք բառերի սկզբում ձայնավորից առաջ նախաձայն *h* հնչյունի կիրառական հնարավորությունները: Յեղիակը հանգում է այն եզրակացության, որ նախահավելական *h*-ն ավելի հաճախակի է հանդիպում կենտրոնից հեռու ընկած խոսվածքներում, մանավանդ Մարտակերտի եւ Շահումյանի հատվածում՝ միաժամանակ հանդես բերելով իմաստային զանազան դրսեւորումներ: Նշվում է նաեւ, որ ձայնդարձի տարբեր աստիճաններով տարբերակումներից բացի՝ առավել ակնառու է *h* սաստկականի հավելումը, որը ոչ միայն բառի նշանակությանը նոր երանգ է հաղորդում, այլեւ առաջ է բերում նոր իմաստի ձեւավորում):

44. Երվանդյան Զ., *Յնդեվրոպական նախալեզվի բառահիմքերը Ղարաբաղի բարբառում*, «Յայագիտություն եւ գուգադրական լեզվաբանություն. Գիտական աշխատություններ. Երեւանի Վ. Բոյուտովի անվան պետական լեզվաբանական համալսարան», Երեւան, 2003, պրակ Գ, էջ 140-150

(Անդրադառնալով Գ. Զահուկյանի «Յայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ ներկայացված եւ հայերենի գրավոր հուշարձաններում չվկայված, սակայն բարբառներում առկա հնդեվրոպական արմատներին՝ բերվում են բառացանկում չնշված, բայց Ղարաբաղի բարբառում գուգահեռ հիմքերով կամ առանձին խոսվածքներում պահպանված ձեւերը՝ *թընգթընգալ, տըկտըկալ, ճուխտըլափակ, կընդըլափակ, լօք տալ, լօք-լօք անել, կլօնդրակ, մնլմմիջ կնլ, նան* եւ այլն, այնուհետեւ ըստ Գ. Զահուկյանի «Յայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ կատարված դասդասումների՝ քննվում են Ղարաբաղի բարբառում գործածվող հնագույն ձեւերի երկու խմբեր՝ *1.արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով եւ ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին* (կէտ, կուլ, հօթ, լեպ, կնդիչ, փօմփուխ, սնլուլ, պէնձիկ, կլանչել, կօլօլ, սըբի, շէք, լակ, ճիթ եւ այլն), *2.արմատներ, որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից եւ ենթադրում են օտար ենթաշերտ կամ որեւէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռեւս հայտնի չէ* (պուքել, փռընգօնի տալ, թխել, կ'ծսռել, կնջեմնը, պծի, փալ տալ, փըստըցնել, պլպլալ, իլշել, սլկիել եւ այլն): Յորաքանչյուր խմբի բառերը դասակարգվում են ըստ չորս ենթախմբի՝ *բառիմաստի եւ հնչյունակազմի ճշգրտումներով բառեր, կառուցվածքի (հնչյունակազմի) ճշգրտումներով բառեր, բառիմաստի ճշգրտումներով բառեր, ճշգրտումներ չպահանջող բառեր*):

45. Երվանդյան Զ., *Ղարաբաղի բարբառի բառային կազմի հաստատման գործընթացը*, Երեւան, 2007, 67 էջ

(Բաղկացած է ներածական մասից (էջ 5-8), երեք գլուխներից՝ «Յնդեվրոպական նախալեզվի բառահիմքեր Ղարաբաղի բարբառում» (էջ 9-23),

«Յնագույն բառարմատները բարբառում» (էջ 24-38), «Յ նախահավելականի արտահայտությունը բարբառում» (39-52), հայերենով (էջ 53-55) և ռուսերենով (56-57) ամփոփումներից: Ներածության մեջ անդրադառնալով հայերենի բարբառներին նվիրված մենագրություններում և ընդհանուր ուսումնասիրություններում բարբառային երեսույթների քննության մոտեցումներին ու դրանցում բարբառների բառային կազմի ուսումնասիրության սահմանափակումներին՝ հիմնավորվում է ուսումնասիրության անհրաժեշտությունը: Նշված երեք գլուխներում որոշակի լրացումներով և փոփոխություններով համապատասխանաբար ներկայացվում են հեղինակի համանուն հոդվածները՝ տպագրված 2000, 2003, 2004 թվականներին: Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հեղինակը հավաստում է, որ Ղարաբաղի բարբառում առկա՝ գրաբարից շեղվող բառերի մի մասը (հիմնականում նախալեզվյան հիմքեր) ներկայացնում է առավել հնագույն վիճակ, քան դասական հայերենում հաստատված ձևերը: Աշխատությանը կցված է նաև օգտագործված գրականության ցանկ (էջ 61-62):

46. **Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971, 478 էջ**

(Ղարաբաղի բարբառով գրառված (տառադարձության մասնակի խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 437-454) և դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 455-474):

47. Լիսիցյան Ստ., **Լեռնային Ղարաբաղի հայերը, «Յայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երեւան, 1981, հ. 12, էջ 7-84**

(Լեռնային Ղարաբաղի հայերի նյութական ու հոգեւոր մշակույթը, հիմնական զբաղմունքները, հավատալիքները, նիստուկացը ներկայացնող պատմաազգագրական ուսումնասիրություն: Յինգերորդ գլխում՝ «Լեզուն և արվեստը» (էջ 75-82), նաև համառոտ տեղեկություններ են տրվում Ղարաբաղի բարբառի մասին):

48. Խանյան Ս., **Թեւածում է բարբառը Ղարաբաղի, «Յայաստանի Յանրապետություն», Երեւան, 17 սեպտեմբերի, 2013:**

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան» (Երեւան, 2013, 846 էջ) աշխատության մասին: Ներկայացվում են բառարանի արժանիքները՝ բարբառում գործածվող գրեթե բոլոր բառերի, ոճերի, դարձվածների ընդգրկում՝ տարբեր խոսվածքներին հատուկ հնչյունափոխված տարբերակներով, բարբառային գիտական խիստ տառադարձության պահպանում, ծագումնաբանություն, բառերի բուն և

փոխաբերական իմաստների մանրամասն եւ հստակ բացատրություններ, համառոտագրությամբ լեզվաոճական եւ քերականական նշումներ, տպագիր, ձեռագիր եւ բանավոր աղբյուրներից մեջբերված վկայված օրինակներ եւ այլն: Գրախոսությունը տպագրվել է նաեւ «*Լուսարար*» /*Ստեփանակերտ, 05.09.2013, թիվ 28-29 (351-352)*/ թերթում):

49. Խաչատրյան Ա., *Ստուգաբանական դիտարկումներ*, «*Հայերենի բարբառագիտական ատլաս*», *պրակ 3, Երեւան, 2010, էջ 23-54*

(Որոշ հեղինակավոր աշխատություններում (հատկապես Յր. Աճառյանի «*Հայերեն արմատական բառարանում*») ներկայացված մի շարք, հիմնականում՝ բարբառային (մի մասը՝ Ղարաբաղի բարբառին հատուկ) բառերի մեկնություններին հակադրվելով՝ հեղինակն առաջ է քաշում իր վարկածները՝ միաժամանակ նշելով, որ դրանք չեն հավակնում տալու այդ միավորների շատ թե քիչ լիակատար ստուգաբանությունը: Քննության արդյունքում Ղարաբաղի բարբառին հատուկ ձեւերը բխեցվում են՝ *միսչէկ հանգը-հունգը* (միառժամանակ, մինչ այս, մինչ այդ) արտահայտության *հանգ* բառը՝ հ.-ե. *\*angh-* (փչել, շնչել) նախածեւից, *առիս* (ձեռքիս) բառը՝ հինհայերենյան *առնուլ* (առնել, ձեռք բերել, կրել, գրավել, նվաճել, խլել) բայի արմատից, *յըղօլի* (եղան) բառը՝ գրաբարյան *յեղուլ* (փոխել, շրջել, դարձնել) բայից, *հալ* (գնդակ) բառը՝ հ.-ե. *\*quel* (դառնալ, շարժվել) արմատից, *հլիզ* (1.թել մանելու գործիք, 2.ողնաշար) եւ *ուլօռնէզ* (թարախապալար) բառերը՝ հ.-ե. *\*el-//\*ol-* (ծռվել, կորանալ) արմատից, *լօխ* (ամենքը, բոլորը, ամբողջը) բառը՝ *լի եւ ողջ* բառերից, *լախլախ* (թույլ, երերուն, լույծ, ջրիկ) եւ *լրիլրիսալ* (թույլ լինելուց շարժվել) բառերը՝ արեւելյան լեզուների *lax* (1.երերուն, օրորվող, 2.փչացած, թույլ ձու) բառից, *միհասիլ տէռնալ// կըտրէլ* (շտապեցնել, ստիպելով արագացնել, անհամբեր դառնալ) քարացած բարդության առաջին բաղադրիչը՝ արաբերեն *մուհասիլ* (հարկահան) բառից, *մըռամօշ* (գետնատարած մոշի մի տեսակ) բառի առաջին արմատը՝ *մոռ* բառից, *շէխ տալ*, *շէխ//շախ անէլ* (ճյուղերը փռել, տարածել) հարադիր բարդությունների առաջին բաղադրիչը՝ պարսկերեն *šax* (ճյուղ, ոստ) բառից, *տանգ* (պարկի, ջվալի ունկ, կանթ) եւ *տանգ* (քթանցքները բաժանող կռճիկ) բառերը՝ պարսկերեն *tang* (ունկ, կանթ, կոթ) բառից, *քըռավ կ'ալ* (խոզի, կատվի բեղմնավորվելը) հարադրության իմաստը՝ *քուռ* բառի նախնական «*արու խոզ, վարագ*» իմաստից են):

50. Խաչատրյան Յ., *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, *Երեւան, 2009, 316 էջ*

(Բաղկացած է «*Ներածությունից*» եւ հինգ գլուխներից: «*Ներածության*» մեջ (էջ 7-18) հիմնավորվում է թեմայի արդիականությունը, անդրադարձ է կատարվում հարցի ուսումնասիրության պատմությանը, նշվում են ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրները, տրվում են քննության սկզբունքները: Այլ լեզվաբանների ստուգաբանությունների համեմատու-

թյամբ առանձին ենթաբաժիններով, ըստ իմաստային շղթաների, առաջին գլխում ներկայացվում են բուն ազգակցական (*մայր, հայր, երեխա, տղա, աղջիկ, քույր, եղբայր*), երկրորդ գլխում՝ միջնորդավորված արյունակցական-ազգակցական հարաբերությունների (*տատ, պապ, քեռի, մորաքույր, հորաքույր, հորեղբայր, հորեղբոր կին, թոռ*), երրորդ գլխում՝ ձեռքբերովի ազգակցական հարաբերությունների (*ամուսին, կին, այրի*), չորրորդ գլխում՝ միջնորդավորված ձեռքբերովի ազգակցական հարաբերությունների (*սկեսուր, սկեսրայր, տեգր, տալ, տեգերկին, զոքանչ, աներ, աներձագ/աներորդի, քենի, հարս, փեսա*), հինգերորդ գլխում՝ ծիսական հիմքով ձեռքբերովի ազգակցական հարաբերությունների (*կնքահայր, կնքամայր, քահանա, տերտերակին*)՝ հայերենի բարբառներում, այդ թվում Ղարաբաղի բարբառում ու նրա մի շարք խոսվածքներում (*Գորիս, Խնածախ, Հաղրուֆ, Մեծ շեն, Ճարտար, Ղազանչի, Կապան, Հաթերք, Հասանդայա, Թալիշ, Չլդրան, Եմիշճան, Ջագլիկ, Չափար, Կոռնիձոր, Զարահունջ, Շինուհայր, Նոր շեն, Շուշի եւն*) գործածվող անվանումների հանգամանակից մեկնությունները: Աշխատությանը կցված են նաեւ «Ամփոփում», ազգակցական հասկացությունների բառանվանումների տարածական պատկերն արտացոլող աղյուսակներ ու քարտեզներ, ազգակցական բառերի բարբառային տարբերակների ցանկ, օգտագործված գրականության ցանկ):

51. Ծատուրյան Ա., **Գորիսապատում**, գիրք Բ, Գորիս, 2011, 250 էջ:

(Գորիսի բարբառով (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) գրառված (գիտական տառադարձությամբ) տարբեր ժանրերի (հիմնականում բանահյուսական) նյութերի ժողովածու: «Առածներ, ասացվածքներ, իմաստախոսություններ» (էջ 115-134) եւ «Բառեր, մտքեր, արտահայտություններ, խոսվածքներ, խոսքեր, դարձվածքներ» (էջ 134-174) բաժիններում ընդգրկված են բարբառում գործածվող բազմաթիվ բառեր, դարձվածներ, ոճական արտահայտություններ եւն):

52. Կիրակոսյան Հ., **Իրանական լեզվանյութի հետքեր Արցախի տեղանուններում**, «Armenian Language Contacts Through the Ages. Abstracts. International Conference, 12-15 May, 2015», St. Peterburg, 2015, էջ 27-29

(Իրանական լեզվանյութի հիմքի վրա հեղինակը մեկնաբանում է Արցախի հին եւ նոր մի քանի տեղանուններ՝ *Դիզակ, Փարուխ, Ջոմակատակ, Ղաստակերտ*, հանգելով այն եզրակացության, որ իրանական լեզվանյութը մշտապես ներկա է եղել եւ համալրվել է Արցախի տեղանուններում):

53. Հակոբջանյան Ա., **Ղազարոս Աղայանը հայերենի բարբառների մասին**, Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. «Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ.. Ջեկուցումների ժողովածու», Երեւան, 2014, էջ 193-202

(Քննության են առնվում լեզվագիտական ուսումնասիրություններում Ղ. Աղայանի անդադարձումները հայերենի մի քանի, այդ թվում՝ Ղարաբաղի բարբառի տարբեր օրինաչափություններին: Ըստ հեղինակի՝ Աղայանը հայերենի բարբառների հատուկ քննություն չի ձեռնարկել՝ բացառությամբ Ղարաբաղի բարբառի, որի հնչյունական մի շարք օջինաչափություններ քննել է իր որոշ հոդվածներում եւ «Ղարաբաղի բառարանը» ձեռագիր աշխատության առաջին մասում, իսկ վերջինիս երկրորդ մասում ներկայացրել է բարբառի բառապաշարի բառարանը):

54. **Հայ ժողովրդական հեքիաթներ** (գրի է առել Ս. Գրիգորյան-Սպանդարյանը), *հ. V, Երեւան, 1966, 780 էջ*

(Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) Արցախի տասնյակ բնակավայրերից գրառված հեքիաթների ժողովածու: «Նախաբանում» (էջ 5-12) ներկայացվում են բարբառի հնչյունաձեւաբանական որոշ առանձնահատկություններ: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 677-718), դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 721-747) եւ հեքիաթների ցանկ՝ ըստ տեղի եւ ասացողների (էջ 748-751):

55. **Հայ ժողովրդական հեքիաթներ** (գրի են առել Առ. Բահաթրյանը, Ալ. Բահաթրյանը, Գ. Բահաթրյանը, Կ. Մելիք-Շահնազարյանը, Ս. Իսրայելյանը, Ս. Մխիթարյանը, Ա. Շահումյարյանը, Ա Կարապետյանը *և*. Շահնազարյանը, Յ. Սանասյանը), *հ. VI, Երեւան, 1973, 778 էջ*

(Ղարաբաղի բարբառով եւ Գանձակի, Իջեանի, Դիլիջանի, Ղազախի խոսվածքներով Արցախի եւ Ուտիքի տարբեր բնակավայրերից գրառված (տառադարձության խախտումներով) հեքիաթների ժողովածու: «Նախաբանում» (էջ 5-16) ներկայացվում են նաեւ Ղարաբաղի բարբառի ու նշված խոսվածքների որոշ առանձնահատկություններ: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 703-748) եւ դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 751-769):

56. **Հայ ժողովրդական հեքիաթներ** (գրի են առել Ս. Առաքելյանը, Ս. Խանզադյանը, Ս. Գեորգյանը, Զ. Տեր-Մինասյանը *և* ուրիշներ), *հ. VII, Երեւան, 1979, 768 էջ*

(Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) Արցախի ու Սյունիքի տարբեր բնակավայրերից գրառված հեքիաթների ժողովածու: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 675-718), դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 721-738), անձ-

նանունների (էջ 739-741), տեղանունների (741-742), առարկայական (742-749), ըստ տեղի եւ ասացողների՝ հեքիաթների (էջ 749-756) ցանկեր):

57. **Յայոց լեզվի բարբառային բառարան**, հ. Ա, Երեւան, 2001, 451 էջ, հ.Բ, Երեւան, 2002, 451 էջ, հ.Գ, Երեւան, 2004, 425 էջ, հ.Դ, Երեւան, 2007, 451 էջ, հ.Ե, Երեւան, 2008, 420 էջ, հ. Զ, Երեւան, 2010, 407 էջ, հ. Է, Երեւան, 2012, 207 էջ

(Առաջին հատորի ներածական մասում հանգամանորեն ներկայացվում են տեղեկություններ հեղինակների մասին, հարցի ուսումնասիրության պատմությունը, բառարանի կազմման ակզբունքները, կառուցվածքը, բարբառախոս վայրերի, վկայված օրինակների հեղինակների, ոճական նշումների, օգտագործված աղբյուրների համառոտագրությունների եւ օգտագործված գրականության ցանկերը: Բուն բառարանը (հիմնականում՝ գրական հայերենի տառադարձությամբ) ընդգրկում է հայերենի 220 բարբառներում ու խոսվածքներում գործածվող շուրջ 100000 բառ, դարձված, ոճական արտահայտություն, ասացվածք, կայուն բառակապակցություն: Սկզբում ներկայացվում են գլխաբառը եւ նրա հնչարտասանական տարբերակները՝ բարբառների նշումով, այնուհետեւ՝ բոլոր իմաստները (նաեւ՝ փոխաբերական), դարձվածներն ու մյուս միավորները: Գրեթե բոլոր իմաստների համար բերվում են տպագիր ու ձեռագիր աղբյուրներից եւ բառարանի հեղինակներից քաղված օրինակներ: Ընդգրկված միավորներից ավելի քան 10000-ը (*այլաթ, բախշ, գիլաս, դավի, զոզակ, էս չախը, ըռխալի, թախտաբանդ, իվիլ, լախ, խուտուրու, ծուռտիկ, կեփ, հավաս, ծիծի, յայլուփ, նուրըճըրաք, շիլդի, չըխմըխաքար, քահտ, սաղի, ցիթ, փարջ, աշխարհի չափ, բախտը քարին ու կապին դեմ ընկնել, էջ ուտել, էջ մեծանալ, լաց լացի տալ, հազար մաղից հաց ուտել, յախա թափել, վեզը ալջու կանգնել, ցամաք հաց եւն*) հատուկ է համարվում նաեւ Ղարաբաղի բարբառին ու նրա որոշ խոսվածքների (*Յադրութ, Գորիս, Կապան, Ղզղալա*): Բազմաթիվ միավորներ էլ վերագրված են միայն Ղարաբաղի բարբառին (*ագին բուլի-բուլի անել, բափա գալ, դեհա-դեհա, գեռ, էն դունյան գնալ, ըռըշկետան, թախտափուշ, լամփուշ, խամահատ, խամահատ բաց անել, ծիծը կույր լինել, կապ գցել, հազարի, դալք, ճաշաքամի, մատնաքարի, մուր անել, յըտանալ, նոթել, շաշտ լինել, չալօր, պըռավու պորտ, ուշունքանալ, ուրուրացավ տալ, փնթիփարախ եւն*):

58. Յայրապետյան Թ., **Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաջի Խաչան). Կյանքն ու գործը**, «Յայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր եւ ուսումնասիրություններ», Երեւան, 2007, հ. 24, էջ 7-119

(Ներկայացվում է 19-20-րդ դարերի շուշեցի մշակույթի նշանավոր գործիչ Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքն ու գործը, առանձնակի ուշադրություն է դարձվում նրա ժողովրդագիտական գործունեությանն ու

Ղարաբաղի բարբառով գրած ստեղծագործություններին: Ուսումնասիրության վերջում հակիրճ տեղեկություններ են տրվում Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկությունների մասին (էջ 100), ներկայացվում է նաև Կ. Մելիք-Շահնազարյանի «*Ձուռնա-Տմբլա*» ֆելիետոնների երկհատոր ժողովածուում գործածված մի շարք բարբառային բառերի բացատրական բառարանը (էջ 101-103):

59. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, Երեւան, 1991, 400 էջ*

(Ղարաբաղի բարբառով գրառված (տառադարձության մասնակի խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Առանձին բաժիններով ներկայացվում են նաև բարբառում գործածվող դարձվածների (էջ 262-303) ու բառերի (էջ 353-381) բացատրական բառարաններ եւ նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 382-392):

60. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, երկրորդ գիրք, Ստեփանակերտ, 2004, 422 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով գրառված (տառադարձության խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 360-370) եւ բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 371-420):

61. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, երրորդ գիրք, Ստեփանակերտ, 2007, 412 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով գրառված (տառադարձության խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Վերջում տրվում են բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 225-401) եւ նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 402-408):

62. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, չորրորդ գիրք, Ստեփանակերտ, 2009, 384 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով գրառված (տառադարձության խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Ներկայացվում են նաև Արցախի ու հարակից շրջանների մի շարք ստեղանունների ու մանրատեղանունների նկարագրություններ, նրանց հետ կապված ավանդություններ, անդրադարձ է կատարվում դրանցից որոշների ծագումնաբանությանը: Առանձին բաժիններով տրվում են բարբառում գործածական դարձվածների բացատրական բառարան (էջ 121-173) եւ բառերի ու տարբեր արտահայտությունների բացատրական, ստուգաբանական, ազգագրական բառարան (էջ 217-231):

63. Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության, հինգերորդ գիրք, Ստեփանակերտ, 2011, 404 էջ*

(Գրական հայերենով եւ Ղարաբաղի բարբառով գրառված (տառադարձության խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Վերջում տրվում է բարբառում գործածվող բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 295-395), անդրադարձ է կատարվում դրանցից որոշների ծագումնաբանությանը):

64. Հովհաննիսյան Լ., *Արժանի ներդրում հայ բառարանագրության պատմության մեջ, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2013, N 2, էջ 173-174*

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան» (Երեւան, 2013, 846 էջ) աշխատության մասին: Ներկայացվում են բառարանի արժանիքները՝ բարբառի գրեթե ողջ բառապաշարի (շուրջ 40000 միավոր) ընդգրկում, գլխաբառերի՝ բարբառի խոսվածքներում գործածվող հնարավոր բոլոր հնչյունափոխված տարբերակների նշում, բառահոդվածների վերջում տվյալ բառով սկսվող դարձվածների (ներառյալ կոնկրետ որեւէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող) եւ ոճերի ներկայացում, լեզվաոճական, քերականական, ծագումնաբանական նշումների առկայություն, գլխաբառերի եւ դարձվածների բոլոր իմաստների հստակ եւ մանրամասն բացատրություն, տպագիր, ձեռագիր եւ բանավոր աղբյուրներից քաղված օրինակների մեջբերում՝ համապատասխան աղբյուրի նշումով, բարբառային տառադարձության խիստ պահպանում, Ղարաբաղի բարբառին առնչվող տպագիր եւ ձեռագիր աղբյուրների ընդարձակ ցանկի առկայություն, ընդարձակ առաջաբանում բարբառի ուսումնասիրության պատմության, հնչյունաբառաքերականական օրինաչափությունների, բառարանի կառուցվածքի հստակ նկարագրություն):

65. Հովհաննիսյան Լ., *Բառային հնաբանություններ Ղարաբաղի բարբառում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1979, N 9, էջ 52-60*

(Հանրահայտ ճշմարտություն համարելով բարբառային որոշ բառերի ու բառաքերականական ձեւերի հին ակունքներ ունենալը՝ հեղինակը քննում է պատմական Արցախ եւ Սյունիք նահանգներում գործառող ընդհանուր՝ Ղարաբաղի բարբառի բառային մի շարք հնաբանություններ՝ դրանց տակ նկատի ունենալով ինչպես գրաբարում չավանդված, այնպես էլ ավանդված, սակայն արդի գրական հայերենում ու որոշ բարբառներում չգործածվող կամ էլ նվազ գործածական բառերն ու բառաձեւերը: Որպես գրաբարում չավանդված հնաբանություն՝ հիշատակվում է ձայնդարձը, որի մի շարք ցայտուն օրինակներ առկա են Ղարաբաղի բարբառում՝ *խաչ-խեչ(ակ), շեշտ-շնշտ, քերթ-քարթ(եղ)*: Գրաբարում չավանդված՝ հնդեվրոպական ծագմամբ բառերից նշվում են նաեւ *կրթել, լրմլամել, շքռել*,

*շըկակէլ, տհանիլ* բառերը: Առավել հանգամանորէն են ներկայացվում գրաբար-բարբառ առնչությունների արդյունքում Ղարաբաղի բարբառին հատուկ, բայց գրական հայերենում չգործածվող կամ նվազ գործածական հինհայերենյան տասնյակ բառեր եւ կազմություններ՝ *պնուտ, կեղ, կօտէգ, գիրգամօտ, պիցիրծէնիլ, նորել, քեմուխտ, ծիր, ճէղնը, գօզռակ, նօթէլ, կօռնը, նիտալ, յըտանալ, պըրանէլ*: Այս շարքին են դասվում նաեւ գրաբարյան նույն բառի իմաստային նրբերանգով գործածվող՝ *անկիւն* (մի կողմ, ծայր), *տանիմ* (տեղավորել, պարունակել), *աղոթել* (բուժել, գիր առնել), ամբողջությամբ գրաբարում չավանդված, սակայն գրաբարյան բաղադրիչներից կազմված՝ *պիրընհարիւք, փուրըհարէւք, պիցիհար, ըխպըհար, քամհար, քէթկնն, պնննկնն, վըռակնն, քըմըկնննն, կըղըկալնն, լըպըկալած*, գրաբարի սկզբնական արտասանությունը պահպանած՝ *յէխնէլ, յէտ, յըղէ, յուպուպ, յանգին քըցիլ, յօրթ-յօրթ անէլ* բառերն ու կազմությունները: Հեղինակը առանձին անդրադառնում է բարբառի *վըհ, վըհտ, վըհր* բառերի ծագումնաբանությանը՝ հանգելով այն եզրակացության, որ դրանք ոչ թէ գրաբարյան *հող, հոտ, հոր* բառերի հնչունափոխված, այլ զուգահեռ ձեւեր են, բարբառային հին տարբերակներ՝ բնորոշ Արցախ-Սյունիքի տարածքին):

66. Հովհաննիսյան Լ., *Բարբառային մի քանի բառերի քննություն*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1999, N 2-3, էջ 283-287

(Այլ լեզվաբանների կարծիքների համեմատությամբ հանգամանորէն քննվում եւ ստուգաբանվում են Ղարաբաղի բարբառում գործածվող *դօն, ըրաժան/արաժան, ըրամակ ընկնէլ, կասկ, տաճակ* բառերը: Արդյունքում հեղինակը *դօն* բառը, որը գործածվում է միայն *մըթկէն դօնը ընգնէլ* (մտքերի մեջ խորասուզվել) կապակցության մեջ, կապում է հնդեվրոպական *\*bhundhos-ի dhubnos* (խոր) տարբերակի հետ, որը եզակի վկայությամբ պահպանվել է նաեւ գրաբարյան *ան-դունդ* բառում, *ըրաժանը* (հում կաթի սեր) համարում է վաղ շրջանի իրանական փոխառություն, *ըրամակ ընկնէլը* բխեցնում է իրանական *ram* (խումբ, բազմություն) արմատից, *կասկը* (մեջք, ողնաշար) համարում է իրանական հին փոխառություն՝ կապելով պահլավերէն *kas* (անութ, կող), պարսկերէն *kas* (անթամեջ, անթատակ), հին հնդկերէն *kaksa* (անութ, կես մեջքը) բառերի հետ, որից ծագում է նաեւ գրաբարյան *քաշ* (մեջք, սնակուշտ) բառը, իսկ *տաճակ* (1.ջուլհակի ազբափայտի տակի բարակ գավազան, 2.գործվածք գործելու աղեղնաձեւ բարակ ճիպոտ) բառի հիմքը համարում իրանական *tak* (խփել) արմատը):

67. Հովհաննիսյան Լ., *Գրաբարի եւ Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1977, N 1, էջ 141-152

(Յանգամանորեն քննվում են Ղարաբաղի բարբառի՝ գրաբարի հետ ունեցած բառային (*արթակ, բանգի, ըրմանալ, թումբ, խանձող, կապար, կլափէն տալ, հայս, ճիճի, ճիրըթափվել, քըթըվել, ճռճռոկ, մին, չորք, իլլննալ եւ այլն*) եւ քերականական (*անձներական թվականների առկայություն, որոշ բայերի իմաստային բազմաբնույթ կիրառություններ, հոգնակերտ ք-ի պահպանում, -ուք վերջավորությամբ հոգնակի գործիականի կազմություն, որոշ նախդիրների գործածություն, մի շարք բառերում վերջնահանգ ն-ի պահպանում, հարցանել եւ խնդրել բայերի՝ բացառական հոլովով խնդրառություն, հինհայերենյան բազմաթիվ ոճերի (քընսվ ընցընել, հըղէ ընգընել, մըննան ընգնել, աշք ածել) պահպանում եւ այլն*) մի շարք ընդհանրություններ, որոնք արդի հայերենում չեն գործածվում կամ հաճախական չեն, ինչպես նաեւ հնագույն բարբառային որոշ արտահայտություններ, որոնք բաժանվում են երկու խմբի՝ գրաբարում ավանդված զուգահեռ ձեւերից մեկի առկայություն եւ գրաբարում չավանդված հնդեվրոպական կամ հին բարբառային արտահայտություններ: Ռբանց եւ պատմական որոշ փաստերի ներկայացմամբ հեղինակը, հակադրվելով այն տեսակետին, որ Արցախի բնակչությունը հայախոս է դարձել 9-12-րդ դարերում, եւ բարբառի ծագումը կապվում է այդ դարերի հետ, հիմնավորում է, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին զուգահեռ, եւ այդ տարածքում գործածվող հայերենը, բազում դարերի ընթացքում կրելով զգալի փոփոխություններ, մեզ է հասել մի վիճակով, որը կոչվում է Ղարաբաղի բարբառ):

68. **Յովհաննիսյան Լ., *Ղիտարկումներ Ղարաբաղի բարբառի բաղաձայնական համակարգի վերաբերյալ, «Ջահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու (Երեւան, հունիսի 15-16, 2017)», Երեւան, 2017, էջ 206-210***

(Յաստատելով Յր.Աճառյանի այն կարծիքը, որ Ղարաբաղի բարբառում գործածվող բնիկ բառերում ու հին փոխառություններում գրաբարյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղները խլանում են (հիմնականում բառասկզբում)՝ հեղինակը ներկայացնում է այդ օրինաչափությունից շեղվող դեպքերը՝ նաեւ հնարավորինս տալով բացատրություններ ու հաստատելով մասնագիտական գրականությունից քաղված օրինակներով):

69. **Յովհաննիսյան Լ., *Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 2000թ., N 1, էջ 117-122***

(Յայոց լեզվի պատմական բառագիտության ուսումնասիրության բնագավառում կարեւորելով հայերենի բարբառների, հատկապես տարածքային ընդգրկումով եւ բարբառախոսների թվով առաջնային համարվող Ղարաբաղի բարբառի տվյալները՝ հեղինակը ներկայացնում է վերջինիս բառապաշարի հնագույն շերտերը՝ դրանք բաժանելով երկու խմբի: «Ղա-

րաբաղի բարբառի հնդեվրոպական տարրերը (գրաբարում չավանդված բառեր)» ենթաբաժնում անդրադառնալով Գ. Ջահուկյանի աշխատություններից քաղված՝ Ղարաբաղի բարբառին վերաբերող համապատասխան բառացանկին (այլա, անգի, թոնթորալ, լեմ, կոտո, ճիթ, շկակել, սեռ, սղալել, տնգգել, ցեռ, ցլեփ. քծծել, քնթել եւ այլն)՝ այն լրացնում է նոր բառերով (ազի, դոն, լեթված, խըրթըլուկ, ծոռնը, կէփ, կծք (տալ), կոռնը, հասի, շէկէլ, պըլօրը (տանել), պըէլ, չավ (անել), սըլէթա, սըտ, վահր, տալ, տըհանիլ) եւ քննում (որոշ դեպքերում այլ լեզվաբանների ստուգաբանությունների համեմատությամբ)՝ փորձելով հիմնավորել դրանց հնդեվրոպական ծագումը: Այստեղ անդրադարձ է կատարվում նաեւ մի քանի բարբառային բառերի (թակել, պոու, կէտ, կէտէլ, կէտ անէլ) իմաստային ու գործառական առանձնահատկություններին: Երկրորդ՝ «Գրաբարյան ձեւերից հին ձեւեր», ենթաբաժնում քննության են առնվում բարբառային այն բառերն ու բառաձեւերը (քըվէր, կէնալ, անըմ, թէր, լուսէմը, անգ, պիհիր), որոնք ավելի հարազատ ու անմիջական են ներկայացնում հնդեվրոպական կամ փոխառյալ բառը: Բացի այդ առանձին օրինակներից հնարավոր է համարվում նի մասնիկով մի շարք կազմությունների (նի կըցնէլ, նի կալ, նի կօկէլ, նի կապէլ) հնագույն երեւոյթ լինելը, կազմություններ, որոնք գրաբարում չկան: Առանձին ուշադրություն է դարձվում ձայնդարձի բարբառային որոշ դրսետրոմների (բանալ-պէնալ, բառնալ-պէռնէլ, բորբ-բէրբէլ, գազան-կէզան, գանգատ-կէնգատ, լեսուլ-լօսէլ, կադին-(տ)կոդին, շէշտ-շաշտ, շէդէլ-շադվէլ)՝ միաժամանակ նշելով, որ նման կարգի օրինակները չեն կարող անվերապահորեն գրաբարից հին համարվել, քանի որ բարբառային բառերում ձայնավորների հարաբերակցությունը հնդեվրոպական թե գրաբարյան համապատասխանակի հետ հստակ չէ: Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հեղինակը հավաստում է, որ նմանօրինակ նյութի քննությամբ կարելի է նորովի լուսաբանել Ղարաբաղի բարբառի կազմավորման բնույթն ու ընթացքը, գրաբարբարբառ փոխհարաբերությունները, այլ բարբառների նկատմամբ դրսետրվող յուրահատկությունները եւ հաստատել պատմական Արցախի տարածքում վաղնջական շրջանից հայ տարրի ու հայոց լեզվի գոյության փաստը):

70. Դովհաննիսյան Լ., **Ղարաբաղի բարբառում իրանական մի քանի փոխառությունների մասին**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1990, N 11, էջ 65-70

(Քննվում են հայոց լեզվի պատմության, հատկապես լեզուների որոշ իրողությունների դրսետրման տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող եւ Ղարաբաղի բարբառում գործածվող մի շարք բառեր (թւնռ, կէզան, հնրգանկ, պըտըրհան, աշկարա, հըրակաշ, վռազ, տծշ), որոնք հնչյունակազմով կամ իմաստով հարում են հին կամ միջին իրանական

լեզուներին կամ ենթարկվում են ուշագրավ ստուգաբանությունների, եւ որոնցից որոշները առկա են նաեւ գրաբարում եւ ստուգաբանվել են այլ լեզվաբանների, հատկապէս Յր. Աճառյանի կողմից: Առանձին ուշադրութիւն է դարձվում *Նի* մասնիկով բայակազմութեան հարցին՝ նշելով նրա երկակի բնույթը: Որոշ բառերի (*Նի ընկնէլ, Նի ծըծէլ, Նի անէլ, Նի քըցիլ, Նի մտնէլ, Նի պրծնէլ*) դեպքում, գոնէ իմաստի տեսակետից ենթադրելի համարելով ուրիշ լեզվաբանների կողմից առաջ քաշված տեսակետը *Նի*-ի՝ *Ներս*-ից առաջանալու մասին՝ հեղինակը այլ կազմութիւնների (*Նի թակէլ, Նի կցնէլ, Նի կապէլ, Նի պրանէլ, Նի կ'անլ, Նի կէնանլ, Նի կօկէլ, Նի չըռէլ*) համար այդ աղերսը համարում է խիստ կասկածելի՝ *Նի*-ի գործառնութիւնը համարելով հին երեւոյթ, որը՝ որպէս հայ-իրանական ընդհանրութիւն, գործել է Հայաստանի արեւելյան տարածքում եւ իրանական սարահարթում, կամ, որ ավելի հավանական է, իրանական լեզուների ազդեցութեան արդյունք է: Հոդվածում քննութեան են առնվում նաեւ բարբառում գործածական մի քանի իրանական բառեր (*բնրն, տըժէր, կուշտ/քուշտ, բըշտէլ, բիշտի տալ, հոնշտ (լինէլ), չափ (տալ, թողէլ), հնձ (անէլ), սազ (անէլ)*), որոնք տարբերակվում են ըստ փոխառութեան բուն սկզբնաղբյուրի՝ պարթեւերենի եւ միջին պարսկերենի: Քննութեան մեջ վերհանված փաստերը թույլ են տալիս հեղինակին ենթադրելու, որ Ղարաբաղի բարբառում իրանական փոխառութիւնների գործընթացը համընկնում է ընդհանրապէս հայերենի իրանական փոխառութիւնների գործընթացին, որը կողմնակի ապացույց է Արցախի տարածքում հայերենի վաղնջական գործածութեան մասին):

71. Հովհաննիսյան Լ., *Ղարաբաղի բարբառում միջին իրանական լեզուներից կատարված մի քանի փոխառութիւնների շուրջ*, «Հայ բարբառագիտութեան հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ.. Զեկուցումների ժողովածու», Երեւան, 2014, էջ 62-67

(Հաշվի առնելով միջին իրանական լեզուների ու պարսկերենի հնչյունական-հնչյունափոխական առանձնահատկութիւնները եւ Ղարաբաղի բարբառի հնչյունական որոշ յուրահատկութիւններ, հատկապէս գրաբարյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղների՝ *պ, կ, տ, ծ, ճ* խուլերի վերածվելու երեւոյթը՝ գրաբարի տվյալների եւ այլ լեզվաբանների ստուգաբանութիւնների համեմատութեամբ քննվում են բարբառում գործածվող եւ միջին իրանական լեզուներից կատարված մի շարք փոխառութիւններ (*լօլակ, թալակ, կըռօճ, ասպ(ը), ճուլհնկ, հըրիշտընկ, տըրիճակ, տէնգ, տօձ, նշան, նշանց տալ*): Ամփոփելով քննութիւնը՝ հեղինակը հավաստում է, որ հայ բարբառների մանրագնին ուսումնասիրութեամբ կարելի է բացահայտել հին փոխառութիւնների մի զգալի շերտ, որը ոչ միայն կարելի է հարցերի լուսաբանման առումով, այլեւ կարող է նպաստել միջին իրանական

լեզուներում գրավոր չավանդված բառերի կամ բառիմաստների վերականգնմանը:

72. Ղազարյան Յ., **Արցախի բանաստեղծական արվեստի լեզուն եւ ոճը (80-90-ական թվականներ)**, Ստեփանակերտ, 2007, 176 էջ

(Աշխատությունը նվիրված է Արցախի մի շարք բանաստեղծների՝ 1980-90-ական թվականների պոեզիայի լեզվաոճական առանձնահատկությունների քննությանը: Առաջին գլխի «Բարբառային բառեր ու բառաձեւեր» (էջ 27-33) ենթաբաժնում ներկայացվում են որոշ բանաստեղծների (Գ. Գաբրիելյան, Վ. Յակոբյան, Ս. Խանյան, Յր. Բեգլարյան) պոեզիայում գործածված բարբառային (հիմնականում Ղարաբաղի բարբառին հատուկ) բառերը (կրրտըպըրտանք, իգիթ, բալա, ճուղուպուր), բառաձեւերը (անհիւք, խոխեք, կաղնած, քարետ) ու բառակապակցությունները (մաման քեզ մատաղ, մի բերան խոսել, գարունքվա քիթը դուրս գալ, կըլխըտակու պերց), որոնք հեղինակները հատկապես կիրառել են գեղարվեստական կերպարի լեզվաոճական գունավորման նպատակով: Առանձնակի ուշադրություն է դարձվում Գ. Գաբրիելյանի՝ Ղարաբաղի բարբառով գրած որոշ ստեղծագործություններին):

73. Ղազիյան Ա., **Արցախ, «Յայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր եւ ուսումնասիրություններ»**, Երեւան, 1983, հ. 15, 192 էջ

(Ղարաբաղի բարբառով Արցախի տարբեր բնակավայրերից գրառված (տառադարձության խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 166-183) եւ դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 184-190):

74. Ղահրամանյան Կ., **Օջախի գիրք. Նշխարներ**, Երեւան, 2002, 278 էջ

(Ներկայացվում են Յյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի համառոտ պատմությունը, պատմաճարտարապետական հուշարձանների նկարագրությունը, վիմագրական, ազգագրական, բանահյուսական նյութեր: «Պատանդիկներ խորտակված լեզվական աշխարհից» (էջ 229-244) եւ «Յարագատ, անմոռաց բառեր» (էջ 245-266) բաժիններում տրվում են (տառադարձության մասնակի խախտումներով) գրաբարից ավանդված ու բարբառային բառերի ցանկեր, անդրադարձ է կատարվում դրանցից որոշների ծագումնաբանությանը):

75. Ղարիբյան Ա., **Կ.Ս.Ղավթյան. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը. գրախոսություն**, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1966, N 4, էջ 273-276

(Ներկայացվում են աշխատության մի շարք կարեւոր արժանիքներ՝ բարբառային նյութերի բարեխիղճ եւ մանրամասն փաստագրություն, առանձին շրջանների եւ գյուղերի խոսվածքներում գոյություն ունեցող

բարբառային բոլոր տարբերակների ընդգրկում, արժեքավոր ամփոփումներ եւ տեսական ընդհանրացումներ, տարածքում գործառու բոլոր բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների խմբավորում, դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունների բացահայտում, ինչպես նաեւ որոշ վիճելի հարցերի եւ թերությունների պարզաբանումներ՝ արդյունքում ստեղծված գործը համարելով Ղարաբաղի մարզի հայկական բարբառները անմահացնող աշխատություն: Գրախոսությանը զուգընթաց հեղինակը անդրադարձել է նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքի բարբառների փոխհարաբերություններին եւ որոշ օրինաչափությունների, հատկապես Ղարաբաղի բարբառի ստանդարտի հետ կապված տարբեր հարցերի՝ կատարելով արժեքավոր դիտողություններ եւ եզրահանգումներ):

76. Ղարիբյան Ա., **Հայ բարբառագիտություն (Ձեռնարկ բուհերի ուսանողության համար)**, Երեւան, 1947, 296 էջ

(Առանձին բաժիններով քննության են առնվում բարբառագիտության տարբեր հարցեր՝ հայ բարբառագիտության պատմությունը, հայերենի բարբառների դասակարգումները եւն: Անդրադառնալով ձեւաբանական դասակարգմանը՝ հեղինակը Ղարաբաղի բարբառը դասում է «ու», իսկ Հաղրուփի եւ Ղարադաղի (Շաղախի) բարբառները՝ «ս» ճյուղին: Միաժամանակ առաջ է քաշում հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը՝ առաջին տեղաշարժի ենթարկված բարբառների (որոնց մեջ գրաբարյան ձայնեղները խլացել են) շարքին դասելով նաեւ Ղարաբաղի, Հաղրուփի եւ Շաղախի բարբառները: Ուսումնասիրության մեջ առանձին ենթաբաժնով (էջ 88-104) տրվում է Ղարաբաղի բարբառի նկարագրությունը՝ ներկայացնելով տարածման սահմանները, հիմնական օրինաչափությունները (որոշ դեպքերում՝ Հաղրուփի, Շաղախի, Մեղրու բարբառների համեմատությամբ), բարբառով գրառված նմուշներ, իսկ «ս» ճյուղի բարբառների քննությանը նվիրված բաժնում (էջ 146-153) անդրադառնում է Հաղրուփի եւ Շաղախի բարբառներին: Նշված հարցերն առավել հանգամանորեն ու գիտական տեսանկյունով հեղինակը քննել է նաեւ իր *Հայ բարբառագիտություն /Երեւան, 1953, 460 էջ/* աշխատության մեջ՝ նաեւ առանձին ենթաբաժին նվիրելով (էջ 230-242) Ղարաբաղի բարբառի հնչյունաքերականական, հատկապես հնչյունափոխության, հոլովման, խոնարհման առանձնահատկությունների նկարագրությանը):

77. Ղարիբյան Ա., **Հայերեն բարբառների մի նոր ճյուղ**, «Երեւանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ.11, Երեւան, 1939, էջ 24-188

(Անդրադառնալով Հր. Աճառյանի կողմից ներկայացված հայերենի բարբառների ձեւաբանական դասակարգմանը՝ հեղինակն «ել» ճյուղը վերանվանում է «լ» եւ առանձնացնում «ս» ճյուղը՝ վերջինիս մեջ ներառելով Արդվինի, Շաղախի, Կարճեւանի, Մեղրու, Հաղրուփի, Ուրմիայի բարբառ-

ները: Ուսումնասիրության մեջ մյուս բարբառներին զուգահեռ առանձին բաժիններով ներկայացվում են Շաղախի (էջ 50-58) ու Յաղարկի (էջ 107-127) բարբառների (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառներ) հնչյունաձևաբանական հիմնական առանձնահատկությունների քննությունը եւ դրանցով գրառված նյութեր: Աշխատությանը կցված են նաեւ «ս» ճյուղի բարբառների համեմատական բառարան (էջ 152-187), աղյուսակներ ու Կովկասի սխեմատիկ քարտեզը, որի վրա նշված են նկարագրված բարբառների վայրերը):

78. Մանուչարյան Ս., ***Բարբառային իրողությունները Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց», եւ «Խնձորեսկ» վեպերում, «Ջահուկյանական ընթերցումներ. Գիտական հոդվածների ժողովածու», Երեւան 2016, էջ 125-134***

(Գրական հայերենի համարժեքների համեմատությամբ քննվում են Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց» ու «Խնձորեսկ» վեպերի եւ հեղինակային խոսքում, եւ կերպարների լեզվում գործածված եւ «ում» ճյուղի, հատկապես Սյունիք-Արցախ տարածքների բարբառային միավորներին բնորոշ լեզվական մի շարք իրողություններ՝ ամփոփում եւ հնչյունների անկում (*Գեւորգ-Կեւի, Խաչատուր-Խաչի, Գաբրիել-Գաբի, Աստվածատուր-Ծատի, Յովսէփ-Օսեփ, այ տղա-այտա, քեզ-քե, դուրստուս*), հնչյունների հավելում (*հունց, հափուռ*), գրաբարյան երկբարբառների եւ եռաբարբառների պարզեցում (*մայր-մեր, այսօր-էսօր, միայնակ-միւսնակ*), իմաստային ու կիրառական յուրահատկություններով հատկանշվող բարբառային եւ փոխառյալ բառերի, բարդությունների, մասնիկների, դարձվածների գործածություն (*ղզլքաշ, օթախ, ախր, չժլ, գոռով, թամահ, համա, բիրդան, չէչմին, օխայ, սնրսնդ, ծեղպատ, լիկռահաչ տալ, հեչ անել, հարամ անել, բէ-հուշ, շնայթակ տալ, կնկահաչ տալ*), գոյականների հոլովման բարբառային տարբերակներ (*կնկա, ապուն, սրտան, տղօրցից*), թեք հոլովածներում հոդառություն (*պատօվը, մտքովն, գետնովը, սրտումը*) եւ այլն, որոնց միջոցով գրողը կարողացել է ավելի ստույգ ու պատկերավոր ներկայացնել ժողովրդի տվյալ հատվածի ինքնատիպ մտածելակերպն ու առօրյան, սովորություններն ու հավատալիքները՝ միաժամանակ գեղարվեստական խոսքը դարձնելով բազմաբնույթ ու սեղմ):

79. Մանուչարյան Ս., ***Իմաստափոխության դրսեւորումները Կապանի տարածաշրջանի խոսվածքներում, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, N 1, էջ 112-115***

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառի՝ Կապանի տարածաշրջանի խոսվածքներում գրաբարյան բառերի իմաստափոխության մի շարք դրսեւորումներ՝ գրաբարյան բազմիմաստության փոխարեն մենիմաստություն, իմաստափոխությանը զուգահեռ բուն իմաստի լիովին կամ մասնակիորեն պահպանում, բառիմաստի նեղացում եւ լայնացում, փորձ է արվում

բացահայտելու դրանցից որոշների հիմքերը, անդրադարձ է կատարվում նաեւ դարձվածների, առած-ասացվածքների մեջ դրսետրվող իմաստափոխությանը: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան օրինակներ):

80. Մանուչարյան Ս., **Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերի համեմատական քննություն**, «Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեյի հիշատակին (1937-2016). 2-5 հոկտեմբերի, 2017. Հիմնադրույթների ժողովածու», Երեւան, 2017, էջ 89-90

(Ներկայացվում են Կապան-Գորիս տարածաշրջանի «ում» եւ «լի(ս)» ճյուղերին պատկանող տարբեր խոսվածքների բայական համակարգերի՝ անկատար եւ ապակատար դերբայների, ընթացակցական ներկա եւ անցյալ ժամանակաձեւերի, եւ օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի, հարակատար դերբայով հարադրված ժամանակաձեւերի, անցյալ կատարյալի համադրական եւ վերլուծական ձեւերի, հարկադրական եղանակի, երկրորդական բաղադրյալ ժամանակաձեւերի, անկանոն բայերի եղանակաժամանակային ձեւերի դրսետրման ընդհանրություններն ու տարբերությունները):

81. Մանուչարյան Ս., **Կապանի տարածաշրջանի խոսվածքների համեմատական քննություն**, «Զահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու (Երեւան, հունիսի 15-16, 2017)», Երեւան, 2017, էջ 234-248

(Կապանի տարածաշրջանի բարբառային միավորները ներառելով Ղարաբաղի բարբառի կազմում՝ հեղինակը ներկայացնում է տարածքում գործառող *Ում* եւ *Լիս* ճյուղերին պատկանող խոսվածքների համեմատական քննությունը հնչյունաբանական ու ձեւաբանական մակարդակներում՝ փորձելով հիմնավորել, որ *Լիս* ճյուղի խոսվածքները բավականին ենթարկվել են Սյունիք-Արցախ բարբառային գոտու *Ում* ճյուղի խոսվածքների եւ արդի գրական հայերենի ազդեցությանը, ինչը առաջ է բերել որոշակի տարբերություններ տարեց եւ երիտասարդ բարբառախոսների հաղորդակցման լեզվի մեջ):

82. Մանուչարյան Ս., **Կապանի տարածաշրջանի խոսվածքների հնչյունական իրողությունների ընդհանուր նկարագիրը**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 2014, N3, էջ 238-243

(Հիմք ընդունելով հայերենի բարբառների հնչյունական համակարգերի եւ դրանց փոփոխությունների վերաբերյալ որոշ լեզվաբանների ուսումնասիրությունները՝ համաժամանակյա եւ տարածամասնակյա կտրվածքներով քննվում են Կապանի տարածաշրջանի «ում» եւ «լի(ս)» ճյուղերին պատկանող խոսվածքների ձայնավորների ու բաղաձայնների եւ հատկա-

պես դրանց կրած փոփոխությունների (*քմայնացում, ձայնեղների խլացում, հնչյունների անկում եւ հավելում, պարզեցում եւ բարդացում, դրափոփոխություն, կրկնություն եւ այլն*), հնչյունական օրենքների դրսեւորումները, փորձ է արվում ներկայացնելու դրանց առաջացման հիմքերը եւ պատմական զարգացման ընթացքը):

83. Մանուչարյան Ս., **Կապանի տարածաշրջանի խոսվածքների հնչյունական որոշ դիտակումներ (տարածամանակյա քննություն), «Ջահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումներ (Երեւան, 2014թ., հունիսի 11-12)» Երեւան, 2014, էջ 98-104**

(Հիմնականում կրկնելով իր «Կապանի տարածաշրջանի խոսվածքների հնչյունական իրողությունների ընդհանուր նկարագիրը» հոդվածում քննության առած մի շարք երեւույթներ՝ հեղինակը ներկայացնում է Կապանի տարածաշրջանի «ում» եւ «լի(ս)» ճյուղերին պատկանող խոսվածքների տարածամանակյա հնչյունափոխության տարբեր առանձնահատկություններ եւ դրանք պայմանավորող հանգամանքները՝ փորձելով հիմնավորել, որ հայերենի պատմական ընթացքին զուգահեռ նշված խոսվածքների հնչյունական նման յուրահատկությունները եկել են վաղնջականությունից՝ հարատեւելով դարեդար):

84. Մանուչարյան Ս., **Հնչյունական իրողությունները Գուսան Աշոտի բարբառային տաղերում, «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն. Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (27-29 հոկտեմբերի, Ստեփանակերտ, 2017) հոդվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2017, էջ 372-375**

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառի Գորիսի խոսվածքների հնչյունական-հնչյունափոխական մի շարք օրինաչափություններ (*ձայնավորների եւ բաղաձայնների քմայնացում, ձայնավորների ներդաշնակություն, վերջընթեր շեշտի ներգործությամբ հնչյունափոխություն, ձայնեղ բաղաձայնների խլացում, հնչյունների հավելում, հնչյունների անկում եւն*), որոնք արտացոլվել են Սյունիքի նշանավոր տաղերգու Գուսան Աշոտի բարբառային տաղերում՝ դրանց հաղորդելով բնականություն եւ արտահայտչականություն: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան բնագրային օրինակներ):

85. Մանուչարյան Ս., **Սահմանական եղանակի ժամանակաձեւերը Կապանի տարածաշրջանի խոսվածքներում, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երեւան, 2014, էջ 296-303**

(Ըստ սահմանական եղանակի ներկայի եւ անցյալ անկատարի կազմության Կապանի տարածաշրջանի խոսվածքները բաժանելով «ում» եւ «լի(ս)» ճյուղերի մեջ՝ հեղինակը քննության է առնում սահմանական եղանակի ժամանակաձեւերի դրսեւորումները դրանցում՝ վեր հանելով

տարբեր խոսվածքների առանձնահատկությունները: Առանձնակի ուշադրություն է դարձվում անցյալ ժամանակի արտահայտման համար «*ու*» ճյուղի խոսվածքների մի մասում օժանդակ բայի պարզ, մյուսներում՝ բաղադրյալ (ներկայի ու *լն(լ)* բառ-մասնիկի հարադրությամբ) ձևերի դրսևորմանը, ինչի հետեանքով անցյալ ժամանակի վերլուծական կազմությունները ձեւավորվում են տարբեր կաղապարներով: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան օրինակներ):

86. Մանուչարյան Ս., ***Քերականական մի շարք իրողությունների դրսևորումները Կապանի տարածաշրջանի բարբառային միավորումներում***, «Կանթեղ», Երեւան, 2015, N 4, էջ 54-63

(Համաժամանակյա կտրվածքով քննվում են Կապանի տարածաշրջանի՝ «*ս*» ճյուղի 4 եւ «*ու*» ճյուղի 27 խոսվածքներում հոգնակերտ մասնիկների, սեռական, բացառական, գործիական, ներգոյական հոլովների, ածականի գերադրական աստիճանի վերլուծական ձեւի, դերանունների, ապառնի դերբայի վերջավորությունների, սահմանական եղանակի ներկա եւ անցյալ ժամանակաձեւերի, ըղծական եւ ենթադրական եղանակների անցյալ ժամանակաձեւերի, ժխտական խոնարհման, արգելական հրամայականի, երկրորդական բաղադրյալ ժամանակաձեւերի կազմության եւ դրսևորման մի շարք առանձնահատկություններ, որոնք, ըստ հեղինակի, հիմնականում հարեւան «*ու*» ճյուղի (Ղարաբաղ, Գորիս) եւ «*լի(ս)*» ճյուղի (Հաղրուֆ, Մեղրի) բարբառների համապատասխան ազդեցությունների արդյունք են):

87. Մարգարյան Ալ., ***Աշան բառի այլ ստուգաբանության փորձ***, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1994, N 2, էջ 72-74

(Հակադրվելով Գ. Ջահուկյանի՝ *աշան* բառին վերաբերող մեկնությանը, ըստ որի՝ այն կապվում է *աշուն* բառի հետ, հողվածում ներկայացվում է ստուգաբանության այլ փորձ, որի համաձայն՝ Արարատյան, Ղարաբաղի եւ Գորիսի բարբառներում գործածվող *աշան*//*հաշան* (կալի մեջ խրձերի ցրվածքը) գոյականը եւ դրանից բաղադրված (*հ*)*աշան անել*, *հաշանել*, *աշնել* (խրձերը կալի մեջ սփռել՝ ցրել) բայերը բխեցվում են գրաբարյան *հաշել* (հալումաշ անել, հյուծել, տկարացնել) բայի *հաշ* արմատից, որի ծագումը դեռեւս անհայտ է):

88. Մարգարյան Ալ., ***Բառաքնական դիտողություններ***, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1959, N 4, էջ 221-232

(Արժեւորելով հայ բառագիտության նվաճումները մասնավորապես բառերի ծագման, առաջացման, բաղադրության ու փոփոխությունների հարցերի ուսումնասիրման բնագավառում եւ քննադատաբար մոտենալով այլ լեզվաբանների տեսակետներին՝ հեղինակը հնչյունափոխական տարբեր երեւոյթների եւ բառիմաստների զուգորդությամբ փորձում է

կատարել մի քանի ստուգաբանական վերլուծություններ: Արդյունքում արդի հայերենի որոշ, այդ թվում Ղարաբաղի եւ Գորիսի բարբառներին հատուկ *սմբել* (*ցամաքել*, *չորանալ*) բառը բխեցվում է գրաբարյան *ցամաքել* բառից, որոշ կազմությունների՝ *կուչ գալ*, *կուչկուչկուչօտել*, *կուչուկուչ անել*, *կչոռ անել* (*կծկվել*) եւ այլն, *կուչ* բաղադրիչը, ինչպես նաեւ *ճկռել*, *ճկռճկռ անել* (*կզել*), *ճկռացնել* (*կզել տալ*) բառերի արմատը՝ հինհայերենյան տակավին անստույգ *գուճ* (*ծունկ*, *ծնկի կոճ*) բառից, *կաթ* (*շիթ*, *կաթիլ*) եւ *թրմփալ* (մեծ ձայնով ընկնել) բառերը՝ ցեղակից եւ ոչ ցեղակից շատ լեզուներում առկա բնածայնական ծագում ունեցող համապատասխան արմատներից, *զամբ*//*զէմբ* (ջրաղացի քարերի շուրջը նստած այլուրի փոշի) բառը՝ *ամպ* բառից (*զ* նախդիրի համադրությամբ), *չռել* (աչքերը լայն բացած եւ սեւեռուն նայել, երկար ժամանակ հայացքը չհեռացնել նույն կետից) բառը՝ գրաբարյան *աչառել* (ակն առնուլ, ակն ածել, պատկառել, մարդահաճել) բայից, *շկակել* (արագ վազել) եւ *շկակած* (կաս-կարմիր կտրած) բառերը՝ գրաբարյան *շէկ* արմատից կազմված *շիկանալ* բառից, *պլպլալ*//*պսպղալ*//*փսպղալ* (փայլել, ցոլալ) բառը՝ հնիւ. *sphel*, *phel* (փայլել) ձեւից ծագած *փայլ* արմատից):

89. Մարգարյան Ալ., **Քառաքնություն**, «Քաները Երեւանի համալսարանի», Երեւան, 1981, N 1, էջ 180-187

(Քննվում եւ ստուգաբանվում են հայերենում ու հատկապես բարբառներում գործածվող մի քանի կրկնավոր բարդություններ, որոնցից Ղարաբաղի ու Գորիսի բարբառներին հատուկ *ծածար*//*ծւծւռ* (երեխայի՝ նոր ոտքի կանգնելը) բառը հեղինակը համարում է *ծար* բառի, *շըղաղել* (շաղախել) բայի *շաղաղ* արմատը՝ *շաղ* (կապ, կցում, կապակցություն) արմատի, *պապար*//*պապալ* (պար, երեխայի խաղալը) բառը՝ *պար* բառի, *քոլոլ* (շների գզգզվելը՝ գզվոտոցը) բառը՝ *քոլ* (թուփ, մացառ, անտառ եւն) բառի կրկնությունից կազմված բարդություններ):

90. Մարգարյան Ալ., **Քարբառային բառերի մեկնություններ**, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1971, N 3, էջ 210-221, 1973, N 4, էջ 127-136, 1975, N 2, էջ 183-191, 1977, N 3, էջ 157-164, 1980, N 2, էջ 98-104, 1998, N 1-2, էջ 221-226

(Յոդվածաշարում հնչյունափոխական տարբեր երեւույթների եւ բառիմաստների զուգորդությամբ տրվում են հայերենի որոշ բարբառներում եւ խոսվածքներում (այդ թվում Ղարաբաղի եւ Գորիսի) հնչյունական, նաեւ իմաստային փոփոխությունների ենթարկված, համապատասխան նախավոր ձեւերի հետ ծագումնաբանական կապը մթագնած ու բառույթային ինքնուրույն արժեք ստացած մի շարք բառերի մեկնություններ, որոնց մի մասի ծագումը, ըստ հեղինակի, հայ լեզվաբանական գրականության մեջ կամ տակավին չի պարզաբանվել, կամ սխալ է մեկնաբանվել: Քննելով դրանք՝ հեղինակը մեծ մասը բխեցնում է գրաբարում ավանդված բառերից

Եւ արմատներց. *մըրցընէլ* (փակել, ծածկել, կողպել) բայը՝ *ամրացուցանել* բայից, *խօխա//ըրախա//րախա* (1.երեխա, ծնողի չհասունացած որդի, զավակ, 2. տղայամիտ, մանկամիտ, անմիտ, անփորձ) բառը՝ *երախայ//երեխայ* բառից, *առռի//առռէ//ւնռէ* (հուլժ, շատ) բառը՝ *առնուլ//առնել* բայի *առ* հրամայականից, *ճօշք//ճօժկ* (բամբասանք) Եւ *ճօշք//ճօժկ* (կախօրրան, ճլորթի) համանուն բառերը՝ *ճօժ* (շարժում, ճոճում) բառից, *շալք* (գլորշի, շոգի) բառը՝ *շաղ* (ցող, խոնավություն, շիթ, կաթիլ) բառից, *պէկ//պնկ* (1.ավերված, քարուքանդ եղած տեղ, ավերակ, 2.արտաքնոց) բառը՝ հարավային կովկասյան լեզուներից փոխառյալ *բակ* (1.տան շուրջը եղած զավիթ, 2.նշխարների փարախ) բառից, *տունէ* (դեմքի այն մասը, որտեղ քիթը, բերանը Եւ ծնոտն են գտնվում)՝ *ընդ-ունէ* կապակցությունից, *ադէր//ւնդէր* (տերտեր, քահանա) բառը՝ *հայր տեր* կապակցությունից, *առիս* (ինձ մոտ, մոտս, ձեռքիս) բառը՝ *առ* (մոտ, քով) նախդիր-կապից, *մըրթէն դօնը ընգնէլ* (մտքերի մեջ խորասուզվել) դարձվածի *դօն* բառը՝ *տուն* բառից, *թօր(ը)//թօռ(ն)* (որ, որտեղ, դեպի որ կողմը) բառը՝ *ընդ-ուր* բառակապակցությունից, *խընծադա//խընծադի* (ձնծադիկ) բառը՝ *ձնծադիկ* բառից, *կըզնըվէլ//կըզնվիլ* (բարկանալ, գայրանալ) բայը՝ *կիզանիլ* (այրվել, բորբոքվել) բայից, *գուլի* (1.հնդկահավ, 2.հնդկահավին կանչելու ձայն) բառը՝ բնածայնական բառից, *խըռըզնըհատ հնիլ//տըհնալ* (տանջամահ լինել), *խըռըզնըհատ անէլ* (տանջամահ անել) բարդությունների *խըռըզնըհատ* հարադիրը՝ պարսկերենից փոխառյալ *խարազան* բառից, *կնիզէլ//կնիզէլ//կնիզիլ//կնիզիլ* (1.միզել, 2.վախենալ, մի բանից խիստ զարհուրել) բայը՝ *գոգ* (մեզ) բառից, *հախկ* (ընկերակից գութանավորներից ամեն մեկի վարելիք հողը) բառը՝ *հաղ* (1.գրավ, դաշն, միաբանություն, 2.մասնակից, գործակից) բառից, *սաքէլ//սւնքէլ* (իրար վրա կանոնավոր դարսել), *սաք-սաք//սւնք-սւնք* (կոկիկ, կանոնավոր, իրար վրա կանոնավոր դարսված) Եւ այլ բառերի *սաք//սւնք* արմատը՝ հնիս. *ker* (կապ, հյուսվածքի թել, հյուսել, կապել) արմատից ծագած *սարք* բառից, *սառալ-սըքառալ* (խիստ սառել, ընդարմանալ, մրսել), *սառած-սըքառած* (խիստ սառած, ընդարմացած, մրսած) բարդությունների *սըքառել* Եւ *սըքառած* բաղադրիչները՝ *սուզ առեալ*, *սուզ առած* հարադրական ձեւերից, *գլուխկոնծի//գլուխկոնծի* (գլխի վրայով թավալվելով ուստյուն) բառի երկրորդ՝ *կոնծի//կոնծի* բաղադրիչը՝ հայերենի տակավին չստուգաբանված *կործ* (գլխիվայր շրջվել, տապալվել) արմատից, *թարսել//թարսիլ* (ընդեղենը տեփուրով թեթել վեր նետելով՝ հակառակ կողմը շուռ տալ) բայը՝ թուրքերենից փոխառյալ *թարս* (ներհակ, հակառակ) բառից, *սէն* (կանանց Եւ սուրբ կենդանիների կրծքի կաթի անուժ, փուլ լինելը) բառը՝ հնդեվրոպական հիմք լեզվի *k'eno* ձեւից ծագած *սին* (ունայն, դատարկ, մեջը փուլ) բառից, *տանկ//տանգ* (ջվալի (տոպրակի) երկու կողերի օղակները) բառը՝ 13-րդ դարից գրավոր ավանդված Եւ տակավին չստուգաբանված *կանթ* (ունկ) բառից, *տօպ* (1.կաթիլ, 2.մի քիչ)

բառը՝ *տօսպ* (կակաջ, ծափկոտրուկ, հարսնուկ) բառից, *կոնծել/կոնծել* (1.ոգելից խմիչքով լի բաժակը միանգամից դատարկել՝ ըմպել, 2.խմել, հարբել) բայը՝ *կործել* (ամանը գլխիվայր դարձնել՝ շրջել, բոլորը դատարկել) բայից, *հուշտ/հիշտ* արմատը, որը հիմնականում գործածվում է *հուշտ անել* (1.խրտնեցնել, 2.անակնկալի բերել, վախեցնել), *հուշտ ինիլ* (1.խրտնել, 2.անակնկալի գալ, վախենալ), *հուշտոռիկ* (1.խրտնող, 2. թեթեւուիկ, թեթեւամիտ) եւ այլ բաղադրյալ բառերում՝ *հուշտ/հիշտ* ձայնից, *պլուտ* (1.աղքատ, դատարկածեռն, 2.անբարոյական) բառը՝ ռուսերենից փոխառված *плыт* (խաբեբա, խարդախ, նենգ անձ) բառից, *տունդի* (երաստան, նստատեղի) բառը՝ *տուտն* (ծայր, վերջ, ազի) բառից, *թերմացք* (կերակրի մնացորդ) անհոդակապ իսկական բարդության *թեր* բաղադրիչը՝ *թերի* բառից, իսկ երկրորդ՝ *մացք* բաղադրիչը՝ *մալ* բայի անցյալ կատարյալի *մնաց* հիմքից, *լրհա//լրհան//անլլանի//անլլա//էլլա//էլլա* (1.պես, նման, կարծես թե, 2.երբ որ, հենց որ, 3.միայն, միայնակ, 4.այլեւս, դարձյալ, մեկ էլ) բառը՝ *այլ* (1.եւս, էլ, այլեւս, մեկ էլ, 2.բայց, սակայն, 3.հապա, նույնիսկ, 4.արդ, արդ եւս) եւ *ահա* (հրես, ահավասիկ) բառ-բաղադրիչներից՝ դրանց փոփոխված ու հապավված ձեւերի միացությամբ, *լօխ* (ամբողջ) բառը՝ հնդեվրոպական հիմք լեզվից սերող *ողջ* բառից, *ճապկի* (ամուր եւ ճկուն ճյուղերով թուփ) բառը՝ *ճապուկ* (դյուրաթեք, ծոմնկող) բառից, *շհատք//շահադ//շհադ* (հացահատիկն աղալու վարձ, որ վերցնում են հացահատիկով) բառը՝ *շահ* (1.օգուտ, վաստակ, 2.դրամագլխի կամ փոխ տված դրամի տոկոսը) բառից, *շիմ* (բոլորը, ամբողջը, ամենքը) բառը՝ *չափ(ք)* բառից, *պէլ* (զիժ, խենթ) բառը՝ Յայկի եւ Բելի հայտնի առասպելի Բելի անունից):

91. Մարգարյան Ալ., *Քարբառային մի քանի բառերի ծագման մասին*, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1972, N 2, էջ 236-242

(Ստուգաբանվում են Ղարաբաղի եւ Գորիսի բարբառներում լայնորեն գործածվող որոշ բառեր, որոնք, հնչյունական էական փոփոխությունների ենթարկված լինելով, բավականաչափ հեռացել ու տարբերվում են իրենց նախավոր ձեւերից՝ առաջ բերելով նաեւ իմաստային տարբերակումներ: Արդյունքում հեղինակը հիմնավորում է, որ նշված բարբառներում գործածական *մի//մին//մըն//մը հավուր//հովուր* (1. մի քիչ՝ որոշ ժամանակ, 2.դիցուք, ասենք թե) բարդության *հավուր//հովուր* բաղադրիչը սերում է գրաբարյան *օր* բառի նախդրիվ տրականից (*օր-ատուր-յավուր*) եւ քարացած հոլովածեւ է, *անրշան ընգրնել//ինգրիլ//կանլ* (1.ծնվել, ծնունդ առնել, 2.հայտնվել, առաջանալ, գոյանալ, ստեղծվել), *անրշան պիրիլ//պիրէլ//քրցիլ//քիցէլ* (1. ծնել, լույս աշխարհի հանել, ստեղծել, 2.հրապարակ հանել, մեջտեղ բերել) հարադրական բարդության *անրշան* հարադիրը՝ *աշխարհք բառից, ճուարան//ճուվարան//ճրվարան* (կթոց, դալար ճյուղերից հյուսված մեծ կողով) բառը, որը նախապես ունեցել է *թխսի ճտերը, ընտանի*

թռչունները պահելու տեղ նշանակությունը՝ ճավեր//ճիվեր (հավի ճտեր կամ ընտանի թռչուններ ընդհանրապես) բառից, տննանլ (կատաղել) եւ տննանծ (կատաղած) դերբայաձեւերը՝ դառնալ բայի դարձեալ անցյալ դերբայաձեւից, սըլպահանտ//սիլպանհանտ//սիլպիհանտ//սըլպիհանտ (ընտիր, մաքուր (ցորեն) բառը՝ սուրբ (մաքուր, հստակ, անարատ) եւ հատ (հատիկ, ունդ) բառերից կազմված սրբահատ նախավոր ձեւից):

92. Մարգարյան Ալ., **Գորիսի բարբառը**, Երեւան, 1975, 568 էջ

(Ներկայացվում է Գորիսի շրջանի բոլոր եւ Սիսիանի ու Ղափանի շրջանների սահմանամերձ որոշ բնակավայրերի խոսվածքների ամբողջության՝ Գորիսի բարբառի (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) ամբողջական համաժամանակյա (մի շարք դեպքերում նաեւ գրաբարի համեմատությամբ) ուսումնասիրությունը: Բաղկացած է ներածական մասից եւ երկու բաժնից: «Ներածության» մեջ (էջ 3-22) տեղեկություններ են տրվում բարբառի ընդգրկած տարածքների, բարբառի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների, նրանով գրառված նյութերի մասին, Ղարաբաղի բարբառից ունեցած տարբերությունների վերհանմամբ փորձ է արվում հիմնավորելու նրա ինքնուրույն բարբառ լինելու տեսակետը: Առաջին բաժինը բաղկացած է չորս մասից՝ «Յնչունաբանություն» (էջ 23-116), «Ձեւաբանություն» (էջ 117-237), «Բառագիտություն» (էջ 238-269), «Նմուշներ» (էջ 270-310): Առաջին մասում ներկայացվում են բարբառի հնչյունական համակարգը, շեշտի դրսեւորումները, ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների համաժամանակյա ու տարածամանակյա հնչյունափոխությունները, ինչպես նաեւ հնչյունների անկման, հավելման, կրկնության, դրափոխության դեպքերը: Երկրորդ մասում առանձին ենթաբաժիններով հանգամանորեն քննության են առնվում բոլոր խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսեւորումները: Առանձնակի ուշադրություն է դարձվում գոյականի հոգնակիակազմության, հոլովների ու նրանց կազմության, հոլովման, հոդառության, ածականի համեմատության աստիճանների, դերանունների հոլովման, դերբայների կազմության ու գործածությունների, բայի եղանակների ու ժամանակաձեւերի կազմության, բազմապատկական, կրավորական, պատճառական, անկանոն, պակասավոր բայերի, ժխտական խոնարհման, երկրորդական բաղադրյալ ժամանակների, կապերի հոլովառության եւն քննությանը: Երրորդ մասը նվիրված է բարբառի բառապաշարի շերտերի, իմաստափոխության ու բառակազմության քննությանը: Չորրորդ մասի առաջին բաժնում զետեղված են բարբառային նմուշներ մի շարք գյուղերի ու Գորիս քաղաքի խոսվածքներով: Երկրորդ բաժնում ներկայացվում են գրաբարից ավանդված (էջ 311-373), բարբառային (էջ 374-501), արեւելյան լեզուներից (էջ 502-544) եւ ռուսերենից (էջ 545-561) փոխառյալ բառերի բառացանկեր

(շուրջ 10000 միավոր): Մենագրությունն ունի նաեւ օգտագործված գրականության ցանկ (էջ 562-563):

93. Մարգարյան Ա., *Մի քանի տեղանունների ծագման մասին*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1988, N 4, էջ 123-130

(Կարելորելով հայոց տեղանունների ստուգաբանությունը եւ դրա դերը ոչ միայն գիտական-լեզվաբանական, այլեւ պատմական, աշխարհագրական, ազգագրական եւ այլ տեսանկյուններից՝ հեղինակը փորձում է պարզաբանել Հայկական ՍՍՀ Գորիսի շրջանի մի քանի բնակավայրերի անունների ծագումը: Արդյունքում *Գորիս* տեղանունը բխեցվում է *Գորայք* գյուղանվան (ի սկզբանէ տոհմանուն) հայցականի ձեւից (*Գորայս*) առաջացած *Կորես*//*Կօրէս*//*Կօրէս* բարբառային տարբերակից, *Ջանգեզուր* տեղանունը՝ *Ձագեձոր*//*Ձագաձոր* նախավոր ձեւից, *Խնածախ*//*Խաւնածախ* գյուղանունը՝ *խան* եւ *ծախ* բառերից, *Կոռնիձոր*//*Կոռնիձօր* գյուղանունը՝ *կոռնը* (բազուկ, թէւ) եւ *ձոր*//*ձօր* բառերից, *Սշնահանդ* հանդամասի անունը՝ *Միջնահանդ* (միջին-ա-հանդ) անվանումից, *Ջալա-հիր* հանդամասի անունը՝ արաբերենից փոխառյալ *ջավահիր* (զոհար, ադամանդ, շողակն) բառից, *Քարահունջ* գյուղանունը՝ գրաբարյան *քար* եւ *ունջ* (ծայր, ստորոտ, արմատ) բառերից):

94. Մարգարյան Ա., *Շինուհայր տեղանվան ծագման մասին*, «Ջանգեզուր», *Գորիս*, 1991, 21 մարտի, թիվ 35 (6982)

(Պատմական եւ լեզվական փաստերի քնության արդյունքում հեղինակը տալիս է Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի *Շինուհայր*//*Շնհեր*//*Շընըհեր* գյուղի անվան ստուգաբանությունը՝ այն բխեցնելով *շեն*//*շէն* (գյուղ) եւ *հայր*//*հէր* բառերից կազմված *Շինոյ հայր* սկզբնական ձեւից):

95. Մարգարյան Ա., *Ստուգաբանական հետախուզումներ*, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1985, N3, էջ 92-102

(Հնչյունաբանական եւ իմաստաբանական վերլուծությամբ ստուգաբանվում են հայերենի մի քանի բառեր, որոնցից որոշները գործածվում են Ղարաբաղի եւ Գորիսի բարբառներում: Դրանցից *լավ* (հորդ՝ տեղատարափ անձրեւ, հեղեղ) բառը բխեցվում է պարսկերենից փոխառյալ *seilab*//*silab* (հոսող ջուր՝ հեղեղ) բառից՝ որպէս վերջինիս հապավված մաս, *հէնց*//*հանց* (1.այնպէս, այն կերպով, 2.ուղղակի, իսկ եւ իսկ, 3.նույնիսկ) բառը՝ միջինհայերենյան *այնցեղ*//*հայնցեղ*//*հանցեղ* (այնպէս) բառից՝ *-եղ* հնչյունամասի անկումով, *պոպոզ* (սրածայր, սուր ծայրով վերջացող) բառը՝ դեռեւս չստուգաբանված եւ նույնպէս բարբառներին հատուկ *պոզ* (եղջյուր, կոտոշ) բառից՝ նրա պարզ կրկնությամբ (*պոզպոզ-պոպոզ*), *սնդու*//*սնտու* (գետնի երեսից հողի տակով դէպի թոնիրը տանող խողովակաձեւ անցք) բառը՝ *տուն*//*սին* (սնունդ, սնուցում) եւ *տու* (տվող) արմատներից):

96. Մարգարյան Ալ., *Ստուգաբանական մեկնություններ*, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1992, N 2, էջ 122-135, 1994, N 3, էջ 124-132

(Յեղիսակը ստուգաբանում է հայերենում գործածվող մի շարք բառեր՝ միաժամանակ այն կարծիքին չլինելով, թե դրանք անխտիր ճիշտ են ու անառարկելի: Քննության արդյունքում նաեւ Ղարաբաղի եւ Գորիսի բարբառներին հատուկ *զննմ* (վախ, սարսափ) բառը բխեցվում է պարսկերենից փոխառյալ *sahm* (երկյուղ) բառից, *ըրամա(ն)կ/ըրամա(ն)գ/ըրամա(ն)ք ըղնէլ/ինգէլ* (մարդու շարք անցնել, հրապարակում երեւելի լինել, ինչ-որ բանով նույնպես հայտնի դառնալ) հարադրությունը՝ *հրամանք* (հրամանագիր) *ընկնել* հարադրությունից, *քնափ* (շատ քնող, քնկոտ) բառը՝ *քուն* բառից եւ *արբենալ/արբել* բայի *արբ* արմատից), *ճպել* (աչքը թարթել) եւ *ճիպի-ճիպի անել* (աչքերը շատ անգամ արագ-արագ թարթել) բառերը՝ պահլավերեն *ճապուկ* (ճեպով, շուտ, արագ) բառի հետ ծագումնաբանորեն կապվող գրաբարյան *ճեպել* (շտապեցնել, փութացնել) բայից, *միլ* (գերան) բառը՝ պարսկերեն *mil* (ծող) բառից, *մղակ* (դուռ, դռան ներքին կողմը, շեմքի մուտքը) բառը՝ *մղել* (քշել, վարել, առաջ տանել, հրել) բայի *մուղ* արմատից եւ *-ակ* ածանցից, *շնթռնել/շնթռկել/շնթռտել* (մի տեղ երկար նստել մնալ, պառկել քնել (շների եւ մարդկանց մասին) բայը՝ *շուն* բառի *շուն* եւ *թառել* բայի *թռ* արմատներից: Այլ բառերի շարքում տրվում են նաեւ հեղիսակի կողմից Ղարաբաղի բարբառում գործածությունը չնշված *նան/նանա/նանե/նանի* (մայր, մայրիկ), *տկլոր* (բուլորովին մերկ, մերկանդամ), *փնթի/փնթե* (1.կեղտոտ, 2.տգեղ, չար եւ գեշ, 3.թափթփված, անփույթ) բառերի ստուգաբանական մեկնությունները, որոնցից առաջինը կապվում է հնդեվրոպական հիմք լեզվի *an-* (հոր կամ մոր մայր, տատ) ձեւից սերող *հան* (մեծ մայր), երկրորդը՝ *տիկ*, երրորդը՝ պարսկերենից փոխառյալ *panti* (վատ, անպետք, գեշ, փնթի) բառերի հետ):

97. Մարգարյան Ալ., *Ստուգաբանություններ*, Երեւան, 2015, 210 էջ

(Ամփոփվում են հեղիսակի՝ տարբեր ժամանակներում կատարած ու «Պատմաբանասիրական հանդես», «Բանբեր Երեւանի համալսարանի» եւ այլ պարբերականներում տպագրած հոդվածներում ներկայացրած ստուգաբանական մեկնությունները, որոնք մեծ մասամբ բարբառային բառերի (այդ թվում՝ Ղարաբաղի եւ Գորիսի բարբառներում գործածվող), ինչպես նաեւ՝ Սյունիքի եւ Արցախի որոշ տեղանունների ստուգաբանական ճշգրտումներ են կամ տակավին չստուգաբանված բառերի մեկնություններ):

98. Մարգարյան Ալ., *Տեղանվանական մեկնություններ*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1992, N1, էջ 133-139

(Պատմական եւ լեզվական փաստերի հանգամանալից քննությամբ

ստուգաբանվում են Հայաստանի Հանրապետության Սիսիանի, Գորիսի եւ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանների *Արավուս*, Գորիսի շրջանի *Խնձորեսկ* եւ *Խոզնավար* գյուղերի անունները, որոնցից առաջինը հեղինակը բխեցնում է պատմական *Արեւիք* տեղանվան հայցական հոլովածեւից (*Արեւիս*)՝ վերջինս էլ կապելով *արեւ* բառի հետ, երկրորդը՝ *Խնձորեակ* (խնձորի-ակ) նախածեւից, իսկ երրորդը՝ *խոզան* (անմշակ թողած կամ հասկերի ցողուններով պատած արտ) եւ *վար* (վարած տեղ) բառերից):

99. Մարգարյան Լ., ***Արդի լեզվավիճակը եւ իրականացվող լեզվաքաղաքականությունն Արցախում***, «Կրթությունը եւ գիտությունը Արցախում», *Երեւան, 2013, N 3-4, էջ 107-111*

(Ներկայացվում են Արցախում առկա արդի լեզվավիճակը եւ իրականացվող լեզվաքաղաքականությունը՝ առանձնացնելով լեզվական երկու միջավայրերի՝ գրական-պաշտոնականի եւ բարբառային-խոսակցականի ներդաշնակ իրացումը: Առանձին ուշադրություն է դարձվում Ղարաբաղի բարբառի վրա գրական հայերենի խիստ ազդեցությանը, ինչպես նաեւ հանրապետությունում «*Լեզվի մասին*» ԼՂՀ օրենքի դրույթների իրականացմանը, վեր են հանվում առկա շեղումներն ու բացթողումները:

Հոդվածը տպագրվել է նաեւ «*Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ. Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր*» /*Երեւան, 2013, էջ 29-35/* ժողովածուում:

100. Մարգարյան Լ., ***Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, 144 էջ***

(Ըստ լեզվական տարբեր մակարդակների՝ քննվում է Արցախի բանահյուսության լեզուն: Բաղկացած է «*Ներածությունից*» եւ չորս գլուխներից: «*Ներածության*» մեջ (էջ 4-17) հիմնավորվում է թեմայի արդիականությունը, անդրադարձ է կատարվում Արցախի բանահյուսության գրառման պատմությանը, բանահյուսական ժանրերի թեմատիկ ու լեզվական փոփոխություններին, բանահյուսական նմուշների գրավոր փոխադրության առանձնահատկություններին: Առաջին գլխի առաջին բաժնում՝ «*Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի արտահայտությունը Արցախի բանահյուսության մեջ*» (էջ 18-20), ներկայացվում են Ղարաբաղի բարբառի եւ բանահյուսության հնչյունական համակարգերի տարբերություններն ու դրանք պայմանավորող պատճառները, իսկ երկրորդ բաժնում՝ «*Արցախի բանահյուսության լեզվի բառապաշարի առանձնահատկությունները*» (էջ 20-49), քննվում են բանահյուսության բառապաշարի շերտերը, բառիմաստային առանձնահատկությունները, հոմանիշության դրսեւորումները: Երկրորդ գլխում՝ «*Քերականական իրողությունների առանձնահատկությունները բանահյուսության լեզվում*» (էջ

50-87), քննության են առնվում խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսեւորումները եւ շարահյուսական մի շարք առանձնահատկություններ, տրվում են նաեւ վիճակագրական որոշ տվյալներ, որոնք հստակորեն արտացոլում են Արցախի բանահյուսական ստեղծագործությունների քերականական կառուցվածքի առանձնահատկությունները: Երրորդ գլխում՝ «*Բանահյուսության լեզվի ոճական առանձնահատկությունները*» (էջ 88-109), վեր են հանվում տարբեր ժանրերի (*հանելուկ, առած-ասացվածք, խաղիկ, հեքիաթ*) ոճական առանձնահատկությունները, առանձնակի ուշադրություն է դարձվում դրանցում ոճական հնարանքների դրսեւորումներին: Չորրորդ գլխում՝ «*Գրականացումը բանահյուսության մեջ*» (էջ 110-126), քննության է առնվում Արցախի բանահյուսության մեջ գրականացման երեւոյթը, բացահայտվում են գրականացման գործընթացը խթանող գործոնները, պայմաններն ու պատճառները: Ոսումնասիրությունն ունի նաեւ «*Ամփոփում*» (էջ 127-130), «*Բառարան*» (էջ 131-135), «*Օգտագործված գրականության ցանկ*» (էջ 136-143): Աշխատությունը հեղինակի՝ 2008 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Լ. Յովհաննիսյան) լրամշակված տարբերակն է):

101. Սարգսյան Լ., ***Արցախ-Սյունիք տարածաշրջանի համանուն բնականոնների առնչությունները, «Զահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու (Երեւան, հունիսի 15-16, 2017)», Երեւան, 2017, էջ 260-273***

(Մասնագիտական գրականության մեջ եղած ստուգաբանությունների համեմատությամբ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Արցախի ու Սյունիքի *Առաջածոր, Ղաստակերտ, Դիցմայրի, Խնածախ, Նորաշենիկ* եւ *Քարահունջ* համանուն բնականոնների քննությունը՝ վերհանելով դրանց առաջացման հիմքերը (պատմաաշխարհագրական նույնական իրողություններ, վերաբնակեցման փաստով կամ գաղթով պայմանավորված իրողություններ), միաժամանակ բացահայտելով նաեւ առկա պատմահասարակական եւ տվյալ ժամանակաշրջանի իրողություններն ու դրանց նկատմամբ հասարակության ունեցած վերաբերմունքը եւ ընկալումները):

102. Սարգսյան Լ., ***Բարբառի պատմական զարգացման ընթացքը Արցախի բնականոններում, «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ.. Ջեկուցումների ժողովածու», Երեւան, 2014, էջ 83-96***

(Կարեւորելով տեղանունների մեկնությունը տվյալ ժողովրդի ու լեզվի ուսումնասիրության գործում՝ հեղինակը պատմական եւ լեզվական փաստերի վերլուծության միջոցով քննում է Արցախի մի շարք բնականոնների

(Արցախի, Թաղավարդ, Յաթերք, Վանք, Կուսապատ, Վարդաշատ//Որթնաշատ եւև) ծագման ու հետագա փոփոխությունների ընթացքը՝ փորձելով վերհանել այդ գործընթացում կատարված լեզվական ազդեցություններն ու պատմական պայմանների անդրադարձումները: Առանձնակի ուշադրություն է դարձվում թաղ, վանք, կերտ, շատ, շեն, ձոր//ծօր, քար, գոմ, հող բաղադրիչներով կազմված բնականություններին: Անդրադարձ է կատարվում նաեւ որոշ տեղանունների՝ խորհրդային ժամանակաշրջանում կատարված փոփոխություններին (կամայական վերանվանումներ, բառիմաստի թարգմանություններ, խորհրդային գաղափարախոսությունն արտահայտող տերմիններով կազմություններ եւև) եւ հետխորհրդային շրջանում հիմնադրված նոր բնակավայրերի անուններին):

103. Մարգարյան Լ., **Գրականացման՝ որպես լեզվական իրողության արժեքը բանահյուսության մեջ**, «Ազգ եւ ժառանգություն» համահայկական երիտասարդական գիտաժողով, Ստեփանակերտ, 26-30 սեպտեմբեր, 2006թ.», Ստեփանակերտ, 2006, էջ 154-161

(Քննվում են բարբառի հնչյունական եւ քերականական օրինաչափությունների վրա գրական լեզվի ազդեցությունները եւ բանահյուսության մեջ դրանց դրսևորումները, ներկայացվում են գրականացումը պայմանավորող գործոնները, բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործությունների գրականացվածության աստիճանները, բանասացների ու բանահավաքների միջամտությունները, տառադարձության խախտման պատճառները եւև: Քննությունը հիմնականում կատարվում է Ղարաբաղի բարբառի եւ բանահյուսության հիմքի վրա, չնայած հեղինակն այդ մասին չի հիշատակում):

104. Մարգարյան Լ., **Եղանակակիշ բառերի իմաստային ու գործառական առանձնահատկությունները Արցախի բանահյուսության լեզվում**, «Սեսրոպ Մաշտոց համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Ճուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, հոկտեմբերի 19-21, 2007թ.», Ստեփանակերտ, 2007, էջ 67-68

(Ներկայացվում են Արցախի բանահյուսական ստեղծագործություններում գործածված եղանակակիշ բառերի՝ վերաբերականների ու ձայնարկությունների իմաստային ու գործառական որոշ առանձնահատկություններ՝ մայրենիի համապատասխան եզր ունեցող եւ չունեցող վերաբերականների գործածություն, նորագիր նմուշներում փոխառյալ վերաբերականների արտամղում, ձայնարկությունների՝ առարկայական նշանակությամբ գործածություններ եւև: Բերվում են համապատասխան օրինակներ):

105. Մարգարյան Լ., **Իրանական Աբա/Ապատ բառարմատի իմաստագործառական բնութագիրը Արցախի բնականություններում**, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2016, պրակ1, էջ 114-117

(Անդրադառնալով Արցախի՝ մայրենի եւ փոխառյալ միավորներով բաղադրված տեղանունների կազմությանը՝ այլ հեղինակների ստուգաբանությունների ու ժողովրդական ավանդությունների համեմատությամբ տրվում է Արցախի *խնապատ*, *Կուսապատ*, *Ղազարապատ*, *Մուշկապատ* բնականունների մեկնությունը՝ փորձելով հիմնավորել, որ դրանք բաղադրված են իրանական *ապատ* արմատով: Ըստ հեղինակի՝ այն *խնապատ* եւ *Կուսապատ* բնականուններում դրսեւորվել է իր *ջրային տարածք* միջտեղանվանական, իսկ *Ղազարապատ* եւ *Մուշկապատ* տեղանուններում՝ *բնակության վայր* ընդլայնված տեղանվանական իմաստներով):

106. Մարգարյան Լ., **Համանունության պատմալեզվաբանական հիմքերն Արցախի բնականուններում**, «Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեպինի հիշատակին (1937-2016). 2-5 հոկտեմբերի, 2017. Հիմնադրույթների ժողովածու», Երեւան, 2017, էջ 91-93  
(Քննվում են Արցախի համանուն մի քանի բնականունների (*Մեծ շեն*, *Քարագուլի*//*Քըրըկըլոխ*, *Ակնաղբյուր*, *Վարդաձոր*, *Այգեստան*, *Ջրաբերդ*, *Վազգենաշեն՝ 18 բնակավայրերի նիշով*) առաջացման պատմալեզվական հիմքերն ու կենսագրական ուղիները, որոնց արդյունքում հեղինակը փորձում է հիմնավորել, որ տեղանվան համանունությունը ծագումնապատճառաբանությամբ ու լեզվաբանական սահմանումով չի նույնանում բառային համանունությանը):

107. Մարգարյան Լ., **Հնդեվրոպական արմատները Արցախի տեղանվանական համակարգում**, «Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով. 7-9 հոկտեմբերի, 2015 թ.. Ջեկուցումների ժողովածու», Երեւան, 2015, էջ 209-216

(Ներկայացվում են Արցախի տասնյակ տեղանուններում տեղ գտած հնդեվրոպական մի շարք արմատների (*ձոր*//*ծօր*, *թաղ*, *քար*, *սար*, *գոմ*//*կում*, *հող*, *ջուր*//*ճուր*, *աղբյուր*//*ախպուր*, *գետ*//*կէտ*, *տեղ*//*տըհ*) գործածության դեպքերն ու հաճախականությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում բնակավայրի տեղագրական առանձնահատկությունները նկարագրող բառամիավորներին (*մեծ*, *հին*, *նոր*, *վերին*//*յերէ*, *ներքին*//*նըհրքէ եւն*), ինչպես նաեւ անձնանվանահիմք տեղանուններին: Արդյունքում հեղինակը փորձում է հիմնավորել, որ Արցախի տեղանվանական համակարգի բնութագիրը հիմնավորապես համընկնում է հայկական ընդհանուր տեղանվանական համակարգի բնութագրին, եւ լեզվական բոլոր օրինաչափություններով էլ տեղանվանական ընդհանուր տիպն ու շերտագրումն են առկա, ինչը հերթական անգամ հավաստում է, որ Արցախը հայալեզու տարածք էր, հայկական մեկ միասնական ընդհանուր տարածքի մաս):

108. Մարգարյան Լ., **Հոմանիշությունը բանահյուսության մեջ**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2007, N 2, էջ 98-104

(Ներկայացվում են Արցախի բանահյուսության մեջ գործածված եւ Ղարաբաղի բարբառին հատուկ՝ *արեւելյան լեզուներից (հազվադեպ՝ նաեւ ռուսերենից) փոխառյալ-մայրենի միավոր* հակադրությամբ հոմանիշային զույգերի քննությունը եւ դրանց դրսեւորման դեպքերը: Ըստ իմաստային հարաբերակցության ու գործառական հաճախականության՝ առանձնացվում են նման խմբերի իմաստային որոշ կարգեր: Ամփոփելով քննության արդյունքները՝ հեղինակը փաստում է, որ չնայած փոխառյալ միավորները իրենց իմաստային-կիրառական առանձնահատկություններով ընդգրկում են գործածության լայն շրջանակներ, սակայն միտում չունեն լեզվական համակարգում կայունանալու եւ բարբառի ու բանահյուսության բառապաշարի բառակազմական համակարգի զարգացման ու կատարելագործման գործընթացում աստիճանաբար իրենց տեղը զիջում են գրական լեզվի միավորներին):

109. Մարգարյան Լ., ***Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան***, «Լուսարար», *Ստեփանակերտ*, 8.07.2017, թիվ 18-19 (484-485), էջ 6 (Գրախոսություն Ա. Սարգսյանի եւ Շ. Մինասյանի «***Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան***» (Երեւան, 2017, 568 էջ) աշխատության մասին: Ներկայացվում են բառարանի արժանիքները՝ բարբառի խոսվածքներում գործածական, նաեւ տեղական նշանակությամբ կիրառվող (կոնկրետ որեւէ գյուղում, ելթաշրջանում գործածվող) մեծաթիվ՝ շուրջ 15000 դարձվածային միավորների ընդգրկում, լեզվաոճական եւ իմաստաբանական հստակ եւ սպառիչ նշումներ ու բացատրություններ, տպագիր, ձեռագիր եւ բանավոր աղբյուրներից քաղված օրինակ-նախադասությունների մեջբերումներ, բարբառային գիտական տառադարձության սկզբունքների խստիվ պահպանում են: Գրախոսությունը՝ «***Ղարաբաղի դարձվածապաշարի համապարփակ ժողովածուն***» վերնագրով, տպագրվել է նաեւ «Կրթություն» /Երեւան, 12.07.2017, թիվ 29 (794), էջ 10/ թերթում):

110. Մարգարյան Լ., ***Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի արտահայտությունը Արցախի բանահյուսության մեջ***, «Հավելված ԱրՊՀ գիտական տեղեկագրի N1 (10). Մեսրոպյան գրերի գյուտի եւ Արցախում հայոց առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյակին նվիրված երիտասարդ գիտնականների միջազգային գիտական համաժողովի նյութերի ժողովածու», *Ստեփանակերտ*, 2005, էջ 64-66

(Արցախի բանահյուսության լեզուն համարելով Ղարաբաղի բարբառը՝ հեղինակը ներկայացնում է տարբեր բանահավաքների կողմից հրատարակված բանահյուսական ժողովածուների նյութերի հնչյունական անհամապատասխանությունները բարբառի հետ, վեր հանում դրանց՝ որոշակի գործոններով պայմանավորված օբյեկտիվ եւ սուբեկտիվ պատճառները: Առանձնակի ուշադրություն է դարձվում քմային եւ երկբարբառակերպ հնչյունների տառադարձության բացակայությանը: Առանձնացվում են

բանահյուսական նմուշների փոխադրության հնարավոր եղանակները (բարբառակիր բանասացից բարբառակիր, ոչ բարբառագետ բանահավաք, բարբառակիր բանասացից ոչ բարբառակիր, ոչ բարբառագետ բանահավաք, բարբառակիր բանասացից ոչ բարբառակիր, բարբառագետ բանահավաք) եւ դրանց արդյունքում առաջ եկած անհամապատասխանությունները):

111. Մարգարյան Լ., **Ղարաբաղի բարբառի ուսուցման անհրաժեշտությունը Արցախի հանրակրթական եւ բուհական կրթահամակարգում**, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն. ԼՂՀ եւ ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի կյութեր. Ստեփանակերտ, 4 նոյեմբերի, 2011 թ., Մեսրոպ Մաշտոց համալսարան», Երեւան, 2011, էջ 526-530

(Լեզուն եւ բարբառը համարելով տվյալ ժողովրդի մտածելակերպի ու աշխարհայացքը արտացոլող լեզվամտածողության համակարգ, պատմության, գիտական ու մշակութային կյանքի զարգացման գործընթացի ուղենիշ, էթնիկական ինքնապաշտպանության կարելուրագույն միջոց եւ կարելուրելով հայերենի տարածական տարբերակների, առավել եւս Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության ռազմավարական նշանակությունը՝ հեղինակը փորձում է հիմնավորել բուհական եւ ավագ դպրոցի ուսումնական ծրագրերում «Ղարաբաղի բարբառ» առարկան՝ որպես ընդհանուր կրթական առարկա, ընդգրկելու իր գաղափար-առաջարկությունը):

112. Մարգարյան Լ., **Մեծարժեք գործ**, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի լրատու», Երեւան, 2013, N2, էջ 248-250

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան» (Երեւան, 2013, 846 էջ) աշխատության մասին: Գնահատվում է բառարանի լեզվաբանական, բարբառագիտական, բանագիտական, մշակութապատմական արժեքը: Որպես արժանիքներ ներկայացվում են բառարանում Ղարաբաղի բարբառի հարուստ բառագանձի՝ բառերի, դարձվածների, կայուն բառակապակցությունների, ոճական արտահայտությունների (շուրջ 40000 միավոր) ընդգրկումը, ծագումնաբանական եւ քերականական նշումները, իմաստաբանական տեղաշարժերի ընթացքի վերահամարումը, գիտական տառադարձության խիստ հետետողությամբ տարբեր խոսվածքներում գործածվող տարբերակների ներկայացումը, վկայված օրինակների մեջբերումը, ներածության մեջ բարբառի ուսումնասիրության պատմության եւ օրինաչափությունների քննությունը եւ: Գրախոսությունը որոշ փոփոխություններով՝ «**Արցախցուն ու արցախյան պատմությանը պատշաճող արժանապատիվ նվեր**» վերնագրով, տպագրվել է նաեւ «Ազատ Արցախ» /Ստեփանակերտ, 15.09.2013, էջ 6/ թերթում):

113. Մարգարյան Լ., **Շաղկապների գործածության առանձնահատկությունները Արցախի բանահյուսական ստեղծագործություններում**, «Մեսրոպ Մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2007, N 1 էջ 138-147

(Ներկայացվում են Արցախի բանահյուսության տարբեր ժանրերի ստեղծագործություններում շաղկապների գործածության դեպքերը, համադասական եւ ստորադասական, բնիկ եւ փոխառյալ միավորների, շաղկապական ու շարահարական կառույցների հարաբերակցական հաճախականությունը եւ որոշ այլ առանձնահատկություններ: Առանձնակի ուշադրություն է դարձվում *ու//հու* շաղկապի դրսեւորմանը: Քննության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ նշված ստեղծագործություններում շաղկապական մեկ միավորի տիրույթն ավելի փոքր է, եւ գրական մեկ միավորի տիրույթում հաճախ ընդգրկվում են բարբառային մի քանի համանիշ միավորներ: Միաժամանակ նշվում է, որ շարահյուսական միավորների կապակցության ամենամեծ տիրույթը շարահարությունն է ընդգրկում):

114. Մարտիրոսյան Յ., **Սյունիք-Արցախ բարբառների ստուգաբանություն**, «Հայագիտություն. Սյունիք», Երեւան, 2016, թիվ 1, էջ 26-39

(Հայշվի առնելով Սյունիքի եւ Արցախի տարածքների բարբառներում բազմավանկ բառերի սկզբնավանկի ձայնավորի թուլացման հետեւանքով կատարված հնչյունափոխությունները՝ հեղինակը այլ լեզվաբանների մեկնաբանությունների համեմատությամբ փորձում է ներկայացնել բարբառային որոշ բառերի՝ *սըրանոց/սըրանուց* (ծիթահանք), *րէքնակ/ըրէքնակ/ըրիքնակ/ըրիհյնակ* (արեգակ), *ժըմաժանք/ըժըմնժննք/իժիմնժէնք* (իրիկնամուտ, մթնշաղ), *ճըռավանդ* (տանիքի հաստ գերաններ), *տըրհնէլ/տրիհննիլ* (հեւալ, շնչարգել լինել) եւն ստուգաբանությունները):

115. Մեծունց Բ., **Անվանական հոլովման առանձնահատկությունները Արցախ-Սյունիքի խոսվածքներում**, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1989, N 1, էջ 106-113

(Գրաբարի եւ աշխարհաբարի համապատասխան օրինաչափությունների հետ համեմատությամբ ներկայացվում են պատմական Արցախ-Սյունիքի բուն խոսվածքների անվանական հոլովման որոշ առանձնահատկություններ՝ ձայնավորող վերջավորվող բառերի, այդ թվում եւ *-gh* վերջածանցով գոյականների՝ *-ք*-ով հոգնակիակազմություն եւ *ք-ց* հերթագայությամբ թեքում, բաղաձայնահանգ բազմավանկ բառերի՝ *-նէ//նի* վերջավորությամբ հոգնակիակազմություն եւ խոսվածքների մեծ մասում *ի* հոլովմամբ թեքում, ընտանիք, գերդաստան ցույց տվող *-անք*, *-ունք* վերջավորություններով հավաքական անունների, ինչպես նաեւ եզակի թվում ներքին *օ* հոլովման ենթարկվող գոյականների, *ախճիկ*, *կընէկ*, *մարթ* բառերի հոգնակի ձեւերի եւ տեղի հատուկ անունների գրաբարյան հոլովման առանձնահատկությունների պահպանում, նույն

բառերի անորոշ եւ որոշյալ առումներով գործածությամբ պայմանավորված՝ սեռական-տրականում տարբեր թեքույթներով (*ի, ու*) հոլովում, ներքին *օ(ու)* հոլովման լայն կիրառություն, *ոջ* հոլովման խիստ սահմանափակում, որոշ բառերի տարածեւ հոլովումներ եւն)։

116. Մեծունց Բ., **Յոլովման ու խոնարհման առանձնահատկությունները Շաղախի ենթաբարբառում**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1974, N 3, էջ 86-91

(Շաղախի խոսվածքախումբը (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) դասելով հայերենի տարածական այն տարբերակների թվին, որոնց ձեւաբանությունը բավական հեռացել է հին հայերենի օրինաչափություններից, հեղինակը ներկայացնում է նրա հոլովման եւ խոնարհման համակարգում առկա մի քանի առանձնահատկություններ՝ բառի անորոշ կամ որոշյալ կիրառությամբ պայմանավորված՝ տարբեր թեքույթներով հոլովում, *ա* ձայնավորով վերջավորվող բառերի եզակի ուղղական, հայցական, բացառական, ինչպես նաեւ որոշյալ առման դեպքում *ի, է* ձայնավորներով վերջավորվող բառերի ուղղական, սեռական, տրական հոլովածեւերի համընկնում եւ միայն շեշտով տարբերակում, որոշ գոյականների՝ հատկապես հոգնակի թեք հոլովներում դրսեւորվող հոլովման բազմաձեւություն, համադրական եւ վերլուծական բացառականների կազմության տարբերություններ, *իսքը* անձնական դերանվան սեռական եւ *հու (ով)* հարցահարաբերական դերանվան տրականի հատուկ ձեւերի բացակայություն, անորոշ դերբայի բայական կիրառություն, որպես ընթացակցական դերբայ՝ անորոշի գործիականի գործածություն եւ որոշ դեպքերում դրանից ժամանակային ձեւերի բաղադրում, օժանդակ բայի, սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակների հատուկ ձեւերի բացակայություն, չեզոք սեռի որոշ բայերի՝ կրավորական *վ* ածանցով կազմությունների առկայություն, անորոշ դերբայով եւ *մէ(ր), մէք՛* մասնիկներով արգելական հրամայականի կազմություն եւն, որոնցով ենթաբարբառն առանձնանում է ինչպես հին եւ ժամանակակից հայերենից, այնպես էլ այլ բարբառներից)։

117. Մեծունց Բ., **Շաղախի բարբառի ձայնավոր հնչույթները**, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1973, N1, էջ 218-223

(Ներկայացնելով Շաղախի բարբառի (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառի) ձայնավոր հնչունները՝ հեղինակը փորձում է համաժամանակյա եւ տարածամասնակյա մոտեցումներով քննել դրանց, հատկապես գրական հայերենում չվկայված *ւն, ոն, օ, շեշտակիր ը, ը՛* հնչունների հնչույթային արժեքները, բացահայտել նրանց իմաստազատիչ հատկանիշները, որոշ ձայնավորների առաջացման ու գոյության պայմանները։ Յուրաքանչյուր ձայնավորի քննության դեպքում ներկայացնելով նվազա-

գույն հակադրության գույզեր՝ արդյունքում *ա, ան, է, շեշտակիր ը՞, ի, ու, ուն, օ, օ* ձայնավորները որակվում են որպես առանձին հնչույթներ, *ը-ն*՝ շեշտակիր *ը*-ի ենթահնչույթ, իսկ *ը՛-ն* շեշտակիր *ը*-ի արտասանական տարբերակ):

118. Մեծունց Բ., *Ճամշադին-Իջեանի խոսվածքի եւ Արարատյան ու Ղարաբաղի բարբառների փոխհարաբերությունները*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1985, N2, էջ 43-47

(Պատմական որոշ փաստերի վկայությամբ հավաստելով, որ Յայաստանի հնագույն գավառներ հանդիսացող Ճամշադինի, Կրասնոսելսկի, Իջեանի, Դիլիջանի բնակչության մի մասը բնիկ է, իսկ մյուս մասը Արցախի Ջրաբերդ, Խաչեն, Գյուլիստան գավառներից եւ այլ վայրերից տեղափոխված, ինչի արդյունքում Ճամշադին-Իջեանի խոսվածքը մի շարք օրինաչափություններով նույնանում է Արարատյան, այլ հատկանիշներով՝ Ղարաբաղի բարբառի հետ, հեղինակը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի կիրառմամբ պարզում է, որ նշված խոսվածքը Արարատյան բարբառից ունի 20 (17 միավոր), Ղարաբաղի բարբառից՝ 21 (18 միավոր) տարբերակիչ հատկանիշ: Արդյունքում, քանի որ տարբերակիչ հատկանիշների համարյա միեւնույն քանակով հեռանում է երկու բարբառներից, Ճամշադին-Իջեանի խոսվածքը որակվում է որպես միջին խոսվածք: Նույնը հեղինակը իր մեկ այլ ուսումնասիրության մեջ ներկայացնում է Ճամշադին-Դիլիջանի խոսվածքի համար («Ճամշադին-Դիլիջանի խոսվածքը» /Երեւան, 1989, էջ 3-9/):

119. Մելիքյան Գ., «Փիյաթաթախ փիլը դանդաղում». *Արցախի բարբառում մի քանի պարսկական փոխառությունների շուրջ*, «Արեւելագիտության հարցեր», Երեւան, 2016, N 12, էջ 236-239

(Ներկայացվում է Ղարաբաղի բարբառում գործածվող *փի* (ճարպ), *փիլ* (փիղ), *դանդաղ* (երկար եւ խոր փոս) բառերի ստուգաբանական քննությունը՝ արդյունքում հիմնավորելով, որ դրանք փոխառվել են դասական Նոր պարսկերենից: Ըստ հեղինակի՝ բարբառում վկայված զգալի թվով պարսկական փոխառությունների առկայությունը շատ բնական է, քանի որ Արցախը ոչ միայն աշխարհագրորեն անմիջապես հարեան է Իրանի հյուսիսային շրջաններին, այլեւ ապահովելով հայկական պետական ավանդույթի տեսականությունն ու շարունակականությունը՝ հատկապես մելիքությունների շրջանում ունեցել է բավական ակտիվ շփումներ նաեւ պարսկերենը որպես պաշտոնական գրագրության լեզու գործածող իրանական պետական եւ վարչական կառույցների հետ):

120. Մելիք-Ճահնազարեանց Կ., *Զունա-Տմբլա, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908, 500 էջ*

(Ղարաբաղի բարբառով գրված (տվյալ ժամանակաշրջանի տառա-

դարձությամբ, որոշ դեպքերում՝ նաեւ գրականացված) ֆելիետոնների ժողովածու, որն ընդգրկում է հեղինակի՝ առանձին գրքերով եւ պարբերականներում տարբեր տարիների տպագրած ֆելիետոնները: Առաջին գրքի ներածականում՝ «*Երկու խոսք*», խոսելով ժողովածուի լեզվի մասին, հեղինակը նշում է. «*Ներկայ ֆելիետոնների լեզուի մասին այս կասենք, որ այդ ոչ թե Ղարաբաղի այս ու այն գաւառի, օրինակ՝ Վարանդու, Խաչենի, Տիգրակի կամ Սիսիանի լեզուն է, այլ այդ գաւառաբարբառների յղկուածն ու կոկուածը, որ 70-80-ական թուականներին գործադրում էր Շուշի եւ Նոյն քաղաքացիական դիրքն ունէր բռնած, ինչ որ բռնած ունի այժմ կովկասեան գաւառաբարբառների մէջ մեր արդի աշխարհիկ գրական լեզուն*»: Ժողովածուի՝ Ղարաբաղի բարբառին հատուկ մեծ թվով բառեր ու դարձվածներ հետազայում տեղ են գտել բարբառային տարբեր բառարաններում եւ ուսումնասիրություններում: Երկրորդ գրքի վերջում կան նաեւ քերականական ծանոթություններ ու դժվարիմաց բառերի բացատրություններ):

121. Մէլե Ա., **Յ. Աճառյան - Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսության. Գ. Զննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901, Գ -198 էջ, «Յայագիտական հետազոտություններ», Երեւան, 1978, էջ 433-440**

(Ըստ արժանվոյն գնահատվում է Աճառյանի ուսումնասիրությունը՝ կարեւորելով նրանում տրված տեղեկությունների նշանակությունը թե՛ հայերենի պատմության եւ թե՛ ընդհանուր լեզվաբանության համար: Նշվում են նաեւ որոշ թերություններ՝ բարբառի տարածման սահմանների ոչ ճշգրիտ որոշում, օգտագործված աղբյուրների բացակայություն եւն: Միաժամանակ քննադատաբար մոտենալով աշխատության մէջ տրված մի քանի երեւոյթների քննությանը՝ հեղինակը այլ լեզուների, հայերենի որիշ բարբառների եւ գրաբարի համապատասխան երեւոյթների համեմատությամբ հանգամանորեն անդրադառնում է Ղարաբաղի բարբառի հնչյունական որոշ օրինաչափությունների, հատկապէս՝ բաղաձայնական եւ ձայնավորական համակարգերի զարգացմանը, քմայնացմանը եւ կատարում տարաբնույթ հնչյունափոխությունների վերաբերյալ կարեւոր դիտողություններ: Հոդվածն առաջին անգամ տպագրվել է «*Journal Asiatique*» պարբերականում /Փարիզ, 1902, էջ 561-571/):

122. Մեսրոպյան Յ., **Արմատական ածականների հոմանշությունը Ղարաբաղի բարբառում, «Յայ գրերի գյուտի եւ Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտա-ժողով. Զեկուցումների դրոյթներ. Հունիսի 2-5-ը, 2005թ., Ստեփանակերտ - Ամարաս», Երեւան, 2005, էջ 171-172**

(Ներկայացվում են ժամանակակից արեւելահայերենի մի շարք արմա-

տական ածականների՝ Ղարաբաղի բարբառում առկա համարժեքները, տրվում են դրանց հնչյունական, բառակազմական, իմաստաբանական եւ այլ դրսեւորումները:

123. Մեսրոպյան Յ., ***Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Երեւան, 2010, 320 էջ***

(Մասնագիտական գրականության, բանահյուսական ժողովածուների, «Հայերենի բարբառագիտական ատլասի» նյութերի հավաքման ծրագրով գրանցված նյութերի մեջ առկա համապատասխան բառերի, բառակապակցությունների, դարձվածների, նկարագրական արտահայտությունների հիման վրա առանձին բաժիններով ու ենթաբաժիններով հանգամանորեն քննության են առնվում հայերենի բարբառներում արմատական ածականների բարբառային հնչյունական, ածականական հոմանիշների բառակազմական, իմաստային-իմաստաբանական, գործառական տարբերակները, փոխաբերության դրսեւորումները: Ուշադրություն է դարձվում նաեւ բարբառագիտական աշխատություններում ածականի ուսումնասիրությանը, պարզ կամ արմատական ածականների առանձնացմանն ու համառոտ բնութագրին, բարբառներում հոմանշության դրսեւորման բնույթին եւ այլ հարցերի: Աշխատությանը կցված բառարանում ներկայացվում են հայերենի բարբառներում առկա ածականական զուգաբանությունների շարքերը (570 միավոր): Քննության մեջ եւ բառարանում այլ բարբառների շարքում ներկայացվում են քննության են առնվում նաեւ Ղարաբաղի բարբառի ու սրա մի շարք խոսվածքների (*Գորիս, Հաղրույթ, Սիսիան, Ղաջբուլաղ, Շահումյան, Զազլիկ, Վաղուհաս, Հարությունագոմեր, Կոճողուտ, Մարտակերտ, Կապան, Տումի, Քարահունջ, Խնածախ, Կոռնիձոր, Խնձորեսկ, Թալիշ, Շինուհայր, Հին Թաղլար, Սեյտուլան, Մեծ ջեն, Չափար, Ղազարահող, Պողոսագոմեր, Ճարտար, Հաթերք, Առաջածոր, Զանյաթաղ, Գառնաքար, Քոլատակ, Տոնաջեն եւն*) համապատասխան ձեւերը):

124. Մեսրոպյան Յ., ***Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Երեւան, 2016, 352 էջ***

(Նվիրված է հայերենի բարբառների կրոնակեղեցական իմաստային (թեմատիկ) խմբի բառապաշարի համակողմանի քննությանը: Բազմաթիվ բարբառագիտական ուսումնասիրություններից, բանահյուսական ժողովածուներից, բառարաններից, բարբառային ձեռագիր նյութերից, «Հայերենի բարբառագիտական ատլասի» նյութերի հավաքման ծրագրով գրանցված նյութերից, բանավոր խոսքից քաղված տվյալների հիմքի վրա համաժամանակյա, որոշ դեպքերում նաեւ տարածամանակյա մոտեցումներով համապատասխան գլուխներում հանգամանորեն քննության են առնվում մի շարք հարցեր՝ կրոնակեղեցական բառերը հին հայերենում եւ դրանց

անցումը բարբառներին, ընդհանուր գործածության կրոնական բառերի բարբառային բնութագիրը, քրիստոնեական հիմնական խորհրդանիշների անվանումների բարբառային դրսևորումները, կրոնակեղեցական տոների անվանումների բարբառային դրսևորումները. սստվածապաշտության վայրի եւ ծիսական պարագաների բարբառային անվանումները, նվիրապետությանն առնչվող անվանումների բարբառային դրսևորումները: Առանձնակի անդրադարձ է կատարվում իսկող առարկա բառերի, բառակապակցությունների, դարձվածների իմաստաբանությանը, իմաստափոխությանը, ծագումնաբանությանը, բառակազմությանը եւ: Այս կամ այն բառանվանումը քննելիս հեղինակը այլ բարբառների շարքում լուրջ ուշադրություն է դարձնում Ղարաբաղի բարբառի ու նրա մի շարք խոսվածքների (*Բոլնիս-խաչեն, Գորիս, Թբղլու, Զազիկ, Մադադիս, Քոլատակ, Գառնաքար, Եմիշճան, Կոռնիձոր, Բուզլուխ, Ղազանչի, Հարթերք, Զանյաթաղ, Քարազլուխ, Շուշի, Բերդաձոր եւն*) ձեւերին: Աշխատությունն ունի նաեւ ներածական մաս (էջ 7-18), որտեղ հեղինակն անդրադառնում է հարցի ուսումնասիրության պատմությանը եւ ուսումնասիրության սկզբունքներին, եզրակացություններ (էջ 303-320), օգտագործված գրականության ցանկ (էջ 322-351):

125. Մեսրոպյան Հ., **Հայրենակցական միությունները եւ հայերենի բարբառները**, «Էջմիածին», Էջմիածին, 2008, ապրիլ, էջ 87-93

(Ներկայիս հայրենակցական միությունները ըստ լեզվական, բարբառային հաղորդակցության բաժանելով չորս խմբի՝ հեղինակն առաջին խմբի («Հայրենակցական միություններ, որոնց անդամները պահպանել են բնօրրանը եւ հաղորդակցվում են մայրենի բարբառով») մեջ է ընդգրկում նաեւ «Արցախ», «Զրաբերդ», «Վարանդա», «Սյունիք», «Կյորես», «Տավուշ», «Սիսական» միությունները՝ անդրադառնալով դրանց մայրենի՝ Ղարաբաղի բարբառին ու նրա խոսվածքներին, դրանց տարածման սահմաններին, իսկ երրորդ խմբի («Միություններ, որոնք կորցրել են բնօրրանը, սակայն պահպանել են բարբառը») մեջ՝ նաեւ «Շահումյան-Գետաշեն» եւ «Բոլնիս խաչեն» (վերապահումով) միությունները):

126. Մինասյան Լ., **Արցախի Մարտունու շրջանի բաղադրյալ մանրատեղանունները**, «Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2004, էջ 83-85

(Ներկայացվում են Արցախի Մարտունու շրջանի մի շարք մանրատեղանուններ՝ դրանք դասակարգելով ըստ բաղադրիչների հարաբերությունների եւ կապակցման եղանակների: Ըստ հեղինակի՝ Մարտունու շրջանի մանրատեղանունների մեծ մասը երկբաղադրիչ է, սակայն կան նաեւ բազմաբաղադրիչ (հիմնականում երեք բաղադրիչով կազմված) միավորներ, որոնք կազմված են մանրատեղանուն+գերադաս անդամ (*Ղըզարա բաղէն ախպուր, Պիծի նահատակէն սար*) եւ անձնա-

նուն+գերադաս անդամ (*Սահակ քօխանց օջախ, Վառունց Բարուն տափ*) կաղապարներով):

127. Մինասյան Լ., **Արցախի Մարտունու շրջանի կրոնական բովանդակության մանրատեղանունները**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, հոկտեմբերի 19-21, 2007թ.», *Ստեփանակերտ, 2007, էջ 69-70*

(Ներկայացվում են Արցախի Մարտունու շրջանի՝ կրոնական բովանդակությամբ մի շարք մանրատեղանուններ (եկեղեցիների, վանքերի, ուխտատեղիների, մատուռների եւն անվանումներ), որոնք դասակարգվում են ըստ ծագման աղբյուրի, իմաստային եւ կառուցվածքային սկզբունքների: Հոդվածը որոշակի փոփոխություններով տպագրվել է նաեւ «Մեսրոպ Մաշտոց համալսարան. Լրատու» /Ստեփանակերտ, 2007, N1, էջ 149-151/ հանդեսում):

128. Մինասյան Լ., **Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների բառագիտական քննությունը**, «Հավելված ԱրՊՀ գիտական տեղեկագրի N1 (10). Մեսրոպյան գրերի գյուտի եւ Արցախում հայոց առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյակին նվիրված երիտասարդ գիտնականների միջազգային գիտական համաժողովի նյութերի ժողովածու», *Ստեփանակերտ, 2005, էջ 59-62*

(Արցախի Մարտունու շրջանի՝ իր գրառած մանրատեղանունները ըստ ծագման (*բնիկ հայերեն արմատներով կազմված, փոխառություններով կազմված*) ու կազմության (*պարզ-արմատական, բարդ, ածանցավոր, բաղադրյալ*) բաժանելով խմբերի՝ հեղինակը քննության է առնում դրանք՝ որոշները բաժանելով ենթախմբերի: Առավել ուշադրություն է դարձվում բաղադրյալ մանրատեղանուններին, ներկայացվում են դրանց կաղապարները, կապակցման եղանակները, բաղադրիչների հարաբերությունը, խոսքիմասային պատկանելությունը, ծագումը եւն):

129. Մինասյան Լ., **Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների իմաստային դասակարգումը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», *Ստեփանակերտ, 2007, N 2, էջ 105-109*

(Ըստ իմաստային դասակարգման առանձնացնելով Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների մի քանի խմբեր (ջրանուններ, սրբավայր-մանրատեղանուններ, դաշտանուններ, լեռնանուններ)՝ հեղինակը ներկայացնում է դրանցից յուրաքանչյուրում ընդգրկված միավորների ծագման աղբյուրը եւ բառակազմական կաղապարները՝ համաձայն բաղադրիչների իմաստային դաշտի պատկանելության, հարաբերությունների եւ կապակցման եղանակների: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան օրինակներ):

130. Մինասյան Լ., **Գունանունները Մարտունու շրջանի մանրատեղանուններում**, «Ժողովրդավարության կայացումը հետխորհրդային շրջանում. Հիմնախնդիրներն ու հեռանկարները. Միջազգային գիտաժողովի նյութեր, մայիսի 21-22, 2010թ., Ստեփանակերտ, Մեսրոպ Մաշտոց համալսարան», Երեւան, 2010, էջ 333

(Ներկայացվում են Արցախի Մարտունու շրջանի երկբաղադրիչ մանրատեղանուններում որպես տեղանվանահիմք (իբրեւ որոշիչ) հանդես եկեղ որոշ գունանուններ (սիպտակ, ալի, աղ, կարմուր, կապուտ, սըվըկյարի, սարու), բերվում են համապատասխան օրինակներ (Կարմուր քար, Կապուտ քըհրծ, Ալի խութ, Աղբուլա, Սարու ախպուր, Սըվըկյարին ծով):

131. Մինասյան Լ., **Ձայնավորների հնչյունափոխությունը Մարտունու շրջանի մանրատեղանուններում**, «Ազգ եւ ժառանգություն» համահայկական երիտասարդական գիտաժողով. Ստեփանակերտ, 26-30 սեպտեմբեր, 2006թ.», Ստեփանակերտ, 2006, էջ 148-154

(Ներկայացվում են Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների բաղադրիչներում ձայնավորների կրած տարաբնույթ հնչյունափոխությունները, յուրաքանչյուրի դեպքում բերվում են բազմաթիվ օրինակներ):

132. Մինասյան Լ., **Նյութական իմաստ չունեցող բառերը Ղարաբաղի բարբառում**, «Հայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ., Թեգիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 19

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառում գործածվող կապերը, շաղկապները, եղանակավորող բառերը եւ ձայնարկությունները, անդրադարձ է կատարվում դրանց տեսակներին, գործածության դեպքերին եւ արտահայտած իմաստներին):

133. Մինասյան Շ., **Անվանական դարձվածային միավորները Ղարաբաղի բարբառում**, «Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին նվիրված «Գիտության եւ մշակույթի հիմնահարցերն Արցախում» հանրապետական գիտաժողովի նյութեր (17-18 նոյեմբերի, 2000թ.)», Ստեփանակերտ, 2000, էջ 94

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառի գոյականական, ածականական, բայական, մակբայական եւ եղանակավորող դարձվածային միավորների տեսակները, դրանց բաղադրիչների իմաստային կապերը եւ կապակցման եղանակները):

134. Մինասյան Շ., Բաբայան Ն., **Սակբայական եւ եղանակավորող դարձվածային միավորները Ղարաբաղի բարբառում**, «Հայ բարբառագիտության միջազգային համագումար՝ 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ.. Թեգիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 21

(Ըստ կազմության եղանակների եւ բաղադրիչների քանակի՝ ներկա-

յացվում են Ղարաբաղի բարբառի մակբայական եւ եղանակավորող դարձվածային միավորները: Դրանց շարքում առանձնակի անդրադարձ է կատարվում միազագաթ դարձվածներին):

135. Մինասյան Շ., **Բազմիմաստությունը եւ համանունությունը Ղարաբաղի դարձվածներում**, «Կրթությունը եւ գիտությունը Ղարաբաղում», Երեւան, 1997, N 2, էջ 66-70

(Ղարաբաղի բարբառի բազմիմաստ դարձվածները քննվում են ըստ դարձվածի բազմիմաստության առաջացման պատճառների, որոնցից նշվում են միաժամանակյա թույլ եւ ուժեղ վերաիմաստավորումը, դարձվածի բաղադրիչների բազմիմաստությունը: Համանուն դարձվածները եւս ներկայացվում են ըստ համանունության առաջացման հիմունքների: Ըստ քննության՝ համանուն դարձվածը կարող է առաջանալ բազմիմաստ դարձվածից իմաստային կապի մթազնման արդյունքում: Համանունություն կարող է առաջացնել տարբեր բաղադրիչների տրամաբանորեն շեշտվելը, նաեւ դարձվածի կազմում համանուն բառ լինելը:

136. Մինասյան Շ., **Լեզվաարտահայտչական միջոցների դրսեւորումը Ղարաբաղի բարբառի դարձվածներում**, «Արցախի պետական համալսարան. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ I, էջ 246-250

(Դարձվածների ծագումը կապելով լեզվամտածողության զարգացման բարձր մակարդակի հետ, երբ լեզուն վերացարկումներ կատարելու ունակություններ է ձեռք բերում, հեղինակը քննում է լեզվաարտահայտչական տարբեր միջոցների (փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, շրջասույթ, չափազանցություն, նվազասույթ, հեզնանք բազմաշաղկապություն, դիմառնություն եւն) դրսեւորումները Ղարաբաղի բարբառում, ներկայացնում դրանց տեսակները եւ առաջացման հիմքերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում փոխանունության հիման վրա, հատկապես մարմնի անդամների անուններով կազմված դարձվածներին):

137. Մինասյան Շ., **Հաղորդակցական դարձվածները Ղարաբաղի բարբառում**, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1999, N 1, էջ 106-112

(Ժամանակակից հայերենի նմանատիպ դարձվածների հետ համադրության եւ հակադրության միջոցով քննվում են Ղարաբաղի բարբառի հաղորդակցական արժեք ունեցող դարձվածները: Որպես բարբառի հաղորդակցական դարձվածի տարբերակիչ հատկանիշներ՝ նշվում են փոխակերպման հնարավորությունը եւ նախադասության անդամների համեմատաբար ազատ շարադասությունը: Հաղորդակցական դարձվածների տարատեսակները ներկայացվում են տարբեր հիմունքներով՝ ըստ կառուցվածքային ձեւավորվածության, ըստ հնչերանգային առանձնահատ-

կությունների, ըստ կազմության, ըստ գլխավոր անդամների առկայության-բացակայության: Միաժամանակ քննվում են նաեւ միակազմ եւ բարդ կառուցվածք ունեցող դարձված-նախադասությունները: Վերջիններս, ըստ հեղինակի, ի հակադրություն գրական հայերենի, բարբառում բազմաբաղադրիչ են եւ հոդվածում ներկայացվում են համադասական եւ ստորադասական տարբեր հարաբերություններ արտահայտող կառույցներով: *Յոդվածը ավելի ամփոփ ձեւով տպագրվել է նաեւ հետագայում /«Յոդվածների ժողովածու. Նվիրվում է հայ գրերի գյուտի եւ Ամարասի դպրոցի 1600-ամյակին. ԱրՊԳ», Ստեփանակերտ, 2005, էջ 36-40/):*

138. Մինասյան Շ., *Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007, 128 էջ*

(Ներկայացվում է Ղարաբաղի բարբառի դարձվածների ամբողջական եւ բազմակողմանի քննությունը: Աշխատության սկզբում առանձին բաժիններով («Երկու խոսք» (էջ 3-5), «Յարցի պատմությունից» (էջ 6-10), «Ղարձվածի ըմբռնումը եւ դարձվածաբանությունը որպես լեզվաբանական գիտակարգ» (էջ 11-17), «Տառադարձության հարցը» (էջ 18-20) համապատասխանաբար անդրադարձ է կատարվում նյութի ընտրությանը, հարցին առնչվող գրավոր աղբյուրներին, օտար եւ հայ լեզվաբանության մեջ դարձվածի ըմբռնման եւ դասակարգման վերաբերյալ եղած կարծիքներին, օգտագործված գրավոր աղբյուրների լեզվին ու տառադարձությանը: Բուն աշխատանքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում՝ «Ղարձվածների դասակարգումը» (էջ 21-77), անդրադառնալով տարբեր լեզվաբանների կողմից կատարված դասակարգումներին՝ հեղինակը, ըստ հաղորդակցական արժեքի, ներկայացնում է Ղարաբաղի բարբառի դարձվածային միավորների դասակարգումը (*անվանական դարձվածային միավորներ, հաղորդակցական դարձվածային միավորներ*)՝ առանձին ենթաբաժիններով հանգամանորեն քննելով գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող դարձվածային միավորները եւ հաղորդակցական դարձվածները, դարձվածային թերի նախադասությունները, բարդ կառուցվածք ունեցող դարձվածային նախադասությունները, դրանց կառուցվածքային տիպերը: Երկրորդ մասում՝ «Բառիմաստային մի շարք երեսույթների դրսևորումը Ղարաբաղի բարբառի դարձվածներում» (էջ 78-99), քննության են առնվում բազմիմաստության, համանունության, հոմանիշության, հականիշության դրսևորումները բարբառի դարձվածներում, ինչպես նաեւ միայն դարձվածներում պահպանված բառերն ու բառաձեւերը: Երրորդ մասը՝ «Լեզվարտահայտչական միջոցների դրսևորումը դարձվածներում» (էջ 100-115), նվիրված է բարբառի դարձվածներում լեզվարտահայտչական միջոցների (*փոխաբերություն, փոխանունություն, խորհրդանշան, համեմատություն, շրջասություն, չափազանցություն եւ նվազասույթ, հեզնանք, բազմաշաղկապություն եւ անշաղկապություն, դիմառնություն,*

գեղջում) ու դրանց տարատեսակների քննությանը: Աշխատությանը կցված են նաեւ ծանոթագրություններ (էջ 116-119) եւ օգտագործված գրականության, աղբյուրների, բառարանների ցանկեր (էջ 120-124): Աշխատությունը հեղինակի՝ 1999 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Աբրահամյան) լրամշակված տարբերակն է: Ատենախոսությունը, որը պահվում է նույն ինստիտուտի գրադարանում, որպես հավելված ունի նաեւ Ղարաբաղի բարբառի դարձվածների բացատրական բառարան (շուրջ 3000 միավոր):

139. Մինասյան Շ., **Ղարաբաղի բարբառի դարձվածների բառիմաստային առանձնահատկությունները**, «Հայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ. Թեզիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 20

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառի բազմիմաստ, համանուն, հոմանիշ եւ հականիշ դարձվածները: Բազմիմաստ եւ համանուն դարձվածները քննվում են ըստ նրանց առաջացման պատճառների, հոմանիշ դարձվածները՝ ըստ երկանդամ եւ եռանդամ կառույցների, հականիշ դարձվածները՝ ըստ կառուցվածքի եւ բաղադրիչների քանակի: Որպես հետաքրքիր իրողություն՝ ներկայացվում է ներդարձվածային հականիշությունը):

140. Մինասյան Շ., **Ղարաբաղի բարբառի թռչնանունները**, «Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2004, էջ 28-31

(Թռչնանունների ուսումնասիրությունը կարելու էրելով բառապաշարի իմաստային քննության ամբողջացման տեսանկյունից՝ հեղինակը ներկայացնում է Ղարաբաղի բարբառի թռչնանունների բառակազմական կառույցները՝ պարզ, ածանցավոր, բարդ (համադրական եւ վերլուծական): Անդրադարձ է կատարվում թռչնանունների բառիմաստային առանձնահատկություններին: Հատկապես շեշտվում է համեմատության արժեք ունեցող կապակցություններում նրանց արտահայտած փոխաբերական իմաստը, որն էլ պատճառ է դառնում նրանց՝ դարձվածների բաղադրիչ դառնալուն: Հենվելով տարբեր լեզվաբանների ուսումնասիրությունների վրա՝ տրվում է նաեւ Ղարաբաղի բարբառում գործածական մի քանի թռչնանունների ստուգաբանությունը):

141. Մինասյան Ս., **Անձնանունները Չափարի տեղանքում**, «Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին», Ստեփանակերտ, 2009, պրակ 1, էջ 9-11

(Լեզվական տարբեր մակարդակներում (հնչյունաբանական, բառագիտական, քերականական) համաժամանակյա եւ տարաժամանակյա հայեցակետերով քննվում են Արցախի Մարտակերտի շրջանի Չափար

գյուղում գործածված ու գործածվող անձնանունները: Ըստ հեղինակի՝ դրանք հայերենին հատուկ լեզվական իրողություններ են՝ իրենց մասնակի բարբառատիպ տարբերակներով ու սակավ նորաբանություններով):

142. Մինասյան Ս., **Արցախի Հակառակաբերդ տեղանքը, անվան տարբերակներն ու ստուգաբանությունը**, «ԱրՊՀ հայագիտական հանդես», *Ստեփանակերտ, 2010, N 1, էջ 5-13*

(Պատմական աղբյուրների վկայակոչմամբ նկարագրվում են Արցախի Մարտակերտի շրջանում գտնվող Հակառակաբերդ ամրոցը եւ նրա շրջակայքը: Փորձ է արվում ներկայացնելու *Հակառակաբերդ* անվան ու տարբեր ժամանակներում նրա տարբերակների (*Հկռապերթ, Բերդ/Պերթ, Չափարի բերդ, Հայկաբերդ, Ղալա, Շարմաղ ըխճկա ծուր, Աստղիկի դիցարան*) ստուգաբանությունը, ըստ որի՝ *Հակառակաբերդ/Հկռապերթ* անունը կազմված է *հակ* (հակառակ) ածանցից, *առ* (դեպի) նախդիրից, *ակն* (աչք) բնիկ հայերեն արմատից, *բերդ* ասորական փոխառությունից եւ նշանակում է *բերդից աչքի առաջը տեսնել՝ հսկել եւ հակառակել՝ դիմակայել յուրաքանչյուր ոտխի, Հայկաբերդը՝ Հայկ Նահապետի անունից, Չափարի բերդ* անվանումը՝ սերում է արեւելյան լեզուներից փոխառյալ *չափար//չափառ* (1.հզոր, ահավոր, 2.ցանկապատ, 3.սուրհանդակ, բանբեր եւ նրանց հանգրվանելու տեղ) բառից, *Ղալա* անվանումը՝ նույն լեզուներից փոխառյալ *ղալա//ղալե* (բերդ, ամրոց) բառից, *Շարմաղ ըխճկա ծուր* անվանումը՝ *Աստղիկ դիցուհու* անունից, իսկ վերջինս էլ՝ *աստղ* բառից):

143. Մինասյան Ս., **Արցախ/Ղարաբաղ բառերի ստուգաբանությունը եւ նրանց լեզվաոճական կիրառությունը Հոլի. Շիրազի չափածոյում**, «Արցախի պետական համալսարան. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», *Ստեփանակերտ, 2016, պրակ I, էջ 242-245*

(Ներկայացվում է տարբեր հեղինակների կողմից տրված *Արցախ* եւ *Ղարաբաղ* անունների ստուգաբանությունը՝ միաժամանակ անդրադառնալով Հ. Շիրազի պոեզիայում, հատկապես «Ողբ Ղարաբաղի» բանաստեղծության մեջ այդ բառերի լեզվաոճական կիրառություններին: Արդյունքում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ *Արցախը* վարչատարածքային, իսկ *Ղարաբաղը* էթնիկական բնիկ հայկական ծագման բառեր են, որոնցից առաջինը սերում է *Արծախ//Արդախ//Ուրդեխե//Ատախունի//Արծախա աշխարհի//Արցախամար աշխարհի//Օրխիստենա//Օրխիստինե* հնդեվրոպականից, իսկ *Ղարաբաղը*՝ հայկական *կարա//դարա (ցեղ)* եւ *բալ//բաղ* (ցեղանուն) բառերից՝ նշանակելով *կարայի//դարայի ցեղ*, եւ կապ չունի *Սեւ այգի* սխալ հասկացության հետ):

144. Մինասյան Ս., **Արցախյան արձակագիրների լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ**, *Ստեփանակերտ, 1997, 52 էջ*

(Առանձին ենթաբաժիններով քննվում են Արցախի ավագ սերնդի

արձակագիրներ Սարգիս Աբրահամյանի, Իսահակ Ալավերդյանի, Բագրատ Ուլուբաբյանի, Վազգեն Օսյանի, Մաքսիմ Յովհաննիսյանի արձակ ստեղծագործությունների լեզվաճակատի մի շարք առանձնահատկություններ: Դրանց շարքում առանձնակի ուշադրություն է դարձվում հնչյունական եւ բառապաշարային այն յուրահատկություններին, որոնք պայմանավորված են գրողների մայրենի՝ Ղարաբաղի բարբառի օրինաչափություններով, ինչպես՝ ֆ-ի փոխարեն փ-ի գործածություն (*ցելափան, տելեփոն, փշշացնել, Ա-ից մինչեւ Փ*), հնչյունի հավելում (*հավարա, հինչ, հնգեր, հայրոպլան*), հնչյունի անկում (*քացի, բրիշում, երակացու*), բարբառային, այդ թվում՝ տարբեր ծագման բաղադրիչներից կազմված բառեր ու հարադրություններ (*միսրի, թալակ, ծկթել, ճղուպուր, պուժուժ, բեդասլ, գինքը, խլեղ, չին, կածոկ, խոդ տալ, մաբիլիզավատ անել*) եւ դարձվածներ (*ցաքի փուշ, ալավ-ալավ անել, ռեխահաչ տալ, ժաղա անել, տուզ տալ, հավաքտեղակ անել, էյնը գալ, խախալ-խախալ անել, կապած դանա, կռո ճղուպուր, բոշ բողագ*), արաբերենից, պարսկերենից, թուրքերենից, ռուսերենից եւ այլ լեզուներից կատարված փոխառություններ (*ալավ, գաղար//ճաղաչ/ջամ, ռուզի, լազաթ, արխ, չուլխ, գուբեռնի, շալթայ-բալթայ, պիլեն*), կրճատ հատուկ անունների (*Սաքի, Արութ, Մոսի, Վանես*) կիրառություններ են): Այդ երեւոյթներին հեղինակն անդրադարձել է նաեւ Նույն վերնագիրը կրող հոդվածում /«*Յողվածների ժողովածու. նվիրվում է հայ գրերի գյուտի եւ Ամարասի դպրոցի 1600-ամյակին. ԱրՊՅ*», Ստեփանակերտ, 2005, էջ 32-36/):

145. Մինասյան Ս., **Գոմ հասկացություն բաղադրիչով տեղանունները Յակառակաբերդի շրջակայքում (Չափար, Մարտակերտի շրջան)**, «*Յայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ.. Թեգիսներ*», Ստեփանակերտ, 2001, էջ 22

(Ներկայացվում են Արցախի Մարտակերտի շրջանի Յակառակաբերդ տեղանքի շրջակայքի այն մանրատեղանունները, որոնք կազմված են *գոմ//կում* բաղադրիչով (*Յըզներեն կումերը, Վըրթըզարանց կումըտեղեր, Յինասին կումեր, Ղուզլուվեն կումեր, Կալերին կումեր*) կամ դրա հոմանիշ (*փիրմա, աղըլ, փայա, դալ*) փոխառություններով (*Աստեն փիրման, Յըվերեն փիրման, Աղլութալա, Դաշաղըլ, Փայատեր, Փիրփայա, Շենքի դալը*) են):

146. Սիրգոյան Ե., **Բարբառային բառաշերտը Տմբլաչի Խաչանի ֆելիետոններում**, «*Յայոց լեզվի հարցեր (հոդվածների ժողովածու), ԱրՊՅ*», Ստեփանակերտ, 2006, էջ 44-47

(Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) ֆելիետոններում գործածված բառապաշարը պայմանականորեն բաժանելով ենթաշերտերի՝ հեղինակը ներկայացնում է դրանցում գործածված եւ Ղարաբաղի բարբառին հատուկ մի շարք բառեր (*գըրլթորոս, բեով, մկնըմանդիլ, պըզկաթան*,

կրաժմունք, ըռափակ, ցունձըխնը, ճղուպուր եւն) եւ դարձվածներ (խտը նի կենալ, ծիվսը ճնանչել, գառի կեալ)՝ փորձելով տալ դրանցից որոշների ստուգաբանությունը):

147. Միրզոյան Ե., **Գրաբարյան բառածեւերի գործառույթը Ղարաբաղի բարբառի բառային կազմում**, «Յայոց լեզվի պատմության հարցեր. Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի գեկուցումներ, 15-18 օգոստոսի, 2008 թ.», Ստեփանակերտ, 2008, էջ 97-101

(Ներկայացվում են գրաբարից ավանդված, ինչպես նաեւ մատենագիտությամբ չավանդված մի շարք բառեր եւ բառածեւեր (փըսպարել, փըրտակել, ծըհան, քաշկ, դօրփեր, կըխտըկօռնը, փուրփուտ, անդէմնը, ինքնավըհ, պէրուր, իրփըվէրի, կոծ, ճռաքել, հանգ, հէտի, կէց, կէց տալ, քնավ ընցնել, վըհնը կաց եւն), որոնք գործածվում են Ղարաբաղի բարբառում եւ ենթարկվել են հնչյունափոխական տարբեր երեւոյթների՝ որոշ դէպքերում ձեռք բերելով լրացուցիչ կամ նոր իմաստներ: Առանձնակի ուշադրոյթուն է դարձվում բարբառում պահպանված գրաբարյան քերականական որոշ ձեւերին՝ հոգնակի գործիականի -ոք վերջավորությամբ հոլովածեւերի կիրառոյթուն եզակի գործիականի (աչուք, ծէռուք, կօլուք, վըհտուք, օսուք) եւ ածականի նշանակությամբ (խէլունք), անձներական թվականների (իրէքան, չուրէքան), հայցականի գ եւ ի նախդիրների (գինքը, գիրավ, պըրտիէր, պըրտըտուս) առկայոյթուն եւն):

148. Միրզոյան Ե., **Գրաբարյան բառերը եւ ձեւաբանական կաղապարները Մելիք-Շահնագարյանի (Տմբլաչի Խաչան) բարբառային ստեղծագործոյթուններում**, «Կրթոյթունը եւ գիտոյթունը Արցախում», Երեւան, 2004, N 5-6, էջ 172-183

(Առանձին պարբերոյթուններով ներկայացվում են Ղարաբաղի բարբառին հատուկ եւ Կ. Մելիք-Շահնագարյանի ստեղծագործոյթուններում, հատկապէս «Զուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուում գործածված գրաբարյան մի շարք բառեր ու արտահայտոյթուններ (ըշկապէց, պիիր, հըղօկ, թուրուն, կըխտըկօռնը, կէռթնուկ, հըրիշտրակ, բիդի, հըղօղ, կըլխըյէր, մին, չօրք), գրաբարյան արմատներից կազմված ածանցավոր եւ բարդ բառեր (անիրէս, ըղվըսօթուն, մըզմագուտ, կըթնատու, տըղնըկօթած, հղէ ընգնել, մըննան ընգնել, աչք ածել, աչքերը կալվիլ), անձներական թվականներ (էրկուքէան, իրէքան), դերբայական ձեւեր (անցյալ, գրկյալ, ըրմընալի), ք-ով կազմված հոգնակի ձեւեր (տղերք, մըծըմըծոնէք, վարձք, կնանէք), հոգնակի սեռականի՝ ց-ով կազմոյթուններ (խուխոցը, հնգերոնցը, մարթոցը), ու հոլովիչով թէքված ձեւեր (ըրծեու, բեուլու, պադարաքու), գրաբարածեւ հոլովման քարացած ձեւեր (կոլուքը, վէտուքը, օսուքը, տըհնը), ս-ով հայցականի ձեւեր (խաղս ինիլ, ծառս ինիլ), գ, առ նախդիրների կիրառոյթուններ (գիրավ, գինքը, առիս), վերջնահանգ և-ով

միավանկ բառեր (*անդէմը, տօռնը, մուկնը, յէզնը*) եւ: Ուշադրություն է դարձվում նաեւ գրաբարում չավանդված հնաբանություններին եւ գրաբարյան որոշ բառերի կրած իմաստափոխությանը):

149. Միրզոյան Ե., **Իմաստափոխությունը Կ. Մելիք-Շահնազարյանի «Զուռնա Տմբլա» երկում, «Յողվածների ժողովածու. Նվիրվում է հայ գրերի գյուտի եւ Ամարասի դպրոցի 1600-ամյակին. ԱրՊՅ», Ստեփանակերտ, 2005, էջ 40-43**

(Կ. Մելիք-Շահնազարյանի «Զուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուից բերված բնագրային օրինակներով վերհանվում են գրական հայերենի, ժողովրդախոսակցական լեզվի եւ որոշ բարբառների հետ ընդհանուր մի շարք բառերի կրած իմաստափոխությունները Ղարաբաղի բարբառում, ինչպես՝ *փըռնել* (1.ձեռքի մեջ առնել, 2.հաշիվ պահանջել, 3.որսալ, 4.վարձել, 5.պտուղ բռնել, 6.հանդիմանել, 7.կարողանալ պահել), *ցունծուխնը* (արեւի առաջին ճառագայթները), *ճըռաքել* (պտուղներով բռնավորվել), *կեռեք* (1.պճեղ, կտոր, 2.ջրադացքարի ատամներ) եւն):

150. Միրզոյան Ե., **Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաջի Խաչան) «Զուռնա Տմբլայի» բառապաշարի քննության մի քանի հարցեր, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2004, N 1, էջ 100-104**

(Արժեւորելով Կ. Մելիք-Շահնազարյանի դերը ոչ միայն արեւելահայ երգիծական գրականության, ազգագրության, բանահյուսության, գյուղատնտեսության, մանկական գրականության զարգացման, այլեւ Ղարաբաղի բարբառը մոռացությունից փրկելու գործում՝ հեղինակը քննում է նշանավոր երգիծաբանի «Զուռնա-Տմբլա» ժողովածուի բառապաշարի որոշ հարցեր: Ղարաբաղի բարբառին հատուկ է ժողովածուում գործածված բառապաշարը ներկայացվում է ըստ խմբերի՝ հայերեն ընդհանուր բառաֆոնդի բառեր (*խրիզիւն, հարիւր, հազար, թվին, աշունքվա*), գրական լեզվի բառային կազմի մեջ չմտնող բառեր (*ծընըթէվաթ/ծըմըթէվաթ, գիւզիւն, գոզարդար*), բառեր, որոնց արմատը գիտակցվում է, բայց իմաստը պարզ չէ (*գիւռըբջոց, գըըլթորոս*), արեւելյան լեզուներից եւ ռուսերենից փոխառյալ բառեր (*հեաքիմ, ջուբ, փողրաթջի, մաթթահ, քիւչա, յարմուրկա*), ինչպես նաեւ հարադիր ու կրկնավոր բառեր, դարձվածներ, առած-ասացվածքներ եւն):

151. Միրզոյան Ե., **Ռուսերենից կատարված փոխառությունները Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաջի Խաչան) «Զուռնա Տմբլա» ստեղծագործության մեջ, «Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՅ», Ստեփանակերտ, 2004, էջ 77-83**

(Կ. Մելիք-Շահնազարյանի «Զուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուից բերված բնագրային օրինակներով վերհանվում են ռուսերենից Ղարաբաղի բարբառի կատարած մի շարք փոխառություններ (*կրիզիստ,*

իրիվոլվեր, ելիսապետ, փրիքաշիզնե, բուլախտեր, պրիկուլու, սեկլատար, դրադուս, թլորամ եւն), որոնք հանդես են գալիս բարբառին հատուկ հնչյունափոխական տարբեր երեւոյթներով՝ ձայնեղների խլացում, խուլերի շնչեղացում, հնչյունների անկում եւ հավելում, առնմանություն, դրափոխություն եւն: Ուշադրություն է դարձվում նաեւ ռուսերեն արմատներից կազմված ածանցավոր եւ բարդ բառերին ու բառաձեւերին (*փոշտխանա, պարախողջի, գակուսկեղան, դագաւեր-մագաւեր, պադավատ անել, դումիտ անել, գարադավոյնե, պադարկէք, փայտոննե, պուդրավ, շկուներին, շտրափու եւն*):

152. Միրզոյան Ե., ***Տմբլաջի Խաչանի «Զուռնա-Տմբլախ» լեզվական արվեստը, Ստեփանակերտ, 2007, 183 էջ***

(Ներկայացվում է 19-րդ դարավերջի-20-րդ դարասկզբի հայ մշակույթի նշանավոր գործիչ Կ. Մելիք-Շահնազարյանի՝ Ղարաբաղի բարբառով գրած «*Զուռնա-Տմբլա*» երկհատոր ժողովածուում ընդգրկված երգիծական ստեղծագործությունների (ֆելիետոնների) լեզվի եւ ոճի քննությունը: Կազմված է ներածական մասից եւ չորս գլխից: Ներածական մասում (էջ 4-12) տեղեկություններ են տրվում ժողովածուի հեղինակի կյանքի եւ ժողովրդագիտական գործունեության մասին: Առաջին գլխում (էջ 13-31) առանձին բաժիններով անդրադարձ է կատարվում 19-րդ դարավերջի գրական արեւելահայերենի եւ Կ. Մելիք-Շահնազարյանի բարբառային ստեղծագործությունների լեզվական համակարգին, երկրորդ (էջ 32-119), երրորդ (120-148), չորրորդ (149-180) գլուխներում համապատասխանաբար քննության են առնվում ժողովածուի ստեղծագործությունների բառագիտական (*բառապաշարի շերտեր, իմաստափոխություն, բառակազմություն, դարձվածներ*), քերականական (*ձեւաբանական, շարահյուսական*), ոճական (*երգիծանքի դրսեւորումներ, պատկերավորման եւ արտահայտչական միջոցներ*) իրողություններն ու առանձնահատկությունները: Ուսումնասիրությանը կցված է նաեւ օգտագործված գրականության ցանկ (էջ 181-183):

153. Միրզոյան Ե., ***Օտարաբանությունները Տմբլաջի Խաչանի ստեղծագործությունների բառապաշարում, «Կանթեղ», Երեւան, 2004, N 3, էջ 116-120***

(Ներկայացվում են Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործություններում, հատկապես Ղարաբաղի բարբառով գրված «*Զուռնա-Տմբլա*» ֆելիետոնների երկհատոր ժողովածուի մեջ գործածված օտարաբանությունները: Ըստ հոդվածագրի՝ Մելիք-Շահնազարյանը առավել շատ գործածել է ֆրանսերեն (*բոնժուռ, միսիո, մադամ, բուլանժե, քոման սավա, վիվ լա ֆրանս*), ինչպես նաեւ լատիներեն (*օմնիբուս, արխիարվարուս, ալթա ջակթա եսթ*), ռուսերեն (*պուկլովի, բարիշնա, պրաշչայ Թիֆլիզ*), վրացերեն

(*մոցիքուլ, մեսաիա, շէնի ճիրիմէ*) բառեր ու արտահայտություններ: Բոլոր դեպքերի համար բերվում են բնագրային օրինակներ):

154. Միքայելյան Ժ., **Առկայացման քերականական կարգը Ղարաբաղի բարբառում**, «Ջահուկյանական ընթերցումներ. Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, մայիսի 7-8, 2008թ.)», Երեւան, 2008, էջ 123-129

(Ղարաբաղի բարբառի՝ 20-րդ դարում հրատարակված եւ «Հայերենի բարբառագիտական ատլասի» ծրագրով նույն դարում հավաքված մի շարք խոսվածքների համապատասխան նյութերի ուսումնասիրության արդյունքում համաժամանակյա կտրվածքով քննության են առնվում անորոշ եւ որոշյալ, ստացական, ցուցական, դիմորոշ հոդերի դրսեւորման դեպքերը, վեր են հանվում արեւելյան խմբակցության մյուս բարբառների համեմատությամբ առկա յուրահատկությունները: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան օրինակներ):

155. Միքայելյան Ժ., **Արցախի բարբառային միավորների քմային բաղաձայնները**, «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ.. Ջեկուցումների ժողովածու», Երեւան, 2014, էջ 114-119

(«Հայերենի բարբառագիտական ատլասի» նյութերի հավաքման ծրագրով լրացված՝ Ղարաբաղի բարբառային նյութերի ուսումնասիրության հիմքի վրա ներկայացվում են Ղարաբաղի բարբառի խոսվածքների քմային բաղաձայնները, փորձ է արվում պարզելու, թե որ դիրքերում եւ ինչ հանգամանքներում են բաղաձայնները քմայնանում: Ըստ հեղինակի, ի տարբերություն հայերենի մյուս բարբառների, Ղարաբաղի տարածքի խոսվածքներում քմայնանալ կարող են գրեթե բոլոր բաղաձայնները, ինչը հնարավոր չէ բացատրել մեկ միասնական հնչյունական օրենքի գործառնությամբ ու հնարավոր է՝ լինի այլ լեզվի (օրինակ՝ ռուսերենի) ազդեցության հետեւանք):

156. Միքայելյան Ժ., **Քայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում**, «Հայոց լեզվի պատմության հարցեր. Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, 15-18 օգոստոսի, 2008 թ., Ստեփանակերտ, 2008, էջ 49-53

(Հրատարակված բարբառագիտական ուսումնասիրությունների, բանահյուսական ժողովածուների «Հայերենի բարբառագիտական ատլասի» նյութերի հավաքման ծրագրով գրառված համապատասխան նյութերի հիման վրա քննվում են Ղարաբաղի բարբառի մի քանի խոսվածքներում (*Բոլնիս-խաչենի, Շուշիի, Հաթերքի, Հարավի, Կաղարծիի, Շահումյանովսկի, Գորիսի, Զանյաթաղի, Հաղրույթի, Շուշիքենդի, Տումիի, Շաղախի, Խանազահի, Կապանի, Կաքավաբերդի*) քայի երկրորդական բաղադրյալ

ժամանակաձեւերի դրսեւորման դեպքերն ու ձեւերը: Անդրադարձ է կատարվում նաեւ դրանց առաջացման պատճառներին: Առանձնակի ուշադրություն է դարձվում Հադրուփի խոսվածքին, որտեղ նշված ժամանակաձեւերը գործառույթան մեծ ոլորտ են ընդգրկում):

157. Միքայելյան Ժ., **Գորիսի խոսվածքի հնչյունահնչույթաբանական մի քանի առանձնահատկություններ**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1980, N 8, էջ 37-48

(Քննության են առնվում Գորիսի խոսվածքի հնչյունահնչույթաբանական մի քանի առանձնահատկություններ, որոնք, ըստ հեղինակի, Ալ. Մարգարյանի «**Գորիսի բարբառը**» աշխատության մեջ բավարար ուշադրության չեն արժանացել կամ էլ այլ մեկնաբանություն են ստացել: Առանձնակի ուշադրություն է դարձվում խոսվածքում խուլերի ձայնեղացման, հնչյունների քմայնացման, հնչույթայնության, վերջին վանկի շեշտադրության, հնչյունափոխության, ու+ձայնավոր կապակցությունների դրսեւորման, առաջացման եւ զարգացման օրինաչափություններին: Արդյունքում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ. 1.խնդրո առարկա խոսվածքում ձայնեղների խլացման երեւոյթը փոխել է ոչ միայն բաղաձայնների, այլեւ ձայնավորների հնչյունահնչույթային հարաբերությունը, որի հետեւանքով նախապէս միայն դիրքային տարբերակներ հանդիսացող առաջնային եւ ոչ առաջնային ձայնավորները սկսել են կատարել իմաստազատիչ դեր, 2.խոսվածքի ձայնավորային համակարգի ձեւավորման մեջ կարեւոր դեր է կատարել շեշտը, որից կախված հնչյունափոխությունների արդյունքում գրաբարից եկող տարբեր ձեւերից բացի առաջացել են նաեւ ձայնավորների հնչյունահնչույթային նոր տիպի փոխհարաբերություններ, 3.խոսվածքն ունի ւ ձայնորդով թույլ (կամ կեղծ) երկբարբառներ, որոնք սկիզբ են առնում գրաբարից, սակայն ավելի շատ խոսվածքի հնչյունային համակարգի ներքին զարգացման արդյունք են):

158. Միքայելյան Ժ., **Ետին շարքի ձայնավորների զարգացումը Վանի եւ Ղարաբաղի բարբառներում**, «Հայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001թ.. Թեզիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 23

(Ներկայացվում է Աճառյանի օրենքի գործառույթունը Վանի եւ Ղարաբաղի բարբառներում, որը դրանցից յուրաքանչյուրում ունեցել է համապատասխան հնչյունական համակարգով պայմանավորված զարգացում):

159. Մովսէսյան Ռ., **Արցախի գրողների ստեղծագործությունների բարբառային բառերի ծագումնաբանությունը եւ իմաստային առանձնահատկությունները**, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի լրատու», Երեւան, 2016, էջ 338-343

(Ներկայացվում են Արցախի տարբեր գրողների ստեղծագործություն-

ներում գործածված եւ Ղարաբաղի բարբառին հատուկ մի շարք բառեր, որոնք հեղինակը ըստ ծագումնաբանության բաժանում է խմբերի՝ հնդեվրոպական հիմք լեզվից ավանդված բառեր (*կեփ, ճիթ, պող, տալ, տավար, կռոճ, դորթ, հեռ*), ռուսերենից կատարված փոխառություններ (*չետվերտ, սապոգ, կիտել, մատերյալ, պադվալ, դեֆիցիտ, վեշ, մաշին*), արեւելյան լեզուներից կատարված փոխառություններ՝ (*արսըզ, պուճախ, լաջառ, մազալու, սարթ, փալան, մաթրուբ, քիլինկոշ, չանչախ, քավթառ, բայաթի, քափուռ, փանջաք, շաբաշ, խալաթ, դալբ*): Նշվում են նաեւ այդ բառերի իմաստները, մեջբերվում բնագրային օրինակներ: Առանձնակի ուշադրություն է դարձվում փոխատու լեզվում ունեցած բառիմաստից տարբերվող նոր իմաստներին):

160. Սովետյան Ռ., ***Բառակազմական (ածանցման) բարբառայնությունները (դիալեկտիզմներ) Արցախի եւ Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում***, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2015, էջ 338-344

(Անդրադառնալով Ղարաբաղի բարբառի ածանցման առանձնահատկություններին՝ հեղինակը ներկայացնում է Արցախի եւ Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային մի շարք ածանցավոր բառեր, որոնք հիմնականում կազմված են՝ 1. գրական բառակազմական հիմքից եւ բարբառին հատուկ ածանցներից (այդ թվում՝ փոխառյալ)՝ *տնավարի, եղբայրավարի, հարազատավարի, քեռավարի, գինվորավարի, մեծավարի, Պարսեղանք, կլայեկչի*, 2. բարբառային բառակազմական հիմքից (այդ թվում՝ փոխառյալ) եւ գրական ածանցից՝ *մանեթանոց, զոզղան, պլպլոց, խուլիզանություն, լոպագություն, սալդաթություն, բըղլիություն* եւն: Համապատասխան հեղինակների ստեղծագործություններից մեջբերվում են բնագրային օրինակներ):

161. Սովետյան Ռ., ***Բարբառային անվանաբայական հարադրությունները Արցախի գրողների ստեղծագործություններում***, «Դպրատուն. Գիտական հոդվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2014, N1, էջ 108-113

(Ներկայացվում են Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված՝ Ղարաբաղի բարբառին հատուկ մի շարք անվանաբայական հարադրություններ, որոնք կազմված են *անել* (կիլիպիճո անել, տնագ անել), *տալ* (քացի տալ, կեռ տալ), *կենալ* (կոխ կենալ, տապռ կենալ), *կտրել* (դուռնա կտրել, խագնա կտրել), *քաշել* (բոյ քաշել, թառանչ քաշել) եւ այլ բայերով ու անվանական բաղադրիչներով: Վերջիններս հեղինակը բաժանում է ըստ խոսքիմասային պատկանելության՝ գոյական (*ուշունց տալ*), ածական (*շիլ զցել*), կախյալ բայարմատ (*յորթ ընկնել*), մակբայ (*աշկարա անել*), ձայնարկություն (*հարայ տալ*), ըստ ծագումնաբանության՝ բնիկ հայերեն բառեր (*լափու տալ, հոփ տալ*), արեւելյան լեզուներից ու ռուսերենից կատարված փոխառություններ (*լայեղ անել, մարաղ կենալ, օյին*

խաղալ, գակագ տալ, մատերիալ տալ), ըստ կազմության՝ կրկնավոր բարդություններ (կգո-մգո անել, ճաք-ճաք լինել), համադրական բարդություններ (քարապրանուկ անել, շավվարահան անել) են: Ուշադրություն է դարձվում նաև դարձվածային հարադրավոր բայերին (դու-դու կանչիլ, քոքը կտրել, փուստ գնալ): Բերված օրինակները հաստատվում են բնագրային մեջբերումներով):

162. Մովսեսյան Ռ., **Բարբառային անվանական հարադրությունները Արցախի գրողների ստեղծագործություններում**, «Կրթությունը եւ գիտությունը Արցախում», Երեւան, 2016, N 3-4, էջ 77-82

(Քննության են առնվում Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված Ղարաբաղի բարբառին հատուկ անվանական հարադրությունները: Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են կրկնավոր (լախ-լախ, լոշտրակ-լոշտրակ, խորոմ-խորոմ, ք'ասիբ-ք'ուսուբ, փալաս-փուլուս, պուճախ-մուճախ, յէխտուտ-մէխտուտ, դըռ հա դըռ, քահ հա քահ) եւ բաղիյուսական (առուտուր, շոր-շիրթ, յորդան-դոշակ, լեն ու բոլ, քոռ ու փուչ, ռէխ-բերան, զուռնա-դավալ, բոյ-բուսաթ) բարդությունները: Ուշադրություն է դարձվում դրանց բաղադրիչների հնչյունափոխությանը, կապակցման եղանակներին, ծագումնաբանությանը: Բերված օրինակները հաստատվում են բնագրային մեջբերումներով):

163. Մովսեսյան Ռ., **Բարբառային դարձվածների գրականացումը Արցախի գրողների ստեղծագործություններում**, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երեւան, 2017, էջ 334-339

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառում գործածվող մի շարք դարձվածներ, որոնք Արցախի գրողները իրենց ստեղծագործություններում մասնակիորեն գրականացրել են՝ մասնավորապես դարձվածը կազմող բաղադրիչներից որոշները գրական համարժեքներով փոխարինելով (հաքին բուլի-բուլի անել-պոչը բուլի-բուլի անել, հափըռումը չօփ տինիլ-բռի մեջ չոփ դնել, պօզերը տուս օնէլ-պոզերը հանել, յէմիշին լ'ավը չաղալը կօտէ-սէխի լավը չաղալը կուտի), քերականական վերջավորությունները գրականաձեւ կիրառելով (տափէն տական էլ ա-տափի տակից էլ լինի, պաղէվը տափավը չըտալ-պատիվը տափով չտալ, խըլքու սօսարակ-խելքի տոսարակ) եւ բայական դարձվածները գրականաձեւ խոնարհելով (պըռօ-շըս ճաքում ա-պռոշս ճաքում է, ադու տանձ ա կըծալ-ադու տանձ է կծել, չափարը ճըմօռում ըս-չափարը ճմոռում ես):

164. Մովսեսյան Ռ., **Բարբառային իրողությունները Մ. Յովհաննիսյանի ստեղծագործություններում**, «Նարեկ. Գիտական հոդվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2011, N 1, էջ 60-63

(Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են արցախցի նշանավոր արձակագիր Մաքսիմ Յովհաննիսյանի ստեղծագործություններում գործածված՝ մայրենի բարբառին հատուկ տարբեր իրողություններ՝ անհայտ

ծագման եւ բուն բարբառային բառեր (*խոնջա, ցաք, թոթխար, ռեխկալի, լիկվել, հախռել, կոթ*), փոխառություններ (*մեզար, թամահ, քոռ, բաջանադ, բողագ, ափաշկարա, սադ, մուշտարի, փլանք'աս*), օտարաբանություններ (*ռիժի, բունկեր, ֆրոնտավիկ, ագրեգատ*), անձնանուններ ու տեղանուններ (*Ալոշ, Մուքել, Օսանա, Կուքան, Աղունց թադ, Վանեսանց թադ*), հարադրություններ (*լախ-լախ, սիրի-սիրի, ճիտը գցել, գահլա տանել, կոխ կենալ, նիստա կենալ*), դարձվածներ (*նամուսը տափը կոխել, կոնատակին ձմերուկ դնել, չափարը ճմռռել, քոռ չինով կտրել, հարային հասնել, շան քթից ջուր խմել*), քերականական ձեւեր (*մերոնք, քոլուտեցիք, փոխովը, կշռքովը, քոլիցը*):

165. Մովսեսյան Ռ., **Բարբառային համադրական բարդությունները Արցախի գրողների ստեղծագործություններում**, «Կովկասը` մեր ընդհանուր տուն. Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (27-29 հոկտեմբերի, Ստեփանակերտ, 2017) հողվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2017, էջ 372-375

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառին հատուկ մի շարք համադրական բարդություններ, որոնք Արցախի գրողները հաճախ գործածել են իրենց ստեղծագործություններում` խոսքը դարձնելով ավելի պատկերավոր եւ բներանգային: Ուշադրություն է դարձվում դրանց բաղադրիչների հնչյունափոխությանը, կապակցման եղանակներին, ծագումնաբանությանը, գրականացման միտումներին: Բերված օրինակները հաստատվում են բնագրային մեջբերումներով):

166. Մովսեսյան Ռ., **Բարբառային քերականական իրողությունները Արցախի գրողների ստեղծագործություններում**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2016, պրակ 1, էջ 90-94

(Քննության են առնվում ոչ գրական որոշ քերականական իրողությունների դրսեւորումներն Արցախի մի շարք գրողների ստեղծագործություններում: Առանձնակի ուշադրություն է դարձվում *-էք, -երք, -անք, -ենք* հոգնակերտ ձեւայինների, տարբեր թեքայիններով եւ հերթագայություններով արտահայտվող տրականի հոլովածների, հոդառու բոլոր հոլովածների, *է-ի* փոխարեն *ա* օժանդակ եւ վերացական բայ-հանգույցի, դիմավոր տարբեր բայածների գործածություններին եւ ստեղծագործություններում տեղ գտած այլ բառածների, որոնք հեղինակները հիմնականում վերցրել են մայրենի` Ղարաբաղի բարբառից):

167. Մովսեսյան Ռ., **Ղարձվածային-ղարձվածաբանական բարբառայնությունները Արցախի եւ Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում**, «Ղարատուն. Գիտական հողվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2015, N 3, էջ 91-98

(Ներկայացվում են Արցախի եւ Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված` Ղարաբաղի բարբառին հատուկ դարձ-

վածները, որոնք, ըստ տարբեր սկզբունքներով դասակարգումների, բաժանվում են հետեւյալ խմբերի՝ դարձվածային սերտաճում (*խոսք օզիլ, վրէտան տակ քանդել, սրտեն մերանն ու մայան*), դարձվածային միասնություն (*օնքեն թուխպերը ետ տանել, խըլքը կտրել, պերանը կարել*), դարձվածային կապակցություն (*ուրան թափ տալ, լիւս լիւսասալ, խոսքը տըղավը տանել*), անվանական (գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող) դարձվածային միավորներ (*օխտը պորտը, շելակը ծանդր, ծէրք մեկնել, աշկեն տակավը, աշկիս վրա*), հաղորդակցական դարձվածային միավորներ (*քաջալը ճար անող լինի, իր գլխին ճար կանի, շոնն էլ յոր չոնել, քիզանա հինչ կյեղիմ*): Անդրադարձ է կատարվում նաեւ գրողների կողմից բարբառային դարձվածների գրականացմանը: Հոդվածը որոշ սահմանփակումներով եւ փոփոխություններով՝ «**Ղարձվածները Արցախի գրողների բարբառալեզու չափածոյում**» վերնագրով, տպագրվել է նաեւ հետագայում /«*Բառը սահմանի վրա (Գրական Արցախ)*», Ստեփանակերտ, 2016, էջ 178-183/:

168. Մովսէսյան Ռ., **Մեր բարբառի ակից ջուր է խմել Աստված**, «Նարեկ. Գիտական հոդվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2014, N 1, էջ 18-19

(Գրախոսություն Ա. Յու. Սարգսյանի «**Ղարաբաղի բարբառի բառարան**» (Երեւան, 2013, 846 էջ) աշխատության մասին: Ներկայացվում են աշխատության կարեւոր արժանիքները՝ Ղարաբաղի բարբառի հարուստ բառազանձի՝ բառերի եւ դարձվածների (շուրջ 40000 միավոր) ընդգրկում, ծագումնաբանական եւ քերականական նշումներ, իմաստների սպառնիչ նկարագրություն, գիտական տառադարձությամբ տարբեր խոսվածքներում գործածվող տարբերակների ներկայացում, փոխատու լեզուների ձեւերի եւ իմաստների նշում են):

169. **Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից** (կազմողներ՝ Ս. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երեւան, 1978, 224 էջ

(Ղարաբաղի բարբառով գրառված (տառադարձության մասնակի խախտումներով) բանահյուսական բազմաժանր ժողովածու: Վերջում տրվում է դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 209-219):

170. Շերմազանեան Գ., **Ասրի բեզ եւ Գիքի**, «Կռունկ Հայոց աշխարհին», *Թիֆլիս, 1862, թիւ ԺԲ, էջ 896-930, 1863, թիւ Բ, էջ 113-137*

(Դրամա, որ հեղինակը համարում է Ղարաբաղի բարբառով (որը անվանում է Ղարաբաղցոց լեզու) գրված: Իրականում դրամայի լեզուն հեռու է Ղարաբաղի բարբառից, չնայած ընդգրկում է բարբառին հատուկ բազմաթիվ բառեր ու բառաձեւեր: Առաջին մասի ներածականում (էջ 896-900) ներկայացնելով Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկու-

թյուններ՝ Շերմագանյանն այն համարում է «*քաջ տղամարդի եւ պատերազմական լեզու*»: Ռբամայում գործածված դժվարհասկանալի բազմաթիվ (հիմնականում՝ բարբառային եւ փոխառյալ) բառեր համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով):

171. Պետրոսյան Լ., *Ղարաբաղի «Սոս» տեղանվան ստուգաբանություն*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2000, N 1, էջ 112-114

(Անդրադառնալով բիայնական արձանագրություններում բազմիցս հիշատակվող *suse* բառի՝ տարբեր հետազոտողների կողմից տրված մեկնաբանություններին՝ հեղինակը եզրակացնում է, որ այն բնակավայրի տեսակ է՝ *ավան* կամ *գյուղ* իմաստով, որը պահպանվել է նաեւ Ղարաբաղի *Սոս* գյուղանվան մեջ՝ ենթարկվելով *ու-օ* բարբառային հնչյունափոխության):

172. Պետրոսյան Յ., *Հայերենագիտական բառարան*, Երեւան, 1987, 686 էջ

(Համառոտ ներկայացվում են հայոց լեզվին ու հայերենագիտությանը վերաբերող տերմինները եւ անվանումները, հայտնի հայերենագետների կյանքի ու հայերենին նվիրված աշխատությունների բնութագրումները, տեղեկություններ են տրվում հայերենի զարգացման տարբեր շրջանների, բարբառների, հայերենագիտական կենտրոնների, հանդեսների, հայ գրչության ու գրի եւ կարետոր այլ հարցերի մասին: Առանձին բառահոդվածներ են նվիրված Ղարաբաղի բարբառին (էջ446-447) ու նրա՝ հեղինակի կողմից առանձին բարբառներ դիտվող Գորիսի (էջ159), Հադրութի (էջ313), Շաղախի (էջ 486) ենթաբարբառներին):

173. Պետրոսյան Յ., *Ղարաբաղի բարբառի հնչյունական կազմը*, «Բանբեր Երեւանի համալսարանի» Երեւան, 1986, N 2, էջ 45-55

(Հարցի ուսումնասիրության համար առաջադրելով մի քանի կանխադրույթներ՝ *հնչյունախոսական պլան*, *գործառական պլան*, *տառադարձություն*, *դիտարկման կյուրթը*, *պատմական հայեցակետը եւ համաժամանակյա դիտարկումները*, *տարբերակիչ հատկանիշների համակարգը*, *մենահատկանիշ հնչույթաբանական հակադրություններ*, *ձայնավորների ներդաշնակությունը եւ հնչույթաբանական հակադրությունները*, *հնչյունական բնութագրության տեսանկյունները*, *տառերի այբբենական դասավորությունը*, հեղինակը քննում է Ղարաբաղի բարբառի, մասնավորապես նրա Ջրաբերդի խոսվածքի հնչյունական կազմը: Առանձնակի ուշադրություն է դարձվում հնչույթային համակարգին, իմաստային հակադրության նվազագույն զույգերի միջոցով հաստատվում են ձայնավորների եւ բաղաձայնների հնչույթային արժեքը, որի արդյունքում հիմնավորվում է, որ նշված խոսվածն ունի 43 հնչույթ (11 ձայնավոր եւ 32 բաղաձայն): Հղվածագիրը նաեւ այն տեսակետն է արտահայտում, որ Ղարաբաղի բարբառի տառերի այբբենական դասա-

վորությունը անհրաժեշտ է կատարել ըստ մեսրոպյան այբուբենի՝ մասնակի փոփոխություններով՝ քմայինները տեղադրելով համապատասխան ոչ քմայիններից հետո, ու-ն՝ լ-ի տեղում, օ-ն՝ ո-ի, ը՝-ն (իմա՝ երկբարբառակերպ)՝ ը-ից հետո):

174. Պողոսյան Ա., *Հաղորդի բարբառը, Երեւան, 1965, 372 էջ*

(Ներկայացվում է Արցախի Հաղորդի շրջանի բնակավայրերի խոսվածքների ամբողջության՝ Հաղորդի բարբառի (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) համաժամանակյա հանգամանակից քննությունը: Բաղկացած է ներածական բաժնից («Տեղագրություն եւ վիճակագրություն», «Ընդհանուր ակնարկ», «Մատենագիտություն») եւ հինգ մասերից: Ներածական մասում (էջ 5-9) տեղեկություններ են տրվում շրջանի գյուղերի տնտեսությունների թվի (ըստ 1895 եւ 1958 թվականների), բարբառի եւ Ղարաբաղի բարբառի ու Ղարադաղի գավառից գաղթածների (ըստ հեղինակի՝ Շաղախ-Խծաբերդյան խումբ) խոսվածքների (Խծաբերդ, Դոլանլար, Շաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ) փոխազդեցության, բարբառի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների մասին: Առաջին մասում՝ «Հնչյունաբանություն» (էջ 11-80), ներկայացվում են բարբառի հնչյունախոսությունը, ձայնավորների, բաղաձայնների եւ երկբարբառների հնչյունափոխության դեպքերը, անդրադարձ է կատարվում շեշտին ու հարցականին: Երկրորդ մասում՝ «Ձեւաբանություն» (էջ 82-268), քննության են առնվում բոլոր խոսքի մասերը եւ նրանց քերականական կարգերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում գոյականի հոգնակիի կազմությանը, հոլովների կազմությանն ու հոլովման տիպերին, հոդերին, դերանվանական հոլովմանը, դերբայներին, բայի խոնարհման փոփոխություններին, եղանակային ձեւերի կազմությանը, երկրորդական բաղադրյալ ժամանակներին, պատճառական, կրավորական, անկանոն, պակասավոր, հավելավոր, հարադիր բայերին, ժխտական խոնարհմանը, եղանակային ձեւերի կիրառություններին, կապվող բառի հոլովառությանը եւ կապերի իմաստային առումներին ու շարադասությանը եւն: Երրորդ մասում՝ «Բառագիտություն» (էջ 269-305), ներկայացվում են բարբառի բառապաշարի շերտերը, գրաբարից ավանդված որոշ բառերի իմաստափոխությունը, այլ բարբառներում չհանդիպող մի քանի դարձվածներ, ոճեր, առած-ասացվածքներ, բառակազմական միջոցները, բարդությունների եւ ածանցների տեսակները: Չորրորդ մասում՝ «Շարահյուսություն եւ շարադասություն» (էջ 305-332), քննվում են նախադասության տեսակների եւ նրանց անդամների շարադասության հետ կապված որոշ հարցեր: Հինգերորդ՝ հավելվածային մասում (էջ 333-366), Հաղորդի շրջանի տասնյակ բնակավայրերի խոսվածքներով ներկայացվում են բարբառային նմուշներ, ինչպես նաեւ պարզաբանումներ մենագրությանը կցված բարբառագիտական 8 քարտեզների վերաբերյալ: Աշխատությունն ունի նաեւ օգտագործված գրա-

կանության եւ օժանդակ աղբյուրների համառոտ ցանկ (էջ 367-368): Ուսումնասիրության մեջ տարբեր օրինաչափություններ քննելիս հեղինակը Հաղորդի տեղական խոսվածքներին զուգընթաց մի շարք դեպքերում անդրադառնում է Ղարադաղից գաղթածների, եզակի դեպքերում՝ Սյունիքից գաղթածների (*Պետրոսաշեն, Թեզխարաբ, Արփագյաղուկ, Սպիտակաշեն* գյուղեր) խոսվածքների առանձնահատկություններին: Աշխատությունը հեղինակի՝ 1948 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության լրամշակված տարբերակն է: Ատենախոսությանը, որը պահվում է հեղինակի անձնական արխիվում, կցված են նաեւ գրաբարից ավանդված, բարբառային եւ փոխառյալ բառերի բառացանկեր:

175. Պողոսյան Ա., *Հայ բարբառագիտություն, Երեւան, 1996, 312 էջ*

(Քննության են առնվում բարբառագիտական մի շարք հարցեր՝ բարբառագիտության խնդիրներն ու նշանակությունը, բարբառի, ենթաբարբառի, միջճյուղային բարբառի, խոսվածքի առանձնահատկությունները, բարբառների ծագման ու պատմական զարգացման ընթացքը, լեզվաբանական աշխարհագրության խնդիրները, հայ բարբառագիտության համառոտ պատմությունը, հայերենի բարբառների տարբեր դասակարգումները, հնչյունաքերականական օրինաչափությունները եւն: Չորրորդ մասում՝ «Հայերենի հիմնական բարբառները՝ ըստ ձեւաբանական դասակարգման» (էջ 149-291), այլ բարբառների շարքում առանձին ենթաբաժնով (էջ 181-205) ներկայացվում է Ղարաբաղի բարբառի համառոտ նկարագրությունը, առանձնակի ուշադրություն է դարձվում հնչյունական համակարգի, հնչյունափոխության, հոգնակիակազմության, հոլովման եւ խոնարհման առանձնահատկություններին, տրվում են որոշ խոսվածքներով զրառված նմուշներ):

176. Պողոսյան Ա., *Նի մասնիկը եւ նրա բառակազմական նշանակությունն ու իմաստային առումները հայերենի բարբառներում*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, N2, էջ 124-144

(Հանգամանորեն քննվում են *Նի* մասնիկի ծագման, ձեւավորման, նշանակության, իմաստային առումների հարցերը ու նրա հարադրությամբ կազմված բայական հարադրությունների եւ այլ կապակցությունների դրսեւորումները հայերենի մի շարք, հատկապես Ղարաբաղի եւ Հաղորդի բարբառներում: Արդյունքում հեղինակը հիմնավորում է, որ *Նի* մասնիկը. ա) ծագում է դարերի խորքից, սակայն նախապես լինելով ոչ կենսունակ՝ շատ ավելի ուշ զարգացել ու տարածվել է Արարատյան, Ղարաբաղի, Հաղորդի, Մեղրու եւ արեւելյան խմբակցության այլ բարբառներում, մինչդեռ արեւմտահայ բարբառներում ունի խիստ սահմանափակ կիրառություն, բ) կազմում է նոր բայեր, որոնք իրենց արտահայտած իմաստային

հարաբերություններով տարբեր են սկզբնատիպ ձեւերից, ինչպես նաեւ ցույց է տալիս հարադրվող բայի գործողության ուղղվածությունը դեպի ներս, դուրս, վեր, վար՝ լրացուցիչ կերպով արտահայտելով իմաստային տարբեր նրբերանգներ, իսկ որոշ դեպքերում խիստ սահմանափակում է հարադրվող բայի բազում ու տարաբնույթ նշանակությունները եւ առումները, գ) առանձին դեպքերում առաջ է բերում սեռային փոփոխություններ՝ ներգործական սեռի բայերը դարձնելով չեզոք կամ միեւնույն բառույթի սահմաններում դրսեւորելով կրկնասեռություն, դ) որպես ետադրություն տարբերվում է բայական *Նի* մասնիկից եւ առաջացել է ավելի ուշ՝ *իյէր* բաղադրյալ կապի *յէր* բաղադրիչի սղումից եւ *ի* նախդիրի ու նրան նախորդող *ն* հոդի միացումից, ե) Ղարաբաղի եւ Հաղրութի բարբառներում որպես ետադրություն դրվելով որոշյալ հայցականով կապվող բառի հետ՝ դրսեւորում է տրական ու գործիական հոլովների իմաստ, իսկ գոյականների եւ դերանունների սեռական, տրական հոլովաձեւերին որպես *հետ* կապի բաղադրիչ հարադրվելով՝ ցույց է տալիս հանգում, վերաբերություն, փոխադարձ գործողությամբ կապված առարկաների ու անձերի սերտ միասնություն եւն: Հոդվածը՝ «*Լեզվագիտական մի չուսումնասիրված հարցի շուրջը*» («*Նի*» մասնիկի եւ «*նի*» մասնիկավոր բառերի մասին») վերնագրով եւ խիստ սահմանափակումներով, տպագրվել է նաեւ 1950 թվականին /«*Էջմիածին*», Ս. Էջմիածին, 1950, մարտ-ապրիլ, էջ 59-62/):

177. Պողոսյան Ժ., *Արցախ, Խաչեն(ք), Ղարաբաղ վարչաաշխարհագրական անվանումների առնչակցության հարցի շուրջ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», *Ստեփանակերտ*, 2003, N1-2, էջ 150-151

(Ներկայացնելով *Արցախ, Խաչեն(ք)* եւ *Ղարաբաղ* տեղանունների՝ մասնագիտական գրականության մեջ եղած որոշ տարբերակներ եւ մեկնաբանություններ՝ հեղինակը առաջ է քաշում իր տեսակետը, որի համաձայն՝ նշված տեղանունների *դախ*, *խաչ* եւ փոխառյալ *բաղ* բաղադրիչները, համապատասխանաբար նշանակելով *անտառ*, *ծառ*, *այգի*, ունեն իմաստային առնչակցություններ):

178. Պողոսյան Ժ., *Խաչենի հովտի ծառանուն բաղադրիչով մանրատեղանունները*, «*Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՀ*», *Ստեփանակերտ*, 2004, էջ 52-54

(Ներկայացվում են Արցախի Մարտակերտի շրջանի (Խաչենի հովտի) մի շարք մանրատեղանուններ (*Ճղարհող*, *Կաղնոտ պատ*, *Պիճ ճրղարեն ծոր*, *Թըխկոտ*, *Ծընզըլըմ կենի*, *Տընջըրեն ախայյուր*, *Լինըտիրէվէն դաշ են*), որոնց բաղադրիչներից մեկը ծառանուն է: Անդրադարձ է կատարվում այդ մանրատեղանունների բառակազմական կաղապարներին, ինչպես նաեւ դրանցից որոշների՝ հին ու նոր հավատալիքների հետ ունեցած առնչություններին: Հոդվածը տպագրվել է նաեւ «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» /Ստեփանակերտ, 2004, N 2, էջ 76-77/ հանդեսում):

179. Պողոսյան Ժ., **Խաչենի հովտի կրոնական, հավատալիքային եւ ծիսական բառ- բաղադրիչով մի քանի մանրատեղանուններ**, «Յայոց լեզվի հարցեր. Հոդվածների ժողովածու. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2006, էջ 51-54

(Փորձ է արվում մեկնաբանելու Արցախի Խաչենի հովտի կրոնական, հավատալիքային եւ ծիսական բովանդակությամբ բառ-բաղադրիչներով կազմված մի շարք մանրատեղանուններ՝ *Անահիտին ախպուր*, *Նապատ*, *Իրիցին կումը*, *Նըտակա հող*, *Ճիքնիվը* Եւ *Ծօր*, *Մուտըռը* Եւ *Ծօր*, *Ղերին խաչ*, *Վըխախաչ*, *Քըշկըծակը*, *Սըռնատոն*, *Ըկուփա քար եւն*: Անդրադարձ է կատարվում նաեւ ադրբեջանցի «գիտնականների» կողմից Արցախի մանրատեղանունների աղավաղմանն ու ապաստուգաբանությանը):

180. Պողոսյան Ժ., **Ղարաբաղի բարբառի մի քանի դարձվածների եւ բառերի մասին**, «Յայոց լեզվի հարցեր. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2009, էջ 45-47

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառում գործածվող որոշ դարձվածներ (*Ըթամա տէսը*, *Սութում անը*, *լազգու դօնաղ*, *Նաջաղը վը* Եւ *թօղը*, *կըլիէն ախտա խան կըտրել*, *աշկէն տական դաղած*) եւ բառեր (*օղուզ*, *սուլտուզ*): Փորձ է արվում բացահայտելու դրանց իմաստների առաջացման հիմքերը):

181. Պողոսյան Ժ., **Մի շարք փոխառությունների ոճական կիրառությունները Խաչենի խոսվածքում**, «Արցախի պետական համալսարան. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ I, էջ 251-254

(Ներկայացնելով Ղարաբաղի բարբառի Խաչենի խոսվածքում մի շարք (հատկապես թուրքական լեզուներից կատարված) փոխառությունների (*ղըյամաթ*, *պոջ*, *դոնաղ*, *դաբան*, *ջին*, *չօլախ*, *բօղազ*, *ջանավար եւն*) գործածության դեպքերը՝ հեղինակը այն տեսակետն է հայտնում, որ դրանք խոսվածքում շատ հաճախ ունեն իրենց հայերեն համարժեքները (*սըռընգա*, *լաբ*, *դէյըր*, *կըրօյըր*, *կեռէք*, *կաղլէզ*, *պօկ*, *կուլ եւն*) եւ ի տարբերություն վերջիններիս՝ հիմնականում գործածվում են այն դեպքերում, երբ խոսողը ցանկանում է արտահայտել հեզնական կամ քամահրական վերաբերմունք):

182. Զահուկյան Գ., **Արցախահայ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին**, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1991, N 5, էջ 52-58

(Զննվում են բարբառի որոշ առանձնահատկություններ՝ բառասկզբի հավելուրդային *հ*-ի գործածություն՝ հատկապես հնդեվրոպական ծագման բառերում (*հինչ*, *հուր*, *հօվ/հուվ*), գրաբարյան *ն*-ով վերջացող հիմքերի պահպանում (*մօկըր*, *ծօնգըր/ծօյըր*) եւ գրաբարից ավելի մեծ տարածում (*անդէմըր*, *փիրփէշըր*, *պռէշըր*), հնչյունների քմայնացում, ձայնեղների

խլացում հին փոխառություններում, ձայնավորների հերթագայություն, գրաբարի ոչ արմատական ձեւերի դիմաց արմատական ձեւերի առկայություն (*զգեՆուլ-կէՆալ, կոճեՆ-կոճոճ, պեպէՆ-պէՆ*), գրաբարյան ձեւերին զուգահեռ հին եւ անկախ ձեւերի պահպանում (*կեղեՆ-քլէվ, պատուհան-պտոռան, Նապաստակ-ըլըբաստրակ*) եւ հին այլ երեւոյթներ: Արդյունքում հակադրվելով Յր. Աճառյանին, ով, հիմք ընդունելով Ղարաբաղի բարբառի՝ հայերեն բառերում ու հին փոխառություններում ձայնեղների խլացման երեւոյթը, որը չի տարածվում թուրքերենից փոխառյալ բառերի վրա, նրա ծագումը կապում է 12-րդ դարի հետ՝ Նախքան թուրքերի Յայաստան գալը, Ջահուկյանը հիմնավորում է դեռեւս 1959թ. իր առաջ քաշած դրոյթը, որի համաձայն՝ հայերենի բարբառների հնչյունական, քերականական եւ բառապաշարային հատկանիշները ձեւավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով եւ պատմական տվյալ պայմաններում տալով բարբառային տվյալ խմբավորումները:

183. Ջահուկյան Գ., *Յայ բարբառագիտության ներածություն (Վիճակագրական բարբառագիտություն), Երեւան, 1972, 348 էջ*

(Բաղկացած է երկու մասից: Առաջին մասում (էջ 13-156) քննվում են համաժամանակյա բարբառագիտության հարցեր: Ի տարբերություն Նախորդ՝ միահատկանիշ դասակարգումների՝ մաթեմատիկական ճշգրիտ մեթոդների կիրառմամբ հարյուր տարբերակիչ հատկանիշի հիման վրա ներկայացվում է հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգումը: Ռասակարգման ենթակա 120 բարբառախոս վայրերից 11-ը (*Շուշի, Յաթերք, Յարավ, Կաղարծի, Շահումյանովսկ, Ջանյաթաղ, Յադրութ, Շուշիքենդ, Տումի, Շաղախ, Մեհտիշեն*) հեղինակն ընտրել է Լեռնային Ղարաբաղի տարածքից՝ դրանց համար համեմատության եզր (*բարբառային կենտրոն*) սահմանելով դարեր առաջ Արցախից գաղթած հայերի կողմից Վրաստանում հիմնադրված Բոլնիս Խաչեն գյուղի խոսվածքը, որը լեզվական օտար միջավայրում առավել անփոփոխ է պահել Ղարաբաղի բարբառի յուրահատկությունները: Արդյունքում, ըստ սահմանված մակարդակային միավորների տարբերակիչ հատկանիշների քանակի, բարբառների արեւելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարեւելյան միջբարբառախմբի մեջ առանձնացվում են Ղարաբաղի եւ Մեհտիշենի բարբառները, իսկ մյուսները, ինչպես նաեւ Գորիսը եւ Խանազադը (Ղարադաղ) համարվում են Ղարաբաղի բարբառի խոսվածքներ: Ղարաբաղի բարբառին եւ նրա նշված խոսվածքներին լուրջ ուշադրություն է դարձվում նաեւ աշխատության երկրորդ մասում (էջ 159-333), որտեղ քննվում են տարածամանակյա բարբառագիտության մի շարք հարցեր՝ 5-րդ դարի բարբառային վիճակը, ժամանակակից հայ բարբառ-

ների ժամանակագրական փոփոխարարությունը, բարբառային հնագույն տարբերությունների հետքերը գրաբարում, բարբառների հնչյունաբառաբերականական հնաբանությունները են):

184. Սարգսյան Ա., *Արցախահայ բարբառի հնչույթային համակարգը*, «Չայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001թ. Թեգիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 29-30

(Ներկայացվում է Ղարաբաղի բարբառի ձայնավոր եւ բաղաձայն հնչյունների հնչույթայնությունը: Տարբերակիչ հատկանիշների եւ իմաստային հակադրության նվազագույն զույգերի միջոցով հիմնավորվում է, որ բարբառում հնչույթային արժեք ունեն ոչ միայն գրական հայերենին համապատասխանող հնչյունները, այլեւ քմային *ü, ñ, ö* ձայնավորներն ու *q, ʃ, p, ʎ* բաղաձայնները, ինչպես նաեւ *ɹ* եւ *ʒ* ձայնավորների միջին աստիճանը ներկայացնող *ɹʕ* երկբարբառակերպը, մինչդեռ որոշ խոսվածքների հատուկ շեշտակիր *ɹ̣*-ն, որն ունի ստորին բարձրացման դիրք եւ ուժգին արտասանություն, հնչույթաբանական մակարդակում սովորական *ɹ* հնչույթի հետ հակադրական զույգեր չկազմելով, ներկայանում է որպես վերջինիս դիրքային տարբերակ:

185. Սարգսյան Ա., *Արցախի բանահյուսությունը*, Երեւան, 2015, 748 էջ  
(Արցախի 163 բնակավայրերի խոսվածքներով գրառված բանահյուսական բազմաժանր ժողովածու: Ընդարձակ առաջաբանում առանձին ենթաբաժնով՝ «*Ղարաբաղի բարբառը*» (էջ 47-75), ներկայացվում են բարբառի հնչյունական ու հնչույթային համակարգերը, հնչյունափոխության տեսակները եւ դեպքերը, խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի (*հոգնակիականություն, հոլով, անվանական ու դերանվանական հոլովում, հողառություն, ածականի համեմատության աստիճաններ, բայի դեմք, թիվ, սեռ, հիմքակազմություն, եղանակ, ժամանակ են*) դրսևորումները, շարահյուսական առանձնահատկությունները, բառապաշարի շերտերը, իմաստափոխության դեպքերը, բառակազմական միջոցները: Ժողովածուն կազմված է բարբառային տառադարձության խստիվ պահպանմամբ, առանձին ցանկով (733-737) ներկայացվում են խոսվածքները, որոնցից յուրաքանչյուրի անվան դիմաց տրվում են տվյալ խոսվածքով գրառված նյութերի համարները: Ժողովածուն ունի նաեւ գյուղերի ու քաղաքների մականունների (606-612), մարդկանց մականունների (613-623), անձնանունների (718-725), տեղանունների (726-732) ցանկեր, նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (634-682), դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (683-717), Արցախի բանահյուսությանը լիովին կամ մասնակիորեն առնչվող տպագիր ու ձեռագիր աղբյուրների ցանկ (738-743):

186. Սարգսյան Ա., *Արցախյան առակներ*, Ստեփանակերտ, 2011, 96 էջ

(Ղարաբաղի բարբառով (բարբառային գիտական տառադարձությամբ) գրառված առակների ժողովածու: Ներածական մասում (էջ 3-4) ներկայացվում է բարբառի հնչյունախոսությունը: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ80-85) եւ դժվարհասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 86-91):

187. Սարգսյան Ա., **Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2014, 172 էջ**

(Ղարաբաղի բարբառով (բարբառային գիտական տառադարձությամբ) գրառված զվարճախոսությունների ժողովածու: Ներածական մասում (էջ 3-4) ներկայացվում է բարբառի հնչյունախոսությունը: Վերջում տրվում են նյութերի գրառման հանգամանքները բացահայտող ծանոթագրություններ (էջ 152-161) եւ դժվար հասկանալի բառերի ու դարձվածների բացատրական բառարան (էջ 162-170):

188. Սարգսյան Ա., **Բարբառային բառերը եւ բառաձեւերը Ղազարոս Աղայանի հեքիաթներում**, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2008, N 1, էջ 117-118

(Ներկայացվում են Ղ. Աղայանի հեքիաթներում գործածված բարբառային բազմաթիվ բառեր, բառաձեւեր, դարձվածներ, քերականական ձեւեր, անձնանուններ, մականուններ եւ արեւելյան լեզուներից (մասամբ՝ ռուսերենից) կատարված փոխառություններ, որոնք, ըստ հեղինակի, մեծ գրողը վերցրել է մայրենի՝ Ղարաբաղի բարբառի Բոլնիս խաչենի խոսվածքից՝ իր խոսքն ավելի ժողովրդական դարձնելու, ինչպես նաեւ գրական լեզուն հարստացնելու նպատակով: Բոլոր դեպքերի համար բերվում են վկայված օրինակներ):

189. Սարգսյան Ա., **Բարբառային օրինաչափությունների պահպանման կարելտորությունը բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով)**, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, N 1, էջ 108-110

(Վերհանելով Ղարաբաղի բարբառի՝ տարբեր բանահավաքների բանահյուսական ժողովածուներում տեղ գտած հնչյունաբառաքերականական օրինաչափությունների աղավաղումները եւ դրանք հիմնականում համարելով բարբառային նյութը գրական հայերենի տառադարձությամբ ներկայացնելու արդյունք՝ հեղինակը կարելտորում է բարբառային գիտական տառադարձության պահպանումն ու բանագետ-բանահավաք-բարբառագետի համատեղ աշխատանքը բանահավաքչական գործընթացում, ինչը հնարավորություն կտա արտահայտելու ոչ միայն ազգագրական տվյալ շրջանի խոսվածքների առանձնահատկությունները, այլեւ այդ տարածքի բնակչության լեզվամտածողությունը, նիստն ու կացը, կենսափիլիսոփայությունը: Հող-

վածը՝ «**Տառադարձության կարելությունը բանահյուսության մեջ**» վերնագրով, ավելի ամփոփ ձեռով տպագրվել է 2007 թվականին /«Մետրոպ Մաշտոց համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Շուշիի ազատագրման 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, հոկտեմբերի 19-21, 2007թ.», Ստեփանակերտ, 2007, էջ 61-62/):

190. Սարգսյան Ա., **Բնիկ, բարբառային եւ փոխառյալ բառերը արցախահայ բարբառում**, «Նարեկ» Ստեփանակերտ, 2003, N 2, էջ 34-36

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառի բառապաշարի ծագումնաբանական շերտերը եւ դրանց տարատեսակները, բերվում են համապատասխան օրինակներ):

191. Սարգսյան Ա., **Բուն ազգացկական բառանվանումները Ղարաբաղի բարբառում**, «Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին», Ստեփանակերտ, 2009, պրակ 1, էջ 12-14

(Անդրադառնալով հայ եւ օտարազգի լեզվաբանների կողմից հայերենի ու նրա բարբառների՝ ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանվանումների ուսումնասիրությանն ու հիշատակումներին՝ հեղինակը քննության է առնում Ղարաբաղի բարբառում գործածական բուն ազգակցական բառանվանումները՝ մար, մէր, մամա, նանէ, նանի, նանը՛, ազի, հասի, այա, հար, հէր, պապա, բաբա, ապա, ապէր, դադա, խօխա, ըրախա, բալա, քօրփա, խէզան, լաճ, վէրթի, տըղա, օղուլ, ախճիճ, աճօ, քուր, ախպէր եւն: Առանձնակի ուշադրություն է դարձվում դրանց ծագումնաբանությանը, իմաստային ու ոճական կիրառություններին):

192. Սարգսյան Ա., **Գրաբարից ավանդված բառերի իմաստափոխական որոշ դեպքեր արցախահայ բարբառում**, «Հայ գրերի գյուտի եւ Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով. Զեկուցումների դրույթներ. Հունիսի 2-5-ը, 2005թ., Ստեփանակերտ-Ամարաս», Երեւան, 2005, էջ 68-70

(Ներկայացվում են գրաբարից ավանդված բառերի՝ Ղարաբաղի բարբառում կրած իմաստափոխության որոշ դեպքեր, որոնք բաշխվում են իմաստի հարստության (բազմիմաստություն-մենիմաստություն) եւ իմաստի ծավալի ոլորտներում: Առաջին խմբի բառերը հեղինակը բաժանում է չորս ենթախմբի՝ գրաբարյան բազմիմաստության դիմաց մենիմաստության առկայություն, գրաբարի բազմիմաստության դիմաց մի քանի իմաստների առկայություն, գրաբարի մենիմաստության դիմաց բազմիմաստության առկայություն, բարբառում ինքնուրույն կիրառություն չունեցող (միայն բարդություններում ու կապակցություններում պահպանված) գրաբարյան բառեր, իսկ երկրորդ խմբի բառերը՝ երկու ենթախմբի՝ բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում: Բոլոր դեպքերի համար

բերվում են օրինականեր: Հոդվածը՝ **«Իմաստափոխության մի քանի դեպքեր արցախահայ բարբառում»** վերնագրով եւ որոշ սահմանափակումներով, տպագրվել էր նաեւ 2000 թվականին /«Հայաստանում Քրիստոնեությունը որպէս պետական կրոն ընդունման 1700-ամյակին նվիրված «Գիտության եւ մշակույթի հիմնահարցերն Արցախում» հանրապետական գիտաժողովի կյութեր (17-18 նոյեմբերի, 2000թ.), Ստեփանակերտ, 2000, էջ 90/:

193. Սարգսյան Ա., **Կարո Ղավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունը**, «Կարո Ղավթյան. Կենսամատենագիտություն», Ստեփանակերտ, 2004, էջ 19-23

(Լեզվաբանական աշխարհագրության դիրքերից կարելորելով աշխատությունը՝ հեղինակը առանձին պարբերություններով անդրադառնում է ուսումնասիրության բոլոր բաժիններին, արժեւորում դրանցում ներկայացված հարցերի հանգամանակից քննությունը: Առանձին շեշտվում է այն, որ աշխատության մեջ քննության են առնված Լեռնային Ղարաբաղի տարածքի բոլոր բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների առանձնահատկությունները):

194. Սարգսյան Ա., **Հապավումները արցախահայ բարբառում**, «Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՀ» Ստեփանակերտ, 2004, էջ 16-19

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառում գործածվող հապավումները: Ըստ հեղինակի՝ բարբառում հաշվվում է շուրջ 100 հապավում (աշխօր, գյուխօրորոթ, կալխօզ, սավխօզ, վայինկօմ, վայինկամատ, օբլօնօ, պըրափկօմ եւն), որոնց գերակշիռ մասը վանկաբառային ու վանկային հապավումներն են, քիչ են տառային հապավումները, իսկ վանկատառային, բառատառային, բառատառավանկային միավորները գրեթէ բացակայում են: Առանձնակի ուշադրություն է դարձվում խորհրդային եւ հետխորհրդային շրջանում ռուսերենից եւ նրա միջնորդությամբ այլ լեզուներից փոխառված հապավումներին, որոնցից որոշները ժամանակի ընթացքում ձեռք են բերել նոր իմաստներ, ինչը հիմնականում փոխաբերության արդյունք է (Նարկօմ (վայելուչ, գեղեցիկ, խելոք), կալխօզ (խառնաշփոթություն, աղմկոտ տեղ), բիբիսի (անզաղտնապահ, լուրեր տարածող) եւն):

195. Սարգսյան Ա., **Հատուկ անուններով կազմված դարձվածները Ղարաբաղի բարբառում**, «Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով. 7-9 հոկտեմբերի, 2015 թ.. Ջեկուցումների ժողովածու», Երեւան, 2015, էջ 305-312

(Քննության են առնվում Ղարաբաղի բարբառում գործածվող՝ հատուկ անուններով կազմված մի քանի տասնյակ դարձվածներ: Հեղինակը դրանք բաժանում է երկու խմբի՝ աշխարհագրական անուններով կազմված դարձ-

վածներ եւ անձնանուններով կազմված դարձվածներ: Առաջին խմբի մեջ առանձնացվում են լեռնանուններով (*Քիրսա նրման դըլվումը վըհնը կէնալ, Մրռավա լաշը կըկըղէլ*), գետանուններով (*Քուռը ածէլ, Թըրղէ տըհնալ*), բնակավայրերի անուններով (*Քըհթը Տըրըպըզոնավը քիհիլ, Նուխվա սէրուն*), սրբավայրերի անուններով (*Յէրուսաղէմ քիհիլ, Պըթկէսապէրքա յըհած*), տարբեր մանրատեղանուններով (*Անկարանա պէրթումը պըլօկված, Յունգուտտովա պաշար*), իսկ երկրորդ խմբի մեջ՝ Աստվածաշնչյան անուններով (*Քըրիստոսա մէխէն թըխէլ, Ըդամէն վըխտանց*), նշանավոր մարդկանց անուններով (*Մանթաշօվէն ախճիգը, Նիկալային թըվին*), բանահյուսական հերոսների անուններով (*Լոդմանի տըհնալ, Պըլըպուդուն առըտօրը*), գերդաստանների անուններով (*Մըրութանց քաշկը, Սուսանանց օջաղը տըհնալ*), տարբեր մարդկանց անուններով (*Ջըքին ուռռան, Ըթնին ծննը*) կազմված դարձվածների ենթախմբերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում դրանց առաջացման հիմքերին):

196. Սարգսյան Ա., **Յնդեվրոպական ծագում ունեցող բառերը Ղարաբաղի բարբառում**, «Յայոց լեզվի հարցեր. ԱրՊՅ», Ստեփանակերտ, 2009, էջ 48-50

(Անդրադառնալով լեզվաբանության մեջ հայերենի բարբառների ծագման վերաբերյալ արտահայտված իրարամերժ կարծիքներին՝ հեղինակը ներկայացնում է Ղարաբաղի բարբառում գործածական՝ հնդեվրոպական ծագում ունեցող տասնյակ բառեր, որոնք բաժանում է երկու խմբի՝ գրաբարի միջոցով բարբառին անցած բառեր (*արտ, պէնդ, տիհիլ, տօնը, իփիլ, քամէլ, քար, ցավ, կըհ*) եւ հայերենի գրավոր հիշատակարաններում չվկայված բառեր (*պոնլ, պօլիգ, կօլ, կըլօնդըրակ, շէք, լապըռ, լըմլամէլ, թօռ, քում, քիրէճ, տըռօզ, վէլա եւն*):

197. Սարգսյան Ա., **Ձայնավոր եւ բաղաձայն հնչույթները Գորիսի բարբառում**, «ԱրՊՅ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2011, N 1-2, էջ 95-97

(Լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքների համաձայն՝ տարբեր հատկանիշներով հակադրելով Գորիսի բարբառի հնչյունները եւ ներկայացնելով իմաստային հակադրության նվազագույն զույգեր, առանձնակի ուշադրություն դարձնելով բարբառին հատուկ քմային ձայնավորներին ու բաղաձայններին, ը եւ է ձայնավորների միջին աստիճանը ներկայացնող ըհ երկբարբառակերպին՝ հեղինակը արդյունքում հիմնավորում է, որ բարբառում անկախ հնչույթային արժեք ունեն ոչ միայն գրական հայերենին համապատասխանող հնչյունները, այլեւ *ւ, ու, ծ, գ, կ, ք* քմայինները, միջդեռ սակավ հանդիպող ըհ երկբարբառակերպը, իմաստաբանական մակարդակում չհակադրվելով ամենամերձավոր՝ ը եւ է ձայնավորներին, հանդես է գալիս որպես վերջիններիս արտասանական տարբերակ):

198. Սարգսյան Ա., *Ղարաբաղի բարբառը Հրաջյա Աճառյանի ուսումնասիրություններում*, «Հայոց լեզվի հարցեր. Հոդվածների ժողովածու. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2006, էջ 55-56

(Կարելորելով Հրաջյա Աճառյանի ավանդը հայ բարբառագիտության բնագավառում՝ արժեւորվում է նշանավոր լեզվաբանի «*Քննություն Ղարաբաղի բարբառին*» մենագրությունը, վեր են հանվում նրանում ներկայացված օրինաչափությունները: Ուշադրություն է դարձվում նաեւ «*Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն*», «*Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)*», «*Հայերէն գաւառական բառարան*», «*Հայերէն արմատական բառարան*», «*Հայոց լեզվի պատմություն*» եւ այլ աշխատություններին, որտեղ Աճառյանը այս կամ այն կերպ անդրադարձել է Ղարաբաղի բարբառին):

199. Սարգսյան Ա., *Ղարաբաղի բարբառը 19-20-րդ դարերի լեզվաբանական ուսումնասիրություններում*, «Հայագիտությունը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրավերները. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, 17-19 հոկտեմբերի, 2013 թ. Զեկուցումների ժողովածու» Երեւան, 2014, էջ 316-319

(Ներկայացվում են 19-20-րդ դարերի լեզվաբանական տպագիր եւ ձեռագիր ուսումնասիրություններն ու բառարանները, որոնք առնչվում են Ղարաբաղի բարբառին: Առավել ուշադրություն է դարձվում Զ. Պատկանյանի «*Исследование о диалектах армянского языка*», Հր. Աճառյանի «*Ուսումնասիրություններ հայկական բարբառախօսութեան Գ. Քննություն Ղարաբաղի բարբառին*», Կ. Դավթյանի «*Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*», Ա. Պողոսյանի «*Հաղորդի բարբառը*», Գ. Զահուկյանի «*Հայ բարբառագիտության ներածություն*», Ալ. Սարգսյանի «*Գորիսի բարբառը*» աշխատություններին: Թեմային հեղինակն անդրադարձել է նաեւ «*Արցախահայ բարբառի ուսումնասիրության պատմություն*» հոդվածում /"Ученые записки. Лингвистика (приложение)" АрГУ, Степанакерт, 2002, с. 3-6/):

200. Սարգսյան Ա., *Ղարաբաղի բարբառի բայական դարձվածների սեռային առանձնահատկությունները*, «*Զահուկյանական ընթերցումներ. Ակադեմիկոս Գեորգ Զահուկյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, 2010թ., մայիսի 6-7)*», Երեւան, 2010, էջ 266-270

(Ելնելով բայական դարձվածի ու դարձվածը կազմող բայ բաղադրիչի սեռային փոխհարաբերությունից՝ առանձին ենթաբաժիններով քննության են առնվում Ղարաբաղի բարբառի բայական դարձվածները, որոնք քննվող հարցի տեսանկյունից բաժանվում են երկու խմբի. 1.դարձվածներ, որոնք

բայ բաղադրիչը եւ ամբողջ հարադրությունը ունեն սեռային համապատասխանություն, 2. դարձվածներ, որոնց բայ բաղադրիչն ու հարադրությունը ունեն սեռային անհամապատասխանություն: Միաժամանակ նշելով, որ ուղիղ խնդիր առնելու տեսակետից անմիօրինակություն է նկատվում թե՛ չեզոք, թե՛ ներգործական սեռի բայերով կազմված ներգործական սեռի դարձվածներում, հեղինակը դրանք ներկայացնում է երեք խմբերով՝ ա) ուղիղ խնդիր ընդունող, բ) ուղիղ խնդիր չընդունող, գ) սեռական-տրական հոլովով ուղիղ խնդիր ընդունող: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան օրինակներ):

201. Սարգսյան Ա., **Ղարաբաղի բարբառի բառապաշարի արտացոլումը հայերենի բարբառային բառարաններում**, «Ջահուկյանական ընթերցումներ. Հրաչյա Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումներ (Երեւան, 2011թ., ապրիլի 27-29)», Երեւան, 2011, էջ 257-269

(Խնդրո առարկա հարցի տեսանկյունից քննության են առնվում հայերենի բարբառային տպագիր (Հր. Աճառյանի, Ս. Ամատունու, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի) ու ձեռագիր բառարանները, բարբառագիտական եւ բանահյուսական մի շարք ուսումնասիրությունների ու ժողովածուների կցված բառացանկերը, բերվում են օրինակներ: Հեղինակը ներկայացնում է նաեւ իր «Ղարաբաղի բարբառի բառարան» աշխատության (այդ ժամանակ դեռեւս անտիպ) կազմման սկզբունքներն ու կառուցվածքը:

202. Սարգսյան Ա., **Ղարաբաղի բարբառի բառարան**, Երեւան, 2013, 846 էջ

(Բաղկացած է «Ներածությունից» եւ բուն բառարանից: «Ներածության» մեջ (էջ 5-26) առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացվում են Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության պատմությունը, հնչյունական ու հնչույթային համակարգերը, համաժամանակյա, տարաժամանակյա, դիրքային եւ փոխազդեցական հնչյունափոխության դեպքերը, խոսքի մասերի եւ նրանց քերականական կարգերի (հոգնակիակազմություն, հոլով, անվանական ու դերանվանական հոլովում, հոդառություն, ածականի համեմատության աստիճաններ, բայի դեմք, թիվ, սեռ, հիմքակազմություն, եղանակ, ժամանակ եւն) դրսեւորումները, շարահյուսական առանձնահատկությունները, բառապաշարի շերտերը, իմաստափոխության դեպքերը, բառակազմական միջոցները, ինչպես նաեւ բառարանի կազմման սկզբունքներն ու վկայված օրինակների աղբյուրների եւ ծագումնաբանական, լեզվաոճական, քերականական բնութագրումների համառոտագրությունների ցանկերը: Բուն բառարանը (էջ 27-834) իրականում ունի բացատրական, դարձվածաբանական ու ծագումնաբանական բնույթ եւ ընդգրկում է Ղարաբաղի բարբառի խոսվածքներում գործածվող շուրջ 40000 բառ ու դարձված (այդ թվում՝ դրանց տար-

բերակներ): Յուրաքանչյուր բառահոդված կազմված է հինգ մասից՝ ա) գլխաբառ, բ) ծագումնաբանական նշումներ, գ) լեզվաոճական եւ քերականական նշումներ, դ) իմաստաբանություն, ե) օրինակներ եւ դրանց աղբյուրների վկայություն: Գլխաբառերը ներկայացվում են մեծատառերով եւ նուրբ այբբենական կարգով: Գլխաբառից հետո բերվում են տարբեր խոսվածքներում գործածվող հնչյունափոխված տարբերակները, որոնցից յուրաքանչյուրը, այբբենական կարգով դրվելով համապատասխան տեղում, տե՛ս-ով հղվում է հիմնական բառին: Որպես գլխաբառեր են ներկայացվում նաեւ դերանվանական հոլովմամբ թեքվող դերանունների սեռականի եւ տրականի ձեւերը, անկանոն բայերի խոնարհված յուրահատուկ ձեւերը, բայերի կրավորական ձեւերը եւս: Ծագումնաբանական նշումներ մասում համառոտագրությամբ նշվում է այն լեզուն (հնդեվրոպական հիմք լեզու, գրաբար, արաբերեն, պարսկերեն, թուրքական լեզուներ, ռուսերեն եւս), որից բառը անցել է բարբառին, որից հետո բերվում է փոխատու լեզվի ձեւը, գրաբարինը՝ հայկական, ռուսերենինը՝ սլավոնական, իսկ մյուսները՝ լատինական այբուբենով: Ծագումնաբանական նշումներ չունեն բարբառային բառերը, ինչպես նաեւ նրանք, որոնց ծագումը հեղինակը չի կարողացել բացահայտել: Լեզվաոճական եւ քերականական նշումներ մասում համառոտագրությամբ տրվում են սոցիալական (ծածկաբանություն, մանկական), վերաբերմունքային (անարգական, արհամարհական, ծաղրական, հեգնական), քերականական (գոյական, ածական, ներգործական բայ եւս) բնութագրումները: Իմաստաբանության մասում հնարավորինս համառոտ եւ հստակ ներկայացվում են բառերի ուղղակի եւ փոխաբերական բոլոր նշանակությունները: Մեծ թիվ չեն կազմում հոմանշային բացատրությունները: Նույնիմաստ բառերից բացատրվում է միայն մեկը՝ ամենից տարածվածը, իսկ մյուսները տե՛ս-ով հղվում են վերջինիս: Բառերի նշանակությունները պարզաբանելու ու հիմնավորելու համար նախադասություններով (երբեմն՝ բառակապակցություններով) բերվում են տպագիր ու ձեռագիր աղբյուրներից եւ բանավոր խոսքից քաղված օրինակներ՝ համառոտագրությամբ նշելով աղբյուրը (տպագիր աղբյուրների դեպքում՝ նաեւ համապատասխան ժողովածուի վերնագիրն ու էջը): Վկայված օրինակներ բերվում են բոլոր բառիմաստների համար, բացառությամբ մի շարք գռեհկաբանությունների եւ որոշ տե՛ս-ով հղում ունեցողների: Բառահոդվածի վերջում բառի բոլոր իմաստները բացատրելուց հետո խիստ այբբենական կարգով ներկայացվում են տվյալ գլխաբառով սկսվող դարձվածները (նաեւ տեղական նշանակության՝ կոնկրետ որեւէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող), որին հետեւում են բացատրությունը եւ վկայված օրինակները (բացառությամբ հաղորդակցական արժեք ունեցող դարձվածների): Նույնիմաստ դարձվածները բացատրվում են մեկ անգամ, մյուս դեպքերում հղում է կատարվում, իսկ եթե դրանք տարբերվում են միայն մեկ անդամի (ոչ առաջին) փոփո-

խոթամբ, ապա վերջիններս ներկայացվում են նույն դարձվածի կազմում՝ իրարից անջատելով ուղղահայաց գծիկներով: Եթե որեւէ գլխաբառ հղվում է մեկ այլ գլխաբառի, ապա առաջինի տակ նույնանիշ դարձվածները չեն բերվում: Բառարանում խստիվ պահպանվել են բարբառային գիտական տառադարձության (ավանդական) սկզբունքները. քմային ձայնավորները նշվել են *ւմ, ու, օ*, քմային բաղաձայնները՝ *գ, կ, ք, լ* եւն, երկբարբառակերպերը՝ *ըէ, ըհ* տառատեսակներով: Աշխատությանը կցված է նաեւ օգտագործված գրականության ու ձեռագիր աղբյուրների ընդարձակ ցանկ (էջ 835-845):

203. Սարգսյան Ա., *Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությունը «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի էջերում*, «Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեյի հիշատակին (1937-2016), 2-5 հոկտեմբերի, 2017. Հիմնադրույթների ժողովածու», Երեւան, 2017, էջ 107-110

(Կարելորվում են Գ. Զահուկյանի, Ս. Աբրահամյանի, Բ. Ուլուբաբյանի, Ս. Ալավերդյանի, Լ. Հովհաննիսյանի, Բ. Մեծունցի, Ժ. Միքայելյանի, Զ. Երվանդյանի, Ս. Մանուչարյանի՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում տարբեր տարիների տպագրված այն հոդվածները, որտեղ հեղինակները քննել են Ղարաբաղի բարբառի, նրա որոշ ենթաբարբառների ու խոսվածքների տարբեր օրինաչափություններ, ծագման ու զարգացման հետ կապված մի շարք հարցեր):

204. Սարգսյան Ա., *Ղարաբաղի տարածքի բարբառների արդի կարգավիճակը ըստ Գ. Զահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման*, «Զահուկյանական ընթերցումներ», Երեւան, 2009, էջ 154-158

(Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործածվող՝ տարբեր լեզվաբանների կողմից առանձին բարբառներ ընդունված Ղարաբաղի, Հադրուփի, Շաղախի, Մեհտիշենի, Չայլուի, Մարաղայի միավորներին՝ ներկայացվում է դրանց փոխազդեցությունները: Արդյունքում հեղինակը, կիրառելով Գ. Զահուկյանի՝ հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքները, պարզում է, որ հանրապետությունում արդի ժամանակաշրջանում համատարած գործածություն ունի Ղարաբաղի բարբառը, Հադրուփի եւ Մեհտիշենի խոսվածքները ներկայանում են որպես վերջինիս ենթաբարբառներ, Շաղախը՝ Հադրուփի ենթաբարբառի խոսվածք, իսկ Չայլուի եւ Մարաղայի բարբառները տարբեր բնակավայրերում ապրող առանձին ընտանիքների եւ անհատների սեփականությունն են եւ գտնվում են անհետացման ճանապարհին: Միաժամանակ նշվում է, որ Ղարաբաղի բարբառն իր հերթին հետզհետե ավելի ու ավելի է ենթարկվում գրական հայերենի խիստ ազդեցությանը եւ զարգացման ու գոյատեւման մեծ հեռանկարներ չունի):

205. Սարգսյան Ա., *Մայրենի լեզվի ուսուցման դժվարությունները Ղարաբաղի բարբառախոս միջավայրում*, «Հոդվածների ժողովածու. Նվիրվում է հայ գրերի գյուտի եւ Ամարասի դպրոցի 1600-ամյակին. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2005, էջ 52-54

(Վեր են հանվում Ղարաբաղի բարբառախոս միջավայրում ուսման գործընթացում բարբառի առանձնահատկություններով պայմանավորված դժվարությունները, որոնք հանգեցնում են աշակերտների բանավոր ու գրավոր խոսքի մեջ հնչյունական-արտասանական, ուղղախոսական-ուղղագրական, քերականական եւ ոճական բնույթի՝ մայրենի լեզվի օրինաչափություններից շեղվող սխալների արմատավորմանը: Դրանք հաղթահարելու համար հեղինակն անհրաժեշտ է համարում, որ բոլոր առարկաների ուսուցիչները տիրապետեն ոչ միայն գրական հայերենին, այլև Ղարաբաղի բարբառին):

206. Սարգսյան Ա., Մարգարյան Լ., *Բարբառային ազդեցությունները Արցախի տարածքում*, «Հայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ. Թեզիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 31-32

(Ներկայացվում են տարբեր ժամանակներում, հատկապես 19-րդ դարի երկրորդ տասնամյակի վերջերին բարբառախոս այլ վայրերից գաղթած եւ Արցախում վերաբնակված հայերի բարբառների վրա Ղարաբաղի բարբառի ունեցած ազդեցության աստիճաններն ու դրանք պայմանավորող հանգամանքները: Միաժամանակ նշվում է, որ վերաբնակվածներն իրենց հերթին որոշ ազդեցություն են թողել տեղական խոսվածքների վրա, ինչը սահմանափակվում է բառապաշարային մակարդակով: Անդրադարձ է կատարվում նաեւ Ղարաբաղի բուն բարբառի՝ Հաղրուփի ենթաբարբառի վրա ունեցած ազդեցությանը):

207. Սարգսյան Ա., *Մեհտիշենի բարբառի տեղը հայերենի բարբառների շարքում*, *Место мектишенского диалекта в ряду армянских диалектов*, *The place of the Mehtishen dialect among the Armenian dialects*, «Հայ լեզվաբանության IX միջազգային գիտաժողովի թեզիսների ժողովածու. ՌԳԱ լեզվաբանության ինստիտուտ», Սանկտ-Պետերբուրգ, 2012, էջ 191-194

(Հաստատելով, որ մասնագիտական գրականության մեջ առանձին բարբառ համարվող ԼՂՀ Ասկերանի շրջանի Մեհտիշեն գյուղի խոսվածքը, որպես բարբառ, առաջացել է 19-րդ դարավերջին-20-րդ դարասկզբին՝ 1929թ. Պարսկաստանի Խոյի գավառից գաղթածների մայրենի բարբառի վրա տեղական՝ Ղարաբաղի բարբառի խիստ ազդեցության արդյունքում՝ հեղինակը որոշ փաստերով փորձում է հիմնավորել, որ արդի ժամանակաշրջանում այն արդեն ոչ թե առանձին բարբառ, այլ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ է ու խոսվածքի վերածվելու միտում ունի):

208. Սարգսյան Ա., Մինասյան Շ., **Չարցական եւ հեգնական հնչերանգը Ղարաբաղի բարբառի դարձվածներում**, «Կանթեղ», Երեւան, 2007, N 1, էջ 91-94

(Քննվում են Ղարաբաղի բարբառի հարցական եւ հեգնական հնչերանգ ունեցող դարձվածների կառուցվածքային եւ իմաստային զանազան դրսեւորումները: Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են հարցական (1.ընդհանրական կիրառություն ունեցող դարձվածներ, որոնք կարող են ստանալ նոր հարցական ձեւավորում, 2.ընդհանրական կիրառություն ունեցող դարձվածներից հարցական ձեւավորումով յուրահատուկ իմաստ ստացած դարձվածներ, 3.միայն հարցական ձեւավորում ունեցող դարձվածներ, որոնք մյուսներից տարբերվում են իրենց իմաստային բազմազանությամբ եւ հարցադրման նպատակով) եւ հեգնական (1.սովորական հեգնանք արտահայտող դարձվածներ, երբ դրական գաղափարի բառը կամ արտահայտությունը գործածվում է բացասական, ժխտական նշանակությամբ, 2.դարձվածներ, որոնք հեգնական հնչերանգով արտահայտում են մի, սովորական հնչերանգով՝ հակառակ իմաստը) դարձվածների տեսակները: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան օրինակներ):

209. Սարգսյան Ա., Մինասյան Շ., **Չողային կարգը Ղարաբաղի բարբառում (որոշյալ եւ անորոշ առումներ)**, «Կրթությունը եւ գիտությունը Արցախում», Երեւան, 2004, N 1-2, էջ 141-146

(Քննության են առնվում որոշյալ եւ անորոշ առումների դրսեւորումները Ղարաբաղի բարբառում, ներկայացվում են *ը* եւ *և* որոշյալ հոդերի գործածության հնարավոր բոլոր դեպքերն ու գրական հայերենի համեմատությամբ եղած առանձնահատկությունները (որոշյալ եւ անորոշ առումների դեպքում *և* հոդից առաջ տարբեր հոլովակերտների առկայություն, բոլոր հոլովածուների (այդ թվում՝ անորոշ դերբայի)՝ որոշիչ հոդով գործածություն, որոշյալ ինդրի հետ կապերի զգալի մասի գործածություն, որոշ խոսվածքներում միավանկ կոչականի հոդառություն, որոշ խոսվածքներում անձնանունների ու հատուկ հին տեղանունների, հատկացական *իմ* եւ *քո* դերանունների, ինչպես նաեւ նրանց հոգնակի ձեւերի հետ ազգակցություն ցույց տվող բառերի՝ առանց հոդի գործածություն, որոշիչ հոդով փոխանունների սեռականից երկրորդային, երրորդային, չորրորդային փոխանունության արտահայտություն, մի շարք դարձվածների՝ հոդով եւ առանց հոդի գործածվելու դեպքերում տարբեր իմաստների առկայություն եւն): Ուստի հեղինակների՝ գրական հայերենի համեմատությամբ բարբառում դարձվածները որոշիչ հոդով գործածվելու հակվածություն ունեն, որին նպաստում է բոլոր հոլովների՝ հոդ ստանալու հանգամանքը):

210. Սարգսյան Ա., Մինասյան Շ., **Ղարաբաղի բարբառի գունանունները**, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 2004, N 2, էջ 190-194

(Կարելորելով գունանունների վերլուծությունը ոչ միայն իմաստաբանության, այլև տվյալ ժողովրդի ու հանրության աշխարհաճանաչողության, աշխարհընկալման առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից եւ անդրադառնալով հայերենի գունանուններին առնչվող ուսումնասիրություններին՝ հեղինակները քննության են առնում Ղարաբաղի բարբառի գունանունները՝ ներկայացնելով դրանց կառուցվածքային ու բառիմաստային առանձնահատկությունները: Միաժամանակ, ըստ ծագումնաբանության այդ միավորները բաժանելով երեք խմբի (*քնիկ, փոխառյալ, անհայտ ծագման*) եւ հաշվի առնելով տարբեր լեզվաբանների ներկայացրած մեկնությունները, փորձ է արվում ներկայացնելու բարբառին հատուկ որոշ գունանունների (*ալա, զումբուրուտ, գառ, գարդա, թոխ, խակի, մըթէն, մըրոտոց, մօք, շահմար, շարմաղ, սարխօշ, սը՛վ սիրը՛կ*) ծագումնաբանությունը):

211. Սարգսյան Ա., Միևսայան Շ., **Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան**, Երեւան, 2017, 568 էջ

(Բաղկացած է «Ներածությունից» եւ բուն բառարանից: «Ներածության» մեջ (էջ 5-63) անդրադարձ է կատարվում նյութի ընտրությանը, հարցին առնչվող գրավոր աղբյուրներին, օտար եւ հայ լեզվաբանության մեջ դարձվածի ըմբռնման եւ դասակարգման վերաբերյալ եղած կարծիքներին, օգտագործված գրավոր աղբյուրների լեզվին ու տառադարձությանը, հանգամանորեն քննվում են Ղարաբաղի բարբառի անվանական ու հաղորդակցական դարձվածային միավորներն ու դրանց տարատեսակները, կառուցվածքային տիպերը, բազմիմաստության, համանունության, հոմանիշության, հականիշության, ինչպես նաեւ լեզվաարտահայտչական միջոցների (*փոխաբերություն, փոխանունություն, խորհրդանշան, համեմատություն, շրջասություն, չափազանցություն եւ նվազասույթ, հեզնանք, բազմաշաղկապություն եւ անշաղկապություն, դիմառնություն, զեղչում*) դրսեւորումները խնդրո առարկա դարձվածներում: Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են նաեւ բառարանի կազմման սկզբունքները եւ վկայված օրինակների աղբյուրների համառոտագրությունների ցանկը: Բուն բառարանը (էջ 64-558) ընդգրկում է Ղարաբաղի բարբառի խոսվածքներում գործածվող շուրջ 15000 դարձված (այդ թվում՝ տեղական նշանակության՝ կոնկրետ որեւէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող), որոնք ներկայացվում են *նուրբ* այբբենական կարգով: Յուրաքանչյուր դարձվածահոդվածում դարձվածից հետո (առկայության դեպքում) համառոտագրությամբ նշվում են տվյալ դարձվածային միավորի բովանդակության եւ ձեւի հասարակական վերաբերմունքային երանգները (*անարգական, արհամարհական, ծաղրական, ծածկաբանություն, մանկական, օրինանք, հեզնական, բարեմաղթություն, անեծք*), որից հետո հնարավորինս համառոտ եւ հստակ տրվում են դարձվածի նշանակու-

թյունները: Նույնիմաստ դարձվածներից բացատրվում է միայն մեկը՝ ամենից տարածվածը, իսկ մյուսները *տե՛ս*-ով հղվում են վերջինիս: Եթե դարձվածը հանդես է գալիս նաեւ հավելյալ տառերով ու բառերով, ապա վերջիններս դրվում են կլոր փակագծերի մեջ, իսկ միայն մեկ անդամի (ոչ առաջին) փոփոխությամբ տարբերվող նույնիմաստ միավորները հիմնականում ներկայացվում են նույն դարձվածի կազմում՝ իրարից անջատելով ուղղահայաց գծիկներով: Դարձվածների նշանակությունները պարզաբանելու ու հիմնավորելու համար նախադասություններով բերվում են տպագիր ու ձեռագիր աղբյուրներից եւ բանավոր խոսքից քաղված օրինակներ՝ համառոտագրությամբ նշելով աղբյուրը (տպագիր աղբյուրների դեպքում՝ նաեւ համապատասխան ժողովածուի վերնագիրն ու էջը): Վկայված օրինակներ բերվում են բոլոր իմաստների համար, բացառությամբ *տե՛ս*-ով հղում ունեցողների: Բառարանում խստիվ պահպանվել են բարբառային գիտական տառադարձության (ավանդական) սկզբունքները. քմային ձայնավորները նշվել են *մ, ռ, օ*, քմային բաղաձայնները՝ *գ, կ, ք, լ* եւս, երկբարբառակերպերը՝ *ը՛, ը՛* տառատեսակներով: Աշխատությանը կցված է նաեւ օգտագործված գրականության ու ձեռագիր աղբյուրների ընդարձակ ցանկ (էջ 559-566):

212. Սարգսյան Ա., Մինասյան Շ., ***Ղարաբաղի բարբառի դարձվածների հնչերանգային առանձնահատկությունները***, «Ջահուկյանական ընթերցումներ. Գիտական հոդվածների ժողովածու», Երեւան, 2016, էջ 194-199

(Կարելորելով հնչերանգի դերը ինքնուրույն գործածվող լեզվական միավորների, այդ թվում՝ դարձվածների, ձեւավորման եւ խոսքային միջավայրում նրանց դրսեւորման տեսակետից, ինչպես նաեւ բարբառային նյութերը հարցի ուսումնասիրության համար՝ հեղինակները ներկայացնում են Ղարաբաղի բարբառի դարձվածների հնչերանգային առանձնահատկությունները: Առանձին ենթաբաժիններով քննության են առնվում երեք կարելոր իրողություններ՝ *տրամաբանական շեշտը որպես դարձվածի առաջացման եւ դարձվածային համանունության առաջացման գործոն, հարցական հնչերանգ ունեցող դարձվածային միավորները, հնչերանգային հատուկ ձեւավորվածությունը՝ որպես դարձվածի առաջացման պատճառ*: Հանգամանորեն ներկայացվում են դրանց բազմազան դրսեւորումները, յուրաքանչյուրի համար բերվում են համապատասխան օրինակներ):

213. Սարգսյան Ա., Մինասյան Շ., ***Միայն դարձվածներում պահպանված Ղարաբաղի բարբառին հատուկ բառեր ու բառաձեւեր***, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1999, N 1, էջ 94-97

(Քննության են առնվում մի շարք բառեր ու բառաձեւեր, որոնք Ղարաբաղի բարբառում առանձին գործածություն չունեն եւ հանդիպում են միայն դարձվածներում (*անդժին* ընգնել, լիզգին *փաթ* ըղնել, խալիւէն

աշկէն *շերանը* տըհսնում ա, ձորան աշկէն կ'երանը տըհսնում չի, *յըզը-հավաք* անէլ, *յէրմանիմ* անէլ, մըթպէն *ղօնը* ընգնէլ, *ցըմըքիատ* ինիլ, *լիւ* կէնալ *եւն*), որոնց մի մասը գրաբարյան քարացած հոլովածեւեր են (*գիրավ* ածէլ, *գիրավ* անէլ, *գիրավ* հընցնէլ, *գինքը* շըղըհարէլ, *գինքը* ձորան պահէլ, *գինքը* կուրցընէլ, *հօքօգ-հանգուցէլօց* տըհնալ *եւն*): Անդրադարձ է կատարվում նաեւ դրանց ծագումնաբանությանն ու իմաստային փոփոխություններին):

214. Սարգսյան Ա., Մինասյան Շ., *Ստացականությունը եւ դիմորոշությունը Արցախահայ բարբառում*, «Կրթությունը եւ գիտությունը Արցախում», *Երեւան*, 2004, N 3-4, էջ 141-144

(Քննության են առնվում ստացականության եւ դիմորոշության դրսեւորումները Արցախահայ (Ղարաբաղի) բարբառում, ներկայացվում են *ս*, *տ*, *ը/ւ* ստացական եւ դիմորոշ հոդերի գործածության հնարավոր դեպքերն ու գրական հայերենի համեմատությամբ եղած տարբերությունները: Որպէս առանձնահատկություններ՝ հատկապէս շեշտվում են առաջին եւ երկրորդ դեմքի եզակի թվի անձնական դերանվան հետ գործածվող գոյականների (բացառությամբ ազգակցություն ցույց որոշ բառերի)՝ ստացական հոդ ստանալը, ստացական հոդ ստացած սեռական-տրականի ձեւերով երկրորդական փոխանունության արտահայտությունը, գրաբարից ավանդված անձներական թվականների եւ փոխանուն ածականների հետ դիմորոշ հոդերի գործածությունը եւն):

215. Սարգսյան Ա., *Ճաղախի ենթաբարբառը Հաղորդի ենթաբարբառի միջավայրում*, *Ստեփանակերտ*, 2009, 104 էջ

(Համաժամանակյա եւ տարաժամանակյա մոտեցումներով քննվում են Արցախի Հաղորդի շրջանի Խծաբերդ, Ղուլանլար (Արեւշատ), Ճաղախ (Սարեն շեն), Մելիքջանլու (Մելիքաշեն), Խրմանջուղ (Ծաղկավանք), Ալբուլաղ (Ակնաղբյուր) գյուղերի խոսվածքները, որոնց ամբողջությունը մասնագիտական գրականության մեջ հայտնի է *Ճաղախի ենթաբարբառ* անվամբ, եւ որոնց բնակիչների նախնիները 1828թ. այդ գյուղերն են գաղթել Պարսկաստանի Ղարաղաղի գավառից: Աշխատությունը բաղկացած է ներածական մասից եւ հինգ բաժնից: «*Ներածության*» մեջ (էջ 3-5) տեղեկություններ են տրվում տվյալ գյուղերի հիմնադրման, տեղական՝ Հաղորդի ենթաբարբառից մայրենի՝ Ղարաղաղի բարբառի կրած ազդեցությունների, արդի վիճակի, հարցի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների մասին: Առաջին բաժնում՝ «*Հնչյունաբանություն*» (էջ 6-24), առանձին ենթաբաժիններով հանգամանորեն ներկայացվում են ենթաբարբառի հնչյունախոսությունը, հնչույթային համակարգը, շեշտի դրսեւորումները, համաժամանակյա, տարաժամանակյա, դիրքային եւ փոխազդեցական հնչյունափոխության դեպքերը: Երկրորդ բաժինը՝

«Ձեռքարկություն» (էջ 25-78), սվիրված է խոսքի մասերի եւ նրանց քերականական կարգերի քննությանը: Առանձնակի ուշադրություն է դարձվում գոյականի թվի, հոլովի ու հոլովման, հոդառության, դերանվանական հոլովման, բայի սեռի, դեմքի, թվի, եղանակի եւ ժամանակի կարգերին, բայի անդեմ ձեւերին, բայակազմությանը, հիմքակազմությանը, անկանոն ու պակասավոր բայերին, կապերի հոլովառությանը, բերվում են հոլովման ու խոնարհման հարացույցները եւ: Երրորդ բաժնում՝ «Շարահյուսական ակնարկ» (էջ 79-80), թվարկվում են շարահյուսական առանձնահատկությունները, իսկ չորրորդ բաժնում՝ «Բառագիտություն» (էջ 80-85), քննվում են ենթաբարբառի բառապաշարի շերտերը, իմաստափոխության տեսակներն ու դեպքերը, բառակազմական միջոցները: Ամբողջ քննությունը կատարվում է Ղարաբաղի բարբառի Հադրութի ենթաբարբառի համեմատությամբ եւ հին ու նոր սերունդների խոսվածքների հակադրությամբ՝ հին սերունդ անվան տակ ընդգրկելով 70-ից բարձր տարիք ունեցող, իսկ նոր սերունդ անվան տակ՝ մինչեւ 40 տարեկան բարբառախոսներին: Նման մոտեցմամբ հինգերորդ բաժնում՝ «Շաղախի եւ Հադրութի ենթաբարբառների համեմատական նկարագիրը» (էջ 86-88), հեղինակը Գ. Ջահուկյանի՝ հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման ակզբունքների եւ տարբերակիչ հատկանիշների համաձայն ներկայացնում է Շաղախի ենթաբարբառի հին ու նոր խոսվածքների եւ Հադրութի ենթաբարբառի համեմատական նկարագիրը՝ արդյունքում պարզելով, որ Շաղախի հին սերունդի խոսվածքը Հադրութի ենթաբարբառից ունի 17,5 տարբերակիչ հատկանիշ եւ ներկայանում է որպես առանձին ենթաբարբառ, մինչդեռ նոր սերունդի խոսվածքը, Հադրութի ենթաբարբառից տարբերվելով ընդամենը 3,5 տարբերակիչ հատկանիշով, դասվում է վերջինիս խոսվածքների շարքին: Ուսումնասիրությանը կցված են նաեւ հավելված (89-97), որտեղ նշված վեց գյուղերի ու Հադրութի հին եւ նոր սերունդների խոսվածքներով ներկայացվում են բարբառային նյութեր, եւ օգտագործված գրականության ցանկ (էջ 98-100): Աշխատությունը հեղինակի՝ 1998 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուականատենախոսության (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյան) լրամշակված տարբերակն է: Ատենախոսությանը, որը պահվում է նույն ինստիտուտի գրադարանում, կցված են նաեւ գրաբարից ավանդված, բարբառային եւ փոխառյալ բառերի բառացանկեր (շուրջ 5000 միավոր):

216. Սարգսյան Ա., **Շաղախի ենթաբարբառի հնչույթային համակարգը**, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1995, N 3, էջ 197-203

(Անդրադառնալով 19-րդ դարի առաջին կեսին Պարսկաստանի Ղարաբաղի գավառից գաղթած եւ Արցախի Հադրութի շրջանի Շաղախ, Խծաբերդ, Դոլանլար, Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ գյուղերում

վերաբնակված բնակչության խոսվածքի՝ Շաղախի ենթաբարբառի հնչյունական համակարգին եւ հնչյունախոսությանը՝ հեղինակը ներկայացնում է յուրաքանչյուր հնչյունի գործածության դիրքերն ու լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքների համաձայն՝ տարբերակիչ հատկանիշների կիրառմամբ ու իմաստային հակադրության զույգերի միջոցով պարզում դրանց հնչույթային արժեքը: Առանձնակի ուշադրություն է դարձվում գրական հայերենում բացակայող, սակայն ենթաբարբառին հատուկ քմային *ü, ñ, ö, q, ʎ, p', ɽ* հնչյուններին, շեշտակիր *ը* ձայնավորին, *ը* եւ է ձայնավորների միջին աստիճանը ներկայացնող *ը<sup>է</sup>* երկբարբառակերպին, որոնց հնչույթայնությունը ի վերջո որոշվում է իմաստաբանական մակարդակում գրական հայերենի *ա, ու, օ, գ, ւ, ք, ւ, ը* հնչյուններին համապատասխանաբար հակադրելու միջոցով: Արդյունքում հիմնավորվում է, որ Շաղախի ենթաբարբառում անկախ հնչույթային արժեք ունեն ոչ միայն գրական հայերենին համապատասխանող, այլեւ նշված քմային հնչյունները, միևնույն միայն միավանկ բառերի փակ վանկում հանդես եկող շեշտակիր *ը<sup>օ</sup>*-ն եւ երկվանկ ու բազմվանկ բառերի փակ վանկում գործառող *ը<sup>է</sup>* երկբարբառակերպը, հնչույթաբանական մակարդակում չհակադրվելով ամենամերձավոր հնչույթին՝ *ը*-ին, ու չկատարելով իմաստագատիչ դեր, ներկայացնում են վերջինիս դիրքային տարբերակները):

217. Սարգսյան Ա., **Շաղախի եւ Հաղարուծի ենթաբարբառների դերանվանական համակարգը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1998, N 1, էջ 59-64

(Ներկայացվում է Ղարաբաղի բարբառի Հաղարուծի եւ Շաղախի ենթաբարբառների դերանվանական համակարգերի համեմատական քննությունը, առանձնակի ուշադրություն է դարձվում անվանական ու դերանվանական հոլովմանը: Վեր հանելով Շաղախի ենթաբարբառի՝ Հաղարուծի ենթաբարբառից ունեցած տարբերությունները՝ հեղինակը նշում է նաեւ, որ դրանք չեն տարածվում նոր սերնդի խոսվածքի վրա, որը, ենթարկվելով Հաղարուծի ենթաբարբառի խիստ ազդեցությանը, աստիճանաբար մոռացության է տալիս մայրենի ենթաբարբառի առանձնահատկությունները, ինչը վկայում է, որ Շաղախի ենթաբարբառը գտնվում է վերացման եզրին):

218. Սարգսյան Ա., **Շաղախի եւ Հաղարուծի ենթաբարբառների համեմատական նկարագիրը**, «Գիտությունը եւ կրթությունը Ղարաբաղում», Երեւան, 1997, N 2, էջ 62-65

(Ըստ Գ. Զահուկյանի՝ հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքների՝ ներկայացվում է Ղարաբաղի բարբառի Հաղարուծի ենթաբարբառի եւ 1828 թվականին Պարսկաստանի Ղարաղաղի գավառից գաղթած հայերի կողմից Արցախի

Հաղորդի շրջանում հիմնադրված Խծաբերդ, Ղուլակար, Շաղախ, Մելիք-ջակու, Խրմանջուղ, Աղբուլաղ գյուղերի խոսվածքների ամբողջության՝ Շաղախի ենթաբարբառի հին ու նոր սերունդների խոսվածքների համեմատական նկարագիրը: Ելնելով քննության արդյունքներից՝ հեղինակն այն տեսակետն է առաջ քաշում, որ հին սերնդի խոսվածքը Հաղորդից ունի բավարար տարբերակիչ հատկանիշներ եւ կարող է համարվել առանձին ենթաբարբառ, մինչդեռ նոր սերնդի խոսվածքը ենթաբարբառային սահմաններ գծող տարբերություններ չի ներկայացնում եւ պարզապես դասվում է Հաղորդի ենթաբարբառի խոսվածքների շարքին):

219. Սարգսյան Ա., ***Ռուսերենից փոխառյալ բառերի հնչյունային եւ իմաստային փոփոխությունները Ղարաբաղի բարբառում***, «Լրատու. Մեսրոպ Մաշտոց համալսարան», Ստեփանակերտ, 2010, N 2, էջ 239-242

(Ներկայացվում են Ղարաբաղի բարբառի՝ ռուսերենից կատարած անմիջական (*ակուշկա, ապասնի, բալնիցա, կաբուտը, սամասվալ, կալխօզնիկ եւն*) եւ միջնորդավորված (*ալիբաստըր, ակուրատնի, շագալաթ, չէկ, պըլաստիլին, բանդիտ եւն*) փոխառությունները, որոնք դասակարգվում են ըստ խոսքիմասային պատկանելության (*գոյական, ածական, թվական, մակբայ, վերաբերական*), կազմության (*պարզ, ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր*), ըստ ժամանակագրության (*նախախորհրդային, խորհրդային, հետխորհրդային*): Առանձնակի ուշադրություն է դարձվում դրանց՝ բարբառում կրած հնչյունական եւ իմաստային փոփոխություններին: Հոդվածը՝ «***Ռուսերենի դերը Ղարաբաղի բարբառի բառապաշարի հարստացման գործում***» վերնագրով եւ որոշ սահմանափակումներով, տպագրվել է նաեւ հետազայում/«*Armenian Language Contacts Through the Ages. Abstracts. International Conference, 12-15 May, 2015*», St. Peterburg, 2015, p. 49-50):

220. Սարգսյան Լ., ***Հայոց լեզվի ուսուցումը բարբառային միջավայրում***, «Հայոց լեզու եւ գրականություն», Երեւան, 2013, N 8, էջ 46-48

(Առանձին պարբերություններով անդրադառնալով արցախցի աշակերտների գրավոր եւ բանավոր խոսքում հաճախ հանդիպող հնչյունական-արտասանական, ուղղագրական-ուղղախոսական (*վերջընթեր վանկի շեշտադրություն, քմային ձայնավորների ու բաղաձայնների առկայություն, երկբարբառակերպների, Ֆ-ի փոխարեն փ-ի, երկհնչյունների փոխարեն պարզ ձայնավորների գործածություն եւն*), ձեւաբանական (*բացառականի կազմություն ան վերջավորությամբ, Է-ի փոխարեն ա օժանդակ բայի, հարկադրականի պիտի եղանակիչի փոխարեն բիդի-ի, հրամայականի ասա, խմիր, խոսիր ձեւերի փոխարեն ասէ, խըմէ, խոսէ ձեւերի գործածություն*), շարահյուսական (*անձնական դերանուն ենթակայի տրականով գործածություն ունեմ բայի հետ, ենթակայի ու ստորոգյալի անհամաձայնություն, օժանդակ բայի շեշտադրություն հարցական նախադասություններում եւն*) բնույթի՝ Ղարաբաղի բարբառի օրինաչափություններով

պայմանավորված սխալներին՝ հեղինակը անհրաժեշտ է համարում, որ բոլոր առարկաների ուսուցիչները տիրապետեն բարբառին, որպեսզի կարողանան օժանդակել աշակերտներին՝ հաղթահարելու նման խոչընդոտները):

221. *Սարգսյան Վ., Հայկական «Արցախ» տեղանունը, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1995, N 2, էջ 66-79*

(Քննության առնելով Արցախ տեղանվան հնչյունական կառուցվածքը եւ նախնական իմաստը, կապը տեղանքի ֆիզիկական առանձնահատկությունների հետ, հայկական լեռնաշխարհի ու Պիրենյան թերակղզու մի շարք տեղանուններ՝ հեղինակը փորձում է հիմնավորել, որ *Արցախ* տեղանունը, որը սկզբնապես եղել է գետանուն՝ նշանակելով *շատ ջուր*, զուտ հայկական կազմություն է, որի բաղադրիչները՝ *ար* (ջուր)-*դի* (շատ)-*ախ* (ջուր), գալիս են հնդեվրոպական նախալեզվից եւ պատկանում են հայերենի բառապաշարի հնագույն եւ առավել գործածական շերտերին):

222. Վարդանյան Ա., *Ղարաբաղի բարբառում նոր իրանական որոշ փոխառությունների շուրջ*, «Արեւելագիտության հարցեր», Երեւան, 2016, N 12, էջ 273-280

(Քննության են առնվում Ղարաբաղի բարբառում գործածվող նոր իրանական մի քանի փոխառություններ՝ *բահար* (գարուն), *ռուզի/ըռուզի* (բարիք, բերք, ապրուստի միջոց, եկամուտ, օրապահիկ), *շրհար/շահիր* (քաղաք, երկիր), *մարգամուշ* (քնեցնող թույն), որոնց մի մասը, ըստ հեղինակի, բարբառին է անցել Պասկաստանի տարբեր գավառներից գաղթած եւ Արցախի հարավում՝ Իրանի հետ սահմանամերձ շրջաններում, բնակվող հայերի խոսվածքներից: Ուշադրություն է դարձվում նաեւ այդ բառերով կազմված բարդություններին եւ իմաստային որոշ փոփոխություններին):

223. Վարդապետյան Ն., *Ձայնավորների եւ երկբարբառների հնչյունափոխությունը Գորիսի բարբառում*, «Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատանքների ժողովածու», Երեւան, 1960, N 6, մաս 2-րդ, էջ 129-157

(Հանգամանորեն ներկայացվում են Գորիսի բարբառում (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) ձայնավորների ու երկբարբառների (երկհնչյուններ) հնչյունափոխության բոլոր տեսակներն ու դեպքերը, բերվում են համապատասխան օրինակներ: Հոդվածը հեղինակի «*Սյունյաց բարբառ*» անտիպ աշխատության մի առանձին հատվածն է):

224. Ուլուբաբյան Բ., *Հայոց լեզվի հյուսիս-արեւելյան եզրի եւ հարակից հարցերի մասին*, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1968, N 1, էջ 51-77

(Բարբառը համարելով ազգի տվյալ հատվածի պատմության կենդանի

վկայությունը եւ անդրադառնալով հայերենի ամենամեծ՝ Արցախի (Ղարաբաղի) բարբառի ընդգրկած սահմաններին, նրա մասին եղած ուսումնասիրություններին ու մասնագիտական գրականության մեջ առկա հիշատակություններին՝ հեղինակը կարելուրում է բարբառի բազմակողմանի քննության անհրաժեշտությունը: Միաժամանակ քննության է առնում Արցախի պատմության եւ բարբառի ծագման ու զարգացման հետ կապված մի շարք հարցեր, հենվելով պատմական եւ կոնկրետ փաստերի վրա՝ վերհանում Ղարաբաղի բարբառում պահպանված գրաբարյան որոշ օրինաչափություններ՝ վերջնահանգ *ն*-ի առկայություն, *ֆ* հնչյունի բացակայություն եւ օտարալեզու բառերում նրա փոխարեն *փ*-ի գործածություն, մի շարք բառերի սկզբում *հ*-ի հավելում, որոշ դեպքերում *գ* նախդիրի, հինհայերենյան հոլովածների պահպանում, բառապաշարի համընկում: Արդյունքում փորձելով հիմնավորել, որ Ղարաբաղի բարբառը առաջացել է շատ ավելի վաղ, քան Արցախի 387 թվականի մեկուսացումը, հեղինակը հերքում է Արցախի պատմությունը աղավաղող ադրբեջանամետ որոշ գործիչների առաջ քաշած այն թյուր տեսակետը, որ իբր Ղարաբաղի բարբառը առաջացել է ավելի ուշ՝ գարգարա-հաբեթական լեզվի կամ աղվաներենի հիմքի վրա):

225. Քումուսց Մ., *Անձկայք>Քարահունջ>Բոլորաքար (տեղագրական եւ ստուգաբանական քննություն)*, «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն. Մետրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (27-29 հոկտեմբերի, Ստեփանակերտ, 2017) հողվածների ժողովածու », Ստեփանակերտ, 2017, էջ 403-407

(Պատմական փաստերի հիման վրա ներկայացվում է Գորիսի շրջանի Քարահունջ գյուղի տեղագրական եւ նրա անվան ստուգաբանական քննությունը: Ըստ հեղինակի՝ Քարահունջ բնականունը բաղադրված է *քար* եւ Ղարաբաղի ու Գորիսի բարբառներում տարածված *օնջ* (մուր, ժանգ) արմատներից):

226. Քումուսց Մ., «*Գորիս*» տեղանվան ստուգաբանություն, «Գիտական հողվածների ժողովածու. նվիրվում է Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակին», Երեւան, 2016, էջ 378-396

(Հանգամանորեն անդրադառնալով տարբեր գիտնականների կողմից ներկայացված *Գորիս* տեղանվան մեկնություններին՝ հեղինակն առաջ է քաշում իր տեսակետը, որի համաձայն *Կօրէս/Գորիս* տեղանունը նախապես ունեցել է հասարակ անվան նշանակություն՝ ձոր իմաստով, եւ ծագում է հնդեվրոպական \**gʰouoro-* (ձոր) բնիկ ձեւից):

227. Քումուսց Մ., *Զանգեզուր տեղանվան ստուգաբանության շուրջ*, «Հայագիտություն. Սյունիք», Երեւան, 2016, թիվ 1, էջ 40-58

(Քննության առնելով *Զանգեզուր* տեղանվան ծագման վերաբերյալ

հայագիտության մեջ տարբեր ժամանակներում արտահայտված տեսակետներն ու ժողովրդական ստուգաբանությունները՝ հեղինակը փորձում է հիմնավորել, որ դրանցից ոչ մեկը հավաստի չէ, եւ հույս հայտնում, որ պատմական ու լեզվաբանական հետազոտումնասիրությունները լուրջ հիմքեր կստեղծեն հարցի վերջնական լուծման համար):

228. Քումունց Ս., *Սյունիք-Արցախ բարբառային տարածքի ռազմական բնագավառի տերմինները Գորիսի բարբառում*. «Բանբեր Երեւանի Վ. Բոյունովի անվան պետական լեզվաասարակագիտական համալսարանի», Երեւան, 2017, N 1, էջ 690-700

(Քննության են առնվում Սյունիք-Արցախ բարբառային տարածքի ռազմական բնագավառի՝ նախալեզվից անցած (*նետ, սուր*), գրաբարից ավանդված (*հանեղ, կօխ*), բարբառային (*բարսուղ, թըկըմըհակ անէլ*), փոխառյալ (*բարութ, գհլլան*) տասնյակ տերմինների դրսեւորումները Գորիսի բարբառում (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ): Հեղինակը դրանք բաժանում է նաեւ ներթեմատիկ իմաստային խմբերի՝ *ռազմի թեմատիկ խմբի մեջ ընդգրկվող բառեր, առտնին վեճ-կռիվներին վերաբերող բառեր, նաեւ մարտում գործածվող իրերի անուններ, մարտական գործողություն, կռվի ընթացք եւ մատնանշող բառեր*):

229. Քումունց Ս., *Ֆիզիկական աշխարհ նշող գրաբարյան շերտի բառերը Սյունիք-Արցախ տարածքային բարբառներում*, «Հայագիտություն. Սյունիք», Երեւան, 2016, թիվ 1, էջ 59-72

(Քննության են առնվում Սյունիքի եւ Արցախի տարածքների բարբառներում գործածվող՝ ֆիզիկական աշխարհ նշող բազմաթիվ բառեր՝ *քըշկօռ* (կապ, հանգույց), *անձօղ* (ածուխ), *ախշարք* (աշխարհ), *իրիքնակ* (արեգակ), *ախաղըր* (աղբյուր), *քըշէր* (գիշեր), *արաշտ* (երաշտ), *մըղէղնը* (մոխիր, կայծ, փոշի), *արկաթ* (երկաթ) եւն, որոնք հիմնականում ավանդված են գրաբարից եւ խմբավորվում են *քար, երկիր, երկինք, լույս, օդ, կրակ, մետաղ* թեմատիկ ենթախմբերի մեջ: Հեղինակն անդրադառնում է նաեւ դրանց՝ ժամանակի ընթացքում կրած հնչյունական եւ իմաստային փոփոխություններին, դրանցով կազմված այլ բառերին, դարձվածներին, ոճական արտահայտություններին):

230. Айрапетян Э., Айрапетян Г., *Исследования по семантике предлогов на, on, in через призму фоменносемантической словообразовательной модели армянского диалектного языка*, “Ученые записки. Лингвистика (приложение). АрГУ” Степанакерт, 2002, с. 30-34

(Անգլերենի *on, in* եւ ռուսերենի *на* նախդիրների համեմատությամբ քննության են առնվում *նի* մասնիկի հարադրությամբ կազմված բայերի դրսեւորումները Ղարաբաղի բարբառում: Առանձնակի ուշադրություն է դարձվում դրանց՝ բային սաստկական իմաստ հաղորդելու ընդհանուր հատկանիշին):

231. Амбарцумян А., *Характер иностранных заимствований в некоторых армянских говорах Южного Карабаха в диахроническом среде*, «Armenian Language Contacts Through the Ages. Abstracts. International Conference, 12-15 May, 2015», St. Peterburg, 2015, p. 11-13

(Ներկայացվում են Արցախի Հանրության շրջանի Դուլակար (Արեւշատ) եւ Բինյաթլու գյուղերի խոսվածքներում գործածվող՝ արեւելյան որոշ լեզուներից՝ արաբերենից, պարսկերենից, թուրքական լեզուներից (*մէյր, խաբար, բուտան, բիզ, յարա, թօփ, հնլն, քնվշն, յօրդան, շառ, խէր*) եւ ռուսերենից (*պօվըր, ջըլափկա, փարթոկ, տնլէք, ռըբաշկա*) փոխառյալ մի շարք բառեր, փորձ է արվում դրանք դասակարգելու ըստ ժամանակագրության):

232. Асмангулян А., *История армянских терминов родства*, Ереван, 1983, 84 էջ

(Ներկայացվում են հայերենի՝ ազգակցություն արտահայտող որոշ բառերի պատմաստուգաբանական վերլուծությունները: Հեղինակն առանձին ենթաբաժնով (էջ 42-47) հանգամանորեն անդրադառնում է իր կարծիքով միայն Ղարաբաղի բարբառում գործածվող *հասի* (հորաքույր) բառի մեկնությանը՝ այն համարելով հնդեվրոպական հիմք լեզվից պահպանված, որը նախապես ունեցել է *արյունակից բարեկամ* ընդհանուր իմաստը):

233. Григорян А., *Арцахский диалект как источник для протоармянской и идеоевропейской реконструкции*, "Ученые записки. Лингвистика (приложение). АрГУ" Степанакерт, 2002, стр. 7-16

(Ներկայացնելով Ղարաբաղի բարբառին հատուկ մի շարք բառեր եւ համեմատելով հնդեվրոպական այլ լեզուներում, հատկապես ռուսերենում գործածվող եւ հնչյունակազմով ու իմաստով համընկնող ու մոտ բառերի հետ՝ հեղինակը դրանք համարում է հնդեվրոպական ծագման՝ առաջ քաշելով այլ տեսակետը, որ Ղարաբաղի բարբառը առաջացել է գրաբարից շատ ավելի վաղ եւ կարող է լուրջ հիմք հանդիսանալ նախահայերենի ու հնդեվրոպական նախալեզվի վերականգնման համար):

234. Маркарян Л., *Этимологические составляющие фольклорной лексики Арцаха*, „Кавказ наш общий дом. II международная научно-практическая конференция, 23-24 сентября, 2010”, Ростов на Дону, 2010

(Քննության է առնվում Արցախի բանահյուսության բառապաշարի ծագումնաբանական շերտը, որը հեղինակը բաժանում է երեք խմբի՝ բնիկ բառեր, փոխառություններ (*արաբերենից, պարսկերենից, թուրքերենից, ռուսերենից*), օտարաբանություններ: Առաջին խմբի մեջ առանձնացվում են մի քանի ենթախմբեր՝ ա) գրաբարում չավանդված, բայց Ղարաբաղի բարբառում առկա հնդեվրոպական արմատներ, բ) բառեր, որոնք, ըստ լեզվաբանների ենթադրությունների, ծագումով ավելի հին են, քան

գրաբարյան ձեւերը, գ) բառեր, որոնք գրաբարում չունեին և հավելվածը, բայց բարբառում ունեն, դ) գրաբարյան արմատական ձեւեր, որոնք բարբառում հանդես են գալիս բաղադրյալ կազմութիւնների մէջ, ե) գրաբարյան բաղադրյալ կազմութիւններ, որոնք բարբառում հանդես են գալիս արմատական ձեւերով, զ) բառեր, որոնք գործածվում էին հին հայերէնում, ունեն նրանից տարբերվող հնչյունակազմութիւն եւ պահպանվում են քիչ թվով բարբառներում, այդ թվում՝ Ղարաբաղի բարբառում: Բոլոր դեպքերի համար բերվում են բանահյուսական նյութերից քաղված օրինակներ):

235. Патканов К., *Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1869, 114 էջ*

(Յայ բարբառների դասակարգմանը եւ որոշ բարբառների նկարագրութեանը զուգընթաց առաջին անգամ ներկայացվում է Ղարաբաղի բարբառի հակիրճ ուսումնասիրությունը (էջ 55-73): Ուսումնասիրութեան սկզբում (էջ 55-63) տեղադրելով բարբառով գրառված որոշ նյութեր՝ հեղինակը այնուհետեւ նկարագրում է բարբառի հնչյունական (որոշ ձայնավորների ու բաղաձայնների քմային արտասանութիւն, հնչյունափոխութիւն, ձայնավորով սկսվող միավանկ բառերի սկզբից հ-ի ավելացում), բառապաշարային (գրաբարում չվկայված, ինչպէս նաեւ գրաբարյան իմաստներից տարբեր իմաստ ունեցող բառերի առկայութիւն), քերականական (անվանական եւ դերանվանական հոլովում, խոնարհում), մի շարք առանձնահատկութիւններ: Միաժամանակ, խոսելով խոյի բարբառի մասին (էջ 74-76), նա հավաստում է, որ այդ բարբառը խոսվում է խոյում, Սալմատում, ինչպէս նաեւ Ղարաբաղի մի քանի տեղերում՝ Շուշվա շրջակայքում՝ Ավետարանոցում եւ այլուր, եւ որ այն շատ կողմերով թեւեւ նման է Ղարաբաղի բարբառին, սակայն ունի մի շարք տարբերութիւններ, ինչպէս՝ *ի*-ն է դարձնելու հակում, բայական ներգոյականի *ս*-ով կազմութիւն՝ *ում*, *ըմ*, *ման*-ի փոխարէն, *ու*-ի փոխարէն *ական*-ով ապառնի դերբայի կազմութիւն: Յարկ է նշել, որ Պատկանյանը հիմնվել է երկու զաքթալեցու տրամադրած մի քանի էջ գրավոր նմուշների վրա, որոնք, գրված լինելով կիսադարաբաղյան բարբառով, հնչյունաբանական եւ ձեւաբանական որոշ սխալ ընդհանրացումների տեղիք են տվել):

236. Шахназарян Н., *Языковая ситуация армян Нагорного Карабаха: лексическое заимствование как внутриязыковое создание, «Յայ բարբառագիտութեան միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ. Թեզիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 41*

(Ներկայացնելով Լեռնային Ղարաբաղում առկա լեզվական իրավիճակը եւ Ղարաբաղի բարբառը համարելով հաղորդակցման հիմնական միջոց՝ հեղինակն անդրադառնում է տարածքում գործածվող մյուս լեզուներին՝ գրական հայերէն, ռուսերէն եւ ադրբեջաներէն (խորհրդային տարիներին),

փորձում բացահայտել դրանց գործածության բնագավառներն ու Ղարաբաղի բարբառի վրա ունեցած ազդեցությունը):

237. Beglarian A., *Comparative analysis of phraseological units of the English language and Karabakh dialect*, «Հավելված ԱրՊՀ գիտական տեղեկագրի N1 (10). Մեսրոպյան գրերի գյուտի եւ Արցախում հայոց առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյակին նվիրված երիտասարդ գիտնականների միջազգային գիտական համաժողովի նյութերի ժողովածու», Ստեփանակերտ, 2005, էջ 94-98

(Հիմք ընդունելով օտարազգի տարբեր լեզվաբանների (հատկապես Ա. Կունինի՝ կառուցվածքախմաստային սկզբունքի վրա հիմնված դասակարգումը)՝ անգլերենի դարձվածների դասակարգման սկզբունքները եւ Շ.Մինասյանի «**Ղարաբաղի բարբառի դարձվածները**» աշխատությունը՝ հեղինակը ներկայացնում է անգլերենի ու Ղարաբաղի բարբառի անվանական դարձվածների կառուցվածքախմաստային առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը՝ շեշտը դնելով դարձվածային միավորը կազմող անդամների քանակի ու դրանց կապվածության ձեւի վրա):

238. Martirosyan H., *Development of some dialectal features in the Artsakh region*, «Հայոց լեզվի պատմության հարցեր. Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, 15-18 օգոստոսի, 2008 թ.», Ստեփանակերտ, 2008, էջ 13-20

(Քննության են առնվում Ղարաբաղի բարբառի որոշ առանձնահատկություններ, հայերենի զարգացման շարունակականությունն Արցախի տարածքում եւ դրանից դուրս: Առանձնակի ուշադրություն է դարձվում որոշ մանրատեղանունների (*Ռիզափայտ* (լեռ Հադրուփի շրջանում), *Կոհակ* (սրբավայր Մարտունու շրջանում), *Եղին աղբյուր* (աղբյուր Մարտակերտի շրջանում) եւ *ջինարի/տնջրի* (սոսի) ծառանվան մեկնություններին: Վերջինս, որը հայերենի տարածական այլ տարբերակներում հանդիպում է *ճանդարի* ձեւով, հեղինակը բխեցնում է միջին պարսկերենի *ջան* (դողացող) եւ *դար* (ծառ) բառերից):

## ՉԵՌԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Աղայան Ղ., *Ղարաբաղի բառարանը*, Նոր Նախիջեան, 1897-1898 թթ., 49 թերթ, 33 Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան, Աղայան Ղազարոսի ֆոնդ

(Բաղկացած է երկու մասից: Առաջին մասում քննվում են բարբառի հնչյունական մի շարք իրողություններ: Այն սկսվում է շեշտի նկարագրությամբ, որը, ըստ հեղինակի, ընկնում է նախավերջին վանկի ձայնավորի վրա, ընդ որում եթե բառը գաղտնավանկ ունի, այն չի շեշտվում, իսկ կոչականի շեշտն ընկնում է առաջին վանկի ձայնավորի վրա: Ներկայացվում են նաեւ ձայնավորների եւ բաղաձայնների հնչյունափոխության մի քանի դեպքեր, առանձնակի ուշադրություն է դարձվում գրական հայերենից եւ մյուս բարբառներից արտասանությամբ տարբերվող հնչյուններին՝ դրանք կոչելով *հաստ*, *միջին* ու *բարակ* անուններով, որոնք, ըստ հեղինակի, հաճախ պատճառ են դառնում բառիմաստի փոփոխության: Կարելի է տեսնել հատկացվում *n* տառի դրսեւորումներին: Աղայանի վկայությամբ՝ Ղարաբաղի բարբառն ունի 60 հնչյուն: Բաղաձայնական համակարգը երկաստիճան ձայնեղազուրկ է, քանի որ հայերեն բառերի սկզբում բացակայում են *բ*, *գ*, *դ*, *ծ*, *ջ* բաղաձայնները, բացառությամբ *գիղալ* եւ *գիւրգ* բառերի, որտեղ *գ*-ն հնչվում է իբրեւ *գեաֆ* (իմա՝ *գ*), իսկ փոխառյալ բառերի սկզբում չկան *պ*, *կ*, *տ*, *ծ*, *ժ* բաղաձայնները, ինչը հեղինակը բացատրում է նրանով, որ Ղարաբաղի հարեւան ժողովուրդները չեն ունեցել այդ հնչյունները: Ըստ Աղայանի՝ Ղարաբաղի բարբառն առհասարակ բազմատեսակություն շատ ունի եւ շատ դեպքերում խիստ հեռանում է գրաբարից: Քննված բոլոր դեպքերի համար բերվում են բառային օրինակներ: Զեղինակը այս ամենը փորձել է ներկայացնել իր մշակած տառադարձությամբ, որով գրված է նաեւ աշխատության երկրորդ մասը. այն ընդգրկում է բարբառում գործածվող շուրջ 2000 բառ (տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ)՝ համապատասխան բացատրություններով: Աշխատության սկզբում տեղադրված են Ղ. Աղայանի որդու՝ Մուշեղ Աղայանի ծանոթագրությունները: Այս ֆոնդում է պահվում նաեւ Ղ. Աղայանի մի անավարտ հոդվածը Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի մասին, որտեղ ներկայացվում են Ա-ից Չ հնչյունների արտասանությունն ու գրությունը):

2. Բաբայան Ա., *Ղարաբաղի Վարանդայի բարբառը*, Երեւան, 1967, 387 էջ, Ա. Բաբայանի անձնական արխիվ (ք. Երեւան)

(Ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Վարանդայի գավառի խոս-

վածքների ամբողջության (ըստ հեղինակի՝ Վարանդայի բարբառի) ամբողջական համաժամանակյա (մի շարք դեպքերում՝ նաեւ գրաբարի համեմատությամբ) ուսումնասիրությունը: Բաղկացած է ներածական մասից, երեք բաժնից եւ հավելվածից: Ներածական մասում՝ «*Առաջաբանի փոխարեն*» (6 էջ), տեղեկություններ են տրվում ուսումնասիրության սկզբնաղբյուրների, բարբառի առանձնահատկությունների մասին, ներկայացվում է Վարանդայի գյուղերի ցանկը: Առաջին բաժնում՝ «*Յնչունախոսություն*» (10 էջ), նկարագրվում են բարբառին հատուկ բոլոր հնչյունները, երկրորդ՝ «*Յնչունափոխություն*» (28 էջ) բաժնում՝ շեշտի դրսեւորումները, գրաբարյան ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների կրած հնչյունափոխության բոլոր դեպքերը: Առավել ընդարձակ է երրորդ՝ «*Ձեւաբանություն*» (296 էջ), բաժինը, որտեղ հանգամանորեն քննության են առնվում բոլոր խոսքի մասերն ու նրանց քերականական կարգերը (*հոգնակիակազմություն, հոլով ու հոլովում, ածականի համեմատության աստիճաններ, դերանունների հոլովում, դերբայներ, բայի եղանակներ ու ժամանակաձեւեր են*): Այս բաժնում անդրադարձ է կատարվում նաեւ ածանցմանը, բառերի տեսակներին՝ ըստ կազմության, կոչական մի շարք բառերի ձեւակերպումներին, *Նի, լու, իք* մասնիկների գործածությանը են: «*Յավելված*» ընդգրկում է բարբառով գրառված (գիտական տառադարձությամբ) բանահյուսական նյութեր եւ դարձվածներ (22 էջ) եւ գրաբարից բարբառ բառարան (23 էջ): Աշխատության վերջում կցված է օգտագործված գրականության ցանկ (2 էջ):

3. Բահաթրյան Ա., ***Ղարաբաղու գաւառական բառգիրք, Շուշի, 19-րդ դարի վերջեր, Երեւանի պետական համալսարանի գրադարան***

(Ընդգրկում է Ղարաբաղի բարբառին հատուկ շուրջ 6000 բառ (տվյալ ժամանակաշրջանի բարբառային տառադարձությամբ), որոնց դիմաց տրված է իմաստների բացատրությունը: Ըստ Յր. Աճառյանի տեղեկությունների /Յր. Աճառյան, *Կյանքիս հուշերից, Երեւան, 1967, էջ 269-271*/՝ Ա.Բահաթրյանը, գրաբարի բառարաններից քաղված՝ ժողովրդին հասկանալի բառերին ավելացնելով Ղարաբաղի բարբառին հատուկ բարբառային բառերը (դրանց քիչ գրական ձեւ տալով), ինչպես նաեւ ժողովրդի մեջ գործածվող թուրքական փոխառությունները, կազմել էր ընդարձակ բառարան՝ նպատակ ունենալով սոր գրական լեզու ստեղծելու: Յեղինակին համոզելով, որ նրա նախաձեռնությունը անիմաստ է, Աճառյանը Բահաթրյանի համաձայնությամբ այդ աշխատությունից (որը հետագայում հրդեհի կորուստ է դարձել) արտագրել է Ղարաբաղի բարբառի բառերը եւ կազմել սույն բառարանը):

4. Գրիգորյան Ս., ***Ղարաբաղի բարբառը եւ Շուշվա ենթաբարբառը, Բաքու, 1948-1958 թթ., 220 էջ, ՀՀ ԳԱԱ Յր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան***

(Բաղկացած է ներածական մասից եւ երեք բաժիններից: Ներածական մասում (էջ 1-47) անդրադարձ է կատարվում Ղարաբաղի բարբառի մասին եղած մասնագիտական գրականությանը, փորձ է արվում հիմնավորելու Շուշի քաղաքի խոսվածքի՝ առանձին ենթաբարբառ լինելու տեսակետը, ներկայացվում են վերջինիս տարբերությունները Ղարաբաղի բարբառից ու Հաղուրթի ենթաբարբառից, գրական հայերենի ու ռուսերենի ազդեցության աստիճանները Ղարաբաղի բարբառի եւ Շուշվա ենթաբարբառի վրա եւն: Առաջին բաժնում՝ «Շուշի քաղաքի լեզվական հարստությունները» (էջ 47-61), հիմնականում նկարագրվում են խոսվածքի հնչյունական համակարգն ու հնչյունափոխության որոշ դեպքեր, երկրորդ բաժնում՝ «Բառագիտություն» (էջ 61-74), ածանցման ու բառաբարդման տեսակները: Առավել ընդարձակ է երրորդ՝ «Ձեւաբանություն» (էջ 74-148) բաժինը, որտեղ առանձին ենթաբաժիններով քննության են առնվում բոլոր խոսքի մասերն ու նրանց քերականական կարգերը, տրվում հոլովման ու խոնարհման հարացույցները: Չորրորդ բաժնում՝ «Ղարաբաղի բարբառի նախադասությունների կազմությունը» (էջ 149-157), ներկայացվում են Ղարաբաղի բարբառում նախադասությունների կազմության, դրանց անդամների կապակցման եղանակները, իսկ վերջին՝ «Ղարաբաղի բարբառի լեզվական հարստությունները» (էջ 159-218), բաժնում հեղինակն անդրադառնում է բարբառի բառապաշարի շերտերին, ըստ իմաստի՝ բառերի տեսակներին, պատկերավորման միջոցներին, լեզվաոճական տարբեր առանձնահատկություններին, նախադասության տեսակներին, կետադրությանը, առոգանությանը, «ջարժումների լեզվին» եւն: Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունը անմշակ է եւ խմբագրման խիստ կարիք ունի:

5. Գրիգորյան Ս., **Ղարաբաղի բարբառի լեզվական հարստությունները**, 334 էջ, Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան, թիվ 2 ֆոնդ

(Ղարաբաղի բարբառով (բազմաթիվ նյութեր՝ գրական հայերենով) գրառված (տառադարձության խախտումներով) դարձվածների, առածասացվածքների ժողովածու: Ընդգրկում է նաեւ քիչ քանակությամբ հանելուկներ, շուտասելուկներ եւ այլ նյութեր: Ղարձվածների իմաստները, բացառությամբ որոշների, բացատրված չեն: Բոլոր նյութերը տրվում են խառը կերպով՝ առանց ժանրային առանձնացման, այբբենական դասավորության եւ համարակալման, չկան նյութերի գրառման ու ժողովածուն կազմելու վերաբերյալ ծանոթագրություններ, վայրը եւ թվականը նշված չեն):

6. Մարտիրոսյան Հ., **Հայոց լեզվի պատմականությունը Արցախի եւ Ուտիքի տարածքներում**, Հ. Մարտիրոսյանի անձնական արխիվ, էլ. հասցե՝ hrch.martirosyan@gmail.com

(Ներկայացվում են Արցախի եւ մերձակա տարածքների բարբառներում գործածվող եւ այդ տարածքներին առնչվող պատմական փաստաթղթերում վկայված մի քանի հնաբանությունների (*կէտ* (ճանճի տեսակ), *կոուլ//գոուլ* (գայլ), *թափուր* (փայտե սկուտեղ), *հէսկի* (տռնապան), *քաշ* (ագռավ), *ճանդարի//ջինարի//տընջըրի* (սոսի), *թէդուշի//թըդոշի* (ծառատեսակ), տեղանունների (*Դիզափայտ//Տըզափաղ, Գետառ(ու), Աստեղաբլուր, Ձորագետ, Տիգրանակերտ//Տկռակերտ, Գիս, Խաղխաղ*), ինչպես նաեւ արեւելակովկասյան որոշ լեզուների՝ հայերենից, մասնավորապես Ղարաբաղի բարբառից կատարած փոխառությունների (*պատարագ, հանդ* (արտ), *հանդավար* (հող, կալվածք), *ծիլի* (ածելի), *տամբուլ//դամբուլ* (սալոր), *սըմբէտան* (սամիները կապելու փոկ) եւն) մեկնություններ: Քննության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ ի լրումն գիտական այլ բնագավառների ընձեռած փաստերի՝ նաեւ լեզվական նմանատիպ տվյալներով կարող է հիմնավորվել Արցախի, Ուտիքի եւ հարակից տարածքներում հայախոս բնակչության շարունակական ներկայությունը):

7. Մեծունց Բ., **Ճաղախի ենթաբարբառը, Երեւան, 1975, 33 ԳԱԱ 3ր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան**

(Թեկնածուական ատենախոսություն: Ներկայացվում է Արցախի Հանրապետության շրջանի Խժաբերդ, Դուլախար, Ճաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Ալբուլաղ գյուղերի (որոնց բնակիչների նախնիները 19-րդ դարի քսակական թվականների վերջերին այստեղ են գաղթել Պարսկաստանի Ղարադաղի գավառից) խոսվածքների ամբողջության՝ Ճաղախի ենթաբարբառի համաժամանակյա քննությունը: Աշխատությունը բաղկացած է ներածական մասից եւ բուն ուսումնասիրությունից: Ներածական մասում (էջ 1-11) տեղեկություններ են տրվում տվյալ գյուղերի հիմնադրման, հարցի ուսումնասիրության պատմության, Ճաղախի ենթաբարբառի եւ Ղարաբաղի ու Հանրապետության բարբառների փոխհարաբերությունների մասին: Բուն ուսումնասիրության մեջ (էջ 12-111) առանձին բաժիններով եւ ենթաբաժիններով քննության են առնվում ենթաբարբառի հնչյունախոսությունը, հնչյունափոխության դեպքերը, խոսքի մասերի եւ նրանց քերականական կարգերի դրսեւորումները: Առանձնակի ուշադրություն է դարձվում գոյականի թվի, հոլովի ու հոլովման, դերանվանական հոլովման, բայի սեռի, դեմքի, թվի, եղանակի եւ ժամանակի կարգերին, դերբայներին, հոլովման ու խոնարհման հարացույցներին եւն: Համառոտ ներկայացվում են նաեւ շարահյուսական առանձնահատկությունները, բառապաշարի շերտերը, բառակազմական միջոցները: Ուսումնասիրությանը կցված են նաեւ գրաբարից ավանդված ու բարբառային բառերի բառացանկեր (էջ 112-167), նշված վեց գյուղերի խոսվածքներով գրառված նյութեր (էջ 168-183), եւ օգտագործված գրականության ցանկ (էջ 184-185):

8. Մելիք-Շահնազարյան Կ., **Հավելված Ղարաբաղի լեզվի բառերի,**

1886, 26 թերթ, Ղարաբաղի բառարանի հավելյալ թերթիկներ, 14 թերթ, ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի ֆոնդ

(Տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ ներկայացվում են Ղարաբաղի բարբառում գործածական հարյուրավոր բառեր՝ համապատասխան բացատրություններով):

9. Վարդապետյան Ն., **Սյունյաց բարբառ**, Երեւան, 1961, 439 էջ ՀՀ ԳԱԱ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան

(Թեկնածուական ատենախոսություն: Բաղկացած է «Առաջաբանից», երեք մասերից եւ «Հավելվածից»: «Առաջաբանում» (էջ I-V) փորձ է արվում հիմնավորելու Սյունիքի (Գորիսի, Սիսիանի, Ղափանի) խոսվածքների ամբողջության՝ Ղարաբաղի բարբառից տարբեր բարբառ լինելու տեսակետը, ինչպես նաեւ տրվում է աշխատության կառուցվածքը: Առաջին մասում՝ «Հնչյունաբանություն» (էջ 1-90), առանձին ենթաբաժիններով՝ «Հնչյունախոսություն», «Հնչյունափոխություն», հանգամանորեն ներկայացվում են բարբառում գործածվող բոլոր հնչյունների արտասանական բնութագրումներն ու հնչյունափոխության տեսակները: Երկրորդ մասը՝ «Ձեւաբանություն» (էջ 91-247), նվիրված է խոսքի մասերի եւ նրանց քերականական կարգերի, ինչպես նաեւ ածանցների եւ շեշտի քննությանը: Առավել մեծ ուշադրություն է դարձվում հոգնակիակազմության, անվանական ու դերանվանական հոլովման եւ խոնարհման դրսեւորումներին: Երրորդ մասի («Բառագիտություն»), առաջին ենթաբաժնում՝ «Բառապաշարի շերտերը» (էջ 248-256), ներկայացվում են գրական, բարբառային եւ փոխառյալ բառերը, երկրորդ ենթաբաժնում՝ «Իմաստափոխություն» (էջ 256-260)՝ իմաստափոխության տեսակները, իսկ երրորդ ենթաբաժնում ընդգրկված են գրաբարից Սյունյաց բարբառ բառացանկը (էջ 261-297) եւ բարբառային բառարանը (էջ 298-421): Հավելվածում (էջ 422-435) ընդգրկված են բարբառով գրառված ժողովրդական որոշ երգեր, «Անպան Հուռին» հեքիաթը եւ «Վեցկի Մարգարի պատմությունը» գրույցը: Աշխատության վերջում կա օգտագործված գրականության ցանկ (էջ 436-439):

10. Տեր-Հովհաննիսյան Տ., **Գավառական բառարան**, ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան, Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ֆոնդ

(Ներկայացնում է գավառական բառերի ընդարձակ քարտարան, որոնց շարքում ընդգրկված են նաեւ Ղարաբաղի բարբառում գործածական բազմաթիվ բառեր (տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ)՝ համապատասխան բացատրություններով):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Երկու խոսք .....	3
2. Ներածություն .....	5
3. Մատենագիտություն .....	46
4. Ձեռագիր աղբյուրներ .....	148

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՐՄԵՆ ՅՈՒՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ**

*խմբագիր՝ Շողեր ՄԻՆԱՍՅԱՆ*

*Տեխնիկական խմբագիր՝ Լիլյա ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ստորագրված է տպագրության 20.01.2019:

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 <sup>1/16</sup>:

Ծավալը՝ 9.75 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 200:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**  
Երևան, Բումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)



**EDIT PRINT**  
12 Toumanyanyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)

ԵՐԵՎԱՆ-2019